

Վ. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՅԱՆՔԸ 1917-1918 ԹԹ. ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄ)
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿՄԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ..... 4-8

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ..... 9-65

- 1.1. ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ
ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ..... 9-16
- 1.2. ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. 16-39
- 1.3. 1917 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ 2-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ..... 39-42
- 1.4. ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ,
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԶԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ..... 42-64

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ

ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

(1917 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ-1918 Թ. ՀՈՒՆՎԱՐ)..... 65-92

- 2.1. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ..... 65-71
- 2.2. ԴԵՊԻ ԵՐԶՆԿԱ ԵՎ ԿԱՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ
ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ..... 71-92

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

	ԷՐԶՐՈՒՄԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.....	93-183
3.1.	ԲԵՐԴԱՍՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.	
	ՊԱՅՔԱՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՐ.....	93-113
3.2.	ԵՐԶՆԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	113-121
3.3.	ԷՐԶՐՈՒՄԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ. ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.....	121-162
3.4.	ԷՐԶՐՈՒՄԻ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	163-190
	ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	191-200
	ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.....	201-206
	ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	207-212

ՆԱԽԱԲԱՆ

*«Եւ ժողովի նստան կովկասեան եղբայրները
Թիֆլիսի մէջ, թէ ինչպէս ընեն, որ
առանց կռուելու յաղթեն Տաճիկին»:
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ*

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ընկած ժամանակահատվածում արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը գիտական հետազոտման առանձին և ուշագրավ ոլորտ է ներկայացնում:

Բոլշևիկյան հեղաշրջումն՝ իշխանական-քաղաքական հիմնախնդիրների ամբողջությանը զուգահեռ, իր ողջ բովանդակությամբ ու էությամբ ուղղվեց շարունակվող Աշխարհամարտի հետագա ընթացքի ու մասնավորապես Կովկասյան ռազմաճակատի տարաբնույթ խնդիրների լուծմանը:

Գրավված Արևմտյան Հայաստանը և արևմտահայության զանգվածները թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում հերթական անգամ հայտնվեցին բարդ իրավիճակում:

Նախ՝ վտանգվեց Փետրվարյան հեղափոխության արդյունքում ձեռք բերված անգնահատելի նվաճումը, այն է՝ Արևմտյան Հայաստանում ազգային քաղաքացիական իշխանության կայացման հուսադրող գործընթացը և վերաշինության գործը:

Ապա և պարզ դարձավ, որ Անդրկովկասյան կոմիսարիատի, հետո էլ՝ սեյմի վրաց-թաթարական քաղաքական մեծամասնությունը Կովկասյան ռազմաճակատի, նույնն է թե Արևմտյան Հայաստանի պաշտպանության հիմնահարցը որպես կարևորագույն խաղաքարտ օգտագործելու է Թուրքիայի հետ իրենց սկսած նոր որակի հարաբերություններում:

Օգտագործելով Կովկասյան ռազմաճակատի զորամասերի բոլշևիկացման գործընթացը, անդրկովկասյան միացյալ իշխանություններն իրենց հետևողական հակախորհրդային, իսկ վրաց-թաթարական դաշինքի պարագայում նաև հակառուսական քաղաքականության համատեքստում լրջորեն նպաստեցին ռազմաճակատի փլուզման արագացման գործին:

Այդ համատեքստում են նաև անդրկովկասյան երկաթուղու երկայնքով նահանջող Կովկասյան բանակի զորամասերի նկատմամբ իրականացված բռնությունները, ապա և

Երևանի նահանգում Թուրքիայի հրահրմամբ բռնկված մահմեդական հակահայկական ու հակառուսական խռովությունները:

Ինչևէ, արևմտահայերի կենսական անմիջական հիմնախնդիրները ստեղծված քաղաքական նոր իրավիճակում մնում էին չլուծված:

Դեռևս 1917 թ. ամռանից Երևանը դառնում է ազգային հավաքական ուժի, 1917-1918 թթ. բախտորոշ քաղաքական փուլի իրադարձությունների կենտրոն: Առանցքային է այն հանգամանքը, որ Երևանի նահանգում էին կենտրոնացել բազմաթիվ արևմտահայ ռազմական ու քաղաքական գործիչներ, 1917 թ. մայիսին Երևանում հրավիրված Արևմտահայ առաջին համագումարում ձևավորվել էր ազգային նոր կառույցը՝ Արևմտահայ ազգային խորհուրդը:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո ընկած ժամանակաշրջանում արևմտահայության առաջնահերթ խնդիրը շարունակում էր մնալ ինքնակազմակերպման հարցը, որն էլ անմիջականորեն կապվում էր Արևմտյան Հայաստանի ու Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության հիմնահարցի հետ:

Այդ համատեքստում առանձնանում են երկու գերխնդիրներ, առաջինը՝ Արևմտահայերի (փախստականների) համագումար հրավիրելու և երկրորդը՝ Արևմտյան Հայաստանում ու Երևանի նահանգում դասալքության դեմ պայքարի և ազգային, մասնավորապես արևմտահայերից բաղկացած զորամասերի կազմակերպումը:

Արևմտահայ քաղաքական, զինվորական ղեկավար մարմիններն ու գործիչները հետամուտ էին թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Անդրկովկասում բնակվող արևմտահայ ազգաբնակչությանը միավորող «Միացյալ Հայաստանի համագումարի» հրավիրման գաղափարին: Այն առավելապես պետք է զբաղվեր Հայաստանի ապագա քաղաքական կայացման և կառուցվածքի հարցերով: «Թուրքահայաստանի մասին» բոլշևիկյան հրովարտակի շրջանակներում այս գրոծընթացն ավելի նպաստակային և գործնական կերպարանք էր ձեռք բերում:

Արևմտահայերի 2-րդ համագումարի կազմակերպման երկարատև գործընթացը տեղի ունեցավ մի քանի փուլերով և ընդգրկեց 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մայիսն ընկած ժամանակահատվածը:

Առաջին փուլը սկսվում է 1917 թ. դեկտեմբերի սկզբին Թիֆլիսում կայացած արևմտահայ խորհրդակցությամբ: Այստեղ որոշվեց հայտարարել պարտադիր գորակոչ, կազմակերպել Արևմտահայ գորաբաժին և վերջապես ստեղծել Արևմտահայ ապահովության խորհուրդ: Նկատի ունենալով քաղաքական վայրիվերումները, հաղորդակցության դժվարությունները, ժողովն անհնար գտավ մոտ ժամանակում հրավիրել արևմտահայոց նոր համագումարը և որոշեց այն կազմակերպել 1918 թ. մարտի 4-ին Կարինում: Թուրքական արշավանքի պայմաններում այն կրկին հետաձգվեց:

Հաջորդ հանգրվանը Արևմտահայ ազգային խորհրդի արտակարգ նիստն էր, ապա և դեկտեմբերի 15-ին հրավիրված «Արևմտահայ խորհրդաժողովը»: Սուր քննադատության թիրախում էին հայտնվում Արևմտահայ Ազգային խորհրդի, նրա Բյուրոյի և Արևմտահայ գաղթականների միացյալ խորհրդի գործունեությունը:

Կարևորվում են նաև 1918 թ. հունվարի 13-19-ը Վանում կայացած ՀՅԴ Վասպուրականի շրջանային ժողովը՝ որը քննարկման նյութ դարձրեց ժամանակի ամենահրատապ խնդիրները, ինչպես նաև ևս մի քանի շրջանային կուսակցական ժողովներ:

Եվ վերջապես, 1918 թ. ապրիլի 22-30 (մայիսի 4-12)-ին Թիֆլիսում կայացավ Արևմտահայ 2-րդ խորհրդակցությունը, որը չկոչվեց համագումար՝ համապատասխան ներկայացուցչություն չունենալու պատճառով:

Ստացվում է, որ Արևմտահայերի 1-ին համագումարից մինչև ՀՀ պայմաններում՝ 1919 թ. 2-րդ համագումարի հրավիրումը, արևմտահայության քաղաքական ակտիվությունն ապահովվել է հիմնականում ի դեմս Թիֆլիսում, Վանում, Խնուսում կայացած կարևորագույն ժողովների, խորհրդակցությունների և ի վերջո՝ Արևմտահայերի 2-րդ խորհրդաժողովի:

Հայոց ազատագրական շարժման և գոյամարտի կարևորագույն դրվագներից է Կարինի պաշտպանությունը:

1954 թ. դա կարևորել է նաև մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանը.

«1918-21-ի դեպքերի ծավալը չէ, որ մեծ է: Նրանք ծավալուն են իրենց քաղաքական (ներքին և արտաքին) նշանակությամբ: Այդտեղ գործում էին անզլո-տաճկական ազրեսիան և ինտերվենցիան, որ նպատակ ունեին գրավել Կովկասը, համեստ դեպքում

Անդրկովկասը: Դրա գոհը եղավ (և կլինի ավելի չարաբախտորեն) հայ ժողովուրդը, որը **միայնակ կանգնեց տաճկական զորքերի դեմ Էրզրումից մինչև Բաքուն»¹:**

Հետագոտելով 1918 թ. Կարինի (Էրզրում) պաշտպանության հիմնահարցը հայ պատմաբանները այս կամ այն չափով անդրադառնալով այդ իրադարձություններին, հիմնականում իրար կրկնելով, բերդաքաղաքի անկման պատասխանատվությունը սովորաբար դրել են հայկական զորամասերի հրամանատարների և առավելապես զորավար Անդրանիկի վրա²: Հատկանշական է հատկապես այն մոտեցումը, որ, սովորաբար, փորձ է արվում պաշտպանել և արդարացնել հենց Անդրանիկին, կարծես թե Կարինի ու այսպիսով Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության գործը միմիայն ու ամբողջությամբ կապվում էր անվանի ազգային գործչի անվան հետ:

Հիմնահարցը համակողմանի լուսաբանելու նպատակով կարծում ենք, որ նպատակահարմար է այն տարանջատել մի քանի խումբ հարցերի, այն է՝

1. Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում ստեղծված քաղաքական ու ռազմական իրադրության լուսաբանում,
2. Նախկին ռուսական կայսրության ու երկրամասի տարածքում հայկական զինական ուժի ձևավորման համապատկերի վերհանում,
3. Կարինի պաշտպանությանը նախորդող ռազմա-քաղաքական զարգացումների փուլի (դեկտեմբեր 1917 - հունվար 1918) հետազոտում,
4. Բերդամրոցի պաշտպանության ընթացքը. պայքար Երզնկայի համար,

¹ **Դերենիկ Դեմիրճյան**, Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ, Դերենիկ Դեմիրճյանի հարկի ներքո, Երևանի, 2016, էջ 185:

² Տե՛ս **Վահան Թոթովենց**, Չորավար Անդրանիկը և իր պատերազմները, Կ. Պոլիս 1920, **Արամ Ամիրխանեան** Ռուս եւ թուրք զինադադարը, 1917-1918, Ֆրեզնո, 1921, **Ա. Միհրանեան**, Ինչպես պետք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, Չորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, Պոստոն, 1924, **Յովակիմ Մելիքեան**, Արեան ճանապարհով, Հայրենիք, Պոսթոն, 1925, **Սեպուհ**, Էջեր իմ յուշերէն, Պոսթըն, 1925, **Գաբրիէլ Ղորղանեան**, Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմի Կովկասեան ռազմաճակատի վրայ, Հայրենիք, Պոսթոն, 1927, **Վ. Մինախորեան**, Արեւմտեան Հայաստանի պարպումը, Հայրենիք, Պոսթոն, 1935, **Ա. Թերզիպաշեան**, Անդրանիկ, Փարիզ, 1942, **Արսէն Ժամկոչեան**, Չորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պեյրուօ, 1952, **Վարդգէս Ահարոնեան**, Կովկասեան ռազմաճակատը եւ հայերը, Հայրենիք, Պոսթոն, 1955, Ազգային հերոս Չօր. Անդրանիկ, Պեյրուօ, 1959, **Կ. Սասունի** Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրուօ, 1966, **Ավետիս Եափուճեան**, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական, զինվորական տնտեսական, ընկերային կացութիւնը, Գահիրէ, 1972, **Հրայ Տասնապետեան**, Նյույորք Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա հատոր, Բեյրուօ, 1972, 1984, **А.О. Арутюнян**, Турецкая интервенция в Закавказье в 1918 г. И оборонительные бои, Ереван, 1984, **Անդրանիկ Չելեայան**, Չորավար Անդրանիկը և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, **Հրաչիկ Միմոնյան**, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Բ, Երևան, 1996:

5. Երզնկայի պաշտպանությունը,
6. Էրզրումի գոյամարտը,
7. Կարինի անկման արձագանքների և հետևանքների լուսաբանում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1.1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ
ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության երեք վարչական շրջանների՝ Վանի, Խնուսի և Էրզրումի օրինակով փորձենք ներկայացնել Արևմտյան Հայաստանի իրավիճակը՝ ռուսաստանյան երկու հեղափոխությունների միջև անցումային շրջանում:

Նախ անդրադառնանք գեներալ-կոմիսարիատի վարչական կառուցվածքի ու բյուրոկրատական կազմի խնդրին:

Արևմտյան Հայաստանի երեք նահանգները ներառում էին 21 գավառներ, որոնցից 6-ը՝ Վասպուրականում, 8-ը՝ Բագրևանդում (Խնուս) և 7-ը՝ Բարձր Հայքում (Էրզրում):

Այդ 21 գավառների մեջ կար 462 պաշտոն, որից զբաղված էր միայն 152-ը (310-ը պարապուրդի մեջ էր): Հոկտեմբերի 15-ի դրությամբ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի նոր վարչակազմի ձևավորման պահից 6 ամիս հետո զբաղեցված պաշտոնների վիճակագրությունը հետևյալ պատկերն ուներ.

«Պաշտոնեաներուն անունները եւ թիւը, որոնք տակաւին չեն բռնւած»	Վասպուրական	Բագրևանդի	Կարնոյ մէջ	Ընդամեն
Գաւառներու թիւը	6	8	7	21
Գաւառապետ	2	5	3	10
1. Գաւ.-ի օգն. վրչ. գործ.	4	1	3	8
2. Գաւ.-ի օգն. վրչ. միլից. գործ.	5	8	6	19
3. Գաւ.-ի օգն. վրչ. դատկ. գործ.	4	8	5	17
4. Քարտուղար	5	4	1	10
5. Աւագ թարգման	6	6	6	18
6. Կրտսեր »	4	3	1	8
7. Բերանացի »	6	5	4	15
8. Ա. գործավար	5	3	3	11

* Նկատի ունեն՝ չեն զբաղեցված:

9. Բ. »	5	3	2	10
10. Գ. »	5	5	3	13
11. Հաշւապահ	4	4	2	10
12. Գանձապահ	3	3	-	6
13. Աւագ բժիշկ	3	7	6	16
14. Կրտսեր բժիշկ	5	7	4	16
15. Դեղագործ	5	8	3	16
16. Անասնաբոյժ	5	6	4	15
17. Ակուշերկա	5	7	4	16
18. Տեխնիկ	4	7	2	13
	85	100	62	247» ³ :

Գումար

Ազգային պատկանելիության սկզբունքը հետևյալ կերպ էր բաշխվել.

Ազգութիւններ	Վաստահամակ.	Բագրևանդ	Բարձր Հայք	Շնորհամեր
Ռուսներ	14	24	29	67
Հայեր	6	10	9	25
Վրացիներ	2	2	15	19
Թաթարներ և այլ իսլամական ցեղեր	1	6	7	14
Մնացեալ ազգերի (հրայ, լեհ, գերմանացի և այլն)	6	10	11	27
	Գումար 29	52	71	152

Վերածելով տոկոսներու, կը ստանանք պաշտօնէութիւն՝

44.1 տոկոսը ռուսներն են

16.4 » հայերն են

12.5 » վրացիներն են

9.2 » թաթարներն են

17.8 » մնացեալներն են

100 » ամբողջութիւն»⁴:

Վան-Վասպուրականի օրինակով ներկայացվում էր կրթական – լուսավորական գործի անկման ուրվագիծը: Եթէ 1912 թ. տվյալներով Վասպուրականում գործում էր 100-ից ավել դպրոց, 18.000 հայ աշակերտներով ու ևս 25 ուսանող Եվրոպայի և Ամերիկայի

³ Տե՛ս Ազատամարտ, Թիֆլիս, 1917, 27 հոկտեմբերի, թիվ 22, (Ազատամարտի խմբագիրն էր Նիկոլ Աղբալյանը):

⁴ Տե՛ս նույն տեղում:

համալսարաններում, ապա այժմ, հույս էր հայտնվում, որ Վանի Ուսուցչական միության կողմից ստեղծված Ուսումնական խորհուրդը՝ Արևմտահայ ազգային խորհրդի ու տեղական միջոցներով կարող է բացել 29 դպրոց: Վասպուրականի դպրոցական գործի իրական պատկերն այն էր, որ գործում էին 16 դպրոցներ, 41 ուսուցիչներ, 1.684 աշակերտներ, բյուջեն կազմում էր տարեկան՝ 85.000 ռուբլի: Արևմտահայ խորհրդի նախագահ Վ. Փափագյանը Վասպուրականի դպրոցների համար հատկացրել էր տարեկան 50.000 ռուբլի (տեղական միջոցներ – 10.000 ռուբլի)⁵:

Գեներալ-կոմիսարիատի առջև դրվում էին մի շարք պահանջներ.

1. Պաշտոնյաներն ու նրանց օգնականները պետք է ընտրվեն հայերից՝ առանց հպատակության խնդիր հարուցելու:
2. Ռուսերենին կից հայերենը ևս համարվելու է պաշտոնական լեզու,
3. Դատական համակարգը պետք է դեմոկրատացվի, լեզուն լինի հայերեն,
4. Միլիցիան պետք է ձևավորվի տեղացի վստահելի տարրերից,
5. Շրջանային կոմիսարներին կից նշանակել տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խորհուրդներ՝ ընթացիկ խնդիրները ձևակերպելու և կոմիսարների գործունեությունը վերահսկելու համար,
6. Երկրի (Արևմտահայ Հայաստան) վերաշինության գործը կենտրոնացնել և վարել երկրում գտնվող հայկական հասարակական կազմակերպությունների և տեղական ազգաբնակչության միջոցով: Պահանջել կառավարությունից (նկատի ունեն ժամանակավոր կառավարությունը, թեև նյութը հրապարակվել է հոկտեմբերի 27-ին – Վ.Մ.), որ երկրի վերաշինության, պարենավորման և փախստականության վերաբերյալ բոլոր գումարները տրվեն ուղղակիորեն գեներալ-կոմիսարիատին,
7. Գեներալ-կոմիսարիատի վարչական վերակազմությունը կանոնակարգելու նպատակով, անհրաժեշտ է, որպեսզի նախկին գեներալ-նահանգապետության պաշտոնյաներն անմիջապես ազատվեն,

⁵ Տե՛ս Ազատամարտ, 1917, 27 հոկտեմբերի, թիվ 22:

8. Պահանջել, որ Էրզրումի վիլայեթի մաս կազմող Տրապիզոնին ենթարկված ճորոխի հովիտը – Բաբերդ, Սպեր, Խոտորջուր, կրկին միացվի Էրզրումի շրջանին⁶:

«Ազատամարտի» հողվածաշարի հեղինակ Զ. Կորկոտյանը հաջորդիվ ներկայացնում էր նաև գեներալ-կոմիսարիատի Միլիցիայի օրինագիծը, որի վավերացված պատճեն դեռ Պետրոգրադից չէր ստացվել: Այն բաղկացած էր 48 հողվածներից և կրում էր «Ժամանակավոր կանոնադրություն Արևմտյան Հայաստանի և պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մյուս մարզերի նահանգային և քաղաքային միլիցիայի» անվանումը:

Ըստ օրինագծի նախատեսվում էր 5 տեսակի միլիցիա՝ տեղական ապահովության, ճանապարհների հսկողության, մշտական սահմանակետերի, պահեստային և քաղաքային: Ընդհանուր ղեկավարը գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովն էր⁷, որն իր տեղակալ Հ. Զավրիյանի միջոցով պետք է իրականացներ բազմաբնույթ հրահանգներն ու կարգադրությունները: Յուրաքանչյուր նահանգ ուներ իր միլիցիապետը, չորս տեղակալներով ինչպես օրինակ՝ Բագրևանդում Համազասպն էր, Վանում՝ Բուլղարացի Գրիգորը⁷:

Հիմնախնդիրների երկրորդ մեծ խումբը վերաբերում է Արևմտյան Հայաստանում մնացած վերապրող և Կովկասից հայրենի օջախ վերադարձող արևմտահայ գաղթականների կենսական ապրուստի խնդիրներին: «Հայ գաղթականին մեջ հայրենի ատերակներուն սերն ու քայքայւած տնտեսութիւնը վերաշինելու ձգտումն այնքան ուժեղ են, որ չնայելով ամեն տեսակ խոչընդոտներուն, նոյնիսկ վարչական արգելքներու, ան կը տենչայ իր հայրենիքը վերադառնալ՝ գիտնալով հանդերձ, թէ այնտեղ ինչպիսի դժարութիւններու զրկանքներու պիտի ենթարկուի»⁸:

1915 թ. Մեծ եղեռնի մղձավանջից հետո թեև կյանքն արթնանում էր, սակայն բազմաթիվ հարցեր շուտափույթ լուծում էին պահանջում:

Օրինակ, եթե Էրզրումում և շրջակա գյուղերում 1916 թ. վերջին հազիվ 2000 հայ էր մնացել, ապա այժմ կար 7000 հայ Էրզրումում և 4000 էլ՝ շրջակա 21 գյուղերում:

⁶ Տե՛ս Ազատամարտ, 1917, 27 հոկտեմբերի, թիվ 22:

⁷ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, այսուհետև՝ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 176:

⁷ Հետևակ միլիցիոնների աշխատավարձը ամսեկան կազմում էր 85 ռուբլի, տե՛ս նույն տեղում, 28 հակտեմբերի, թիվ 23:

⁸ Տե՛ս նույն տեղում, 29 նոյեմբերի, թիվ 43:

Դերջանի շրջանում, Երզնկայում եթե հաշվվում էր կրկին 2000 մարդ, ապա հիմա՝ շրջանի 33 գյուղերում ապրում էին մոտ 4000 հայեր:

Միաժամանակ, Էրզրումի Հայ Բարեգործական ընկերության պահեստում գաղթականության համար մնացել էր ընդամենը 5000 փութ ալյուր, մինչդեռ առաջիկա 9 ամիսների համար, մինչև հունձքը, Էրզրումի 6694 կարիքավոր գաղթականներին անհրաժեշտ էր 61.506 փութ ալյուր⁹: Մյուս շրջանների գաղթականները թողնված էին իրենց ճակատագրին, այսինքն՝ տառացիորեն դատապարտված էին սովամահության: Հացի գների բարձրացումը, հունձքի ձախողումը, քրդական ավազակային հարձակումներն ու թալանը օրինակ, Երզնկայում առիթ հանդիսացան, որպեսզի հոկտեմբերի վերջին մոտ 2000 ազգաբնակչություն հեռանա քաղաքից: Վաստ հունձքի պատճառով գաղթականների դրությունը ողջ Արևմտյան Հայաստանում ճգնաժամային դարձավ: Հացահատիկը լիովին այրվեց Էրզրում-Դերջան-Երզնկա շրջանում: Փաստորեն բացակայում էր կանոնավոր և կազմակերպված պարենավորման և դրամական օժանդակության, աշխատանքով ապահովելու գործը:

Էրզրումում և Երզնկայում աշխատանքի անընդունակների և խիստ կարիքավորների համար բացվել էին Սոգորի (Союз Городов – Քաղաքների Միություն – Վ.Մ.) սննդատու կայաններ, Էրզրումում՝ 2000, իսկ Երզնկայում՝ 400 հոգու համար: Էրզրումի գաղթականները՝ թե՛ հայերը և թե՛ մահմեդականները իներցիայով ստանում էին կառավարական նպաստ, ինչից զուրկ էին Երզնկայի ու Դերջանի, Օլթիի ուղղության 1000-ից ավել գաղթականները¹⁰:

Օլթիի կամ Իթարիոնի շրջանի Շեքերլի, Գանձաձոր, Խեչով և Իթ գյուղերը հայտնվել էին օրհասական վիճակում: Գեներալ Մակկալինսկին և պրապորշչիկ Չիչնաձեն արգելել էին Իթ գյուղի 33 տնից բաղկացած հայկական բնակչությանը մշակելու իրենց արտերն ու հերկերը, որոնք ստիպված տեղափոխվել էին Իթից 6 վերստ հեռավորության վրա գտնվող Ախա գյուղը: Մակկալինսկին, իր թարգման, նուխեցի թաթար Ջաֆհար Կուլի Բաբանի ազդեցության տակ արգելել էր նաև Ախա գյուղում կատարել աշնանային գյուղատնտեսական աշխատանքներ: Փաստորեն այստեղ շարունակվում էին ցարական «ստրաժնիկների» մեթոդներն ու ավանդույթները:

⁹ Տե՛ս Ազատամարտ, 1917, 29 նոյեմբերի, թիվ 43:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

Դերջանի 2500-3000 հայ բնակչության գոյությունը ևս լուրջ վտանգի էր ենթակա: Օգտվելով տեղական թույլ իշխանությունից, այստեղ ծաղկում էին թալանն ու սպանությունները¹¹:

Օգնություն ակնկալող հուսահատ ճիչեր էին լսվում նաև Բուլանըխ – Մանազկերտի Հայրենակցական միության կենտրոնական վարչությունից՝ նախագահ Ս. Նանուշյանի կողմից 1917 թ. նոյեմբերի 25-ին¹²:

Բասենում լավատեսությունն էր իշխում:

Բասենը բաղկացած էր 79 հայկական գյուղերից՝ 16.340 բնակիչներով: Բասենի գավառը բաժանված էր 4 շրջանի՝ Ղարաքիլիսայի, Ալիջագրակի, Խորասանի և Ամրագոմի: Այստեղ գործում էին Քաղաքների միության մատակարարող կայանները: ՀՅԴ Բասենի կոմիտեն տեղեկացնում էր, որ շրջանի 42 գյուղերում կան 386 դաշնակցականներ: Երեք շրջանների ենթակոմիտեներից ձևավորվել էր 7 հոգուց բաղկացած ժամանակավոր կոմիտե, Հասան – Կալայում կար 70 զինյալ կուսակցական: Այդ ամենից զուրկ էր միայն Խորասանը¹³: Նոյեմբերի վերջին, այստեղ ևս կյանքի նշույլներ են հայտնվում: Այսպես, նոյեմբերի 26-ին Խորասանում տեղի ունեցավ Բասենի շրջանի 60 գյուղերի ներկայացուցիչների ժողով, որտեղ ընտրվեց 25 հոգուց կազմված փախստականական կոմիտե¹⁴:

Խնուսի շրջանը 1917 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուներ 8-10.000 հայ ազգաբնակչություն, որի մեծամասնությունը կազմում էին մշեցի-սասունցիները, խնուսցիները, մոտկանցի-խութեցիները և վարդոցիները:

1917 թ. նոյեմբերի սկզբին «Հայաստանի» խմբագրությունը ստանում է Խնուսի շրջանի կոմիսար Պ. Նիկոլենկոյի հեռագիրը: Այն հայտնում էր, որ Խնուսի շրջանի հասարակական և բարեգործական հիմնարկությունների կողմից հրավիրվել է պատգամավորների խորհուրդ՝ քննարկելու Բայազետի, Ալաշկերտի, Դութախի, Մանազկերտի և Խնուսի պարենավորման դրությունը: Ենթադրվում էր, որ պարենի պաշարի և բնակարան-կացարանների կատարյալ բացակայության պատճառով,

¹¹ Տե՛ս Ազատամարտ, 1917, 25 նոյեմբերի, թիվ 45:

¹² Տե՛ս Հայաստան, Թիֆլիս, 1917, 29 նոյեմբերի, թիվ 169:

¹³ Տե՛ս Ազատամարտ, 1917, 25 հոկտեմբերի, թիվ 20:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, 17 դեկտեմբերի, թիվ 49:

արևմտահայերի վերադարձը նրանց կարող է ոչնչացման դատապարտել, ուստի և որոշվում է արգելել մինչև գարուն նրանց անցագիր տրամադրելը¹⁵:

Մեկ ամիս անց դեկտեմբերի սկզբին Խնուսի շրջանի կոմիսարը հանդես եկավ ծրագրային կոչով, որը ինչպես գեներալ-կոմիսարիատի, այնպես էլ հայկական կազմակերպությունների և կուսակցությունների անփույթ, ոչ հետևողական աշխատանքի դրսևորումներից է. «Հայեր, մտածեցե՛ք, որ Հայաստանի ազատութեան արշալուսին դատարկում է Հայաստանը իւր զաւակներից, էլ ի՛նչ արժեք կունենայ այսքան սուկալի տանջանքներով ձեռք բերած ազատութիւնը: Մտածեցե՛ք, որ այս անգամ հայ փախստականներին օգնելը ոչ թե բարեգործութիւն է, այլ ազգային գոյութեան խնդիրը, և այս այն ժամանակ՝ երբ գրեթե ապահովւած է հայրենիքի ազատութիւնը: Մի՛ դանդաղե՛ք, կատարեցե՛ք ձեր հայրենական պարտականութիւնը՝ մի կտոր չոր հաց տւեք սովի ճիրաններում տառապող եղբայրներին, որոնցով միայն կարող է վերականգնել ազատագրված Հայաստանը»¹⁶:

Վան – Վասպուրականի հետ կապված հարցերին կանդրադառնանք ՀՅԴ 1918 թ. հունվարյան Շրջանային ժողովի կապակցությամբ: Այստեղ նշենք երկու կուսակցական միջոցառում. Նոյեմբերի 24-ին ՀՅԴ կենտրոնական կոմիտեն հրավիրեց Վանի ընդհանուր ժողով: Կարևորագույն հարցերը վերաբերում էին զինադադարի և հայկական միլիցիայի (դեկ.՝ Հմ. Մանուկյան) ստեղծման շուրջ քննարկումներին¹⁷:

Դեկտեմբերի կեսերին, Վանի Քաղաքների Միության նախկին որբանոցի շենքում, որը շուտով հատկացվելու էր միլիցիային, տեղի ունեցավ հանրահավաք: Ներկա էին Վանի կայազորի պետ, գեներալ Մ. Սիլիկյանը, Հայկական 5-րդ Մահապարտների գնդի (հրացանաձիգ մահուան գունդ) սպաներն ու զինվորները, Կոմիսարիատի և տեղի ընկերությունների պաշտոնյաները, քաղաքի երիտասարդությունը: Հանրահավաքի նպատակն էր կոչ անել Վասպուրականի երիտասարդությանը համալրելու միլիցիայի շարքերը: Ելույթ ունեցան Հմ. Մանուկյանը, Ա. Մահակյանը, Գր. Բուլդարացին, Կ. Համբարձումյանը, Ա. Մաքսապետյանը, Ա. Թերզիպաշյանը, Հ. Մանուկյանը և այլոք¹⁸:

Հայոց ազգային խորհրդին ուղղված Բայազետի շրջանի կոմիսարի օգնականի անգամ 1918 թ. մայիսի 31-ի բողոք – գրությունից պարզվում է, որ Արևմտյան

¹⁵ Տե՛ս Հայաստան, 1917, 10 նոյեմբերի, թիվ 154:

¹⁶ Տե՛ս Ազատամարտ, 1917, 2 դեկտեմբերի, թիվ 45:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, 17 դեկտեմբերի, թիվ 49:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, 23 դեկտեմբերի, թիվ 54:

Հայաստանի գեներալ-կոմիսարության տեղական չինովնիկները Արևմտյան Հայաստանը գիտեին միայն աշխարհագրական տեսակետից և երկրամասը կառավարում էին Թիֆլիսից:

1.2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 2-Դ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ.

1917 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Այս ահաւոր փորձանքէն դուրս գալու համար երկու ճանապարհ ունինք մեր առաջ,- գրում էր «Աշխատանք» թերթը,- կամ ցուցանելով կրաւորական վերաբերմունք թողունք, որ դեպքերը գահավիժեն իրենց ընթացքով, և կամ ներգործօն դեր վերցնելով, մեր ճակատագիրը մեր ցանկացածին պէս տնօրինենք»¹⁹:

Այդ ճակատագրական ընտրության սեփական և հետևողական դիրքորոշմամբ հանդես եկան Երևանի ազգային-դեմոկրատական կազմակերպությունները և նահանգի գաղափարական ուղղվածության մունետիկ «Աշխատանք» թերթը: «Ի՞նչ պետք է ընել» հոդվածաշարով, իր դեկտեմբերյան երեք համարներում թերթի խմբագրականները բարձրացնում էին քաղաքական իրավիճակի ամենասուր հարցադրումները, մասնավորապես, ռազմաճակատի պաշտպանության, Հայկական հարցի և ընդհանրապես, հայության ապագայի խնդիրները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 1917 թ. հոկտեմբերի 21-ից մինչև 1918 թ. ապրիլի 14-ը «Աշխատանքի» խմբագիրը Արամ Մանուկյանն էր, կարելի է ենթադրել նաև, որ ծրագրային վերլուծությունների և «երկրնտրանքին» վերջ դնող գործիչը Արամն էր:

«Անպատճառ մարգարէ ըլլալու պէտք չըկայ գուշակելու համար դեպքերու ընթացքը՝ մօտիկ ապագային», - գրում էր «Աշխատանքը» դեկտեմբերի 16 (29)²⁰, - նկատի ունենալով, որ զինադադարի ժամկետի ավարտից հետո Թուրքիան «ամենահասարակ անհամաձայնության կէտը պատրուակ բռնելով» պետք է վերսկսեր պատերազմը և բնաջնջեր նաև կովկասահայությանը:

Արդիական է հնչում հատկապես Արամի քաղաքական կանխատեսումը և ժամանակի թելադրած գլխավոր մարտահրավերը, որտեղ հայությանը սպառնացող

¹⁹ Աշխատանք, Երևան, 1917, 16 դեկտեմբերի, թիվ 64:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

վտանգը անվերապահորեն վերածվում էր բռունցքված կամքի և պայքարի գիտակցության: «Թուրք դիւանագէտները շատ խորունկ պատճառներ ունին այդպէս վարուելու,- կովկասահայության կոտորածները կանխագգալով գրում էր թերթը,- որովհետև եթէ հայութիւնը կենդանի մնայ աշխարհի երեսին, եթէ այս անգամ ևս յաջողին հրով և սրով լռեցնելու Հայոց հարցը, **եթէ համաշխարհային հաշուեյարդարի ատենն ալ նոյնիսկ մեր դատը անհետևանք մնայ, դարձեալ օր մը, վերստին պիտի գցուի անիկա մարդկութեան խղճին առջև, եթէ սակայն հայութիւնը գէթ իր այժմեայ քանակը կրցաւ պահել** (ընդգծումը իմն է – Վ.Մ.): Եւ յետոյ՝ Կովկասի մէջ պանթուրքական քաղաքականութիւնը խանգարող տարր մը եթէ կայ, ատիկա հայն է, ուրեմն ինչու չօգտուիլ դարերու պատմութեան մէջ հազուադէպ այս առիթէն և Կովկասն ալ արիւնաներկ Թուրքահայաստանի պէս՝ մահմեդական միապաղաղ ծովի մը չը վերածել»²¹: Տարակուսանք չկար նաև այն հարցում, որ եթէ «թուրքը չը կամենայ Կովկաս ոտք դնել», միևնույն է անդարձ կորստի էր մատնվում գլխավորը՝ Արևմտյան Հայաստանը: Եվ վերջապէս, արվում էր հիմնական եզրակացությունը, որ չի կարելի ժամանակ տալ թշնամուն, որ հայ զինվորը պետք է անմիջապէս փոխարինի ռուս դասալիք զինվորին և որ «մեր հուժկու դիմադրությամբ պիտի ազատենք մեր հայրենիքը, պիտի ապահովենք մեր անկախութիւնը և պիտի փրկենք Կովկասը»²²: «Ազգային բոլոր ուժերը պետք է համախմբուին և պետք է զոհաբերուին մեր դատին», - այս էր Արամի, «Աշխատանք» թերթի և նրա շուրջը համախմբված ռազմական ու քաղաքական գործիչների հավատամքն ու կոչը, որը գործնականում կատարեց ազգային գլխավոր առաքելությունը:

Ազգային հավաքական ուժի, 1917-1918 թթ. բախտորոշ քաղաքական փուլի կենտրոն Երևանը այդպիսին դառնում է դեռ 1917 թ. ամռանից, երբ սկսեց գործել ժամանակավոր կառավարության կողմից բանակի ազգայնացման մասին որոշումը:

Ապագա ազգային մարմինների ձևավորման գործընթացը Երևանում Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի և ընդամենը մի քանի գործիչների տեղաշարժերի ու Երևան գործուղվելու հետևանք են, ինչը, հաճախ նպատակային բովանդակություն էր կրում: Սկզբնական շրջանում այդ եզակի գործիչների թվում կարելի է հիշատակել Արամ Մանուկյանին, Մահակ Թորոսյանին, Արշալույս Աստվածատրյանին, Մկրտիչ

²¹ Աշխատանք, 1917, 16 դեկտեմբերի, թիվ 64:

²² Նույն տեղում, 20 դեկտեմբերի, թիվ 65:

Մուսինյանին, Արշավիր Շախաթունուն, նաև Հովսեփ Բեկզադյանին և Դրաստամատ Կանայանին:

Եղած ոչ հարուստ պատմական սկզբնաղբյուրային նյութի հիման վրա փորձենք վերստեղծել այդ կարևորագույն փուլի համապատկերը:

1917 թ. մայիսին Թիֆլիսից Երևան ժամանեցին Ա. Մանուկյանը և բժիշկ Հ. Բեկզադյանը (ս.դ.)²³: Նրանց առաջնահերթ խնդիրը Երևանի նահանգում դասալքության դեմ պայքարն էր և ազգային գորամասերի կազմակերպումը: Նրանք աջակցություն էին ստանում և համագործակցում նախ և առաջ Երևանի զինվորական խորհրդի գործադիր կոմիտեի, մասնավորապես, վերջինիս անդամ Արշալույս Աստվածատրյանի (ՀՅԴ) կողմից²⁴: Արդյունքում ձևավորվեց զինվորական մարմին՝ Հովակիմ Մելիքյանի (ՀԺԿ) նախագահությամբ: Վերջինս սերտ հարաբերությունների մեջ էր ՀՅԴ կենտրոնական կոմիտեի հետ: Ավելի ուշ այն գործում էր Երևանի ազգային խորհրդի հետ համատեղ և լիիրավ կերպով ներկայացնում էր Երևանի նահանգի զինվորական կառույցների միջուկը և ղեկավար մարմինը: 1917 թ. ամռանը ՀՅԴ կենտրոնական կոմիտեի ընտրություններից հետո, կուսակցությունն ավելի նպատակասլաց կերպով ձեռնամուխ եղավ կուսակցական օղակների ակտիվացման ճանապարհով նաև Երևանի նահանգի ազգային կյանքի աշխուժացման ու կազմակերպման գործին: Ձևավորվեցին գավառական և գյուղական կոմիտեներ: Երևան քաղաքը բաժանվեց յոթ թաղերի, ընտրվեցին թաղային կոմիտեներ, որոնց ներկայացուցիչների ժողովում ձևավորվեց ՀՅԴ քաղաքային կոմիտեն: Այդ համատեքստում որպես էական քայլ հիշարժան է 1917 թ. հոկտեմբերի վերջին Երևանում Վահան Փափագյանի նախաձեռնությամբ փախստականների քաղաքային Մարմնի ընտրությունը: Այդ մարմինը ներկայացնում էին Գրիգոր Խլղաթյանը, Փանոս Ժամհարյանը, Հայրապետ Հայրապետյանը, Եփրեմ Ալեքսանյանը և Ղևոնդ Խանիկյանը²⁵:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո ընկած ժամանակաշրջանում հատկապես, արևմտահայության առաջնահերթ խնդիրը շարունակում էր մնալ ինքնակազմակերպման հարցը: Երևանում իր ձևավորման սկզբից՝ 1917 թ. մայիսից մինչև 1917 թ. հոկտեմբերը, հետևողական և նպատակային աշխատանքի շնորհիվ,

²³ Տե՛ս Ե. Սարգսեան, Երևանը 1917 թուականին, Հայրենիք, Բոստոն, 1960, թիվ 9, սեպտեմբեր, էջ 92:

²⁴ Տե՛ս Արշալույս Աստուածատրեան, Արամը, Վեմ, Փարիզ, 1934, թիվ Ը, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 25:

²⁵ Տե՛ս Ասպարեզ, Ֆրեզնո, 1917, 2 նոյեմբերի, թիվ 482:

Արևմտահայ ազգային խորհուրդը կամ «հայ փախստականական կազմակերպությունների միությունն ու համագործակցությունը» ձեռք բերեց իրական կերպարանք:

Շնորհիվ իր հեղինակության և արևմտահայ գաղթականության շահերի արտահայտիչը լինելու հանգամանքի, Արևմտահայ ազգային խորհուրդը հինգ-վեց ամիսների ընթացքում ճանաչվեց ամենուրեք, իբրև փախստականական ներկայանալի կազմակերպություն: Քանի որ մյուս փախստականական բարեգործական կազմակերպությունները իրենց առավել մեծ ֆինանսական կարողություններով շարունակում էին զուգահեռաբար գործել, ուստի Արևմտահայ խորհրդի դերը ավելի շատ իր բնույթով միջնորդական էր, այն առավելապես կապող օղակ էր, քան թե կառավարող մարմին:

Արևմտահայ ազգային խորհուրդը մեծ աշխատանք էր տանում ռուսական աքսորավայրերում գտնվող հայ ռազմագերիների ազատման, Արևմտյան Հայաստանի ազգային փոքրամասնությունների՝ ասորիների, եզդիների ներկայացուցչական մարմինների հետ բարեկամական հարաբերությունների մշակման, փախստականների նպաստի և պարենավորման կարգավորման, արևմտահայ տասնյակ հայրենակցական միություններին օժանդակելու և դրանք ավելի խոշորացնելու գործերում:

Արևմտահայ ազգային խորհուրդը հետևում էր նաև, որպեսզի հայ մեծահարուստներ՝ Նազիրյանի և Այվազյանի կտակներից բաժին հատկացվի արևմտահայ չափահաս որբերին և աշակերտությանը՝ միջնակարգ դպրոցներ ընդունելու, երիտասարդության բարձրագույն կրթության գործին ֆինանսապես աջակցելու նպատակով:

Արևմտահայ ազգային խորհրդի ներկայացուցչական մարմինը Հայ փախստականների կենտրոնական խորհրդում՝ Բյուրոն էր, որը կենտրոնական վարչությունից ստացած նպատակային գումարները բաշխում էր համապատասխան մարմիններին և հսկում դրանց գործադրությունը:

Բյուրոն կազմակերպում էր նաև շրջանների ենթամարմինները և վերահսկում նրանց գործունեությունը: Արևմտյան Հայաստանի կրթական, մշակութային,

վերաշինման և այլ պահանջներին օժանդակելու նպատակով բյուրոն կապ էր հաստատում արտասահմանի հայ գաղթօջախների հետ²⁶:

Պատահական չէր նաև, որ ՀՅԴ Ռայոնական (Շրջանային) ժողովի որոշումների մեջ «Թւիրքահայ կոմիսարիատի մասին» որոշումը առանձնակի տեղ զբաղեցրեց: Կուսակցությունը հաստատակամորեն մերժում էր Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիարությանը վարչական առումով Կովկասին միացնելու դիտավորությունները և Հայկական հարցի միջազգային բնույթի շրջանակներում ընդգծում էր վերջինիս «առանձնությունը և անմիջական կապը կենտրոնական կառավարության հետ»²⁷:

Արևմտահայերի առաջին համագումարից ի վեր Արևմտահայ ազգային խորհուրդը հրավիրել էր երեք նստաշրջան: Երկրորդն ընտրել էր հատուկ գործադիր մարմին՝ բյուրո՝ Վ. Փափազյան, Ս. Կյուլպենկյան, Ա. Դարբինյան, Հ. Գալիկյան, Կ. Սասունի կազմով²⁸:

Իսկ 3-րդը՝ Հայաստանի Ապահովության խորհուրդ՝ որպես արևմտահայության լիազոր ներկայացուցչական մարմին: Նախատեսվում էր, որ այն սերտորեն կհամագործակցի Հայոց ազգային խորհրդի (Արևելահայ, ռուսահայ) հետ, միաժամանակ անպայմանորեն առաջ էր քաշվում արևմտահայերի նոր համագումար հրավիրելու կենսական հիմնահարցը: Հետհոկտեմբերյան անորոշ ու բարդ քաղաքական իրավիճակը անհնար դարձրեց ծրագրի իրականացումը: Ըստ «Հորիզոն» թերթի՝ (1917 թ. հոկտեմբերի 2-ից լրագիրը դրվեց ՀՅԴ Արևելյան բյուրոյի տրամադրության տակ՝ Ս. Գրուզինյանի (Վրացյանի) խմբագրությամբ – Վ.Ս.), սակայն, արևմտահայ քաղաքական, զինվորական ղեկավար մարմիններն ու գործիչները փայփայում էին թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Անդրկովկասում կազմակերպել արևմտահայերի «միացյալ Հայաստանի համագումար», որը առավելապես պետք է զբաղվեր Հայաստանի ապագա քաղաքական կայացման հարցով²⁹: Երևանի «Աշխատանքը», նոյեմբերի 8-ին արդեն հայտնում էր իր ընթերցողին, որ Արևմտահայ ազգային խորհուրդը որոշել է հրավիրել «նոր արևմտահայ համագումար»³⁰:

²⁶ Տե՛ս Գործ, Բաքու, 1917, N 9-10, էջ 220-223:

²⁷ Տե՛ս Շարժում, Ախալցխա, 1917, 5 նոյեմբերի, թիվ 24:

²⁸ Ասպարեզ, Ֆրեզնո, 1918, 4 հունվարի, թիվ 491:

²⁹ Տե՛ս Աշխատավոր, Թիֆլիս, 1918, 4 հունվարի, թիվ 2, նաև Հորիզոն, Թիֆլիս, 1918, 13 հունվարի, թիվ 8:

³⁰ Տե՛ս Աշխատանք, 1917, 8 նոյեմբերի, թիվ 59:

Այդ նպատակն իրականացնելու համար 1917 թ. դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում Երևանում գումարվեց Արևմտահայ ազգային խորհրդի արտակարգ ժողով: Այն քննեց արևմտահայության ընդհանուր համագումար հրավիրելու խնդիրը և «անհնար գտաւ մօտիկ ժամանակի մէջ հրաւիրել համագումար մը՝ որ ընտրուած ըլլայ դեմոկրատիկ սկզբունքով, և արտահայտիչ համարուի թիրաքահայ բոլոր զանգուածներու»³¹:

Նկատի ունենալով քաղաքական վայրիվերումները, հաղորդակցության դժվարությունները, ժողովն անհնար գտավ մոտ ժամանակում հրավիրել այդ համագումարը: Համագումարի կայացման ելակետային հիմնավորում էր համարվում վերջինիս ժողովրդավարական սկզբունքներով ընտրված լինելու հանգամանքը և հատկապես այն, որ համագումարն ի վերջո պետք է արտահայտեր ու ներկայացներ արևմտահայության բոլոր զանգվածների ու շրջանակների շահերը: Դաշնակցության «Ազատամարտ» թերթը առավել ընդդիմադիր կեցվածք էր ընդունել նոր համագումարի կազմակերպման հարցում, ինչը բացատրվում է այդ խնդրի շուրջ ևս կուսակցության ներսում առկա տարաձայնությունների ու մոտեցումների տարբերությամբ: Դաշնակցության այս թերթը կողմ էր համագումարի հրավիրմանը այն պայմանով, որ վերջինս իրավասու լինի զբաղվելու միմիայն գաղթականության խնդիրներով: Շեշտադրվում էր նոր համագումարի քաղաքական լայն ուղղվածությունն ու բնույթը, ուստի և այն որակվում էր արպես «Հայաստանի համագումար», այլ ոչ թե «հայկական»: Իսկ «Հայաստանի» համագումար ասելով նրանք նկատի էին առնում նաև այլ ազգերի մասնակցության ժողովրդավարական խնդիրը՝ առանց ազգի, կրոնի և սեռի խտրականության³²:

«Թուրքահայ համախորհրդակցության» շրջաբերական նամակը ընդգծում էր, որ արևմտահայության ֆիզիկական գոյությանը սպառնացող քաղաքական և տնտեսական մի շարք այժմեական խնդիրներ անհապաղ լուծման կարիք ունեն, ուստի և որոշվեց 1918 թ. մարտի 4-ին Արևմտյան Հայաստանում՝ Կարինում հրավիրել արևմտահայերի համախորհրդակցություն³³:

³¹ Տե՛ս Վան-Տոսպ, Թիֆլիս, 1918, 14 հունվարի, թիվ 1:

³² Տե՛ս Աշխատավոր, 1918, 4 հունվարի, թիվ 2:

³³ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վ. թիվ 69, նաև՝ Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

Նախատեսվում էր, որ Համախորհրդակցությանը պետք է մասնակցեն Երկրի (Արևմտյան Հայաստան), Կովկաս-Ռուսաստանի, Պարսկաստանի բոլոր արևմտահայերը: Հրավիրվում էին նաև ներկայացուցիչներ Եվրոպայի, Ամերիկայի և Եգիպտոսի «թուրքահայ գաղութներից»: Որոշվում էր, որ յուրաքանչյուր 3000 արևմտահայը ներկայացվում էր մեկ պատգամավորով: Այսպես կոչված «մեկուսացած շրջաններուն» բացառապես տրվում էր 1 պատգամավորի իրավունք, եթե համապատասխան շրջանի ազգաբնակչության թիվը 1000-ից պակաս չէ: Այն շրջանները, որոնք իրենք իրենց համարում էին մեկուսացած, այդ մասին պետք է նախապես հայտնեին Արևմտահայոց բյուրոյին³⁴:

Արևմտահայ ազգային խորհրդի արտակարգ նիստը կարևորվում է հատկապես նրանով, որ այն տրամադրում էր արևմտահայ ազգաբնակչության՝ իր հաշվարկներով իրականացրած մոտավոր թվաքանակը: Այդ է վկայում նաև շրջաբերականի ծանոթությունն առ այն, որ առանձին շրջանների մարմինները իրական և փաստացի ճշգրտումների ու դիտողությունների դեպքում անհապաղ պետք է այդ մասին տեղեկացնեին բյուրոյին:

Ըստ այդմ ստացվում էր հետևյալ պատկերը.

Վայրը	Բնակչության	Պատգամավորների
	թիվ	թիվ
Արևմտյան Հայաստան		
1. Վան	25.000	8
2. Ալաշկերտ-Ղարաքիլիսա	15.000	5
3. Խնուս-Մանազկերտ-Այնթափ	13.000	4
4. Բասեն	15.000	5
5. Կարին	7.500	3
6. Դիադին	6.000	2
7. Բայազետ	6.000	2
8. Դերջան	3.000	1
9. Երզնկա	2.000	1

³⁴ Տե՛ս Աշխատանք, նույն տեղում:

10. Բաբերդ	800	1
11. Տրապիզոն	800	1
	ընդհ.՝ 94.100	

Կովկաս-Ռուսաստան

12. Երևան	50.000	17
13. Ալեքսանդրապոլ	25.000	8
14. Կարս	10.000	3
15. Թիֆլիս	25.000	8
16. Բաքու	6.000	2
17. Օդեսա-Ղրիմ	6.000	2
18. Ռուստով-Նախիջևան	1.500	1
19. Սոչի-Սոխում	12.000	4
20. Բաթում	3.000	1
21. Արմավիր	1.500	1
	ընդհ.՝ 140.000	

Պարսկաստան

22. Ադրակ	5.000	2
23. Սալմաստ	1.800	1
	ընդհ.՝ 6.800	

Ըստ այս աղյուսակի, վերոհիշյալ բնակավայրերում տեղաբաշխված էր մոտ 241.000 արևմտահայ բնակչություն³⁵:

«Հորիզոն» թերթի վկայությամբ արևմտահայերի մոտավոր թիվը միայն Արևմտյան Հայաստանում կազմում էր ավելի քան 140.000 մարդ: Ավելացվում էին Բայազետի շրջանների (10.000), Ճորոխի հովտի (3.000), Ալաշկերտի (30.000), Տրապիզոնի (1.500), Խնուսի (28.000) բնակչության թվերը³⁶:

³⁵ Տե՛ս Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

³⁶ Տե՛ս Հորիզոն, 1918, 3 հունվարի, թիվ 1:

Մեկ այլ հաշվարկով Վասպուրականի (143 գյուղեր) և Վան քաղաքի բնակչության ազգային կազմը և տեղաբաշխումը 1917 թ. հոկտեմբերի վերջի դրությամբ հետևյալ պատկերն էր ներկայացնում³⁷:

Վան – 23361 բնակիչ՝ 6738 ընտանիք:

հայ - 21.169

ասորի – 2.057

թուրք – 93

եզդի – 42

Այգեստան և քաղաք – 5.388

Վան – Տոսպ (արվարձաններ) 3.808

Հայոց Ձոր - 1.204

Թիմար – 8.455

Արճակ – 2.618

Սարայ – 1.256

Բերկրի – 615

Աբաղա – 17

Ժողովը առաջարկեց պատգամավորների ընտրության սկզբունքներն ու եղանակները:

Կովկասի, Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ ընտրված Արևմտահայ շրջանային մարմիններից յուրաքանչյուրը պետք է հրավիրեր իրեն ենթակա քաղաքային և գավառային մարմիններին՝ իրենց ամբողջական կազմով և այդ կերպ ձևավորված շրջանային ընդհանուր ժողովը իր կողմից կամ դրսից պետք է ընտրեր ազգաբնակչության թվին համապատասխան թվով պատգամավորներ:

Նախատեսվում էր, որ Արևմտյան Հայաստանի մարմիններն ազատ են ընտրության հարցում՝ կամ պետք է իրենց պատգամավորներին ընտրեին վերոհիշյալ ձևով կամ դիմեին ժողովրդական նոր ընտրության:

Այն վայրերում, որտեղ արևմտահայ ազգային մարմիններ գոյություն չունեին, պատգամավորների ընտրությունը կկատարվեր ժողովրդական ընտրության եղանակով:

³⁷ Տե՛ս Հորիզոն, 1917, 28 հոկտեմբերի, թիվ 230:

Ցանկալի էր համարվում, որ ընտրված ներկայացուցիչներն արտահայտեին ազգաբնակչության կամքը, որոշակի տեղեր տրվեին կանանց:

Այնուհետև՝ նախատեսվում էր, որ համագումարին մասնակցեն արևմտահայ քաղաքական կազմակերպություններից երեքական ներկայացուցիչներ, մամուլի օրգաններից «Ազատամարտը», «Աշխատանքը», «Հայաստանը», «Վան-Տոսպը» համագումարում ներկայացվելու էին մեկական պատգամավորով, ինչպես նաև մասնավոր կերպով հրավիրվեն հայտնի արևմտահայ գործիչներ, մտավորականներ³⁸:

Ուշադրության է արժանի նաև բյուրոյի կողմից առաջարկվող համագումարի օրակարգը: Այն ընդգրկում էր հետևյալ հարցերը՝ ա) Արևմտահայ ազգային խորհրդի նյութական և բարոյական հաշվետվություն, բ) Հայաստանի երկրապահ զինվորական ուժի կազմակերպում, գ) հայ ժողովրդի ազգային-հասարակական կյանքի կազմակերպում, դ) վերաշինության գործ, ե) հայության երկու հատվածների փոխհարաբերությունների խնդիր, զ) մինչև հաշտության կնքումը Արևմտյան Հայաստանի քաղաքացիական-վարչական կազմակերպում, է) Հայաստանի քաղաքական ապագան, ը) Պարենավորման հարց, թ) հայրենադարձության, վերաբնակեցման խնդիր³⁹:

Արևմտահայ ազգային խորհրդի Բյուրոյի նախաձեռնությամբ 1917 թ. դեկտեմբերի 16-ից, երկու նիստով Թիֆլիսի Հայոց Առաջնորդարանի շենքում գումարվեց արևմտահայ տարբեր հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խորհրդակցությունը: Խորհրդակցությանը մասնակցում էին Արևմտահայ խորհրդի 15 անդամները, արևմտահայ փախստական շրջանային մարմինների ներկայացուցիչները՝ Վանից, Կարինից, Ալաշկերտից, Բասենից, Երզնկայից ու նաև Երևանից, Բաքվից⁴⁰:

1917 թ. հոկտեմբերին ստեղծված Արևելահայ ազգային խորհուրդը, բոլշևիկյան հեղաշրջումից հետո, ինտերցիայի ուժով փորձում էր մեկուսացնել, չեզոքացնել ավելի վաղ ստեղծված Արևմտահայ ազգային խորհուրդը:

«Արևմտահայ» - «Արևելահայ» առճակատումն իր արտահայտությունն է ստացել Արշակ Չոպանյանին հասցեագրված Վահան Թոթովենցի 1917 թ. նոյեմբերի 1-ի

³⁸ Տե՛ս Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰ Տե՛ս Ազատամարտ, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 54:

նամակում: «Հայաստան» թերթի և Անդրանիկի անունից նա պատասխանում էր Ա. Չոպանյանին, մասնավորապես, վերջինիս՝ «մեր ժողովրդի երկու հատուածները միացած ու մեկ նպատակի յառած» տեսնելու ցանկությանը: Վ. Թոթովենցի պատասխանը, ցավոք սրտի անհույս ու անմխիթարական շեշտադրումներ էր կրում. «Բայց այդ բանը անկարելի է,- գրում էր նա,- քանի որ Կովկասեան հատուածը կուզէ թրքահայ ժողովուրդը պահել վասսալ-խնամակալի վիճակում և տիքթատորի դեր ստանձնել անոր վրայ: Դուք եկեր էք Կովկաս և ըստեղ կճանչնաք ռուսահայ մտաւորականները, բայց երկար չէք մնացած տեսնելու անոնց զգվելի, բացասական կողմերը: Անոնք “divine right” (երկնային իրավունք) կը դավանին մեր վրայ...»⁴¹:

Այդ տագնապն արտահայտվեց «Հայաստան» թերթում նաև 1917 թ. նոյեմբերի 29-ին: Վ. Թոթովենցի խմբագրականը կրում էր «Մեր պարտականութիւնը» խորագիրը: Օրվա հրամայականը համարելով Արևմտահայերի նոր ներկայացուցչական ժողովի՝ 2-րդ համագումարի անհրաժեշտությունը, նա ընդգծում էր վերջինիս առաքելությունը. «Արևմտահայ Խորհուրդը մեր – Կովկաս ապաստանած և երկիրը ապրող թրքահայութեան և գրաւուած հայկական հողամասին – վարչական – քաղաքական վարչութիւնն է: Պետք է փաստօրէն մեր երկրի ճակատագիրը մեր ձեռքն անցնի, ժողովրդի քաղաքական դեկը բացարձակ կերպով կախում ունենայ ինքնիրմէն, հանդիսաւորապէս ժողովուրդներուն խոստացուած ինքնորոշման իրավունքը՝ Ռուսական Յեղափոխութիւնը պէտք է ճանչնայ՝ մեզի համար»⁴²:

Վ. Թոթովենցի հաջորդ պահանջներն ավելի արմատական էին և անզիջում: Նա առաջարկում էր չճանաչել Փախստականական գլխավոր խորհուրդը, ինչպես նաև փախստականական միջազգային մարմինը և ուղղակիորեն կապվել Պետրոգրադի փախստականական ընդհանուր կազմակերպության հետ: Նա նաև կոչ էր անում չճանաչել Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարությունը, որը «մեր իրաւունքներուն դէմ ոտնձգութիւն մը ըլլալէ զատ ուրիշ բան չէ պարզապէս»⁴³:

Պատմաբան Կ. Հայրապետյանի կարծիքով ևս արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերը փորձում էին վերադասավորել իրենց շարքերը և ստեղծել համազգային կուռ կազմակերպություն: Նրանք ձգտում էին իրենց ձեռքը վերցնել

⁴¹ Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, այսուհետև՝ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթ. թիվ 2414:

⁴² Տե՛ս Հայաստան, 1917, 29 նոյեմբերի, թիվ 169:

⁴³ Տե՛ս նույն տեղում:

արևմտահայ փախստականների և ընդհանուր առմամբ արևմտահայության հետագա ճակատագրի տնօրինումը և ղեկավարումը՝ ձերբագատվելով արևմտահայ հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների խնամակալական վերաբերմունքից⁴⁴:

Այդ անջրպետը և «վտանգաւոր գործելակերպը» կանխելու նպատակով, 1917 թ. դեկտեմբերի սկզբին, Արևմտահայ խորհուրդը դիմում է Ռուսահայոց ազգային խորհրդին, պահանջելով, որպեսզի արևմտահայերի խնդիրների հետ կապված քննարկումներին ու որոշումներին մասնակցի նաև Արևմտահայ խորհրդի գործադիր կոմիտեն, թեկուզ և խորհրդակցական ձայնով: Այդ առաջարկը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ Արևմտահայերի 1-ին՝ Երևանի համագումարի կողմից Արևմտահայերի խորհուրդը քաղաքական հարցերով զբաղվելու իրավունք չի ստացել⁴⁵: Հարց էր բարձրացվում, թե «ռուսահայոց քուէներովը ընտրուած խորհուրդը, որ սկսած է «անուշադրութեամբ» ինքզինքը Ազգային խորհուրդ անուանել, միթէ ըստացած է իրաւունք թրքահայ ժողովուրդէն կամ թրքահայ համագումար է, զբաղելու թրքահայոց ճակատագրին հետ կապուած հարցերով, կամ Թրքահայաստանի քաղաքական գործերով: - Ո՛չ»⁴⁶:

Կարծում ենք «Հայաստան»-ի նույն համարում Վահան Թորթովենցի «Ազգային խորհուրդ» խմբագրականի որոշ ծրագրային դրույթներ պետք հատվածաբար ներկայացվի ընթերցողին: Այս մոտեցումները որոշ պարզություն են բերում ոչ միայն երկու հայկական խորհուրդների, այլ նաև արևելահայ-արևմտահայ հիվանդագին վեճի ու մրցակցության նոր զարգացումների հարցում:

Նախ՝ գործելաոճի առումով տարբերություն չէր դրվում Արևելահայ խորհրդի և տխրահռչակ Ազգային բյուրոյի միջև: Ապա և Վ. Թորթովենցը նշում էր, որ. «Պատկերը միևնոյնն է արիւնէն առաջ և արիւնէն յետոյ (նկատի ունի ցեղասպանությունը – Վ.Մ.): Մարդկային թե անհատներու և թե զանգուածներու հոգեբանութեան մէջ կայ, գոյութիւն ունի, մշտաբթուն և կարմրած վիճակի մէջ, տիրապետելու, ստրկացնելու տենչը, գերիշխելու բաղձանքը, աւելի փոքրաթիւին, աւելի տկարին վրայ: Ռուսահայ մտաւորական հոգեբանութեան մէջ, յանձին իրենց կուսակցութեանց և

⁴⁴ Տե՛ս Կարեն Հայրապետյան, Անդրանիկը Արևմտահայ առաջին համագումարում, Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ, 2015, էջ 141:

⁴⁵ Տե՛ս Հայաստան, 15 դեկտեմբերի, թիվ 176:

⁴⁶ Նույն տեղում:

ներկայացուցչական մարմիններու այդ գիծը կը յայտնուի ցցուն և տգեղ կերպով դուրս կուգայ իրենց եղբայրակից արևմտեան հայոց հանդէպ բռնած քաղաքականութեան մէջ: Այդ գիծը, կըսենք, մարդկային է և բնական, բայց յանցանքը այն է, որ գերիշխել ուզող գծին հակընդդէմ ազատագրուող գիծը չի յայտնուիր մեր մէջ: Պատճառը այն է, որ 1914-ին, և անկէ առաջ ալ, մեր քաղաքական պայմանները աննպատակ էին և հիմա ալ մեր մտաւորականութեան կարևոր մասը գարշապարներու տակ կը հեծէ: Մտաւորականներ, որոնց յանձնուած է այս դժբախտ հատուածի ճակատագիրը, շղթայակապ կը գերեվարուին պայմանագրութիւններէ պայմանադրութիւն, երկրպագութենէ երկրպագութիւն, պաշտամունքէ պաշտամունք»⁴⁷:

1917 թ. դեկտեմբերի 15-ին «Հայաստան»-ը տեղեկացնում էր, որ ամսի 19-ին Երևանում պետք է գումարվի Արևմտահայ ազգային խորհրդի արտակարգ խորհրդակցություն: Ըստ խմբագրականի հեղինակ Լևոն Թութունջյանի, խորհրդակցության առաջնահերթ խնդիրը Արևմտահայ ազգային խորհրդի ուժեղացումը և այն հեղինակավոր քաղաքական մարմնի վերածելու հարցն էր: «Արևմտահայի (խորհուրդը նկատի ունի – Վ.Մ.) կազմը,- վստահ էր հեղինակը,- դժբախտաբար չկրցաւ նոյնիսկ օգտուիլ համագումարի իրեն յանձնած հեղինակութենէն, իշխանութենէն: Պետք է ուժեղացնել այդ մարմինը աւելի փորձառու, աւելի հեղինակաւոր տարրերով և յանձնել քաղաքական ղեկը իր ձեռքին: Ռուսահայոց Ազգ Խորհուրդը Արևմտահայը իրաւասու չի գտներ խառնուելու թիրքահայ քաղաքական գործերուն, իսկ ինքը ուրկէ՞ կստանայ իր տէքթթական հեղինակութիւնը, չենք գիտեր»⁴⁸:

Լ. Թութունջյանի հետևությունն այն էր, որ երկու խորհուրդներն էլ իրավունք չունեն զբաղվելու Հայկական հարցով, այն միջազգային է. «Մենք Արևմտահայերս կուզենք ստեղծել յանձին Արևմտահայ խորհրդին՝ Թրքահայոց վարչական մեքենա մը, որը պետք է զբաղի մեր քաղաքական գործերով, և որովհետև մեր հարցը միջազգային է, հոն խորհրդակցական ձայն պիտի ունենան Ռուսահայ ժողովրդի ներկայացուցիչներն ալ: Դեկտեմբերի 15-ի թրքահայ Քօնֆերանսը պետք է լուծէ այս հարցը»⁴⁹:

Վ. Թոթովենցի, Լ. Թութունջյանի և այլոց մոտեցումները կարելի է բացատրել երկու ազգային խորհուրդների, Դաշնակցություն – Հայ ժողովրդական կուսակցություն

⁴⁷ Տե՛ս Հայաստան, 15 դեկտեմբերի, թիվ 176:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

հարաբերությունների, Դաշնակցություն – Անդրանիկ և այլ արևմտահայ գործիչների առճակատամար և վերջապես՝ բոլշևիկյան հեղաշրջման պայմաններում Կովկասյան ռազմաճակատ – Արևմտյան Հայաստանի անորոշ և տագնապալի ճակատագրի սթափ և խորքային ընկալմամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ օբյեկտիվ վերլուծությունն ու գնահատականները ավելի էին սրում և խորացնում առանց այն էլ անջրպետված արևելահայ-արևմտահայ հարաբերությունները և որպես էլք փորձում էին ուրվագծել առերես ինքնուրույն, բայց և առավել սեփական կեղևի մեջ կաղապարվելու ուղին:

Արևելահայ հատվածի և պատմականորեն այդ արմատավորված վարչա-աշխարհագրական հասկացության մեջ ևս կային հատվածական ընկալումներ, որոնք ինչ-որ տեղ դուրս էին մնացել Արևելահայ ազգային խորհրդի ուշադրությունից:

Այսպես, պարսկահայությանը մտահոգում էր Ազգային խորհրդի հետ իրենց փոխհարաբերությունների հարցը: «Իրապես պարզ չէ,- գրում էր Թավրիզի «Ազգ» թերթը,- Ազգային Խորհրդի լիազորութեան սահմանները, արդեօք նա համազգային մի մարմին է՞, թէ ռուսահայութեան ընթացիկ գործերի մի վարիչ կոմիտե: Եթե նորընտիր խորհուրդը զբաղվելու է միայն ռուսահայութեան խնդիրներով, լաւ կը լինէր, որ նա պարզ որոշէր իր դերը «Ռուսահայութեան խորհուրդ» ինքնորոշ անւան տակ: Իսկ եթէ նա ազգային է՝ բնականաբար հարց է առաջ գալիս. ո՞ր է հապա հայութեան հատւածների ներկայացուցչութիւնը: Թերևս դժարին էր գաղթավայրերից պատգամաւորութիւն հրաւիրելը, սակայն պարսկահայերից, յատկապէս Ատրպատականի հայութիւնից, ամենայն հեշտութեամբ կարող էին ներկայացուցիչներ լինել: Ինչո՞ւ ուրեմն նրանք չկան, մանաւանդ, որ այդ մասին միջնորդութիւն է յարուցւել»⁵⁰:

Փարիզի 1919 թ. առաջին ազգային համագումարում, փետրվարի 24-ի նախապատրաստական նիստում լսվեց Ավետիս Թերզիպաշյանի «տեղեկագիր հաշվետվությունը»՝ նվիրված հայկական հարցին, արևմտահայության բազմապիսի խնդիրներին: Այստեղ հատուկ անդրադարձ կատարվեց 1917 թ. դեկտեմբերի 15-ին Թիֆլիսում հրավիրված խորհրդակցությանը: Ընդգծվեց հատկապես այն հանգամանքը, որ խորհրդակցության աշխատանքների ընթացքում Փարիզից Հայկական Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարից ստացվեց հեռագիր, որը կրում էր

⁵⁰ Տե՛ս Ազատամարտ, 1917, 14 նոյեմբերի, թիվ 34:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության շիֆրը: Հեռագրում ասվում էր. «Եթե թրքահայերը՝ ռուսահայերի օգնությամբ ձեռնարկեն պաշտպանել ռուսական զորքերի պարպած ճակատը, Դաշնակիցները կը խոստանան զինուորական եւ ֆինանսական օգնութիւն... այն օրը, երբ Հայաստանը հայկական ոյժերով յաջողուի պաշտպանել, Դաշնակիցները դէմ չեն՝ եթե Հայկական օթոնումի հռչակուի»⁵¹:

Այս հաշվետվությունը կարևորում ենք նրանով, որ ի դեմս Ապահովության խորհրդի ստեղծման, Ավ. Թերզիպաշյանի կողմից ուղղակիորեն ներկայացվում էր արևմտահայության գործոնը առանձին շեշտելու քաղաքական ենթատեքստը: «Մէկ նպատակի ձգտող գործունեութեան վրա թրքահայութեան անունը եւ դրոշմը առանձին պահպանելու պէտքը,- նշվում էր այնտեղ,- Ռուսահայ Ազգային խորհրդի հետ համաձայնութեամբ, ճանաչուած էր երկու նկատումներով. Ա. Խուսափելու համար այն բարդութիւններից, որոնք կրնային ծագել իրաւական տեսակէտներից ռուսահայերի համար. Բ. Անվթար տանելու համար թրքահայոց դատի միջազգային բնոյթը»⁵²:

Այս քաղաքական կրեդոն հայ իրականության մեջ գործեց փաստորեն 1917-1923 թթ. ընթացքում, այսինքն՝ Արևմտահայերի առաջին համագումարից մինչև Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակաշրջանը: Եվ դա նշվեց որպես Ավ. Թերզիպաշյանի զեկույցի եզրակացություն. «ա. որ Կովկասում թիրքահայերի անուամբ քաղաքական ուրույն օրկանի մը կազմակերպութիւնը անհրաժեշտ էր, քաղաքական իրադարձութիւնների ընթացքին Հայկական հարցը անվթար պահելու համար և բ. Որ գոյացնելով այս օրկանը, Կովկասի թիրքահայ փախստականութեան յաջողուեց, հակառակ շրջապատի դժնդակ պայմաններին, հաստատուն մնալ մինչեւ վերջ իրենց պայքարին մէջ, եւ խաղաղութեան նախօրեակին Դաշնակիցներին ներկայացնել իրենց դատը անխախտ՝ ինչպէս էր պատերազմի նախօրեակին, եւ կոփուած նոր գոհաբերութիւնների բովին մէջ»⁵³:

Փաստորեն Ազգային խորհրդի ձևավորումից հետո՝ 1917 թ. նոյեմբերի կեսերին հայկական միջավայրում դեռևս քննարկվում էին Փետրվարյան հեղափոխության իրականության հիմնահարցերը, դժգոհություն էր հայտնվում Թիֆլիսի ազգային Համախորհրդակցությանը պարսկահայ հատվածի անմասն մնալու խնդրում: Շեշտվում

⁵¹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.) Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 338:

⁵² Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 338:

⁵³ Նույն տեղում, էջ 341:

եր հատկապես Անդրկովկասի հայության հետ պարսկահայության տևական և ընդհանուր հոգսերի հանգամանքը:

Եվ այսպես, արևմտահայ խորհրդակցության օրակարգի գլխավոր խնդիրներն էին քաղաքական կացության վերլուծությունը և Արևմտյան Հայաստանի պաշտպանության հարցը: Կ. Սասունու կարծիքով, խորհրդակցությունը դուրս եկավ Արևմտահայ առաջին համագումարի ուղենշած սահմաններից, որոշեց դառնալ ազգային քաղաքական մարմին և որպես այդպիսին մասնակցել արևմտահայության խնդրի հետ կապված բոլոր հիմնահարցերի լուծմանը⁵⁴: Այդպիսով արևմտահայ գաղթականական մարմինները լծվեցին քաղաքական և ռազմական աշխատանքներին, այն ինչ իրականացնում էին Արևմտյան Հայաստանում՝ գեներալ-կոմիսարության ղեկավարության հետ համատեղ:

Որոշվեց հոչակել պարտադիր զորակոչ և կազմակերպել Արևմտահայ զորաբաժին՝ բաղկացած 20 հազար զինվորներից: Խորհրդակցությունը բանակի կազմակերպման և նրա նյութական ու բարոյական վերահսկողության գործը հանձնեց իր կազմից ձևավորված ութ հոգանոց մարմնին. այն կոչվեց **Արևմտահայ Ապահովության** (Պաշտպանության – Վ.Մ.) **խորհուրդ**, որի անդամներն էին Վ. Փափազյանը (նախագահ), Սեպուհը, Հ. Ամատունին, Կ. Սասունին (ՀՅԴ), պրոֆ. Հ. Հակոբյանը, Ա. Թերզիպաշյանը, Հ. Տեր-Չաքարյանը (ռամկավար)⁵⁵: Մասնակցում էին նաև բոլշևիկ Գ. Հայկանին և նախկին ս.-դ. Գրիգոր Վարդանյանը⁵⁶:

Ըստ Ա-Դո-ի ղեկավար կազմում էին նաև Հ. Գալիկյանը, բժ. Վառվառյանը, այլ խոսքով՝ նա ներկայացնում է 9 հոգուց բաղկացած խորհուրդ⁵⁷:

Ապահովության խորհուրդը ձևավորեց իր բաժինները: Ա. Թերզիպաշյանը ստանձնեց գործավարությունը և հաշվապահական հսկողությունը, Վառվառյանը՝ բանակի առողջապահական գործը:

Հրավիրվեցին նաև Հ. Հակոբյանը, Մատենճյանը, տիկիններ Հոլոս Սերենկուլյանը (Վարդգեսի կինը), Պերճուհի Բարսեղյանը (Վանի Սարգսի կինը), Թուֆենկճյանը, որպես պահեստապետ և Խ. Սամվելյանը՝ հաշվապահ: Բացի այդ, գործում էին հիմնական

⁵⁴ Տե՛ս Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէրոյթ, 1966, էջ 157:

⁵⁵ Տե՛ս Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 158:

⁵⁶ Տե՛ս Վահան Փափազյան, Իմ յուշերը, Հատոր երկրորդ, Պէրոյթ, 1952, էջ 452:

⁵⁷ Տե՛ս Ա-Դո, Հայության երկունքը, ՀՀ պատմության թանգարան, նոր պատմության բաժին, թղթ. 839/195 դ, ձեռագիր, էջ 7, (գիտական շրջանառության մեջ առաջին անգամ դրվել է մեր կողմից – Վ.Մ.) նաև՝ նույնը Երևան, 2014:

դիվանները՝ զորահավաքի, զինվորների ընտանիքների խնամքի, առողջապահական, վիճակագրական⁵⁸: Հայաստանի Ապահովության խորհուրդը փաստորեն ստանձնում էր Արևմտյան Հայաստանի ժամանակավոր կառավարության լիազորություններ և ինչ-որ առումով երկրամասի անկախության ձեռք բերման փորձ էր արվում:

Խորհրդակցության ընդունած որոշումները հավանության արժանացան ոչ միայն հայ հասարակական-քաղաքական շրջանակներում, այլև Արևմտյան Հայաստանի Գեներալ-կոմիսարության, Կովկասյան բանակի հրամանատարության, Կոմիսարիատի, Թիֆլիսում հավատարմագրված Անգլիայի, Ֆրանսիայի հյուպատոսությունների կողմից: Նրանք բոլորն էլ ճանաչեցին Հայաստանի Ապահովության խորհրդի լիազորությունները, որը Ա. Թերզիպաշյանն անվանում է Արևմտյան Հայաստանի ժամանակավոր կառավարություն⁵⁹:

Ռեզոլուցիայի ծախսերի հայթայթման գործը ստանձնեց Արևմտյան Հայաստանի Գեներալ-կոմիսարությունը: Պ. Ավերյանովի, Հ. Զավրիյանի և բանակում դեռևս ազդեցություն պահպանող էսեռական կազմակերպության գործիչների նախաձեռնությամբ, ռուսական բարձր հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց գեներալի աստիճան, ինչը գործնականորեն անհրաժեշտ էր զորավարի պարագայում, քանի որ 15-20.000-անոց զորաբաժին ղեկավարելու համար դա պարտադիր պայման էր: Երկրապահ զորաբաժնի հրամանատարի ընտրության համար ձևավորվեց 12 հոգուց բաղկացած կոմիտե, որը թեկնածուների՝ Մ. Միլիկյանի և Անդրանիկի քվեարկության ժամանակ 9 ձայն տվեց Անդրանիկի օգտին⁶⁰:

Արտակարգ խորհրդակցության և Հայաստանի Ապահովության խորհրդի առաքելությանն ու որոշումներին համահունչ իրար հաջորդելով հրապարակվում են Անդրանիկի կոչը, Հ. Թումանյանի նամակը Անդրանիկին, Արևմտահայերին ուղղված կոչը, որոնք ընդհանուր առմամբ՝ Արևմտյան Հայաստանի, հայ ժողովրդի առջև նոր վտանգների կանխատեսման և արհավիրքը կանխելուն միտված վճռական քայլերի արտահայտություններ էին:

Անդրանիկն իր կոչում ընդգծում էր, որ «գալիք ազատութիւնը կը պատկանի բոլորիս, Թիւրքիայի գրաւուած երեք նահանգներու ժողովուրդներուն»՝ իսլամ կամ ոչ

⁵⁸ Տե՛ս նույն տեղում:

⁵⁹ Ա. Թերզիպաշեան, Նուպար, Փարիզ, 1939, էջ 194:

⁶⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 103 շրջ.:

իսլամ հույներին, եզդիներին, ասորիներին, քրդերին⁶¹: Առանձնահատուկ կերպով նա դիմում էր նաև վրաց ազգին, հավատալով, թե «որուն ազգային շահերը համընթաց պիտի քալեն մանաւանդ ասկէ յետոյ»⁶²:

Կոչի գլխավոր նպատակը Արևմտահայ Երկրապահ զորամասի հավաքագրումն էր և, իհարկե Հայրենիքի պաշտպանությունը:

Հետևում է «նամակ Անդրանիկին» Հովհ. Թումանյանի ուղերձը, որը հայտարարվել էր նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդում. «Ես չորս տղայ ունիմ, չորսն էլ երկրի կառավարութեան, Ազգային Խորհրդի և Քո տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին ինչի որ ընդունակ կը լինեն: Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայիր, միայն թէ կարողանանք բոլոր ազնիւ ժողովուրդների և ազատասէր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրաւունքներն ու ազատութիւնը: **Ես անսասան հաւատարիմ Քո՝ շատ փոթորիկների մէջ ձեռք բերած փորձառութեանը, վառ հայրենասիրութեանն ու ազատասիրութեանը, այլն բնական մարդասիրութեանը ու զինուորական բարձր տաղանդին և՛ պատրաստ գալու, երբ և ուր կը կոչի Քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ** (ընդգծումն իմն է – Վ.Մ.): Միշտ քո Յովհ. Թումանեան: Յ.Գ. (Հետգրություն – Վ.Մ.) – Սրա հետ միասին, որովհետև ես էն կարծիքին եմ, որ ամէն մի հայ այժմ պետք է իրեն դնի կամաւոր տուրքի տակ, պարտաւորում եմ ամսական հարիւր ռուբլի տալ էս նպատակով մեր ընդհանուր գանձարանին»⁶³:

Ներկայացնենք նաև Անդրանիկի պատասխան «Բաց նամակը» ուղղված Հ. Թումանյանին. «Միրելի Յովհաննէս, ես հրճուանքով կարդացի նամակդ: Հասած է ժամը, որ բոլորը նմանին քեզի տրամադրելի ընելով իրենց զաւակները և դրամը հայրենիքի պաշտպանութեան գործին: Պետք է մոռնանք պահ մը գրիչը փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մէջ միայն կը ծաղկի գեղարուեստի կեանքը: Ես շատ զգացուած եմ քու բարձր տրամադրութենէդ և կը յուսամ, որ մեր

⁶¹ Տե՛ս Հայաստան, 1917, 22 դեկտեմբերի, թիվ 182:

⁶² Տե՛ս նույն տեղում:

⁶³ Հայաստան, նույն տեղում, 23 դեկտեմբերի, թիվ 183:

բովանդակ մտաւորականութիւնը կը հետևի քու օրինակին և այսպէսով կը դարբնինք մեր սրբազան ազատութիւնը: Քոյդ՝ Անդրանիկ»⁶⁴:

Դեկտեմբերի 29-ին «Հայաստան»-ում հրապարակվում է Հայաստանի Ապահովության Խորհրդի և Անդրանիկի համատեղ կոչն՝ ուղղված «Թիիրքահայ եղբայրներուն». «Հայրենիքը վտանգի մէջ է, վտանգի մէջ է և մեր գոյութիւնը, արձագանք տուէ՛ք մեր զօրակոչին»⁶⁵:

Եվ վերջապէս «Հայաստանի» 1918 թ. առաջին համարում Վ. Թոթովենցն էր աղաղակում օրվա և բոլոր ժամանակների ճիշը. «Մեզի ձգուած է մեր ազատութեան ձեռքերումը»⁶⁶:

Ապահովության խորհրդի ստեղծման և գործունէության համատեքստում ռամկավարները սուր քննադատության էին ենթարկում Անդրանիկի դեմ Դաշնակցության պահվածքը: «Մենք,- գրում էր Վան-Տոսպը»,- Ալեքսանդրապոլից, Երևանից, Իգդիրից ստացել ենք տեղեկութիւններ, որ այդ շրջաններում դաշնակցական գործակալները սկսել են պրովոկացիաներ անել Անդրանիկի դեմ: Գաւառական նեղ, սահմանափակ մթնոլորտում քաջալերուող այդ թելադրանքները, ինչպիսի շարժառիթներից էլ բխելու լինեն, միայն քայքայիչ ազդեցութիւն կարող են ունենալ մեր ներկայ գործունէութեան վրայ: Անդրանիկին կամ նրա գործունէութիւնը չէ, որ պիտի պաշտպանենք այստեղ, նրա գործելակերպի այս կամ կետի վերաբերմամբ, ընդհակառակն կարելի է շատ խիստ դիտողութիւններ և քննադատութիւններ անել: Բայց Անդրանիկի, Շտապի և Հ. Ապահով. Խորհրդին փոխարաբերութեան և իրաւասութեան խնդիրները չպէտք է պատրուակ դառնան զանազան կուսակցական քինախնդրական ստոր միտումների և հարուածեն գործը, ինչպէս հաստատում են այս մասին հասած տեղեկութիւնները, որոնք հրապարակ հանել աննպատակայարմար ենք գտնում»⁶⁷:

Խորհրդակցության պատգամավորները անմիջապէս մեկնեցին գավառները և տեղերում կազմակերպեցին Ապահովության խորհրդի մասնաճյուղեր և ձեռնարկեցին զորահավաքի դժվարին գործը: Կ. Սասունու կարծիքով երկատված

⁶⁴ Տե՛ս Հայաստան, 1917, 29 դեկտեմբերի, թիվ 185:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում, 1918, 1 հունվարի, թիվ 1: Այս հոդվածում Վ. Թոթովենցը օգտագործել է «Մեծ եղեռն» եզրույթը:

⁶⁷ Վան-Տոսպ, 1918, 21 հունվարի, թիվ 2, էջ 4-5:

արևմտահայությունը Երկրի մեջ ուներ քաղաքական կազմակերպություններ և կատարում էր զինվորական պարտավորություններ: Այս գործընթացն ավելի դժվար էր ընթանում Անդրկովկասում: Դեռ մինչև Արևմտահայերի թիֆլիսյան խորհրդակցությունը, արևմտահայ զինական ուժերը կանոնավոր գնդերի կերպարանք էին ձեռք բերել Խնուսում, Մուշում, Մանազկերտում, Վանում և Երզնկայում ու փաստորեն այդպիսով ստանձնում էին հայկական նահանգների իրավատիրոջ կարգավիճակը: Ինչ վերաբերում էր Ռուսաստանի և Կովկասի արևմտահայ զինվորականությանը, ապա այն կրկին ենթարկվելով ընդհանուր և պարտադիր զորահավաքի, կազմակերպման ևս մի ալիքի էր ենթարկվում և ինչպես կտեսնենք մեծ դժվարությամբ էր վերադառնում իր հայրենի երկրամասը պաշտպանելու գործին: Բացասական դեր էր խաղում հայրենակցական գործոնը, ինչը հատկապես դրսևորվեց հենց Էրզրումում կուտակվելու գործընթացի կապակցությամբ: Բացի Էրզրումի ճակատից, մյուս արևմտահայ զորաջոկատների նկատմամբ Անդրանիկի հրամանատարության գործոնն իրականում անվանական էր:

«Այս թերութիւնը,- նշում էր Կ. Սասունին,- քմահաճոյքի արդիւնք չէր: Մենք ստիպուած էինք խոնարհիլ անհրաժեշտութեան առջեւ: Երբ մենք զօրահաւաքի սկսած էինք, անդին Բուլղարացի Գրիգորի, գնդ. Տ. Բաղդասարեանի եւ Լեւոն Շաղոյեանի ղեկավարութեամբ՝ Վանի շրջանի մէջ կար Վանի գունդը: Խնուսի մէջ գնդ. Սամարցեի հրամանատարութեամբ կը գործէին Խնուս-Մուշի գունդերը, Մանուկի հրամանատարութեամբ Սասունի գունդը, Մուշեղի հրամանատարութեամբ Խնուսի գունդը, կային նաեւ երկու գումարտակներ, ռուսահայ կանոնաւոր զինուորներ, ենթակայ գնդ. Սամարցեիին կը կազմուէր Ալաշկերտի եւ Մանազկերտի գունդը գնդ. Արեշեանի հրամանատարութեամբ, որուն օգնական նշանակուած էր Սմբատը, որ իրական հրամանատարն էր: Այս գունդը դիրք կը բռնէր Ախլաթի կամուրջի շրջանին մէջ, Բիթլիսի ճակատը պահելու համար: Այս բոլոր ուժերը, ինչպէս նաեւ Մուրատի ղեկավարութեամբ Երզնկայի ճակատին վրայ գործող զինուորները, գործնականորէն, ըստանձնած էին Թուրքահայաստանի պաշտպանութեան ծանր պարտականութիւնը»⁶⁸: Կ. Սասունին իր հերթին խոստովանում էր, որ ստեղծված իրադրության մեջ արևմտահայերը չկարողացան կուռ և ամբողջական բանակ կազմակերպել⁶⁹:

⁶⁸ Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 160-161:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

Առաջադրվող որոշ հարցերի պատասխաններ էր փորձում գտնել «Վան-Տոսպը»:

«Թուրքահայ խորհրդածողովը» խմբագրականում հույս էր հայտնվում, որ Արևմտահայերի առաջին համագումարից ի վեր, վեց ամսվա ընթացքում նոր խորհրդածողովը հնարավոր է, որ վերջապես վերամշակի ինչպես համագումարի, այնպես էլ փախստականական կազմակերպությունների նախագծած և գործադրության դրված ծրագիրը⁷⁰:

Անհանգստություն էր հայտնվում, որ արևմտահայությունը Արևմտյան և Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում սովի էր մատնվել: Բազմաթիվ տազնապալի փաստերից հիշատակենք մեկ-երկուսը:

1917 թ. դեկտեմբերի սկզբին Հայկական Բարեգործական ընկերության Երևանի մասնաճյուղը մի կերպ կարողացավ շաքար հայթայթել փախստականների համար՝ ամեն անձին կես ֆունտ⁷¹:

1918 թ. մարտի 18-ին Արևմտահայերի ազգային խորհրդի Երևանի շրջանային մարմինը նահանգային կոմիսար Ս. Թորոսյանին հայտնում էր, որ ԿՀԲ ընկերության Աշտարակի գաղթականական պահեստը փակվում է, ուստի և խնդրում էին շաքար բաց թողնել⁷²:

Լուրջ անհանգստություն և դժգոհություն էր հայտնվում արևմտահայության շահերին միտված կազմակերպությունների գործունեության նկատմամբ՝ Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարությունից մինչև Անդրկովկասյան կոմիսարիատի վարչական մարմինները:

Ընդգծվում էր հատկապես դրանցում հայ հասարակության որոշիչ ձայնի բացակայության հանգամանքը և առաջարկվում էր, որ արևմտահայերը ճշտեն իրենց վերաբերմունքը այդ կազմակերպությունների հանդեպ: Խոսքը վերաբերում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի «վտանգաւոր ուղիին, որ նախկին «Ազգային բիրոյին» առաջնորդեց դեպի պատմական խոշոր սխալներ»⁷³:

Հիմնականում նկատի էր առնվում հայկական կամավորական շարժումը, որը խիստ քննադատության էր ենթարկվել Թիֆլիսի համախորհրդակցության շրջանակներում 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Վան-Տոսպը պահանջում

⁷⁰ Տե՛ս Վան-Տոսպ, 1917, 17 դեկտեմբերի, թիվ 44:

⁷¹ Տե՛ս Ազատամարտ, 1917, 17 դեկտեմբերի, թիվ 49:

⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 111, թ. 22:

⁷³ Վան-Տոսպ, 1918, 17 դեկտեմբերի, թիվ 44:

եր, որպէսզի «թիրքահայ ղեկավար շրջանները, քաղաքական կազմակերպությունները միջոցներ ձեռք առնեն թէ՛ ռուսահայ խորհուրդին նոր սխալներից զգուշացնելու և թէ՛ թիրքահայերին իրաւատէր դարձնելու իրենց տնային գործերին: Այս խնդրում անհրաժեշտ է թիրքահայ քաղաքական կուսակցական կազմակերպութիւնների գործունէութեան ներդաշնակում և նոյնիսկ միացում, թէ՛ մեր ժողովուրդի մէջ և թէ՛ օտարների մօտ համազգային մի հեղինակաւոր ոյժ ներկայացնելու համար»⁷⁴:

Արևմտահայ բյուրոյի գործունէությանը «Վան-Տոսպը» մի առանձին նյութ էր նվիրել:

Հեղինակն ընդունելով և գիտակցելով, որ արևմտահայ փախստականների ծանր կացությունը առավել մեծ ու տարածաշրջանային իրողությունների հետևանք է նաև, մինևույն ժամանակ քննադատության սուր կողմն ուղղում էր Արևմտահայ Բյուրոյի դեմ: Այսպէս, Երևանի նահանգում չէին բացվել խոստացված բազմաթիվ դպրոցները, բացվածներում էլ աշակերտները զուրկ էին գրենական պիտույքներից, 800 որբերի փոխարեն հավաքագրվել էին 200-ը, չէր իրականացվել նրանց արհեստներ սովորեցնելու ծրագիրը, Արևմտյան Հայաստանի շուրջ 100.000 հայ բնակչության վարչական, տնտեսական, կրթական, վերաշինության բարդ խնդիրները թողած՝ Արևմտահայ խորհուրդն ու Բյուրոն զբաղված էին միայն Թիֆլիսի ու Երևանի «մանր-մունր առօրեայ խնդիրներով»:

Շատ թույլ էր Բյուրոյի կապը Կովկասի արևմտահայ փախստականների ու նրանց կազմակերպությունների հետ, չնայած պարտավորությանը՝ առ այն, որ Բյուրոյի անդամներն իրենց ժամանակն ամբողջությամբ պետք է հատկացնէին տվյալ պաշտոնին, պարզվում էր, դա այդպէս չէր. «Բիւրօյի նախագահ պ. Վահան Փափագեան շաբաթներով և ամսով կը թողու իւր պաշտօնավայրը՝ Թիֆլիսը՝ և կուգայ հոս» (Երևան - Վ.Ս.)⁷⁵ : Արևմտահայ ազգային խորհրդի բյուրոյի թերևս միակ նշանակալից ձեռքբերումը հայկական զինուժի կազմակերպման աշխատանքներին նրա գործուն մասնակցությունն էր:

Թերթի կարծիքով անգործության էր մատնված նաև Արևմտահայ գաղթականների Միացյալ խորհուրդը:

⁷⁴ Վան-Տոսպ, 1918, 17 դեկտեմբերի, թիվ 44:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

Այսպես, Երևանի նահանգի տարբեր շրջանները, Կարսի և Ալեքսանդրապոլի եղբայրական օգնության և կենտրոնական կոմիտեի լիազորները, տեղական գաղթականական մարմինները իրականում անտեսում էին Միությունն ու Բյուրոն: Նույնպիսի հիասթափություն էր առաջացնում և Թիֆլիսի կենտրոնական խորհուրդի գործունեությունը՝ բացակայում էր համապատասխան օղակների կապը, չկար աշխատանքի բաժանում և գործունեության ծրագիր, գաղթականական կազմակերպությունների գործունեության նկատմամբ չէր իրականացվում վերահսկողություն:

Նկատի ունենալով ստեղծված իրավիճակը, «Վան-Տոսպը» առաջարկում էր անհապաղ հրավիրել Արևմտահայերի 2-րդ համագումար, որը ողջ արևմտահայության հրատապ ու կենսական խնդիրների լուծման համար պետք է ձևավորի մեկ միասնական մարմին⁷⁶:

«Վան-Տոսպը» բարձրացնում էր ևս մի կարևորագույն հարց: Նա գտնում էր, որ Արևմտահայ ազգային խորհուրդը ներկայացնում է Կովկասի և Արևմտյան Հայաստանի գրավված մարզերի արևմտահայությանը: «Քանակով եթե ոչ հաւասար,- նշում էր Թերթը,- բայց որակով աւելի բարձր հատուած թիրքահայութիւնն ապրում է յիշեալ սահմաններից դուրս՝ Ամերիկայում, Եգիպտոսում և Եւրոպայում, անհրաժեշտ է, որ նրանք սերտ կապակցութեամբ մասնակից լինեն համաթիրքահայկական բոլոր գործերին»⁷⁷: Կարծիք էր հայտնվում, որ թեև Արևմտահայ խորհուրդը առաջիկա հունվարին կայանալիք համագումարի համար հրավիրել է վերոհիշյալ շրջանների ներկայացուցիչներին, սակայն և՛ համագումարն էր համարվում անիրականալի, և՛ հրավերը ձևական: Թերթը հույս էր հայտնում, որ դեկտեմբերի 15-ի խորհրդաժողովն է, որ պետք է որոշի այդ համագումարի բնույթը և արտասահմանի հայության մասնակցության եղանակը «համաթիրքահայկական» հարցերում:

Կարևորվում էր արտերկրի կարող և պատրաստված ուժերի մի պատկառելի քանակ Անդրկովկաս փոխադրելու խնդիրը, քանի որ «մենք այստեղ (Անդրկովկասում – Վ.Մ.) ոյժ չունինք, ինչպես այդ ապացուցեց նաև Արևմտահայ խորհուրդը այս վեց ամսում, գտնելով իրեն միշտ ոյժերի սովի հանդէպ»⁷⁸:

⁷⁶ Տե՛ս Վան-Տոսպ, 1917, 17 դեկտեմբերի, թիվ 44:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Նույն տեղում:

Առանձնահատուկ կարևորում ենք «Վան-Տոսպի» եզրակացությունն այն մասին, որ «եթե մենք սպասենք դեմօկրատիկ ընտրություններով կայանալիք ազգային ժողովին (արևմտահայերի – Վ.Մ.), որպեսզի նա իրաւասութիւն ունենայ զբաղուելու վերը յիշուած ազգային քաղաքական հարցերով, դա պիտի նշանակէր մեր ձեռքով խաչ դնել մեր վրայ»⁷⁹: Միաժամանակ թերթը լիահույս էր, որ ապագա մայիսյան համագումարում կստեղծվի արևմտահայությանը համախմբող և կազմակերպող առավել իրավագոր մի կառույց, որն անպայման կնդարձակի գործունեության շրջանակը, ուստի և համագումարը կվերածվի ավելի մեծ ու ընդգրկուն խորհրդաժողովի⁸⁰:

1.3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 2-Ը ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. թուրքական արշավանքի պայմաններում արևմտահայ ազգային խորհրդի բյուրոն և Հայաստանի Ապահովության խորհուրդը որոշեցին խորհրդակցություն հրավիրել ապրիլի 20-ին (նոր տոմարով մայիսի 3-ին) Թիֆլիսում: Ժողովին հրավիրվում էին Արևմտահայ ազգային խորհրդի և Հայաստանի Ապահովության խորհրդի անդամները, Կովկասի Արևմտահայ շրջանային մարմիններից 2-ական և Ապահովության խորհրդի շրջանային գործադիր մարմինների մեկական ներկայացուցիչներ, նաև Արևմտյան Հայաստանի տեղական շրջանային կոմիտեների 3-ական, արևմտահայ քաղաքական կազմակերպությունների ևս 3-ական ու արևմտահայ մամուլի մեկական ներկայացուցիչներ⁸¹:

Ավ. Թերզիպաշյանի վերոհիշյալ Տեղեկագրում նշվում էր նաև Թիֆլիսի 1918 թ. մայիսյան խորհրդաժողովի հրավիրման դրդապատճառների մասին: Դրանցից առաջնայինը թուրքական արշավանքն էր, մյուսը՝ «Թիֆլիսի կառավարութեան», այսինքն Սեյմի կազմում ռուսահայերի ազդեցության նվազումը: Ելնելով դրանից, Ապահովության խորհուրդը հարկ համարեց «նոր քոնֆերանս մը գումարել՝ դրութիւնը պարզելու եւ համապատասխան որոշում մը տալու համար»⁸²:

Խորհրդաժողովը նկատի առնելով, որ ստեղծված քաղաքական պայմաններում Ապահովության խորհրդի Թիֆլիսում գտնվելը նպատակահարմար չէ

⁷⁹ Վան-Տոսպ, 1917, 17 դեկտեմբերի, թիվ 44:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

⁸¹ Տե՛ս Հորիզոն, 1918, 15 ապրիլի, թիվ 80:

⁸² Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 341:

արևմտահայության քաղաքական և ֆիզիկական գոյության տեսակետից և որ կարող է բարդություններ առաջացնել արևելահայության համար, որոշեց լուծարել Ապահովության խորհուրդը, Արևմտահայ դիվիզիան հանձնել Արևելահայ ազգային խորհրդի իրավասությանը, իսկ Ապահովության խորհրդի լուծարման գործը հանձնել Արևմտահայ ազգային խորհրդին: Վերջինիս հանձնարարվեց նաև «արձարծել եւ հետապնդել Հայկական հարցը»: Արևմտահայ խորհուրդը, որը Ալեքսանդրապոլի գրավումով կտրվել էր Երևանից, Վրաստանի անկախության հայտարարությամբ և «թիրքերի Թիֆլիզի դռներին մօտիկանալու առաջադրած խուճապի օրերին (մայիս 23), համաձայն նախապես տրուած որոշման, 50000 գաղթականութեան հետ անցաւ Հիւսիսային Կովկաս, ուրկից կը յուսար կապ հաստատել Եւրոպայի Հայ Պատուիրակութեան հետ: Դժբախտաբար այնտեղ նոր արգելքներ՝ պոլշեիկների կաշկանդումներ, հնարաւորութիւն չտուին ատոր»⁸³:

1918 թ. Ապրիլի 22-30-ի (մայիսի 4-12) ընթացքում Թիֆլիսում աշխատեց Արևմտահայ երկրորդ խորհրդակցությունը. ներկա էին միայն 35 պատվիրակ, Երևանի ու Արևմտյան Հայաստանի ներկայացուցիչները պատերազմական իրավիճակի պատճառով ներկա չէին: Նիստը բացեց Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ Վահան Փափազյանը: Մայիսի 7-ի երկրորդ նիստին արդեն մասնակցում էին 50 պատգամավորներ:

Մայիսի 8-ի նիստում ստորագրվեցին պատգամավորների մանդատները և ճշգրտվեցին համախորհրդի լիազորության սահմանները: Մանդատային հանձնաժողովի զեկույցն արձանագրեց, որ խորհրդակցությունը հապճեպ է հրավիրվել և ժամանած ներկայացուցիչներից ոմանք զանազան պատճառներով պարզապես չունեն օրինական մանդատներ: Գլխավոր հակասությունը կայանում էր նրանում, որ համախորհրդի կազմի մեծամասնությունը առավելապես ներկայացնում էին կուսակցությունները և մանավանդ «նորելուկ պատահական թերթերը»: Այդ էր պատճառը, որ արևմտահայ պատվիրակները բողոքեցին և պահանջեցին, որ ժողովի իրավասությունը «վճռորոշ սահմանին չմոտենա» ուստի և առաջարկվեց վերջինս կոչել «Խորհրդակցական ժողով»⁸⁴:

⁸³ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 341:

⁸⁴ Տե՛ս Հորիզոն, 1918, 11 մայիսի, թիվ 86, 12 մայիսի, թիվ, 87:

Խորհրդակցությունը լսելով Հայոց ազգային խորհրդի երեք զեկուցումները՝ ա) Հաշտության բանակցությունների և Հայկական հարցի (Թուրքահայ դատի), բ) Հայաստանի երկրապահ զորամասի վիճակի և գ) արևմտահայերի ֆիզիկական գոյության պահպանման հարցերի մասին, որոշեց.

1. որ մինչև պատերազմի ավարտը անհնար է իրականացնել արևմտահայության վերադարձը հայրենիք՝ պատերազմի հետ կապված մի շարք պատճառների, ինչպես նաև քաղաքական ներկա անորոշ կացության հետևանքով,

2. որ Արևմտյան Հայաստանի պաշտպանության և հայության քաղաքական իրավունքների ապահովման նպատակով ձևավորված ազգային երկրապահ զորամասը (նկատի ունեն Անդրանիկի զորամասը – Վ.Մ.) կորցնում է իր գործունեության իրավունքը, քանի որ ներկա իրավիճակում չի կարող իր դերն իրականացնել, որովհետև Անդրկովկասի անկախ Թուրքիայի հետ հաշտության ձգտող իշխանության ներսում արևմտահայ զորամասի գոյությունը պետք է անթույլատրելի նկատվի,

3. որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանությունը բոլորիս գերագույն նպատակ է հռչակվում, մանավանդ, որ վտանգը հավասարապես վերաբերում է երկու եղբայր հատվածներին, հետևաբար ողջ ժողովրդի պաշտպանությանն ուղղված ջանքերը պետք է միավորվեն ընդհանուր վտանգի դեմ.

ա) իր քաղաքական բախտի որոշումը վերապահել արևմտահայությանը և այստեղից պարտադիր չհամարել ոչ մի հանձնառություն, որ չի բխում իրենից և իր լիազոր մարմիններից,

բ) հետևել Բաթումի հաշտության բանակցություններին և ուսումնասիրել այն հնարավորությունները, որոնք կարող են ապագայում նպաստել Հայկական հարցի լուծմանը⁸⁵:

4. որոշվեց լուծարել Հայաստանի Ապահովության խորհուրդը, իբրև մի մարմին, որը քաղաքական ներկա իրավիճակին չի համապատասխանում և առաջարկել Արևմտահայ և Արևելահայ Ազգային խորհուրդներին կարճ ժամանակամիջոցում ստանձնել արևմտահայության ֆիզիկական գոյության պաշտպանությունը⁸⁶:

Հարկ ենք համարում ընդգծել հետևյալ կարևոր հանգամանքը. փաստորեն Արևմտահայերի 2-րդ խորհրդաժողովը, հետևելով անդրկովկասյան միացյալ

⁸⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 318:

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, II մաս, թ. 318, նաև՝ Հորիզոն, 1918, 19 մայիսի, թիվ 93:

կառավարության և նրա ՀՅԴ խմբակցության որդեգրած գերմանո-թուրքական կողմնորոշման քաղաքական գծին, որոշեց և վերջնականապես ամրագրեց այն մոտեցումը, որ Բաթումի հաշտության բանակցությունների համատեքստում անհրաժեշտ է վերացնել ի դեմս Անդրանիկի, արևմտահայերի գորամասը: Այս մոտեցումն իր զարգացումը ստացավ ՀՀ հռչակումից հետո, երբ 1918 թ. ամռանը ի հայտ եկավ Անդրանիկին օրենքից դուրս հայտարարելու վերաբերյալ հայկական կողմի և Խալիլ փաշայի համաձայնությունը: Չանտեսենք, որ այդ կողմնորոշմամբ էր մասամբ պայմանավորված նաև Կարինի անկումը 1918 թ. փետրվարին:

Արևմտահայ խորհրդի անդամ Կ. Սասունին միայն 1918 թ. հունիսի 27-ին Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհրդին հայտնում էր, որ մայիսի սկզբին կայացած արևմտահայերի խորհրդակցության ընթացքում որոշվեց լուծարել Հայաստանի Ապահովության խորհուրդը և նրա իրավասության տակ գտնվող դիվիզիան, այն համարել Հայկական կորպուսի մաս⁸⁷:

1.4. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՔԸ ԵՎ ԶԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1917 թ. աշնանը հայկական ու մասնավորապես արևմտահայության ազգային զինական ուժի, կենտրոն դառնում էր Երևանը: Այդ գործընթացը ձևավորվել էր դեռ 1917 թ. գարնանից, երբ սկսեց գործել Ժամանակավոր կառավարության կողմից ընդունված բանակի ազգայնացման մասին որոշումը: 1917 թ. մայիսի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը, դիմեց Ժամանակավոր կառավարությանը, ընդգծելով, որ ոչ մի ժողովրդի չի կարելի պարտադրել ենթարկվել անընդունելի տիրակալությանը⁸⁸: Նա նկատի ուներ նաև Օսմանյան կայսրությանը ենթակա Արևմտյան Հայաստանը:

Մայիսի 29-ին Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ. Սմիթը Անդրանիկի հետ ունեցավ առաջին հանդիպումը: Ներկա էին նաև Վ. Թոթովենցն ու Լ. Լյուլեճյանը: Հյուպատոսն առաջարկեց ֆինանսավորել կազմակերպվող արևմտահայ գորամասը՝ վերջինիս գործողությունները վերահսկելու պայմանով: Ֆ. Սմիթը մտադիր էր օգտագործել նույն օրերին Կոնգրեսում հաստատված ռուսական 100 – միլիոնանոց վարկի մասը:

⁸⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 97:

⁸⁸ Ա. Մարմարեան, Զօր. Անտրանիկ եւ յուր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 263-264:

Պետրոգրադում ԱՄՆ դեսպան Դ. Ֆրենսիսը Ֆ. Սմիթի ներկայացրած փաստաթղթերը հանձնեց Ժամանակավոր կառավարության ռազմա-ծովային նախարար Ա. Կերենսկուն, պատճեններն էլ՝ ուղարկեց Վաշինգտոն և Եվրոպական դաշնակից մայրաքաղաքներ: Փարիզում Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը ևս նմանատիպ մի հուշագիր պատրաստեց պետքարտուղար Ռ. Լանսինգի համար:

Հուշագրի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն ապագա 1919-1920 թթ. Փարիզի խաղաղարար վեհաժողովին ներկայացված հայտնի Հուշագրի նախատիպն է:

Այնտեղ հիմնականում նշվում էր, որ ապագա Հայաստանը, որի կազմում ներառնվում էին հայկական վեց նահանգները, Կիլիկիան և Տրապիզոնը, ստանալու էր ինքնավարություն և գտնվելու էր դաշնակիցների համատեղ հովանու ներքո:

15-ամյա մանդատի պայմաններում տերություններից մեկը պետք է վարկ ստանար գործընկերներից և փոխհատուցեր Հայկական ցեղասպանության զոհերի կրած վնասները: Հովանավորը կարող էր զորքեր տեղադրել տեղում և 15 տարիների ընթացքում նրա բանակը պետք է աստիճանաբար փոխարինվեր ձևավորվող հայկական զինված ուստիկանությամբ⁸⁹:

Վերոհիշյալ դիմումը անպատասխան մնաց, իսկ արևմտահայ դիվիզիան կազմավորելու խնդիրը հետաձգվեց մինչև 1917 թ. օգոստոսի 3-ը: Այդ օրը ԱՄՆ պետքարտուղարը ծանոթացավ Անտանտի՝ Հայաստանն ազդեցության ոլորտների բաժանելու ծրագրին: Հայտնի դարձավ, որ Արևմտյան Եվրոպայի տերությունները հայերին օսմանյան տիրապետությունից ազատելու գաղափարը փոխարինել էին կայսրության կազմում արևմտահայերի ինքնավարությամբ, այն էլ՝ առանց արտաքին հսկողության⁹⁰: Նոր տվյալներին ի պատասխան՝ օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան վարչության աշխատակից Է. Յարրոուն հյուպատոս Ֆ. Սմիթի ներկայությամբ Անդրանիկին ծանոթացրեց անգլիացի գեներալ Օ. Շորի և նրա ուղեկից Ջ. Գրեյսի հետ: Քառյակը քննեց 8 գնդերից բաղկացած 10-20 հազարանոց հայկական զինուժ հավաքելու հարցը՝ այն ֆինանսավորելու և 150 անգլիացի խորհրդականեր

⁸⁹ Տե՛ս Գ. Մախմուրյան Արևմտահայերի դիվիզիան և ԱՄՆ-ի քաղաքականությունը 1917-1918 թթ. Անդրանիկ Օզանյան - 150, Հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 53-54:

⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

տրամադրելու պայմանով: 1917 թ. օգոստոսի 22-ին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ղեկավարը ստացավ Հայաստանին վերաբերող նոր մանրամասներ՝ 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի շրջանակներում: Հայ ժողովրդի ինքնապաշտպանության շտաբը ընթացող բանակցությունների երրորդ փուլը սկսեց բոլշևիկյան հեղաշրջումից հետո՝ 1917 թ. հոկտեմբերի 30-ին, երբ Ռ. Լանսինգը տեղեկացավ, որ Օսմանյան բանակը Միջագետքում անգլիացիների դեմ պատրաստում է լայնածավալ հարձակում:

Նոյեմբերի 3-ին ԱՄՆ-ի պետքարտուղարը ստացավ Պ. Նուբարի դիմումը: Վերջինս հաղորդում էր. «Քե Հայկական հարցը այժմ դասվեց միջազգային այն հարցերի շարքին, որոնք վճռելու է հաշտության ապագա վեհաժողովը⁹¹»:

Նոյեմբերի 21-ին, Թիֆլիսում, Հայոց ազգային խորհրդի նիստում Մ. Պապաջանյանը ներկայացրեց փոխգնդապետ Թ. Արամյանի կողմից երեք ամսում 12-16 հազարի հասնող արևմտահայ հետևակ դիվիզիա ձևավորելու առաջարկը: Ջորամասը Թորգոմի (գնդապետ Թորգոմ Արսենյան – Վ.Մ.) և Անդրանիկի ղեկավարությամբ պետք է օգնության գնար անգլիացիներին: Թորգոմը պատրաստ էր նաև մեկնել արտասահման և Ազգային Խորհրդի կարգադրությամբ շարունակել բանակցությունները Եվրոպայում: Նոյեմբերի 30-ին նա Արևմտահայ ազգային խորհրդի անդամների հետ ներկայացավ ՀԱԽ-ի նիստին և հստակեցրեց, որ 15 հազար հոգուց բաղկացած արևմտահայ դիվիզիան ընդգրկվելու էր Հայկական կորպուսի կազմում:

1917 թ. դեկտեմբերի 12-ին գեներալներ Թ. Նազարբեկյան ու Մ. Աբեղյանը Հայոց ազգային խորհրդին առաջարկեցին հավաքագրել արևմտահայ ու պարսկահայ կամավորներին կանոնավոր ազգային զորամասում և ընդառաջել արևմտահայերի զորաջոկատներ ձևավորելու Անտանտի առաջարկին⁹²:

Դեկտեմբերի 17-ին մասնակցության հայտ էր ներկայացրել նաև Պարսկաստանը: Թեհրանում հայցում էին ԱՄՆ-ի օգնությունը՝ ինչպես հետպատերազմյան խորհրդածոդովին մասնակցելու, այնպես էլ՝ սահմաններում կռվող Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի ուժերն իր երկրից հեռացնելու հարցում:

Պարսկական իշխանությունները ԱՄՆ պետքարտուղարին հիշեցնում էին իրենց երկրի չեզոքության մասին, միաժամանակ խոստանալով վերանայել 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը, ինչպես նաև չեղյալ հայտարարել վերջին

⁹¹ Տե՛ս Գ. Մախմուրյան, նշվ. աշխ., էջ 54-55:

⁹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 79, շրջ. 80:

ժամանակահատվածում իրենց պարտադրված բոլոր համաձայնագրերը: Ստացվում էր, որ Իրանի շահը ԱՄՆ-ին հրավիրում էր իր երկրում փոխարինելու Ռուսաստանին և Անգլիային: 1918 թ. ամռանը Պարսկաստանում իրոք չեղյալ հայտարարվեց Թուրքմենչայի պայմանագիրը, փոխարենը՝ ԱՄՆ-ին հանձնվեցին մինչ այդ Ռուսաստանին պատկանող բոլոր կոնցեսիաները:

Դեկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի դեսպան Ու. Փեյջը Ռ. Լանսինգին հասցրեց եվրոպական դաշնակիցների մեկ հուշագիր ևս: Այն արձանագրում էր նախկին որոշումը, այն է՝ արևմտահայ դիվիզիայի համար շտապ կարգով գումար հատկացնելու և սպա – խորհրդականներ տրամադրելու անհրաժեշտությունը⁹³:

1917 թ. նոյեմբերի վերջին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին կից ձևավորվում է Հատուկ կոմիտե: Արտակարգ լիազորություններով օժտված այդ կառույցին անդամակցում էին Խաչատուր Կարճիկյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Սարգիս Արարատյանը, Հովսեփ Բեկզադյանը, Վարոս Բաբայանը, Իսահակ Ամիրյանը, Գևորգ Տեր-Օհանյանը: Դեկտեմբերի 6-ին Խ. Կարճիկյանն ընտրվում է Հատուկ կոմիտեի ժամանակավոր նախագահ⁹⁴: Հատուկ կոմիտեի դեկտեմբերի 2-ի (15) նիստում որոշվում է դասալիքների հավաքման և զորակոչի կազմակերպման նպատակով Երևան գործուղել Ա. Մանուկյանին և ՀԶՄ միջոցներից նրան տրամադրել 200 հազ. ռուբլի⁹⁵:

1917 թ. դեկտեմբերի 26 (1918 հունվարի 7)-ին Կովկասահայ Ուսուցչական միության հրավերով, Երևանի Խրիմյան դպրոցում կայացավ տեղի հայ ուսուցչության (թե տեղացի և թե արևմտահայ գաղթականության) ընդհանուր ժողովը: Այն լսելու ու քննարկելու էր Հայոց ազգային խորհրդի կողմից Երևան գործուղված Արամի զեկուցումը՝ Կովկասյան ռազմաճակատի և ազգային զորակոչի մասին: Մասնավորապես հստակեցվելու էր զորակոչի նկատմամբ հայ ուսուցչության վերաբերմունքը: Վերջում ընդունվեց բանաձև. «Երեւանի հայ ուսուցչութիւնը, առանց սեռի խտրության տեղացի թե փախստական, ազգային թե պետական դպրոցներու, ինքզինքը կդնէ Ազգային խորհրդի և Հայ Զինվորական մարմնի տրամադրութեան տակ՝

⁹³ Տե՛ս Գ. Գալոյան, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 20:

⁹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թթ. 29, 33, 35-37:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 29:

պատրաստակամութիւն հայտնելով առաջին իսկ առթիւ 18-45 տարեկանները պարտադիր ծառայութեան մտնելու»⁹⁶:

1918 թ. հունվարի 1-ին ՀԱԽ-ում ընթերցվեց Արևմտահայ խորհրդակցության որոշումը, ըստ որի երկրապահ զորաբաժնի կազմում ընդգրկվում էին նաև եզդիները, ասորիները և բոլոր բարեկամ ու խաղաղատենչ ժողովուրդների ներկայացուցիչները: Կոնֆերանսը հայտարարեց ընդհանուր զորակոչ, դիվիզիան ենթարկվեց հայկական կորպուսին, իսկ քաղաքական բնույթի հարցերը հանձնվում էին Արևմտյան Հայաստանի գեներալ – կոմիսարիատին և հայոց ազգային երկու խորհուրդները ներկայացնող 16 անդամների հանձնաժողովի իրավասությանը: Ջորաբաժնի հրամանատար առաջարկվեց Անդրանիկը⁹⁷:

ՀԱԽ-ի անդամներից ոմանք ունեին երկու առարկություն:

Ս. Հարությունյանը (Հայ ժողովրդական Կուսակցություն) (ՀԺԿ) վիճելով Վ. Փափազյանի (ՀՅԴ) հետ, պնդում էր, թե Արևմտահայ ազգային խորհուրդը որպես հավասարազոր կողմ չպետք է մասնակցեր ընդհանուր զործին: Ս.-դ. մենջևիկ Ար. Երզնկյանը առաջարկում էր այս հարցում հատկապես ենթարկվել Անդրկովկասյան կոմիսարիատին և ճանաչել 1914 թ. նախապատերազմյան պետական սահմանը:

Հակառակելով Հ. Զավրիյանի տեսակետին՝ Ստ. Մամիկոնյանն (ՀԺԿ) ու Ռ. Տեր-Մինասյանը (ՀՅԴ) դեմ արտահայտվեցին Անդրանիկի թեկնածությանը:

1918 թ. հունվարի 2-ին Խ. Կարճիկյանը հասավ նրան, որ տարանջատեց ՀԱԽ-ը Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարիատից, իսկ Անդրանիկն էլ իր հերթին բաժանեց կազմակերպական գործառույթները և պնդեց, որ արևմտահայ դիվիզիան ենթարկվի Թ. Նազարբեկյանին, այսպիսով նաև՝ Թիֆլիսի ՀԱԽ-ին⁹⁸:

1918 թ. փետրվարի 2-ին «Հորիզոնը» հրապարակում է. «Զինակոչի մասին դեկրետը», որի համաձայն համառուսաստանյան ընդհանուր օրենքի 12 և 16-րդ հոդվածների հիման վրա, 1899 թ. ծնվածները զորակոչի են ենթարկվում 6 ամսով (բացառություն էին կազմում առաջին կարգի արտոնություններ վայելողները):

Ծանոթության մեջ հավելվում էր, որ զորակոչը վերաբերում է ուսուցիչներին, բարձր, միջնակարգ ու տարրական դպրոցների աշակերտներին, պետական,

⁹⁶ Տե՛ս Հորիզոն, 1918, 4 հունվարի, թիվ 2:

⁹⁷ Տե՛ս ՀԱԽ, ֆ. 222, ց.1, գ. 141, թ. 91:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 93 շրջ. 94:

հասարակական հիմնարկների ծառայողներին: Հարկ ենք համարում ընդգծել, որ այս գորակոչին չէին ենթարկվելու արևմտահայ գաղթականները և պատերազմական գործողությունների ժամանակ գրավված մարզերի բնակիչները (Արևմտյան Հայաստանի – Վ.Մ.), մինչդեռ հայ ուսուցչության ժողովը միանգամայն այլ որոշում էր կայացրել: Ջորակոչի առաջին օր էր համարվում 1918 թ. փետրվարի 15-ը⁹⁹:

«Հորիզոնը» վկայում էր, որ զինակոչը ջերմ արձագանք է գտել Երևանում, նահանգում ընդհանրապես և Էջմիածնում մասնավորապես: Արդեն համալրվել էր 4-րդ հայկական գունդը: Հունվարի 13-ին Արամը այցելեց 6-րդ հրացանաձիգ գունդը և արևմտահայ գաղթականության դիմելով ընդգծեց հատկապես միության և համերաշխության անհրաժեշտությունը¹⁰⁰:

Իրադարձությունների զարգացմանը համընթաց, երբ թուրքական զորքերը գրավում էին Արևմտյան Հայաստանի շրջանները, փետրվարի 20-ին հետևում է Հայոց ազգային խորհրդի «Դասալիքների դեմ պայքարող զինվորական աստյանի» նոր հրամանը՝ այն մասին, որ «19-32 տարեկան բոլոր հայերը, եթե փետրվարի 29-ից հետո չեն ունենա անձնագրեր և Հայոց ազգային խորհրդի կողմից տրամադրված ազատման թուղթ, ամեն տեղ կձերբակալվեն»¹⁰¹:

1918 թ. մարտին Արամ Մանուկյանը Երևանից իր մտահոգություններն էր կիսում Վանի ընկերների հետ. «Կովկասը ահաբեկված եւ խուճապի է մատնւած,- նշում էր նա,- սրա պատճառը փնտրելու էք ոչ թե թշնամու գերագանց ուժերի մէջ, այլ մեր ներքին կացութեան. Զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու փսիխոզը հասել է ծայրահեղութեան. Սրա դեմ վերջերս միջոցների դիմեցինք՝ կիրարկելով մահւան պատիժը, եւ աջ – ձախ սկսել ենք զարնել, առաջին տպաւորութիւնը լաւ է»¹⁰²:

Հատուկ կոմիտեն դարձավ Երևանի նահանգի փաստական իշխանությունը, իսկ Արամը՝ այդ ոչ պաշտոնական ազգային իշխանության ղեկավարը: Վերջինիս ձևավորմամբ, փաստորեն, Երևանի ազգային խորհուրդը դադարեցրեց իր գոյությունը:

Վերադառնալով դեկտեմբերյան խորհրդակցությանը, նշենք, որ վերջինս որոշել էր հայտարարել պարտադիր գորակոչ բոլոր արևմտահայերի համար: Նպատակը արևմտահայկական առանձին դիվիզիայի ձևավորումն էր:

⁹⁹ Տե՛ս Հորիզոն, 1918, 2 փետրվարի, թիվ 24:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, 21 հունվարի, թիվ 4:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, 20 փետրվարի, թիվ 37:

¹⁰² Հմ. Մանուկեան, Դէպքերը Վասպուրականում, Վեմ, Փարիզ, 1938, փետրվար-մայիս, էջ 75:

Այդ որոշումից առաջ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում կային գուստեղական գորամասեր. Օրինակ՝ Վանի գունդը՝ Տ. Բաղդասարյանի հրամանատարությամբ, Սասունի գունդը՝ Խնուս - Մուշ շրջանում՝ Մանուկի և Մուշեղի ղեկավարությամբ, Ալաշկերտի գորամասը՝ Սմբատի գլխավորությամբ, Երզնկայի շրջանում էր Սեբաստացի Մուրադը:

Ապահովության խորհրդի առաջին աշխատանքը եղավ այդ բոլոր ջոկատների միավորումը, ապա և արևմտահայ դիվիզիայի կազմավորումը: Այդ գործին ջերմ աջակցություն ցուցաբերեցին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը՝ հանձինս գեներալ Ե. Լեբեդինսկու, գնդապետ Մ. Զինկևիչի, Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարությունը՝ Հ. Զավրիյանի: 1917 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 167 գաղտնի հրամանով Ե. Լեբեդինսկին կարգադրեց արևմտահայերից կազմավորվող դիվիզիան անվանել **Հատուկ հայկական հրաձգային առաջին դիվիզիա** և հրամանատար նշանակել Անդրանիկին: 1918 թ. հունվարի 16-ի հրամանով էլ ձևավորվեց Հատուկ Հայկական հավաքական ջոկատը, որին հնարավորություն տրվեց մեկ դիվիզիայի հաստիքային կազմը (18.000 զինվոր և սպա) հասցնել 30.000-ի: Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի շտաբին կից կազմվեց «Արևմտահայերից ազգային զորքերի ստեղծման գործերով մշտական խորհուրդ»՝ Հ. Զավրիյանի գլխավորությամբ¹⁰³: 1918 թ. հունվարի 20-ին Հայաստանի Ապահովության խորհուրդը շրջաբերական է տարածում այն մասին, որ զորակոչի համար ստեղծված Ապահովության կոմիտեները այսուհետ կոչվեն գործադիր կոմիտեի մասնաճյուղեր¹⁰⁴:

Թիֆլիսում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչները Ապահովության խորհրդին նույնիսկ որոշ գումար տրամադրեցին: Չնայած Ապահովության և Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդների միջև այս հարցում իշխում էր ներդաշնակ համագործակցության մթնոլորտը, սակայն դիվիզիայի հրամանատար նշանակելու կապակցությամբ առաջացավ որոշ անհամաձայնություն: Ապահովության խորհուրդը առաջադրում էր Անդրանիկի թեկնածությունը ինչը քննարկվել էր նաև Թիֆլիսի դեկտեմբերի 15-ի խորհրդակցության ժամանակ, իսկ Ազգային խորհուրդը չառաջարկելով իր թեկնածուին, կարծում էր, որ «մասնագիտական

¹⁰³ Տե՛ս Ա. Նազարյան, «Արևմտյան Հայաստանի մասին» դեկրետը, արևմտահայ զորքի կազմավորումը, ըստ՝ Հայագիտությունը դպրոցում, 2008, թիվ 2, tert.nla.am

¹⁰⁴ Տե՛ս Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

պատրաստվածությունից զուրկ Անդրանիկը չի կարող կառավարել դիվիզիայի պես խոշոր զորամաս»¹⁰⁵ : Ի վերջո, Ապահովության խորհրդի հետևողական պնդմամբ Անդրանիկը նշանակվեց Արևմտահայ դիվիզիայի պետ՝ մինչ այդ էլ Հ. Զավրիյանի և Պ. Լևոնյանի միջնորդությամբ ստանալով զաուրյադ (պաշտոնակալ) գեներալի աստիճան:

Արևմտահայ դիվիզիան, որը հայտնի է նաև որպես Հայաստանի երկրապահ զորաբաժին անվամբ¹⁰⁶ ներառնվեց Հայկական կորպուսի զորակազմի մեջ, որպես նրա մի մասը: Հայկական հրաձգային դիվիզիայի կազմի մեջ էին ներառնվելու չորս գնդեր՝ Էրզրումի (I), Ղարաքիլիսայի (II), Խնուսի (III) և Վանի (IV)¹⁰⁷:

1917 թ. դեկտեմբերի 14-ին Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանը հանդես եկավ իր առաջին հրամանով, իսկ հաջորդ օրը հետևեց «թուրքահայ եղբայրներին» ուղղված կոչը: Դեռ նոյեմբերի 10-ին Հայ զինվորական միության Գանձակի բաժանմունքը «հպարտությամբ և հրճվանքով» ողջունում էր գեներալ Թ. Նազարբեկյանի հայկական կորպուսի հրամանատար ընտրվելու փաստը¹⁰⁸:

«Հայրենիքը վտանգի մեջ է. արձագանք տվեք մեր զորակոչին» վերտառությամբ նյութը հեղինակել էին Հայաստանի Ապահովության խորհուրդը և Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատար Անդրանիկը¹⁰⁹:

1918 թ. հունվարի վերջին Երևանի «Աշխատանքը» լուրջ դժգոհություն էր հայտնում հայտարարված և փաստորեն ուշացած զորակոչի իրականացման վերաբերյալ. «մեզ կը թուի թե տիրող անորոշութիւնը պաղ ջուր կը լեցնեն թուրքահայ երիտասարդութեան վրայ, թերահաւատութիւն առաջ կը բերեն դեպի Հայաստանի փրկութեան գործը և կը փճացնեն այն հաւատքը, որ մեր ժողովուրդը կը տածէ առհասարակ իր ղեկավարներու հանդէպ»¹¹⁰:

Անհանգստություն էր հայտնվում, որ Սարայի, Աբաղայի, Մակուի, Մասիսի, Շաղկանց, Բյուրակնյա լեռների ու Սիփանի միջև, Էրզրումի, Բաբերդի, Թորթումի, Դերջանի, Երզնկայի և Տրապիզոնի շրջաններում մոտ 40 հազար զինված մահմեդականներ սպասում են գրոհի հրամանի¹¹¹:

¹⁰⁵ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1996, էջ 63:

¹⁰⁶ Տե՛ս Ա-Դե, Հայության երկունքը, էջ 158:

¹⁰⁷ Տե՛ս tert.nla.am, նույն տեղում:

¹⁰⁸ Տե՛ս Հորիզոն, 1917, 12 նոյեմբերի, թիվ 242:

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, 28 դեկտեմբերի, թիվ 274:

¹¹⁰ Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

¹¹¹ Տե՛ս Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72:

Հայ զինվորական միության գործադիր մարմինը դեկտեմբերի 15-ի կոչով դիմում է Կովկասյան ճակատի հայ ռազմիկներին, ընդգծելով գլխավոր միտքը՝ «ոչ ոք թիկունքում չի մնալու»¹¹²:

Դեկտեմբերի 17-ին հրապարակվում է Հայոց ազգային խորհրդի կոչը. «Կարգադրում ենք, որ հայ դասալիքները անմիջապես մտնեն հայացած (ազգայնացված – Վ.Մ.) զորամասերը... հրահանգում ենք, որ հայ մտավորականները իրենց հմտությունն ու արվեստը տրամադրեն հայրենիքի պաշտպանության գործին: Պատվիրում ենք ունևոր դասին դրամական առատ միջոցներ դնել Ազգային խորհրդի տրամադրության տակ: Այս օրհասական վայրկյանին, ամեն հայ, որ խուսափում է իր քաղաքացիական և ազգային պարտքը կատարել, դավաճան է հայրենիքի, և իբրև դասալիք արժանի է խստագույն պատժի»¹¹³:

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների համատեքստում, բոլշևիկյան կառավարության արտաքին քաղաքականության սուր քննադատությամբ հանդես եկավ Ս. Վրացյանը «Հորիզոնի» խմբագրականում և եզրակացրեց, որ անհրաժեշտ է ուժեղացնել «մեր զինվորական զորամասերը, ամրացնել ռազմաճակատը և զենքով պաշտպանել մեր երկիրը»¹¹⁴:

Այդ կենսական հարցերին էր նվիրված նաև Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգային դահլիճում դեկտեմբերի 17-ին հրավիրված հրապարակային ժողովը, որը Ա. Ահարոնյանի նախագահությամբ լսելու էր Ա. Ջամալյանի դասախոսությունը՝ «Ռուստաճկական զինադադարը և ստեղծված կացությունը Հայաստանում» թեմայով¹¹⁵:

Նույն դեկտեմբերի 17-ին, դարձյալ Թիֆլիսում, այս անգամ Վանքի բակում տեղի ունեցավ արևմտահայերի հանրահավաք, որտեղ Անդրանիկը կոչ արեց լծվել «Ճակատի և սահմանագլխի ազգաբնակչության պաշտպանության գործին: Կոչը լայն արձագանք գտավ, և ներկաներից գրեթե բոլորը ցուցակագրվեցին որպես կամավոր: Նույն օրը ընտրվեց նաև Արևմտահայերի զինվորական խորհուրդ»¹¹⁶:

Ռազմաճակատի պաշտպանության հիմնահարցի ուղղությամբ հայկական ռազմաքաղաքական ուժերի վարած գործողությունները պարզում են հետևյալ պատկերը:

¹¹² Տե՛ս Հորիզոն, 1917, 15 դեկտեմբերի, թիվ 263:

¹¹³ Նույն տեղում, 17 դեկտեմբերի, թիվ 265:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, 13 դեկտեմբերի, թիվ 281:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում, 16 դեկտեմբերի, թիվ 264:

¹¹⁶ Տե՛ս Հորիզոն, 1917, 19 դեկտեմբերի, թիվ 266:

Դեռ 1917 թ. նոյեմբերի 4-ին հրավիրվում է Նոր Բայազետի ՀՅԴ Շրջանային ժողով. մասնակցում էին 23 գյուղերի ներկայացուցիչներ: Ժողովը բացում է Վահան Աֆրիկյանը, նախագահ է ընտրվում Վարդանը, քարտուղար՝ Ս. Միմոնյանը: Օրակարգային մի շարք հրատապ խնդիրների հետ մեկտեղ, ինչպիսիք էին պարենավորման և կոոպերացիայի, Սահմանադիր ժողովի հրավիրման հարցերը, խորհրդակցությունը հիմնականում կանգ է առնում ինքնապաշտպանության և տեղական միլիցիայի կազմակերպման խնդիրների վրա: Որոշվում է կազմել տեղական գյուղական միլիցիայի ջոկատներ¹¹⁷:

Այդ նպատակով դեկտեմբերի 14-ին Արճեշի տեղացի ու այջավազցի բնակիչները 100 հոգուց բաղկացած ազգային միլիցիայի ջոկատ են կազմավորում՝ ընդգծելով որ անհրաժեշտ է այդ թիվը հասցնել 200-ի: Նրանք հույսը կապում էին տեղական հասարակական կազմակերպությունների և կոմիսար Պրոտոպովի աջակցության հետ: Կարևորվում էր Արևելյան Հայաստանում ապաստան գտած Արճեշի, Այջավազի և Խլաթի հայրենակիցների ու ակտիվ գործիչների երկիր վերադառնալու հանգամանքը¹¹⁸:

Խնուսում գնդապետ Սերոբ Սամարցյանի ղեկավարությամբ ձևավորվեց «Մբ. Կարապետ» անունով արևմտահայ առաջին զորագունդը, որն անմիջապես մարտական դիրքեր զրավեց ճակատից հեռացած ռուսական 23 և 26-րդ զորագնդերի փոխարեն, կազակներին էլ փոխարինեցին սասունցի ու մշեցի հեծյալները:

Դեկտեմբերի 21-ին Երևանում կայացավ արևմտահայ դաշնակցականների ժողով. զեկույցով հանդես եկավ Արամ Մանուկյանը: Արդյունքում կազմավորվեց հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր շտապ կերպով կամավորների ջոկատ ուղարկել Արևմտյան Հայաստան¹¹⁹:

Նույն օրն իսկ Հայկական առաջին գունդը Քանաքեռից ճանապարհվեց ռազմաճակատ: Երևանի քաղաքային վարչության շենքի առաջ ելույթներով հանդես եկան քաղաքագլուխ Ս. Թորոսյանը, մեկական թաթար, ռուս և վրացի զինվորականներ, աշակերտ Դ. Մելիք-Դադայանը, ինչպես նաև Արամը: «Ես սարսափով դիտում եմ,- նշում էր Արամը,- որ ռազմի դաշտ մեկնողների շարքերը այսքան ցանցառ են և նոսր, իսկ այստեղ մնացողների թիվը այսքան շատ. ես իմ խոսքը ձեզ եմ ուղղում, ձեզ, քաղաքացիներ, որովհետև հայ մարտիկները քաջալերանքի պետք չունեն, ամո՛թ ձեզ,

¹¹⁷ Տե՛ս, Հորիզոն, 1917, 15 նոյեմբերի, թիվ 244:

¹¹⁸ Տե՛ս Աշխատանք, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 66:

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում:

ամո՛թ մեզ, որ տակավին անտարբեր ենք մնում, անե՛ծք և նախատինք նրանց, որոնք պարտքի գիտակցություն չունեն - երդվեցե՛ք, որ հայ մարտիկները ռազմաճակատի վրա մենակ չեն մնալու. ուխտենք, որ մեկնողների հետևից, շարք-շարք, տասնյակ հազարներով օգնության պիտի փութանք»¹²⁰: 1918 թ. հունվարի 1-ին Վասպուրականի կոմիսար Կ. Համբարձումյանը Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարին ու Հայկական զինվորական միության ղեկավարությանը տեղեկացնում էր Վանի գնդի ձևավորման մասին: Այդ գործընթացը սկսվել էր 1917 թ. դեկտեմբերի 29-ից: Վանի 4-րդ գնդի 1-ին վաշտը բաղկացած էր 400 զինվորներից՝ առանց միլիցիայի ջոկատների¹²¹:

«Աշխատանքը» մտահոգություն էր հայտնում Արևմտյան Հայաստանի հիմնահարցի հետ կապված տարաբնույթ խոչընդոտների, բարդությունների վերաբերյալ, որոնց ամբողջությունը չէր կարող նպաստել ոչ միայն արևմտահայկական, այլև համահայկական ծրագրերի իրականացմանը:

Այդ շարքում էին Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչության ցրվածության, Արևելյան ու Արևմտյան Հայաստանների տարբեր շրջանների աշխարհագրական կտրվածության հանգամանքները, որոնք լայն հնարավորություն էին ընձեռում մահմեդական կղզյակներին ավելի խորացնելու առկա պառակտվածությունը, մեկուսացումը: Այդ համատեքստում կարևորվում էր հաղորդակցության ուղիների խնդիրը:

Այսպես, Վանի նահանգը, Բայազետի դաշտը, Դիադինի, Ալաշկերտի հովիտները, Մանազկերտը, Բուլանըխը, Խլաթը առավել ևս Այնթափը (Կիլիկիա) Արևելյան Հայաստանի հետ կապվելու միայն երկու միջանցք ունեին, մեկը՝ Իգդիրի ճանապարհն էր, որը բոլոր կողմերից շրջապատված էր քրդական ավազակախմբերով, Իգդիրից – Կզըլ-Դիգե անցումն էլ պաշտպանվում էր ընդամենը մեկ զինվորական պահակագնդով (Կարեյի էտապ): Երկրորդը՝ Շահթախթ-Ղարաքիլիսա երկաթուղին էր, որի մի ճյուղը Բայազետի մոտ ևս ամբողջովին վերահսկվում էր քրդերի ու պարսիկների կողմից: Ռազմաճակատի թիկունքը կայուն պաշտպանելու նպատակով առաջարկվում էր ճանապարհների երկայնքով վնասազերծել ավազակային միավորումները և շարունակել Առնիսի կամուրջի շինարարությունը¹²²:

¹²⁰ Տե՛ս Աշխատանք, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 66:

¹²¹ Տե՛ս Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.), Москва, 2014, էջ 208-209:

¹²² Տե՛ս Աշխատանք, 1918, 20 հունվարի, թիվ 71:

Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Ի. Օդիշելիձեի կողմից փետրվարի 22-ին Ե. Լեբեդինսկուն ուղարկված հեռագրում, երբ Էրզրումի պաշտպանության համար բանակի հրամանատարը գլխավոր հրամանատարից «մեկ, երկու ռուսական զորաբաժին» էր խնդրում, Վ. Մինախորեանը այդ «միամիտ դիմումի ենթատեքստում պարզում էր խորքային պատճառները. դրանք էին «ճակատների վիճակը, թուրքական հրամանատարութեան խաղերը, ռուս հրամանատարական կազմի անօգնական վիճակը, հատկապես հայ կամաւորներին բաժին ընկած կռիւը, որ այլեւս մի նպատակ միայն ուներ՝ անգէն ժողովուրդի իր հայրենիքից կատարուող անդարձ նահանջը պաշտպանել»¹²³:

Հունվարի 17-ին Սեբաստացի Մուրադը Երզնկայից պահանջում էր 4000 զինյալ, Թիֆլիսից ուղորդում էին, որ անհրաժեշտ է օգնություն ուղարկել Բայազետ, Արճակ-Շերպեկ շրջանի կառավարիչ, պողպորուչիկ Տ. Սարգսյանը Վանից, Կոստի Համբարձումյանի կարգադրության համաձայն խնդրում էր գոնե 100 զինվոր ուղարկել իր տրամադրության տակ¹²⁴:

Հաղորդագրությունների տարափը շարունակվում էր հատկապես 1918 թ. հունվարին. հունվարի 22-ին գենքով բեռնված էշելոններով Երևան է հասնում Վանի բրիգադի հրամանատար գնդապետ Տ. Բաղդասարյանը, Արևմտահայերի դիվիզիայի հրամանատար Անդրանիկը հրամայում էր կարճ ժամանակամիջոցում զորանոցների մեջ հավաքել Վանի շրջանի բոլոր զինվորներին, Սշեցի Սմբատը (Բորոյան, Մախլուտո) մեծ խմբով անցնում է Ալաշկերտ¹²⁵:

Փետրվարի 10-ին Վասպուրականից ահազանգում էին, որ երկրամասը դատարկվում է ռուսական զորքերից ու ռազմական նպատակներին միտված տարաբնույթ ծառայություններից՝ հրետանավորներ, փոստի, հեռագրի, հիվանդանոցի, ախտահանիչ խմբի պաշտոնյաներ: Քայքայման գործընթացի պատճառ էր ընդգծվում նաև ծագումով գերմանացի հակահետախուզության պետի դերակատարությունը:

Դեռ 1917 թ. սեպտեմբերից Վասպուրականի շրջանային վարչությանը կից ստեղծվել էր Կոմիսարիատ, որը ռուսական բանակի զորամասի հեռանալուց հետո աստիճանաբար իր ձեռքը վերցրեց նահանգի քաղաքացիական իշխանության ղեկը:

¹²³ Վ. Մինախորեան, Արեւմտեան Հայաստանի պարպումը, Հայրենիք, Բոստոն, 1935, փետրվար, թիվ 4, էջ 45:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում:

¹²⁵ Տե՛ս Աշխատանք, 24 հունվարի, թիվ 72, նաև՝ 1918, 17 հունվարի, թիվ 70:

1917 թ. աշնանը Թիֆլիսում արևելահայերի ու արևմտահայերի մասնակցությամբ գումարված շրջանային ժողովին, Վանի ղեկավար մարմնի իրավունքներն ընդլայնելու նպատակով մասնակցում էր նաև Վանի շրջանային վարչության նախագահ Կոստյա (Կոստի) Համբարձումյանը: Այստեղ նա ընտրվում է Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավոր: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո շրջանային վարչությունը որոշում է դադարեցնել հանձնախմբերի միջոցով երկրամասը կառավարելու ձևը և Անդրկովկասյան կոմիսարիատի և Խորհրդային Ռուսաստանի կառավարության լեգիտիմության չափով ստեղծել ղեկավար նոր մարմին¹²⁶:

Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության կողմից հրավիրված ժողովների ժամանակ վիճաբանության նյութ դարձավ կառավարության իրավասության և անվանման հարցը: Ի վերջո նոր կառավարությունը կոչվեց Վասպուրականի իշխանություն կամ Վասպուրականի ժողովրդական կոմիսարների խորհուրդ: Պատմաբան Ավետիս Հարությունյանի կարծիքով, Վասպուրականի նոր ղեկավար մարմինը, որն իրականացնում էր նահանգի քաղաքացիական ու զինվորական իշխանությունը, վերածվեց հայկական ազգային նոր կառավարության: Այն 1915 թ. Վանի նահանգային վարչության համեմատ գուտ ազգային կառույց էր, կազմված էր բացառապես հայ, այն էլ՝ վասպուրականցի պաշտոնյաներից¹²⁷:

Մի կողմից փաստացի ենթարկվելով Փետրվարյան հեղափոխության արդյունքում ժամանակավոր կառավարության ստեղծած Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարությանը, որպես վարչական երեք կառույցներից մեկը՝ Վանի նահանգ, կոմիսարություն, մյուս կողմից ակնհայտորեն դրսևորվում է բոլշևիկյան հեղաշրջման ազդեցությունը, մասնավորապես «Թուրքահայաստանի մասին» հռչակագրի համատեքստում, ինչը թերևս արտահայտվում է կառավարության անվանման հարցում:

«Հորիզոնի» մարտի 8-ի համարի նյութից պարզ է դառնում, որ դեռևս հունվարի 20-ին Կ. Համբարձումյանը հանդես էր եկել հայտարարությամբ և իրականացրել էր Վասպուրականի վարչական ղեկավարության նշանակումները: Իրեն և իր տեղակալ Հ. Հովհաննիսյանին վերապահելով նահանգի վարչական և արտաքին գործերի ղեկավարումը, նա նահանգի ղեկավարումը հանձնարարում էր հետևյալ

¹²⁶ Տե՛ս հանգամանորեն Ավ. Հարությունյան, Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարության (երկրորդ կառավարության) գործունեությունը, ՊԲՀ, 2012, թիվ 3, Երևան, 2012, էջ 37, 40-41:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում:

պատասխանատու կոմիսարներին. 1. Զինվորական գործերի – Գր. Բուլղարացի, 2. Ներքին գործերի – Հմ. Մանուկյան, 3. Երկրագործության – Ա. Մաքսապետյան, 4. Ելևտաց – Ս. Մեսրոբյան, 5. Հանրային խնամատարության – Բժ. Ն. Տեր-Թովմասյան, 6. Պարենավորման – Զ. Կորկոտյան, 7. Փոստ-հեռագրական – Ս. Զավրիյան¹²⁸:

Մեզ հետաքրքրող հիմնահարցերի շրջանակներում առավել կարևորում ենք ՀՅԴ մի շարք Շրջանային ժողովների հրավիրումը: Այդ շարքում առաջինը **Խնուսի ՀՅԴ Շրջանային** վարչության ժողովն էր. այն տեղի ունեցավ 1917 թ. նոյեմբերի 22-ին՝ Հարամիկում: Նախագահում էր Վ. Քրմոյանը, մասնակցում էին 14 հոգի՝ 11-ը՝ վճռական, 3-ը՝ խորհրդակցական ձայնով: Օրակարգի խնդիրներն էին. ա) պարենավորման, բ) գաղթականների տեղավորման, գ) սերմացուի հայթայթման, դ) կոոպերացիայի, ե) դպրոցական, զ) ռազմաճակատի պաշտպանության, է) հագուստի և ը) Շրջանային ժողովի հարցերը¹²⁹:

Պարենավորման հարցում պարզվեց, որ Ռուսաստանում «տիրող ռեակցիայի» պատճառով համապատասխան ընկերությունները հանդիպում են խոչընդոտների, միջոցները սպառվել են, Կոմիսարիատը դադարեցրել է օգնության գործը, ուղարկված 40 հազ. փութ այլուրն էլ գրավվել է զինվորական իշխանության կողմից և միայն 130 հազ. ռուբլի նպաստը գյուղատնտեսական ընկերության միջոցով պետք է բաժանվի Խնուսի շրջանի բնակչությանը: Տեղում գործող երկու ընկերությունների զեկուցումներից պարզվեց, որ պահեստներում մնացել է 6000 փութ այլուր, որը կբավարարի երկու ամիս՝ որբանոցների, հիվանդանոցների և սննդի կետերին միայն¹³⁰:

Քանի որ շրջանի 12.000 բնակչության առջև կանգնած էր սովի ուրվականը, վճռվեց՝ 130.000 ռուբլին վերածել այլուրի, շրջանում եղած հացահատիկը ռեկվիզիցիայի ենթարկել, դիմել Թիֆլիս, կապ հաստատել համեմատաբար ապահով Վանի և Ալաշկերտի շրջանների հետ: Այս նպատակով ձևավորվեց պատվիրակություն՝ Ա. Խատիսյան, Վ. Քրմոյան և Արմեն Սասունի կազմով: Որոշվեց նաև Մոթկանցի 500 և Կոկսուի շրջանում հաստատված 600 գաղթականներին տեղափոխել Ալաշկերտ:

Կոոպերացիայի գործը համարվեց բավարար, ընտրվեց կազմակերպիչ մարմին՝ 6 անդամներով:

¹²⁸ Հորիզոն, 1918, 8 մարտի, թիվ 49:

¹²⁹ Տե՛ս Հայաստան, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 173:

¹³⁰ Տե՛ս նույն տեղում:

Կրթական – դպրոցական հարցի կապակցությամբ քննարկվեց Խնուսի շրջանում նոր դպրոցներ բացելու խնդիրը: Քանի որ Արևմտահայ ազգային խորհուրդը չուներ Խնուսի դպրոցական տարիք ունեցող երեխաների թիվը, ուստի և իրավունք էր տրվել բացել միայն չորս դպրոց, ինչը չէր բավարարում շրջանի կարիքները: Ընտրվեց ուսումնական խորհուրդ, որը Արևմտահայ ազգային խորհրդի հետ միասին պետք է փորձեր կարգավորել շրջանի կրթական գործը:

Ռեզոլուցիայի պաշտպանության խնդրի շուրջ կարդացվեց Սասունցի Մանուկի կոչը՝ ուղղված երիտասարդությանը: Որոշվեց հավաքել մի խումբ, որը պետք է լրացներ 300 հոգուց կազմվելիք հետախուզական ջոկատը: «Թող Կովկասում ապրող ազգութիւնները,- հնչում է ժողովի կոչում,- լաւ գիտնան, որ իրենց ապահովութիւնը կը պարտին միայն և միայն հայերին, որ այժմ գտնուում են Կովկասեան ֆրոնտում»¹³¹:

1917 թ. նոյեմբերի 24-ին **Վանի** գերմանական որբանոցի դահլիճում տեղի ունեցավ **ՀՅԴ ընդհանուր ժողով**: Օրվա հրատապ հարցերի շուրջ զեկուցեց Հմ. Մանուկյանը: Նա հատկապես կանգ առավ ազգային միլիցիայի կազմակերպման և տեղական զինվորական ուժերի պարտականությունների վրա: Ներկաների կողմից ջերմորեն ընդունվեց այն փաստը, որ միլիցիայի պետ նշանակվել էր Գր. Բուլղարացին, իսկ տեղակալներ՝ Լևոն Շադոյանն ու Տիգրան Բաղդասարյանը:

Նոյեմբերի 27-ին նույն շենքի մեջ ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեի հրավերով տեղի ունեցավ հանրահավաք: Այստեղ ռազմաճակատի պաշտպանության և միլիցիայի ուժեղ կազմի ստեղծման հարցի շուրջ խոսեցին Ա. Մաքսապետյանը, Գր. Բուլղարացին, Կ. Համբարձումյանը (ՀՅԴ), Ա. Թերզիբաշյանը (չեզոք), Հ. Մարգարյանը (ռամկավար), Ս. Սերհատյանը (հնչակյան), Տ. Բաղդասարյանը և Հմ. Մանուկյանը (ՀՅԴ): Միլիցիայի երկու ջոկատների կազմի մեջ շուտով անդամագրվեցին 200 հոգի¹³²:

Վասպուրականի Շրջանային ժողովը հրավիրվեց 1918 թ. հունվարի 13-19-ը՝ Բացումը կայացավ տեղի միսիոներական սրահում, իսկ աշխատանքային նիստերն ընթացան «Ազատության լույս» ընթերցասրահում: Մասնակցում էին 84 պատգամավորներ և 25 խոհրդակցական ձայնի իրավունքով ներկայացուցիչներ:

¹³¹ Հայաստան, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 173:

¹³² Տե՛ս Արև, Բաքու, 1917, 16 դեկտեմբերի, թիվ 257:

* Աշխատանքը նշում է հունվարի 14-17-ի ժամանակամիջոցը (Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72):

Ժողովը բացեց Վանի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամ Հմայակ Մանուկյանը, դիվանի պատվավոր նախագահ ընտրվեց Գրիգոր Բուլղարացին, իսկ նախագահներ՝ Վարդան Առաքելյանը և Սամվել Մեսրոպյանը¹³³:

Գրիգոր Բուլղարացին (Գևորգյան) զեկուցելով Վասպուրականի ՀՅԴ ԿԿ-ի գործունեության մասին, նշեց, որ միայն դաշտավայրում գործում է կուսակցական 90 խումբ՝ 900 անդամներով¹³⁴:

Ժողովն ընտրեց ԿԿ-ի նոր կազմ, բաղկացած յոթ հոգուց: Այդ խորհրդակցության նշանակությունը այն էր, որ վերջինս որոշեց մոտ ապագայում Արևմտյան Հայաստանում հրավիրել հայ ժողովրդի ներկայացուցչական խորհրդաժողով¹³⁵:

Կանգ առնենք ՀՅԴ Վասպուրականի Շրջանային ժողովի աշխատանքների և ընդունած որոշումների վրա:

Այն աշխատեց հետևյալ օրակարգով.

1. Կոմիսարիատի զեկույցը
2. Զինադադարի և հաշտության հարցը
3. Հայկական կուսակցությունների փոխհարաբերության և համագործակցության հարցը
4. Շրջանային և գյուղական-գավառային վարչությունների մասին
5. Հացի ճգնաժամի և երկրի պարենային ճգնաժամի մասին
6. Կուսակցական շարքերի կազմակերպության մասին
7. Երևանի «Աշխատանք» թերթի մասին:

Վանի կոմիսարիատի աշխատանքների մասին զեկույցով հանդես եկավ կոմիսար Կ. Համբարձումյանը¹³⁶:

Արևմտյան Հայաստանի ապագայի հարցում բոլշևիկյան հեղաշրջման տագնապալի հեռանկարները նկատի ունենալով, նա հույս էր հայտնում, որ քանի դեռ գործում է Ժամանակավոր կառավարության կողմից ստեղծված երկրամասի գեներալ-կոմիսարությունը, նշանակում է պահպանվում է նաև Վանի, Խնուսի և Էրզրումի շրջանների նկատմամբ հայկական ինքնավարության պահանջը: Առաջնահերթ խնդիր էր նշվում այդ տարածքների հայացումը, որի իրականացման դեպքում միայն Արևմտյան

¹³³ Տե՛ս Հորիզոն, 1918, 4 մարտի, թիվ 46:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում:

¹³⁵ Տե՛ս Աշխատանք, 1918, 24 հունվարի, թիվ 72, նաև՝ Աշխատանք, 1918, 17 հունվարի, թիվ 70:

¹³⁶ Տե՛ս Հորիզոն, 1918, 8 մարտի, թիվ 49:

Հայաստանի կոմիսարությունն իր իրավասությունը կհանձնի Հայաստանի Սահմանադիր ժողովին: Թեև ընդունվում էր, որ այդ մարմինը ոչ թե ընտրված, այլ նշանակովի մարմին էր, միննույն է այն անհրաժեշտություն էր դիտվում:

Միաժամանակ, Կ. Համբարձումյանը գտնում էր, որ Վասպուրականի Շրջանային վարչությունը ևս «մի տեսակ սահմանադիր ժողով է» և հատկապես ռուսական Կովկասյան բանակի գորամասերի հեռացումից հետո այն գրեթե ամբողջապես հայացել էր. մինչդեռ Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում գործի գլուխ կանգնած են հին վարչակարգի ներկայացուցիչները: Այդ առումով նա բարձր էր գնահատում Անդրկովկասյան Կոմիսարիատի հայանպաստ գործունեությունը՝ տեղական միլիցիայի, ինքնապաշտպանության և պարենավորման գործի կազմակերպման հարցերում:

Ջինադադարի և հաշտության հարցի կապակցությամբ զեկուցեց դարձյալ Կ. Համբարձումյանը, ընդգծելով, որ բոլշևիկյան հեղաշրջումից հետո ստեղծված աննպաստ իրադրության պայմաններում հայության գերիխնդիրը պետք է լինի զինադադարի հարմար ժամանակամիջոցը հայկական ինքնապաշտպանական ուժի ստեղծմանը ծառայեցնելու գործը:

Ռազմաճակատի պաշտպանության և տեղական ռազմական ուժի կազմակերպման վերաբերյալ զեկուցեց Գրիգոր Բուլղարացին: Նա քննադատեց Արևմտահայ ազգային խորհրդի կողմից ընդունված զինվորական մարմնի ընտրության մասին որոշումը, այն որակեց որպես «ձախորդ կարգադրություն», նկատի ունենալով, որ արևմտահայ կյանքը պետք է ղեկավարվի սեփական ուժերով, այլ ոչ թե Կովկասից, որովհետև «հոն նստած մարմինները անընդունակ են վարելու երկրի ճակատագիրը»¹³⁷:

Հայ-քրդական հարաբերությունների մասին զեկուցեց Հմ. Մանուկյանը, ընդգծելով այն ելակետային սկզբունքը, որ ապագա Հայաստանում հայկական շահի պաշտպան կարող է հանդես գալ ի հակակշիռ թուրքերի առավելապես քրդական տարրը, որը «մեզ համար յաճախ անձնանւիրութեան ապացույցներ ալ տւած է»¹³⁸:

Հայ-քրդական հարաբերությունների և հնարավոր համագործակցության վերաբերյալ ՀՅԴ շարքերում միասնական կարծիք այդպես էլ չէր ձևավորվում: Ավելին, դա հաճախ բացատրվում է Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում հենց

¹³⁷ Տե՛ս Հորիզոն, 1918, 8 մարտի, թիվ 49:

¹³⁸ Տե՛ս նույն տեղում:

քրդական տարրի մասնատվածությամբ, անգամ տարբեր ցեղերի միջև առկա հակասություններով ու շահերով:

Կ. Սասունին օրինակ, տարբերակում էր Զիլանի և Տարոնի քրդերին. «Զիլանի քիւրտերը կը մնային անհաշտ ու կղզիացած: Անոնց հետ շփման հնարաւորութիւններ չունեցանք, սակայն Տարօնի շրջանի պայմաններն այլ էին: Տարօնի շրջանի զինուորական եւ վարչական կեդրոնը Խնուսն էր: Խնուսի և Վարդոյի շրջաններու մէջ մնացած էին բաւական թիւով քիւրտեր, որոնք կրնային վճռական դեր մը խաղալ պատերազմի միջոցին: Այս մտահոգութիւններէն առաջնորդուած՝ մենք ուզեցինք սերտ բարեկամութիւն ստեղծել Շուշարի, Թէքմանի, Բինգեօլի, Մաղալէ – Սօրի և Վարդոյի քիւրտերուն հետ: Շարք մը խորհրդակցութիւններ ունեցանք Վարդոյի և Մաչալէ – Սօրի քիւրտ երեւելիներու հետ: Հակառակ այդ երեւելիներու հաւաստիացումներին, քիւրտերը մեր նահանգի ճանապարհները կը վտանգէին»¹³⁹:

1918 թ. փետրվարի 7 (20)-ին Խնուսում հայերի նախաձեռնությամբ գումարվեց քրդական համագումար, որին մասնակցում էին 35 աչքի ընկնող քրդական առաջնորդներ: Համագումարը բացեց Կ. Սասունին, ներկայացրեց 1916 թ. սկսած քրդերի դեմ թուրքերի իրականացրած ջարդերի փաստերը Դիարբեքիրում, Խարբերդում, Սդերդում և Հաքյարիի շրջանում: Ամփոփելով, նա ընդգծում էր հավաքի նպատակը՝ «հայ-քիւրտական համերաշխութիւն մը ստեղծելու եւ ցոյց տալու, որ թուրքերու յաղթանակը ոչ միայն հայերու համար աղէտալի պիտի ըլլար, այլ նաեւ քիւրտութեան մնացորդներու բնաջնջումներ իր հետ պիտի բերէր»¹⁴⁰: Իրականությունն այն է, որ ըստ Կ. Սասունիու «այդ ժողովին մէջ մէկ հատիկ անկեղծ ու արթընցած քիւրտ չգտնուեցաւ»¹⁴¹ :

Շրջանային և գյուղական-գավառական վարչությունների մասին զեկույցով հանդես
եկավ Ա. Մաքսապետյանը: Նա մանրամասնում էր Վանի վարչության ընտրության հանգամանքները, ցավով նշում, որ այդ ընտրությանը աննպաստ պայմանների պատճառով մասնակցել են քիչ թվով՝ 106 ընտրողներ: Այնուամենայնիվ ձայնի իրավունքով հրավիրվում են հետփետրվարյան փուլի Վանի քաղաքագլուխ Ա. Թերզիպաշյանին և Դանիել վարդապետին: Նա փաստում էր, որ ներկա պահին

¹³⁹ Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 165:

¹⁴⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 165:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 166:

գյուղական վարչությունների մեծ մասը ձևավորված են և վկայում էր ևս մի կարևոր փաստ, որ Վասպուրականում բնակվում է 27.000 հայ:

Հացի ճգնաժամի և երկրի պարենավորման մասին զեկուցեց դարձյալ Ա. Մաքսապետյանը, որը Վասպուրականի պարենավորման գործը բաժանեց երկու փուլի՝ ա) Բարեգործականի շրջան և բ) Շրջանային վարչության շրջան (1917 թ. նոյեմբերից): Վերջինս 50 գյուղերից 6165 չափ ցորեն հավաքելու որոշում կայացրեց և նույնիսկ այդ չափը 1000-ի բարձրացնելու պարագայում այդ քանակը կբավարարի շուրջ 6 ամիս: Միայն Վան քաղաքում, օրական 16 չափ հաց էր սպառվում:

Կուսակցական շարքերի կազմակերպման մասին զեկուցեց Զավեն Կորկոտյանը: Շրջանային ժողովը այս հարցի առթիվ եզրակացրեց, որ ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն առավելապես զբաղված լինելով կառավարման գործերով և ինքնապաշտպանության կազմակերպմամբ, շատ քիչ ժամանակ է հատկացնում կուսակցական պրոպագանդային: Առաջարկվեց իրականացնել աշխատանքի բաժանում նորընտիր ԿԿ-ի մեջ և կազմի մեկ կամ երկու ընկերներին հանձնարարել զբաղվել բացառապես կուսակցական, կազմակերպչական գործերով¹⁴²:

Երևանի «Աշխատանք» թերթի մասին զեկուցեց Հմ. Մանուկյանը, որը որպես նախկին խմբագիր (այժմ Արամ Մանուկյանն էր – Վ.Մ.) կարևորեց թերթի անցյալը, դերը և առաջարկեց թերթի խմբագրությունը տեղափոխել Թիֆլիս և «Աշխատանքը» վերածել Արևմտյան Հայաստանի օրգանի: Եղան բազմաթիվ հակաճառություններ, որոնք հիմնավորում էին, որ այդ դերը արդեն կատարում է կուսակցության «Ազատամարտ» լրագիրը, որը պարզապես անհրաժեշտ է ուժեղացնել: Իսկ ինչ վերաբերում էր «Աշխատանքին», ապա ավելի նպատակահարմար էր համարվում վերջինս փոխադրել Վան:

Արևմտահայ ազգային խորհրդի և նրա վերջին խորհրդակցության մասին զեկուցեց Մամվել Մեսրոպյանը, որը Թիֆլիսի այդ կոնֆերանսի պատգամավոր էր ընտրվել Վանից:

Դարձյալ քննադատության ենթարկվեց Արևմտահայ խորհուրդը, «որը իր դերեն դուրս է եղած», վերջինիս զինվորական մարմինը, ուր «սպրդած են գործին անընդունակ ու անհամապատասխան մարդիկ»¹⁴³: Մասնավորապես դատապարտվում էր այն, որ

¹⁴² Աշխատանք, 1918, 21 մարտի, թիվ 88:

¹⁴³ Տե՛ս Հորիզոն, 1918, 8 մարտի, թիվ 49:

մինչև 1918 թ. մարտը Սավալա-Բերկրի հատվածը չի կապվել Վանի պաշտպանական գծին և այդ պատճառով Վանից ուղարկված միլիցիան է, որ մինչև Սավալա պարեկություն է իրականացնում:

Ռամկավարների «Վան-Տոսպ»-ը ՀՅԴ Վանի ժողովի որոշումների վերաբերյալ հրապարակեց «Ակամայ քննադատութիւն» հոդվածը՝ Հ. Մայանի հեղինակությամբ: Հեղինակն ընդգծում էր Դաշնակցության տազնապն այն կապակցությամբ, որ Ապահովության խորհուրդն իր կազմով ու բնույթով «դաշնակցական կազմակերպութիւն չէ», որ այդ մարմինն աշխատել է հեռու մնալ կուսակցականությունից: Այս ելակետային մոտեցմամբ էլ բացատրվում էր Արևմտահայ ազգային խորհրդի նկատմամբ ընդունված ծայրահեղական որոշումը: «Վասպուրականի դաշնակցութեան ռայոնական ժողովի անդամները իրենց որոշումներով նախ դէմ կերթան թիրքահայ բարձրագույն իշխանութեան,- գրում էր թերթը,- Արևմտահայ Խորհուրդին, որն իրագործուած է Արևմտահայ Ա. Համագումարով, որու մէջ իրենք կը յիշեն անշուշտ իրենց գործօն մասնակցութիւնը»¹⁴⁴:

Վասպուրականի ՀՅԴ շրջանային ժողովն Արևմտահայ ազգային խորհրդի մասին որոշումը փորձում էր հիմնավորել «ձախորդ կարգադրությամբ», որն արվել էր զինվորական մարմնի ընտրության կապակցությամբ: Պարզվում է, որ զեկուցողը զինվորական մարմինը շփոթել էր Ապահովության խորհրդի հետ, ուստի և արժանանում էր ռամկավարների հեգնանքին¹⁴⁵:

Այդ քննադատությունից հետո, Շրջանային ժողովը հանգեց կտրուկ որոշման՝ չճանաչել ներկա Արևմտահայ խորհուրդը և նրան կից մարմինները, չենթարկվել նրանց հրամաններին, մինչև գումարվի Արևմտահայ նոր համագումարը, որն էլ կընտրի նոր խորհուրդ: Այս առճակատման արմատները ևս բխում են 1917 թ. մայիսին Երևանում կայացած Արևմտահայերի 1-ին համագումարից, որտեղ նախ արձանագրվեց ՀՅԴ և ՀԺԿ կուսակցությունների անհաշտ գաղափարական պահվածքը, ապա և ՀՅԴ-Անդրանիկ հակասությունը: Հայտնի է, որ Արևմտահայ ազգային խորհրդի զինվորական բաժնի ղեկավար, համագումարի պատվավոր նախագահ Անդրանիկը այս համաժողովում երկրորդ անգամ լքեց ՀՅԴ շարքերը:

¹⁴⁴ Վան-Տոսպ, 1918, 18 մարտի, թիվ 8, էջ 11:

¹⁴⁵ Տե՛ս Վան-Տոսպ, 1918, 18 մարտի, թիվ 8, էջ 9-13:

Զարմանալի է, որ Ս. Մեսրոպյանի զեկույցում Ազգային խորհրդի զինվորական մարմինը մեղադրվում էր մասնագիտական թերացումների համար և ստացվում է, որ Անդրանիկի սուբյեկտիվ գործոնը տարածվում էր ամբողջ մարմնի գործունեության վրա: Այսպիսով նաև Վանի ՀՅԴ Շրջանային ժողովը ու նաև տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն չէին կիսում խորհրդի մյուս անվանի գործիչների՝ Վահան Փափազյանի, Արամ Մանուկյանի և այլոց որոշ տեսակետներ: Մի գուցե և դրանով է բացատրվում «Աշխատանք» թերթը Երևանից Վան փոխադրելու առաջարկը:

Վերջում ընտրվեց Վանի ՀՅԴ Շրջանային կենտրոնական կոմիտե՝ հետևյալ կազմով. 1. Գրիգոր Բուլղարացի, 2. Սամվել Մեսրոպյան, 3. Բարունակ Կապուտիկյան¹⁴⁶ (Երևան), 4. Հմայակ Մանուկյան, 5. Լևոն Շողոյան, 6. Տիգրան Բաղդասարյան, 7. Զավեն Կորկոտյան:

Ժողովի ավարտից հետո Մեծ Քենարչիի հրապարակում ժողովականներին ընդառաջ եկած հայկական միլիցիայի հարյուրակը ողջույնի կանգնեց փողոցի մեջ և փոխադարձ ուռուցաներով և «Մեր Հայրենիք¹⁴⁷»-ը երգելով զինվորականներն ու ժողովականները ողջունեցին միմյանց:

Հավելենք նաև, որ 1918 թ. մարտի 5-6-ը կայացավ ևս մեկ շրջանային ժողով՝ նմանատիպ օրակարգով:

Առանձնահատուկ կերպով ընդգծվում էր հակահետախուզության գործունեության փաստը, մասնավորապես այն, որ այդ ծառայությանը «կասկածելի և մութ գործունեություն մը ունեցած է», և որ այդ բնագավառը կարիք ունի բարեփոխումների և ազգայնացման¹⁴⁸:

ՀՅԴ «Արև» թերթը Բաքվում բնակվող արևմտահայության պահվածքը՝ գորակոչի և արևմտահայերի երկրապահ դիվիզիայի ձևավորման նկատմամբ գնահատում էր գործնական ու մարտական:

1917 թ. դեկտեմբերի 28-ին Բաքվի Հռիփսիմյան օրիորդաց դպրոցում տեղի ունեցավ բաքվաբնակ արևմտահայերի ժողով: Զեկուցող Ռ. Քաջբերունին, որը տեղի արևմտահայերի անունից որպես պատգամավոր մասնակցել էր Թիֆլիսի Արևմտահայ ազգային խորհրդի խորհրդակցությանը, ներկայացրեց արևմտահայ երկրապահ

¹⁴⁶ Միլվա Կապուտիկյանի հայրն է:

¹⁴⁷ Այստեղից պարզվում է, որ մինչև անկախացումը, մի գուցե «Մեր Հայրենիք» երգը հանդիսացել է ՀՅԴ կուսակցության օրհներգը:

¹⁴⁸ Տե՛ս Հորիզոն, 1918, 10 մարտի, թիվ 51:

դիվիզիայի կազմակերպման գործընթացը: Ժողովն իր հերթին ընտրեց կենտրոնական մարմին, որի մեջ մտան Ռ. Քաջբերունին, Գ. Իսկենդերյանը, Յ. Չանոյանը, Գ. Կարապետյանը, Ս. Արարքյանը և Ս. Դանթոյանը: Այդ մարմինն հավասար իրավունքներով մասնակցելու էին Բաքվի «Վասպուրական», «Տարոն-Տորուբերան» և «Կարին-Փոքր-Ասիա» հայրենակցական միություններից մեկական ներկայացուցիչներ¹⁴⁹:

Մինչդեռ, ըստ ռամկավարների «Վան-Տոսպ»-ի տպավորության, Բաքվի արևմտահայության միջավայրում բոլորովին այլ տրամադրություն էր թևածում:

Թերթը նշում էր, որ Շամխորի հունվարի 9-ի նախճիրից հետո Բաքուն հաղորդակցական ուղիների առումով վերջնականապես կտրվեց Անդրկովկասից: Այդ պատճառով և ձախողվեց Հյուսիսային կովկասի արևմտահայության գորահավաքը:

Անգամ մինչ այդ իրադարձություններն էլ, Բաքվի արևմտահայերի հայրենակցական միությունները մերժում էին ընդհանուր գորահավաքի հրամանը, պատճառաբանելով, թե Հայաստանի Ապահովության խորհուրդը գորահավաքի հետ առաջնություն ունեցող երկրորդական հարցերի մասին բազմակողմանի հրահանգներ չի ուղարկել:

Ինչևէ, չնայած Բաքվի արևմտահայության միջավայրում տիրող խանդավառությանը, «Վան-Տոսպը» կրկին ընդգծում էր, որ տեղական արևմտահայ մարմինը «ամեն ջանք կը թափե ժողովրդի խանդավառութիւնը զսպելու համար»¹⁵⁰:

Դաշնակցության Վանի ժողովին հաջորդեց Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցության շրջանային պատգամավորական խորհրդակցությունը Երևանում:

Որոշվել էր հունվարի 20-ին Երևանում գումարել Շրջանային 2-րդ պատգամավորական ժողով, սակայն հաղորդակցության խանգարման պատճառով պատգամավորները չկարողացան հավաքվել որոշված ժամկետում, ուստի և 1918 թ. հունվարի 26-28-ը կայացավ խորհրդակցական ժողով: Ժողովին մասնակցում էին 20 ներկայացուցիչ Վանից՝ 4, Երևանից՝ 4, Թիֆլիսից՝ 4, Բաքվից՝ 2, Ռոստովից՝ 2, Կարս-Ալեքսանդրապոլից՝ 1, Խարկովից՝ 1, ՀՄԿ-ի կողմից՝ 2: Հրավիրված էին ևս 7 հոգի խորհրդակցական ձայնի իրավունքով:

¹⁴⁹ Տե՛ս Արև, Բաքու, 1917, 30 դեկտեմբերի, թիվ 269:

¹⁵⁰ Տե՛ս Վան-Տոսպ, 1918, 1 ապրիլի, թիվ 10:

Նկատի ունենալով ռազմաճակատի փլուզման հետևանքով հայ ժողովրդին սպառնացող վտանգը և հենվելով 1917 թ. դեկտեմբերի 15-ի Թիֆլիսի խորհրդակցության որոշումների վրա, Հ.Ս.-Ռամկավար կուսակցության պատգամավորական ժողովը որոշում է.

1. Իր բոլոր ուժերը ի սպաս դնել երկրապահ զորամասերի կազմակերպմանն ու ուժեղացմանը,

2. Վստահություն հայտնել Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկին,

3. Վստահություն հայտնել Հայաստանի ապահովության խորհրդին¹⁵¹:

Զորահավաքի հաջող ընթացքը ռամկավարները կապում էին արևմտահայ հայրենակցական միությունների և արևմտահայ քաղաքական կուսակցությունների օժանդակության հետ: Նրանք գտնում էին, որ Թիֆլիսում գործող 10 հայրենակցականներն առայժմ ոչ մի պատշաճ աջակցություն չեն ցուցաբերել¹⁵²:

Այսպիսով, արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքը հետհոկտեմբերյան շրջանում կարելի է տարանջատել երկու խումբ հիմնահարցերի. առաջինը՝ Արևմտյան Հայաստանի ինքնապաշտպանության, պարենային խնդրի և քաղաքացիական ազգային իշխանության ձևավորման, երկրորդը՝ արևմտահայ հասարակական-քաղաքական շերտերի ու գործիչների ինքնակազմակերպմանը նվիրված:

Ստացվում է, որ 1917 թ. մայիսից մինչև 1918 թ. հունվար-փետրվար ժամանակահատվածը, բացի հանրահայտ իրադարձություններից նկատվել է նաև արևմտահայության հասարակական-քաղաքական ներքին կյանքի, պայքարի, հակասությունների ակտիվություն, բազմազանություն:

Արևմտահայերի 1-ին համագումարից մինչև Հայաստանի առաջին հանրապետության իրականության մեջ 2-րդ համագումարի հրավիրումը, արևմտահայության քաղաքական ակտիվությունն ապահովվել է հիմնականում ի դեմս Թիֆլիսում և Վանում կայացած (1917 թ. դեկտեմբեր – 1918 թ. ապրիլ) կարևորագույն ժողովների, խորհրդակցությունների և ի վերջո՝ Արևմտահայերի 2-րդ խորհրդաժողովի:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում, 25 փետրվարի, թիվ 5, էջ 10-11:

¹⁵² Տե՛ս նույն տեղում, 11 փետրվարի, թիվ 4, էջ 6:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ (1917 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ-1918 Թ. ՀՈՒՆՎԱՐ)

2.1. ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջմամբ Անդրկովկասում գործնականորեն դրվեց Խորհրդային Ռուսաստանից անջատման և անկախ ազգային պետականությունների ստեղծման գործընթացի մեկնարկը:

Այդ ճանապարհին Երզնկայի զինադադարը դարձավ նշանակալից առաջին ջրբաժանը, երբ Անդրկովկասյան կոմիսարիատն իր որդեգրած անջատողական և այդպիսով նաև Թուրքիայի հետ մերձենալու քաղաքականության նախաշեմին սկսեց գործել ավելի անթաքույց ու համարձակ: Պաշտոնական փաստաթղթերի մեջ միանգամից մուտք գործեց «Կովկասի անկախ կառավարություն» ձևակերպումը, որը նախ՝ շեշտում էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու առաջնահերթ հարցադրումը, ապա և Անդրկովկասը Կովկաս կոչելով հետապնդվում էր պանթուրքիզմի դեռևս չիրականացված ծրագիրը՝ հակառուսական և հակախորհրդային դաշինքի մեջ փորձելով ներառնել միաժամանակ նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականներին ու հակախորհրդային կառավարություններին: Կոմիսարիատին ուղղված Վեհիբ փաշայի նամակում միայն այդ նոր ձևակերպումը կրկնվում է հինգ անգամ: Ժամանակին դա նկատել էր նաև Ալ. Խատիսյանը, նա գրում էր. «Տաճիկների համար անկախ Կովկաս մը բաղձալի պատնեշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Թիֆլիսի մեջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզեր բացահայտորեն խոսել Ռուսիայէն անջատելու մասին: Համենայն դեպս, ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը և այդ գաղափարի հրահրումը եկավ Թուրքիայէն»¹⁵³: Մեր փաստարկները հիմնավորում են սակայն այն մտտեցումը, ուր վերոհիշյալ գործընթացը

¹⁵³ Տե՛ս Ա. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 30:

սկսվել էր ոչ թե և ոչ այնքան Թուրքիայի, այլ հիմնականում վրացական մենշևիզմի գործնական նախաձեռնությամբ՝ բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում:

Այդ համատեքստում էր, որ Ա. Չխենկելին բարձրացնում էր վրացական ազգային շրջանակների գլխավոր մտահոգությունը՝ երկրամասում Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի ոչ ցանկալի ներկայության խնդիրը: «Անդրկովկասի թիկունքում կանգնած է հսկայական, կեսմիլիոնանոց բանակը,- նշում էր նա,- որը բոլշևիզմի գաղափարներով վարակված ոչ այնքան բարեկամաբար է տրամադրված Անդրկովկասին»¹⁵⁴:

Երկրամասի մյուս ժողովուրդների ազգային շահերի պաշտպանության իրավունքն ու պատասխանատվությունն իր և վրացական մենշևիզմի իրավասությունը դարձնելով՝ Ա. Չխենկելին այդ ուժի մեջ էր տեսնում Անդրկովկասում իշխանության այլընտրանքի, Կոմիսարիատի գոյության հարցը: Նա գտնում էր, որ ազգային զորամասերը կազմակերպված չեն, իրական ուժ չեն ներկայացնում, որի վրա կարող է հենվել տեղական իշխանությունը: Այս հարցում արհեստականորեն հավասարության նշան էր դրվում, երբ վրացական գործիչներին հայտնի էր, որ հայկական ազգային զորամասերը բավականաչափ կազմակերպված են և որ օրակարգի հարցը Հայկական կորպուսի ստեղծման ավարտական փուլն էր: Ավելին, ազգային զորամասերի կազմավորման գործընթացի նկատմամբ հիմնականում վրացական բոլշևիկ ղեկավարների բացասական վերաբերմունքը Ա. Չխենկելին հմտորեն վերաձևում էր երկրամասի ժողովուրդների նկատմամբ ռուսական տարրի թշնամական պահվածքի որակավորմանը, մեկ անգամ ևս հիմնավորելով Ռուսաստանից անջատման հիմնահարցի արդարացվածությունը:

Ա. Չխենկելին պարզապես չէր ուզում ընդունել, որ բացի բոլշևիզմի և Անդրկովկասը խորհրդայնացնելու վտանգից, ռուսական զորամասերի ներկայությունը նաև համառուսաստանյան միասնական պետության ամբողջականության պահպանման գրավականն էր՝ լինել դա ժողովրդավարության, միապետության, թե բոլշևիզմի դրոշի ներքո: Ավելի ուշ ռուսական պետականամետ ռազմա-քաղաքական ուժերի ու հատկապես գեներալ Ա. Դենիկինի հետ կայուն դաշինքի ստեղծումը առավելապես բխում էր հայության շահերից, քանի որ, նախ՝ բացահայտորեն առայժմ

¹⁵⁴ Տե՛ս Վրաստանի ազգային արխիվ, Национальный архив Грузии այսուհետև՝ НАГ, ֆ. 1, օր. 2, Ժ. 116, Լ. 59.

չէր մերժվում ազգային ինքնիշխանության հեռանկարը, ապա և Արևմտյան Հայաստանում դեռևս կանգնած Կովկասյան բանակի որոշ զորամասերի ներկայությունը երաշխավորում էր նաև ռուսաստանյան պետականամետ ուժերի միջոցով Հայկական հարցի բարենպաստ լուծումը: Այլ կերպ ասած, հայությանը (չմասնավորեցնելով հայ ազգային կուսակցությունների վարքագիծը – Վ.Մ.) ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում՝ անգամ բոլշևիզմի տեսքով, իսկ վրաց-թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խոչընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ՝ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին:

Ռուսաստանից անջատ գործելու առաջին գործնական քայլը տեղի ունեցավ Կոմիսարիատի ձևավորումից երկու օր անց: Կովկասյան ռազմաճակատի թուրքական հրամատանարությունը նոյեմբերի 17 (30)-ին հանդես էր եկել զինադադարի առաջարկությամբ՝ «հանուն մարդասիրության՝ եղբայրասպան պատերազմին վերջ տալու նպատակով»¹⁵⁵:

Զինադադարը Թուրքիային անհրաժեշտ էր Իրանում, Միջագետքում և Պաղեստինում վերջինիս բանակների ծանր դրության պատճառով: Բացի այդ, Կովկասյան ռազմաճակատի ուղղությամբ թուրքական բանակը չուներ բավարար ուժեր՝ դեպի Կովկաս արշավանք կազմակերպելու համար, ուստի և ուժերի կենտրոնացման համար կենսական ժամանակ էր շահում:

1917 թ. նոյեմբերի դրությամբ Թուրքիայի և թուրքական բանակի դրության մասին է վկայում ռուսական հետախուզական բաժանմունքի պետի տվյալների վրա հիմնված արխիվային մի ուշագրավ փաստաթուղթ:

Այսպես, 1917 թ. նոյեմբերի 19-ին հայտնվում էր, որ Եվրոպական և Ասիական Թուրքիայում կուտակված բոլոր պահեստային զորամասերը ուղարկվել են Հալեպի շրջան: Թուրքիայի դաշնակից գերմանացիները մինչև այդ կարծում էին, թե Պաղեստինյան ու Սիրիական ճակատների պաշտպանության համար թուրքական ուժերը լիովին բավարար են, ուստի և Թուրքիային հարկավոր է աջակցել միայն հրետանիով ու արկերով: Սակայն թուրքական զինվորական շրջանակների կարծիքով

¹⁵⁵ Տե՛ս С.Т. Аркомед, Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923, с. 13.

«ռուսների կողմից առաջարկված զինադադարը, հնարավորություն կընձեռի Գերմանիային Ասիա ուղարկել իր ազատված որոշ դիվիզիաներ»¹⁵⁶:

Մյուս կողմից, զինադադարը հնարավոր կդարձնի նաև Կովկասյանից՝ Պաղեստինյան ու Սիրիական ռազմաճակատներ հասցնել 40.000 զինվոր: Տեղեկացվում էր, որ Էնվեր փաշան իր շտաբով տեղափոխվել է Սիրիական ճակատ. Ծովային մինիստր Ջեմալ փաշան վերջինիս բացակայության ընթացքում ստանձնելու էր նաև ռազմական մինիստրության ղեկավարությունը¹⁵⁷:

Իր հերթին, նոյեմբերի 22-ին բուլղարական աղբյուրը հայտնում էր, որ նոյեմբերից Բուլղարիայի վրայով Թուրքիա են ուղարկվել 8 գերմանական դիվիզիաներ, իսկ ավելի վաղ՝ հոկտեմբերին՝ հսկայական քանակությամբ դաշտային հրանոթներ և այլ ռազմամթերք¹⁵⁸:

Թուրքիայի քաղաքական և տնտեսական ներքին կացությանն էլ նվիրված էր նոյեմբերի 1-ով թվագրվող փաստաթուղթը: Այնտեղ գլխավորապես կարևորվում է հետևյալը. «Իշխանության ներկայացուցիչների թվում տվյալ պահին ամենաազդեցիկ մարդը համարվում է մեծ վեզիր Թալաաթ փաշան. կառավարության կազմում՝ ֆինանսների մինիստր Ջեվիդ բեյը, Ռազմական մինիստր Էնվեր փաշայի հեղինակությունը զգալիորեն թուլացել է, իսկ «Սիրիայի թագավոր» մականունով հայտնի դարձած Ջեմալ փաշան վերածվել է արաբների և Սիրիայի բնակչության ատելի կերպարի: Այդ երեքի մեջ իր գերմանոֆիլությամբ առանձնացվում է հատկապես Էնվերը: «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեծամասնությունը հետևում էր Թալաաթին: Կարևորվում էր նաև Մուտհադ – Շուքրի բեյի ազդեցիկ դիրքը իշխանության մեջ:

Ռուսական հակահետախուզությունը տեղեկացնում էր, որ ներկա պահին Թուրքիայում չկա լուրջ ընդիմություն: Բնակչության 50%-ը աջակցում էր դաշնակիցներին, անգրագետ 40%-ը հեռու էր քաղաքականությունից, մնացած 10%-ին ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից էլնելով կարելի էր համարել գերմանոֆիլ: Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայում շատ ուժեղ է, չնայած Թալաաթ փաշան և իր

¹⁵⁶ Տե՛ս Ռուսաստանի պետական ռազմա-պատմական արխիվ - Российский Государственный Военно-исторический Архив, այսուհետև՝ РГВИА, ֆ. 2000, օպ. 1, ձ. 3240, լ. 1:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղում:

շրջապատը մի քանի անգամ բողոքել են Թուրքիայի ներքին գործերի մեջ Գերմանիայի միջամտության դեմ»¹⁵⁹:

Տնտեսության ասպարեզում պարզվում էր, որ Թուրքիայի կյանքը 1914 թ. ամռան հետ համեմատ թանկացել էր 2000 %-ով, նկատվում էր առաջին անհրաժեշտության մթերքների լուրջ պակաս, տիրում էր սով, Կ. Պոլսում պարենային և հատկապես սանիտարական վիճակը գնալով ծանրանում էր, ֆինանսական առումով՝ Թուրքիայի կախվածությունը Գերմանիայից ավելի էր խորանում¹⁶⁰:

Կարելի է ենթադրել, որ Հայոց Մեծ եղեռնի հետևանքով իսկված ավարը առայժմ չէր իրացվում: Հետևապես ուշագրավ է փաստաթղթի սկզբնական հատվածը, որտեղ ներկայացվում էր մի շարք քուրդ աղալարների ցուցակը իրենց համառոտ բնութագրականներով և հասկանալի է, ընդգծվում էր հատկապես նրանց ռուսասիրության, ուխտադրության կամ վստահելիության աստիճանը:

Օրինակ, Սարաչլի (Կարափափախ) աշիրեթի ցեղապետ Խան-Բաբա բեկը տիրապետում էր ռուսերեն, թուրքերեն, պարսկերեն, հայերեն լեզուներին, տրամադրված էր թուրքական կառավարության դեմ, համակրում էր ռուսներին, հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էր, աղքատ էր (ունեւր ընդամենը 150 ոչխար): Վերջում արվում էր գլխավոր եզրակացությունը՝ «կարելի է մեր (ռուսների – Վ.Մ.) կողմը գրավել»¹⁶¹:

Ընդհանուր առմամբ ձևավորվում է բավական ամբողջական պատկեր. Թուրքիայում, պատերազմի երրորդ տարվա ավարտին ստեղծվել էր մի կացություն, ինչը անհրաժեշտ էր դարձնում առայժմ Ռուսաստանի հետ զինադադարի կնքումը:

Ռազմա-քաղաքական սրընթաց գործընթացների զավեշտը և հակասությունն այն է, որ Թուրքիայի հետ Կոմիսարիատի մերձեցումը ընթանում էր անջատ բանակցությունների համատեքստում: Փաստորեն անդրկովկասյան իշխանությունները երկրամասում և Կովկասյան ռազմաճակատում որդեգրելով բոլշևիկյան կառավարության արտաքին քաղաքականության ռազմավարությունը, ևս մի անգամ դաշինքի էին գնում այդ նույն Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ, բայց ոչ թե

¹⁵⁹ Տե՛ս РГВИА, ф. 2000, оп. 1, д. 3859, л. 1:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

¹⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 3240, թ. 1:

Գերմանիայի նման բոլշևիկներին երաշխիքներ տալու, այլ վերջինիս իշխանությունը չճանաչելու ճանապարհով:

«Պարտված Ռուսաստանը,- գրում էր «Վան-Տոսպը»,- Պետրոգրադի ժողովուրդի և Անդրկովկասյան կոմիսարիատի անուններով դիմեց պատերազմող պետություններին եռամսեա զինադադարի առաջարկով»¹⁶²:

ՀԺԿ-ն օրինակ, հայ ժողովրդի երկու հատվածների համար անջատ հաշտությունը միանշանակ դիտում էր որպես հայ ազգի, Հայաստան հասկացության և Հայկական հարցի կործանում: Որպես հավանական մոտակա հետևանքներ էին դիտարկվում Կովկասյան ռազմաճակատի մերկացման գործընթացի վերջնական ավարտը, դրա հետևանքով թուրքական անխուսափելի արշավանքը, 40 հազար զինված քրդերի աջակցությունն այդ հարցում, այն, որ «հաշտություն առանց անեքսիայի և ռազմատուգանքների» կարգախոսը ենթադրելու էր Արևմտյան Հայաստանի վերադարձ Թուրքիային և որ «ազգերի ինքնորոշման իրավունքի» բոլշևիկյան պայմանը օգտակար էր լինելու ոչ թե հայաթափված Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, այլ այնտեղ ապրող թուրքերի և քրդերի համար, որ ցեղասպանության արդյունքում մեծամասնություն են կազմել¹⁶³:

Այնուհետև, նկատի ունենալով Արևմտյան Հայաստանի գեներալ – կոմիսարության չկայացած գործունեությունը, հայկական ազգային զորամասերի ոչ բավարար քանակը, հնարավոր չէր համարվում իրականացնել նաև մոտ 400 հազար արևմտահայ գաղթականության տունդարձի խնդիրը:

Կոմիսարիատի ղեկավարությունը չէր ուզում ընդունել, որ Կովկասյան բանակի զորամասերի գերակշիռ մասը 1917 թ. դեկտեմբերին արդեն բոլշևիկացել և սկսել էր զանգվածաբար դատարկել ռազմաճակատը: Ի դեպ, մինչհեղափոխական 880-650 հազարի հասնող ռուսական կովկասյան բանակը քիչ թե շատ կայուն վիճակ էր պահպանում մինչև 1917 թ. նոյեմբերի 8-ին «Խաղաղության մասին» բոլշևիկյան հռչակագրի ընդունումը: Հեղաշրջումից հետո բանակի զորամասերի թիվը տատանվում էր 500-250 հազարի միջև, իսկ 1918 թ. հունվարի դրությամբ, այն կազմում էր 60 հազար զինվոր¹⁶⁴: Հարց է առաջանում, խաղաղության և հող ստանալու ակնկալիքով ոգևորված

¹⁶² Վան-Տոսպ, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:

¹⁶³ Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1917, 25 նոյեմբերի, թիվ 252:

¹⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 50:

ռուս զինվորը ինչպե՞ս պետք է վերջ տար պատերազմին, եթե ոչ անջատ բոլշևիկյան հաշտությունը պաշտպանելով: Անբացատրելի է նաև Կոմիսարիատի հարցադրումն այն մասին, որ Կովկասյան բանակը համառուսաստանյան ռազմաճակատի հետ միշտ կպահպանի միասնություն: Քաղաքացիական պատերազմի պայմաններում, այդ ո՞ր ռազմաճակատի կամ ո՞ր բանակի մասին էր խոսքը գնում, մի՞թե դարձյալ Կովկասյան բանակի բոլշևիկացած զորամասերի, որոնք վերադառնում էին Ռուսաստան՝ այժմ էլ համալրելու Կարմիր բանակի շարքերը:

2.2. ԴԵՊԻ ԵՐԶՆԿԱ ԵՎ ԿԱՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Կովկասյան ռազմաճակատի փլուզման և Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի դասալքման գործընթացը իր գագաթնակետին հասավ 1917 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակից հետո: Անդրկովկասյան Կոմիսարիատի արտաքին քաղաքականության տրամաբանությունը ու մասնավորապես գերմանո-թուրքական կողմնորոշման որդեգրումը թեև ամբողջացավ նոյեմբերի 15-ին՝ երկրամասային իշխանության ձևավորմամբ, այնուամենայնիվ բեկումնային փուլը սկսվեց Երզնկայի զինադադարով: Այդ ջրբաժանը սկիզբ դրեց Կովկասյան բանակի հրամանատարության և հայկական զինուժի ղեկավարության շրջանում աննախադեպ տագնապալի, ոչ կազմակերպված աշխատանքային փուլի, որի նպատակը ի վերջո ռազմաճակատի պաշտպանությունն էր:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության քաղաքականության որոշ ուղղություններ ու մանրամասներ պարզվում են Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովի և Հայ Զինվորական Միության (ՀԶՄ) միջև կայացած հեռախոսազրույցից:

Նախապես նշվում էր, որ հեռախոսային քննարկումը չպետք է կրի դեկրետի, որոշման բնույթ, քանի որ բնակչության նկատմամբ յուրաքանչյուր գործողության օրենքի դաշտ բերելու հանգամանքը բացառապես պատկանում է քաղաքացիական իշխանությանը՝ ի դեմս Երզրումի շրջանի կոմիսարի: Առաջարկվում էր որպեսզի սպասվող խոսակցությանը մասնակցեն ՀԶՄ նախագահությունը և տեղի զինական ուժի ստեղծման պատասխանատու խմբապետ Թորգոմը: Նա ՀԶՄ-ը փորձում էր հորդորել

չափազանց նուրբ հարցի առնչությամբ, այն է՝ իշխանությունը տեղի հայերի ձեռքն անցնելու պատճառով խուսափել հայ – մահմեդական փոխադարձ անտակտությունից ու էքսցեսներից: Պարտադիր քաղաքացիական աշխատանքի անցնելու կապակցությամբ առաջարկվում էր առաջնորդվել կամավորության սկզբունքով, առավել ևս թույլ չտալ բռնի ուժի կիրառում: Եվ դա առաջարկվում էր հայ գործիչներին, որպեսզի հեռանկարում, միջազգային վեհաժողովում քննարկվող Հայկական հարցի համատեքստում, եվրոպական տերությունների մոտ վստահություն ձևավորվեր հայերի ու հատկապես նրանց կողմից պետություն ստեղծելու կարողությունների և այդ պետության բոլոր ազգային փոքրամասնությունների համար քաղաքացիական ազատությունների ապահովման հարցում: Պ. Ավերյանովն ի դեմս ՀԶՄ փաստորեն դիմում էր ու խնդրում Արևմտյան Հայաստանում գործող ազգային ու զինվորական կազմակերպություններին, որպեսզի նրանք տեղում, նախ՝ խուսափեն իշխանության համար պայքարից, կուսակցական գզվռոտից, ինչպես նաև ըմբռնումով վերաբերվեն ճակատը լքող ռուսական զինվորների հանդեպ, զերձ մնան ռուսական զենքի թալանից:

Տեղեկացվում էր նաև «Թուրքահայաստանի մասին» ժողովմխորհի հոչակած ղեկրետի մասին:

Պ. Ավերյանովը պնդում էր, որպեսզի Էրզրումի շրջանի կոմիսարի օգնականի պաշտոնակատար Տ. Աղամալյանը, և ՀԶՄ-ն սերտորեն համագործակցեն Էրզրումի կոմիսար Գլոտովի հետ, վստահեն նրան ինչպես իրեն, քանի որ երկուսի նպատակներն ու ծրագրերը նույնն են: «Միայն փոխադարձ վստահությունը,- գրում էր Պ. Ավերյանովը,- կարող են նպաստել դժբախտ Հայաստանի վերածննդին»¹⁶⁵:

Քանի որ Երզնկան ու Կարինն էին համարվում ռազմաճակատի և գրավված տարածքների եզրագիծը, ուստի և առաջնահերթ ուշադրության կենտրոնում հենց այդ երկու ռազմավարական կենտրոններն էին հայտնվում:

Էրզրումի շուրջ ծավալվող իրադարձությունների ժամանակագրությունը կարելի է սկսել 1917 թ. նոյեմբերի 2-ի տեղեկությամբ:

Փետրվարյան հեղափոխության իրականության մեջ, երբ Կովկասյան բանակի զանգվածային փլուզման մասին խոսք չէր գնում, Պատերազմից տուժածների օգնության Հայկական կենտրոնական կոմիտեն, ի դեմս Սամսոն Հարությունյանի դիմում է

¹⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 11, թթ. 53-60:

Օգակոմի անդամ Մ. Պապաջանյանին՝ այն մտահոգությամբ, որ Էրզրումից ստացվող լուրերի համաձայն շուտով ռազմաճակատի առաջին գծից զորքերը հետ են քաշվելու մինչև Երզնկա – Բաբերդ՝ դեպի Էրզրում: Այդ առնչությամբ բաձրանում էր նաև տեղի հայ ազգաբնակչության հեռանալու, ընդհուպ մինչև Անդրկովկաս հասնելու հրամայականը¹⁶⁶:

1917 թ. նոյեմբերի 10-ին Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Վ. Լյախովը իր մոտ կանչելով Սեբաստացի Մուրադին (Խրիմյան), Երզնկայում Մոսկվայի հայկական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ բժ. Արշակ Պողոսյանին հայտնում է ռուսական զորամասերի տուն վերադառնալու մասին իրեն ուղարկված հեռագրի բովանդակությունը և առաջարկում է նրանց անմիջապես ստանձնել ռազմական և պարենային բոլոր պահեստների տնօրինությունը: Նա իր բարոյական աջակցությունն էր հայտնում և պատրաստվում էր իր կողմից վստահելի ռուս սպաներին թողնել Երզնկայում՝ հայ կամավորների մարզելու նպատակով: Նրան է պատկանում նաև Անդրկովկասից արևելահայ զինվորներին Կովկասյան ճակատ անհապաղ փոխադրելու հեռատես մարտավարության գաղափարը:

«Զօր. Լիախով ճշմարիտ հայասեր մեկն էր, որ գործնական կերպով ապացուցած էր իր հայասիրությունը,- գրում էր Արամ Ամիրխանյանը,- Լիախովի բուռն փափաքն էր որ Հայերը անմիջապես կազմակերպուին և կարելի եղածին չափ շուտ՝ թափուր ձգուած դիրքերը հաստատուին»¹⁶⁷:

Օրինակ, Չարդախլուի գծի վրա գտնվող 1500 ռուս զինվորների փոխարեն Վ. Լյախովը Սեբաստացի Մուրադի նախաձեռնությամբ 70 հայ կամավորներ էր ուղարկել: Բացի Վ. Լյախովից ու ռուս սպաներից այս առաքելությունը փորձում էին իրականացնել նաև 20-ից ավել հայազգի սպաներ՝ բժ. Արսլանյանը (փոխհազարապետ), պողպորուչիկ Դանիելյանը (հարյուրապետ), Հակոբովիչը և այլոք: Մուրադն իր տրամադրության տակ ուներ 30 կամավորներ, որոնք դեռ 1916 թ. Սեբաստիայում պայքարում էին թուրքերի ու քրդերի դեմ¹⁶⁸:

¹⁶⁶ Տե՛ս Արмяне в Первой мировой войне, с. 389.

¹⁶⁷ Արամ Ամիրխանյան, Ռուս-թուրք զինադադարը, 1917-1918 (Փայտոս տամո), Ֆրեզնո, 1921, էջ 12-14:

¹⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

Ավելի ուշ, դեկտեմբերի 12-ին գեներալ Վ. Լյախովը հեռագրում էր. «գորամասերը ամեն օր նկատելիորեն հալչում են, արագ ձեռնարկեք երեք հայկական վաշտերի ժամանումը, այլապես կկորցնենք ահռելի գույք, զենք ու զինամթերք»¹⁶⁹:

Նույն օրը Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության Էրզրումի շրջանի կոմիսարի տեղակալի պաշտոնակատար Ֆարոշյանցը ՀԶՄ հետ հեռախոսագրույցի ժամանակ ահազանգում էր. «Նապոլեոնը խնդրում էր փող, փող և փող, իսկ մենք բացականչում ենք՝ մարդ, մարդ, մարդ: ՀԶՄ-ի ենթակայության տակ սպաներ ուղարկեք»¹⁷⁰:

Դեկտեմբերի 11-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Վիշինսկին ¹⁷¹ հեռագրում էր Հայոց ազգային խորհրդին, որ Առաջին և վեցերորդ կորպուսները սկսել են նահանջը: Նրան անհանգստացնում էր այն փաստը, որ դեպի Էրզրում հայկական գորամասերի տեղաշարժի վերաբերյալ չկան տեղեկություններ: «Որպեսզի պահպանենք գրավված երկրամասը,- հեռագրում էր նա,- անհրաժեշտ է այժմ նեթ Էրզրում ուղարկել բոլոր հայկական գորամասերը իրենց վարչություններով: Դրանք կարող են ծածկել 16 և 4-րդ կորպուսների զբաղեցրած ճակատները» ¹⁷² : Նրան հատկապես հետաքրքրում էր, թե ռազմաճակատի ենթակայության տակ գտնվող որ հայկական ազգային գորամասերն են առկա, որոնք ամենաշտապ կերպով պետք է տեղակայվեն Կարինում¹⁷³:

Դեկտեմբերի 12-ին Ի. Օդիշելիձեն հեռագրում էր Կովկասյան բանակի հրամանատարին այն մասին, որ իր կողմից նոյեմբերի 30-ին հրաման է արձակվել 1-ին հայկական գնդին արագորեն շարժվել Էրզրում: «Չնայած դրան,- մտահոգվում էր

¹⁶⁹ Տե՛ս Արմյաե в Первой мировой войне, էջ 154:

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 156:

¹⁷¹ Գեներալ-մայոր Ե. Վ. Վիշինսկին 1917 թ. ապրիլի 7-ից Կովկասյան բանակի շտաբի պետն էր: Ապրիլի 22-ին Ռազմական մինիստրի կարգադրությամբ գործուղվել է Պետրոգրադ՝ ժամանակավոր կառավարության տրամադրության տակ՝ Հայաստանի և Հայկական հարցի քննարկումներին մասնակցելու համար: 1918 թ. մարտի 5-ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի կարգադրությամբ նշանակվել է Առանձին Հայկական կորպուսի շտաբի պետ, իսկ սեպտեմբերի 5-ին Հայկական կորպուսի կազմալուծման հետևանքով ՀՀ Զինվորական նախարարության տրամադրության տակ: Ե. Վիշինսկին մահացել է 1918 թ. սեպտեմբերի 30-ին Դիլիջանում: Ունեթ մեկ աղջիկ (ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 126, թ. 1):

¹⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 61, թ. 1:

¹⁷³ Տե՛ս նույն տեղում:

գեներալը,- գունդը դեռևս դուրս չի եկել Երևանից: Եթե հայկական գնդերը անմիջապես չուղղվեն Էրզրում, ապա մենք անվերադարձ կկորցնենք Թուրքահայաստանը»¹⁷⁴:

Հարկ է նշել, որ Հայկական զինվորական միությունը արձագանքել էր այս հրամանին: Այդ մասին է վկայում ՀԶՄ գործադիր կոմիտեի դեկտեմբերի 11-ի նիստի որոշումը, ըստ որի ՀԶՄ Էրզրումի բաժանմունքի ներկայացուցիչը զեկուցել էր ռուսական զորամասերի նահանջի հետևանքով Էրզրումում ստեղծված իրավիճակի մասին¹⁷⁵:

Դեկտեմբերի 22-ին Կովկասյան բանակի շտաբից գեներալ Ի. Օդիշելիձեն դիմում էր ռազմաճակատի գլխավոր հրամանատարին, պատճենները հղելով Կոմիսարիատի նախագահին, ռազմաճակատի կոմիսարին, Հ. Ջավրիյանին, Հայկական, վրացական կորպուսների հրամանատարներին և համապատասխանաբար նաև Ազգային խորհուրդների նախագահներին. «Ծ-րդ կորպուսն ամբողջությամբ հեռացել է Սարիղամիշ, այս պահին մեկնում է վերջին գունդը և հունվարի 1-ին Շայթանդաղից հարավ ոչ մի զինվոր չի մնա և ռազմաճակատը այդ կողմից լիովին կմերկանա»¹⁷⁶: Նա համոզված էր, որ վերջին զորամասերը Երզնկայից ավելի վաղ կհեռանան, որ հայկական թույլ վաշտերը նույնպես թիկունք են շտապում և «հնարավոր է, որ առաջին իսկ խուճապի պայմաններում կնահանջեն»: «Մինչդեռ,- գրում էր նա,- մեր զորամասերի հեռացումը Էրզնկայից (Երզնկա – Վ.Ս.) և այն քրդերի կողմից զբաղեցնելը անհապաղ կհանգեցնի թուրքերի կողմից զինադադարի խախտմանը, որոնք և կանցնեն ընդհանուր հարձակման»¹⁷⁷:

Ի. Օդիշելիձեն եզրակացնում էր. «կասկածից վեր է, որ Երզնկայի շրջանի գրավումը զորքերով կհանգեցնի ամբողջ Արևմտյան ճակատի (նկատի ունի Կովկասյան ռազմաճակատի արևմտյան հատվածը – Վ.Ս.) դատարկմանը, ինչպես նաև՝ Կովկասյան բանակի ներկա դրությունից էլնելով, մեր կողմից զբաղեցրած ամբողջ թուրքական տարածքի դատարկմանը:

Միաժամանակ, ռազմաճակատի շտաբի պետը՝ ճակատի ռազմավարական պաշտպանության նպատակով ձևավորում է Ռազմական խորհուրդ, որի մեջ են մտնում

¹⁷⁴ Տե՛ս Արмяне в Первой мировой..., էջ 153:

¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 152:

¹⁷⁶ РГВИА, ф. 2100, оп. 1, д. 11, л. 1.

¹⁷⁷ Նույն տեղում, նաև՝ НАГ, ф. 1818, оп. 2, д. 45, л. 86, նաև՝ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 246, թթ. 1-2:

Ե. Գեգեչկորին, շտաբի պաշտոնյաները և հայկական, վրացական, մահմեդական և ռուսական կորպուսների հրամանատարները¹⁷⁸:

Ի. Օդիշելիձեն անգամ ուղղակիորեն կշտամբում էր Ե. Գեգեչկորինին. «Զգում եմ, որ դուք լիովին չեք գիտակցում ռազմաճակատում ստեղծված իրավիճակը,- գրում էր նա,- այլապես ես չեմ հասկանում դեպի Էրզրումի շրջան հայկական գնդերի առաջացման հապաղումը»: Դեկտեմբերի 25-ին Ի. Օդիշելիձեն գործնական առաջարկով դիմում է Հ. Զավրիյանին, իսկ հունվարի 2-ին ՀԱԽ-ին, ըստ որի Հայկական կորպուսի շտաբը անհապաղ պահանջում էր տեղափոխել Էրզրում: Ավելին, նա կարծում էր, որ այդ քայլով կպահպանվեն և կհայացվեն 4-րդ ռուսական կորպուսի վարչությունն ու հաստատությունները¹⁷⁹:

Այդ գործընթացը հնարավորինս ամբողջացրել է անվանի հայամետ գեներալ Ա. Կուլեբյակինը իր «Ռազմաճակատի փլուզումը» զեկույց - հաշվետվության մեջ: Նրան հատկապես անհանգստացնում էր 1-ին կորպուսի ետ քաշվելու գործընթացը: Վերջինս, չնայած գեներալի հրամանին, սկսել էր ինքնակամ լքել ռազմաճակատը: Նույն վիճակն էր տիրում նաև 4-րդ կորպուսում: Էրզրումում կամավոր մնացած ռուս սպաները ցանկություն էին հայտնել կազմակերպել ամբողջությունների հրետանային պաշտպանությունը, ինչի համար անհրաժեշտ էր 1500 զինվոր: Հայկական կազմակերպություններից հավաքագրվել էին ընդամենը 500 հոգի, որի մի մասը ըստ Ա. Կուլեբյակինի այդ պահին արդեն դասալքել էին: Էրզրումի շրջանի հրետանու պետ, գեներալ Գերասիմովը հունվարի 6-ին հաղորդում էր բանակի հրամանատարին. «հունվարի 3-ին և 5-ին թիկունք շարժվեցին 1-ին էրզրումյան հրետանային գունդը, գնդի շտաբի 3-րդ գումարտակը և 1-ին գումարտակը, իրենց հետ տանելով 48 թեթև հրանոթ և 4 գնդացի: Ուշագրավ է հատկապես Ա. Կուլեբյակինի հաղորդումն այն մասին, որ Թիֆլիսից Էրզրում ժամանած և իրենց ռազմա-հեղափոխական կոմիտե անվանող բոլշևիկների և տեղի զինվորական գործադիր կոմիտեի միջև անզիջում պայքար էր գնում՝ տեղական իշխանության պատկանելիության շուրջ: Ավելացնենք, որ այդ պայքարը հենց զինվորների համար էր ընթանում¹⁸⁰:

¹⁷⁸ Տե՛ս ՀԱԳ, փ. 1818, օր. 2, ժ. 12, լ. 78.

¹⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 60-61:

¹⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 27, թթ. 1-5:

Հարգանքի է արժանի գեներալ Ա. Կուլեբյակինի եզրահանգումը. նրա կարծիքով անհրաժեշտ է «շատ մեծ, հատուկ ուսումնասիրություն, որպեսզի ամբողջությամբ բացահայտվի բանակի հոգևոր օրգանիզմում պատմականորեն արմատացած խոցելի համապատկերը, որոնց պատճառով հեղափոխությունն արդքան արագ փլուզեց այն: Դեռ խաղաղ ժամանակ չափազանց խորությամբ էր նախապատրաստվել այդ պարարտ հողը, իսկ պատերազմի սիստեմատիկ բարոյալքումը, ինչը մարդկային անկման բազմաթիվ տխուր օրինակներ բացահայտեց, վայրենի թալանը, ավելի խորացրին ընդհանուր փլուզումը»¹⁸¹:

Ա. Կուլեբյակինը որպես ռուս պետականամետ գործիչ, ցավում էր ռուսաստանյան պետության կործանման համար, չէր կորցնում հզոր Ռուսաստանի հեռանկարը և այդ առնչությամբ չէր թաքցնում հայ ժողովրդի նկատմամբ իր երախտիքը. «չնայած բոլոր փորձություններին և կործանման սարսափին (նկատի ունի Մեծ եղեռնը – Վ.Մ.), արյունաքամ, ծայրահեղության եզրին ու կիսախեղդ փոքրիկ Հայաստանը մինչև վերջ հավատարիմ մնաց, երբևիցե չխախտելով իր զինական պարտքը»: Ի վերջո նա եզրակացնում էր որ «քրիստոնյա հայերի ազատագրումը թուրքերից բխում է Ռուսաստանի շահերից»¹⁸²:

Կարելի է եզրակացնել, որ Կովկասյան բանակի հրամանատարության շրջանում այս պահին արդեն ձևավորվել էր թուրքական անխուսափելի հարձակման հեռանկարը:

Այստեղից էլ բխում է գլխավոր հարցադրումը. ինչո՞ւ մինչև 1918 թ. թուրքական արշավանքը թե՛ ռուսական և թե՛ հայկական զինվորական ու քաղաքական կառույցների կողմից չիրականացվեցին վճռական գործողություններ, մանավանդ, որ Ի. Օդիշելիձեի հեռագիրը ամենապարզ կերպով ներկայացնում էր իրավիճակը: «Կարծում եմ,- գրում էր նա,- **որ մեր կողմից էրզինջանի (Երզնկա – Վ.Մ.) շրջանի դատարկումը հավասարազոր է ողջ Թուրքական Հայաստանի մաքրմանը, այսինքն՝ այն ամենի կորստին, ինչը ձեռք է բերվել մեր կողմից թուրքերի դեմ երեքամյա հաղթական պատերազմի ընթացքում** (ընդգծումը մերն է – Վ.Մ.): Ահա թե ինչու ևս մեկ անգամ ստիպված եմ խնդրել Ձեզ՝ որքան հնարավոր է շտապ ինձ ուղարկել գոնե երկու հայկական գունդ»¹⁸³: Ասվածը լրացնում էր Ե. Վիշինսկին դեռ դեկտեմբերի 11-ին: Նա փաստում էր, որ ռուսական

¹⁸¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 27, թ. 6:

¹⁸² Տե՛ս նույն տեղում, թ. 10:

¹⁸³ РГВИА, ф. 2100, оп. 1, д. 11, л. 1, նաև՝ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 246, թ. 1-2:

գորամասերի կողմից հայ զինվորների առանձնացման գործընթացը չի ստացվում, քանի որ «ռուս զինվորները ահաբեկում են տեղացիներին և ստիպում են նրանց իրենց հետ հեռանալ թիկունք»¹⁸⁴:

Ակնհայտ է, իհարկե, բոլշևիզմի ազդեցությունը, սակայն միաժամանակ ակնհայտ էր նաև Անդրկովկասյան կոմիսարիատի տարօրինակ դանդաղկոտությունը: 1918 թ. փետրվարի սկզբին միայն, Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորին և ռազմածովային մինիստրության գծով կոմիսար Վ. Գոբեչիան դեկրետ են ստորագրում, ըստ որի կարգադրվում էր Անդրկովկասի բոլոր զենքի ունակ զինվորականներին վերադառնալ իրենց ազգային գորամասերը ¹⁸⁵ : Առկա էր նաև հայերի պարտվողական տրամադրությունների միտումը, մասնավորապես, հենց Ե. Վիշինսկու նկատառումն այն մասին, թե «հայերը չեն ուզում հավաքագրվել հայացվող գորամասերի կազմում»¹⁸⁶:

Գեներալ Ֆ. Վոլոշինի հաղորդագրությունը ևս տազնապալի էր հնչում, դեկտեմբերի 22-ին նա հեռագրում էր Թ. Նազարբեկյանին. «եղել են ամբողջական վաշտերի ու առանձին զինվորների կողմից հրամանների չկատարման դեպքեր: Հայերը բոլշևիկների ազդեցությամբ հրաժարվում են մտնել առանձին հայկական վաշտի մեջ: 1901-1905 թթ. զորակոչի հայ զինճառայողները հրաժարվում են ծառայելուց: Գնդային կոմիտեների որոշման համաձայն (Կովկասյան բանակի երկրամասային 2-րդ համագումարի որոշումների համաձայն – Վ.Մ.) զորացրվողները հեռանում են հրացաններով: Հրամանատարական կազմը ի վիճակի չի պայքարել և չունի ազդեցություն»¹⁸⁷:

Ռազմաձևակառուցի իրավիճակի տազնապալի զարգացումների մասին են վկայում ոչ միայն բարձր հրամանատարական կազմի, այլև պաշտպանական առանձին շրջանների հաղորդագրությունները: Հայոց ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի դեկտեմբերի 21-ի նիստը լսեց Էրզրումից ժամանած Ռուբեն Տեր-Ղևոնդյանի զեկուցումը: Ներկայացնելով Երզնկայի և Էրզրումի շուրջ ձևավորվող տազնապալի իրավիճակը, նա անհրաժեշտ էր համարում, որպեսզի Էրզրում մեկնի հայկական հեղինակավոր զինվորական մարմին: Ժողովը, որին ներկա էին Խ. Կարճիկյանը, Ա. Բաբայանը, Տեր-Օհանյանը, բարձրացրեց նաև երեք կարևորագույն հարց. ա) մարդիկ ուղարկել Էրզրում, հատկապես

¹⁸⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 244, թ. 1:

¹⁸⁵ Տե՛ս Ազատամարտ, 1918, 4 փետրվարի, թիվ 23:

¹⁸⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁸⁷ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 247, թ. 1:

մտավորականներ, բ) Երզնկայի հայ ազգաբնակչության տեղափոխման խնդիրը դնել ՀԱԽ-ի առջև և գ) Էրզրումում շտաբ ձևավորել¹⁸⁸:

Այս իմաստով ամենացայտուն օրինակը վերաբերում է Հայ զինվորական միության հենց Կարինի մասնաճյուղի արձագանքին: Դեկտեմբերի 23-ին Կարինի միությունը դիմելով Հայոց ազգային խորհրդին ու Հայ զինվորական միությունը ու չթաքցնելով հիմնավորված զայրույթը, նշում էր, թե «ձեր կողմից ստացվող տեղեկությունների ազդեցությամբ մենք կորցնում ենք Ձեր իրական աջակցության նկատմամբ հավատը: Մենք դժգոհում ենք և **հակված ենք մտածել, որ դուք բոլորդ հարբած եք օրվա քաղաքական պայքարով և չեք աշխատում ռազմաճակատի ուղղությամբ: Մենք գնդեր ենք պահանջում, իսկ դուք առաջին հերթին մեզ ուղարկում եք գիմնազիստներ: Մենք ձեզնից պահանջում ենք հերոսական ջանքեր: Չկան բառեր արտահայտելու ռազմաճակատի վիճակի ողբերգականությունը**¹⁸⁹ (ընդգծումը մերն է – Վ.Մ.):

Ասվածը լիովին հիմնավորվում է ՀՅԴ Շիրակի գավառի առաջին համագումարի նյութերով: Նախ՝ ընդգծենք, որ այդ համագումարը հրավիրվել էր Ալեքսանդրապոլում 1918 թ. փետրվարի 16-18-ը՝ այսինքն մի ժամանակահատվածում, երբ Կարինի պաշտպանության խնդիրն արդեն ուշացած էր ու ժամանակավրեպ: Ինչպես տեսանք, վտանգ պարունակող հեռագրեր Անդրկովկասի ռազմական ու քաղաքական ղեկավարությանն էին ուղարկվում 1917 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակից սկսած: Եվ միայն երկու ամիս հետո, երբ արդեն ընկել էր Երզնկայի պաշտպանական շրջանը և օրակարգի հարց էր դարձել Էրզրումի պաշտպանությունը, հրավիրվում է ազգային ղեկավար կուսակցության շրջանային համագումարը, որը ինչ-որ առումով ներքին օգտագործման համար ուշացած որոշումներ էր ընդունում:

Նշենք դրանցից մի քանիսը. «ա) Նկատի ունենալով Կովկասյան ֆրոնտի և թիկունքի անապահով դրությունը, այլև մեծապես գիտակցելով, որ ռուս զորքի խուճապային փախուստից հետո ֆրոնտի ամբողջ պահպանման գործը ծանրացած է հայ ժողովրդի վրա, կոչ անել շրջանի բոլոր զենքի ընդունակներին անմիջապես խտացնել հայ զորքերի շարքերը, այն պայմանով, որ 19-32 տարեկանները անմիջապես ուղարկվեն ֆրոնտ, իսկ 32-ից ավել տարիք ունեցողներին զենքի կոչելու ժամանակը հանձնարարել կենտրոնական կոմիտեին կարգադրելու ըստ պահանջի:

¹⁸⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 34:

¹⁸⁹ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 62, թ. 1:

բ) Համագումարի անունից դիմել Զինվորական միություններին, հրամանատարներին և ***առաջարկել Ալեքսանդրապոլում և այլ կենտրոններում եղած զորքերին անմիջապես ուղարկել Էրզրում*** (ընդգծումը մերն է – Վ.Մ.):

գ) Կուսակցական մարմիններին առաջարկել և պարտավորեցնել նվազագույն թվով անդամներ պահել տեղական գործերի համար, իսկ մնացածներին զորամասերի հետ միասին ուղարկել ճակատ:

դ) Առաջարկել զինվորական բարձր մարմիններին տեղափոխվել Ալեքսանդրապոլ կամ ռազմաճակատին ավելի մոտ վայր»¹⁹⁰:

Միայն այն փաստը, որ կուսակցության շրջանային համագումարը առաջարկում էր զինվորական բարձր մարմիններին տեղափոխել Ալեքսանդրապոլ, վկայում էր ՀՅԴ մի հատվածի ռազմա-քաղաքական կողմնորոշման մասին: Դա առավել ամբողջացած տեսքով ի հայտ եկավ մարտի 1-ից հրավիրված Տրապիզոնի բանակցությունների համատեքստում, երբ պարզ դարձավ Անդրկովկասյան Սեյմի ու նրա Դաշնակցություն խմբակցության պարտվողական վարքագիծը: Այլ խոսքով, կուսակցությունը հաշտվել էր Արևմտյան Հայաստանը Թուրքիային զիջելու քաղաքականության հետ, ինչն այս իմաստով լիովին համահունչ էր սեյմի վրաց-թաթարական մեծամասնության որդեգրած ռազմավարությանը: Միակ օբյեկտիվ և լուրջ արդարացումը թերևս Երևանի նահանգի թաթար-քրդական հակառուսական ու հակահայկական խռովությունների շրջանում արևելահայ զինական ուժի զբաղվածության գործոնը կարող է համարվել:

1917 թ. դեկտեմբերի երկրորդ կեսից Էրզրումից ստացվող հաղորդագրությունների, հեռախոսագրույցների ընդհանուր մտահոգիչ ուղղվածությունը հետևյալ պատկերն է ներկայացնում:

Դեկտեմբերի 15-ին ՀԶՄ Գործադիր կոմիտեի և Էրզրումի շրջանի կոմիսարի օգնականի միջև կայացած հեռախոսագրույցից պարզ է դառնում, որ շրջանի բնակչության, այդ թվում և հայերի զանգվածային ելքը ժամանակավորապես դադարում է: Դա կապվում էր հաշտության բանակցությունների ավարտի հետ: Սեբաստացի Մուրադից ստացվում էին լուրեր, որ իր տրամադրության տակ եղած մի քանի հարյուր հայ զինյալները զբաղեցրել են Կամախից-Կուլկիտ շրջանը, իսկ 1-ին կորպուսի զինվորները մինչև դեկտեմբերի 25-ը պետք է հեռանային Երզնկայից¹⁹¹:

¹⁹⁰ ՀԱՍ, ֆ. 4047, ց. 1, գ. 114, թ. 1:

¹⁹¹ Ст' у Армяне в Первой мировой войне, с. 159.

Դեկտեմբերի 17-ին Էրզրումի շրջանի կոմիսարը հայտնում էր ՀԶՄ-ը, որ տեղում ձևավորում են Էրզրումի Հայկական հրաձգային գունդը՝ պարուչիկ Մակեդոն Մելիք-Միրզախանյանի հրամանատարությամբ, (մինչև 1918 թ. փետրվար – Վ.Մ.) Էրզրումի կամավորական պահեստային վաշտը՝ պորուչիկ Խաչիտոնոսովի ղեկավարությամբ, Էրզրումի բերդապահ հրետանային գունդը, հեծյալ դիվիզիոնը՝ ռոտմիստր Մկրտումովի գլխավորությամբ: Գլխավոր մտահոգությունը կայանում էր նրանում, որ տեղում չկան իրադրության պահանջներին համապատասխան կադրեր և մեկ ընդհանուր հրամանատար: Կոմիսարը պահանջում էր շտապ ուղարկել գնդապետ Գամագովին (Գամագյան)՝ Դեկ-բոյնուի ամրացված շրջանի ղեկավարությունը ստանձնելու նպատակով¹⁹²:

Միաժամանակ հայտնվում էր, որ դրությունը օրեցօր վտանգավոր է դառնում, թուրքերը զանգվածաբար զենք ու զինամթերք են գնում, ունեն հետախույզներ, ռուս զինվոր-միլիցիոներների հեռանալուց հետո քաղաքն ու շրջանը մնացել է անպաշտպան (թուրքերին արգելված էր զբաղեցնել այդ պաշտոնը – Վ.Մ.) անհրաժեշտ է շրջանային Միլիցիայի պետի նշանակում, հրատապ պահանջ էր ձևակերպվում նաև վեց սպաների հետ Սեպուհի (Արշակ Ներսիսյան) ժամանումը և վերջապես ամենակարևորը՝ որ դեկտեմբերի վերջին ամբողջ ճակատի գծով «մենք պետք է դառնանք իրադրության տերը, եթե չանենք, ամեն ինչ կկորցնենք»¹⁹³:

Էրզրումի շրջանի կոմիսարի օգնականի պաշտոնակատար Տ. Ադամայանը ՀԶՄ-ին գրում էր. «Դանդաղել չի կարելի, այստեղ ձևավորվող կամավորական ջոկատները կարող են միայն Էրզրումը պաշտպանել» և կազմակերպչական աշխատանքը անհրաժեշտ է ավարտել մեկ շաբաթվա ընթացքում¹⁹⁴: Որպես դրա պատասխան գեներալ-մայոր Ե. Վիշինսկին տեղեկացնում էր Հ. Զավրիյանին, որ թեև ձևավորվել են երկու հայկական գունդ, սակայն ազգային գորամասերի կազմավորման գործընթացը միևնույն է կաղում է և, հիմնականում, փորձված սպաների պակասի պատճառով:

Օրհասական վիճակի համապարփակ գնահատական է տրվում Էրզրումի հայկական գնդի սպաների կողմից ՀԶՄ-ին ուղղված կոչում: Նախագահ, շտաբ-կապիտան Չենգեշյանը գրում էր. «նկատի ունենալով պահի բարդությունը,

¹⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 160:

¹⁹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 162:

ճակատագրական և մեր հայրենիքի համար բացառիկ նշանակությունը, **Հայկական գնդի բոլոր սպաները խնդրում են հասարակական խոցերի բուժման ուղղությամբ միջոցներ կիրառել: Այլևս չկան բառեր և գայթակղիչ կարգախոսների ժամանակը չէ: Միայն կռու շարքերը, պողպատյա սվինները կարող են փրկել չասենք պատիվն ու արժանապատվությունը, այլ մեր հայրենիքի կյանքն ու գոյությունը:** Եթե պետք է արյունահեղություն, որպեսզի մի քանի հազար ստոր վախկոտների մահով փրկենք երեխաների և մեր ազգի կանանց պատիվը, այդ ճանապարհին դանդաղելը չի ներվի սերունդների ու պատմության կողմից: Մենք, սպաներս հայտարարում ենք ու երդվում, որ մեր ու մեզ հավատարիմ զինվորների դիակների վրայով հակառակորդի հրոսակները կարող են անցնել, **բայց մենք կցանկանայինք, որ մեռնելով կարող ենք հանգիստ լինել, որ մեր հարվածներից թուլացած թշնամին կբախվի կազմակերպված թիկունքի ժայռին** (ընդգծումը մերն է – Վ.Մ.): Ձեզ ենք դիմում հայ մտավորականություն, քույրեր և մայրեր, ձեզ՝ մեր դասալիքներ, գործի կպնենք, քանի որ ժամանակ անց շատ բան կկորի»¹⁹⁵:

Անգամ այս անթաքույց պարզ ու զգացմունքային դիմումը իր մեջ ամփոփում էր իրավիճակի ողբերգականությունը, երբ բացահայտվում էր գլխավոր դերակատարը: Թիկունք ասելով սպաները, իհարկե, նկատի ունեին Անդրկովկասյան Սեյմի, հայկական ազգային կուսակցությունների, Հայոց Ազգային խորհրդի հակասական, սպայի ու զինվորի համար անհասկանալի պարտվողական քաղաքականությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ թեև 1917 թ. դեկտեմբերից ու անգամ նոյեմբերի վերջից Կովկասյան ռազմաճակատի ու բանակի հրամանատարության հետևողական ահազանգերին, ՀԶՄ նոյեմբերյան համագումարի վճռորոշ որոշումներին՝, միևնույն է հայ իրականության մեջ ազգային գորամասերի ձևավորման գործընթացը ուշանում էր, իսկ Կարինի պաշտպանության համատեքստում անգամ ձախողված կարելի է համարել:

Այսպես, միայն 1917 դեկտեմբերի 26-ին է հրապարակվում Երևանի նահանգային ազգային խորհրդի, Հատուկ կոմիտեի դեկտեմբերի 23-ով թվագրված հրաման – գրությունն ուղղված Երևանի նահանգային վարչությանը՝ մոբիլիզացիայի և զորակոչի վերաբերյալ: Ըստ այդմ, 1886-1898 թթ. ընթացքում ծնված բոլոր անձիք, որոնք

¹⁹⁵ Տե՛ս Армяне в Первой мировой войне, с. 164-165:

* Տե՛ս Վ.Հ. Մելիքյան, Հայկական զինական ուժի ձևավորման վճռորոշ փուլը. Հայ զինվորական միության համագումարը Երևանում (1917 թ. նոյեմբեր), ՀՀ ԳԱԱ Բանբեր Հայագիտության, Երևան, 2014, թիվ 2-3, էջ 16-25:

գորակոչվել էին զինվորական ծառայության, պետք է ներկայանային դեկտեմբերի 26-31-ի ժամանակահատվածում¹⁹⁶:

Ջուզահեռ ընթանում էր նաև Արևմտահայ ազգային դիվիզիայի ձևավորման գործընթացը¹⁹⁷: Այդ նպատակով հատուկ կոմիտեն դեկտեմբերի 29-ին քննարկեց Արևմտահայ հատուկ դիվիզիայի կազմակերպման նախագիծը, որը ներկայացրեց Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ Հ. Ջավրիյանը¹⁹⁸:

1917 թ. դեկտեմբերի 28-ին գեներալ Օբրազցովը տեղեկացնում էր, որ իր տրամադրության տակ չկան միջոցներ՝ Շահթախտում ծագած անարխիան ճնշելու համար, հրաձիգները հրաժարվում են կատարել զինվորական հրամանները, հայկական զորամասերը պատրաստ չեն գործողությունների, չունեն հանդերձանք ու չեն կազմավորված¹⁹⁹:

Դեկտեմբերի 31-ին գեներալ-մայոր Ե. Վիշինսկին հեռագրում էր Կոմիսարիատին, որ ճակատում ձախողվել է ազգային զորամասերի կազմավորման գործը: «Կովկասյան բանակի զբաղեցրած շրջանում զորամասերի ուկրաինացումն ու հայացումը բացահայտորեն ենթակա է ձախողման,- հայտնում էր նա: Ըստ եղած տեղեկությունների, 6-րդ դիվիզիայի և 5-րդ կորպուսի գնդերը հրաժարվում են ազգայնացումից, իսկ բոլոր ազգությունների զինվորները, չբացառելով և հայերին հրաժարվում են առանձնացվել ռազմաճակատում պահվող ազգային զորամասերի կազմում: Ներկա պահին բոլորը մտահոգված են մի մտքով – արագ հեռանալ թիկունք: Նույնիսկ 1-ին կորպուսում առանձնացված 7-րդ հայկական վաշտը ռուսական զորքերի հեռանալուց հետո չի ցանկանում մնալ Երզնկայի շրջանում: Ջորամասերի ազգայնացման միակ միջոցը զինվորական օկրուգից արդեն հավաքագրված ազգային զորամասերի տեղափոխումն է ճակատ»²⁰⁰:

Կարինի հիմնահարցի համատեքստում, ցավոք սրտի, այդ անհասկանալի հապաղման մասին է վկայում նաև Հայկական առանձին բանակային կորպուսի հայտնի հաշվետվությունը: Թեև իր վերտառության մեջ այն ընգրկում է 1917 թ. դեկտեմբերի 1-ից

¹⁹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 39:

¹⁹⁷ Տե՛ս հանգամանորեն, Վ. Մելիքյան, Հայկական զինուժի կազմավորման վճռորոշ փուլը..., էջ 16-25:

¹⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 50:

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 58:

²⁰⁰ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 31, թ. 9:

մինչև 1918 թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը, սակայն դեպքերի նկարագրությունը սկսվում է 1918 թ. մարտի 2-ից²⁰¹: Ստացվում է, որ Հայ զինվորական միության 1917 թ. նոյեմբերյան համագումարի որոշման համաձայն դեկտեմբերի 2-ից փաստորեն վերջնականապես կայացած Հայկական բանակային կորպուսը մինչև 1918 թ. մարտ ամիսը Երզնկա – Էրզրում ճակատային գլխավոր հանգույցում չի իրականացրել գուտ հայկական շահերից բխող ոչ մի պաշտպանական, մարտավարական գործողություն: Ավելին, նա իր անմիջական գործունեությունը սկսում է մարտ-ապրիլից, այսինքն՝ Էրզրումի անկումից հետո: Մինչդեռ հայտնի է, որ կորպուսը անմիջապես պետք է զբաղեցներ Էրզրում, Ղարաքիլիսա, Վան, Մանազկերտ դատարկված շրջանները²⁰²: Կովկասյան բանակի գորամասերի «հայացումը» և ընդհանրապես, ազգային գորամասերի ձևավորման իրական գործընթացը սկսվում է 1917 թ. դեկտեմբերի վերջերից միայն, երբ օրինակ, դեկտեմբերի 29-ին Վանի շրջանի կոմիսար Կ. Համբարձումյանը տեղեկացնում էր գեներալ-կոմիսարության վարչությանը և ՀԶՄ-ին Վանի 4-րդ գնդի կազմավորման մասին: Հարկ ենք համարում հատուկ շեշտել նրա ձևակերպումը՝ ձեռնարկել ենք Վանի 4-րդ գնդի կազմավորումը²⁰³:

Գեներալ Ֆ. Վոլոշին – Պետրիչենկոյի հեռագրից պարզվում է, որ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի թիվ 136 հրամանի համաձայն, դեկտեմբերի 21-ից պետք է ազգայնացվեին 23 և 24-րդ գնդերը: 1918 թ. հունվարի 2-ին արդեն Կովկասյան ռազմաճակատի շտաբի գեներալ-կվարտիրմեյստերի (ռազմական ինտենդանտ) գլխավոր մտահոգությունն այն էր, որ վերոհիշյալ գորամիավորումները իրենց նշանակման վայրերում չեն տեղակայվում և առկա է ընդհանուր միտում՝ որքան հնարավոր է շարժվել դեպի թիկունք, դեպի Արևելյան Հայաստան: Մյուս կողմից Թ. Նազարբեկյանը վկայում է, որ գեներալ Ֆ. Վոլոշինը իր պարտականությունները փորձում էր փոխանցել ուրիշներին, քանի որ այդ տեղամասում արևմտահայերից ազգային գորամասերի ձևավորման գործը իրականացնում է 2-րդ Հայկական հրաձգային գնդի հրամանատար Ս. Սամարցյանը²⁰⁴:

Վերջապես, 1918 թ. հունվարի 10-ին հրապարակվում է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկու հրամանը: Այն հենվելով

²⁰¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, թթ. 1-30:

²⁰² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 37, թթ. 52-54:

²⁰³ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 106, թ. 9:

²⁰⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 119, թ. 2:

Հայկական կորպուսի հրամանատարի կարգադրության վրա և ստանալով Ազգամիջյան խորհրդի և ռազմաճակատի կոմիսարի համաձայնությունը թույլ էր տալիս ձևավորվել Լոռվա հրացանաձիգ գունդը Շուլավերում, Հայկական հրաձգային գունդը Շուշիում, Առանձին հրաձգային գումարտակները՝ Ախալքալաքում, Նուխիի Վարդաշեն գյուղում, Առանձին պահեստային գումարտակը Նախիջևանում:

Փոխելով գլխավոր հրամանատարի 1916 թ. դեկտեմբերի 17-ի հրամանը, Ելիզավետպոլի 2-րդ հայկական զորամասը վերանվանվում է Առանձին հետևակային պահեստային գումարտակի: Ավելի ուշ, հունվարի 16-ին կազմավորվում է Թիֆլիսի Հայկական պահեստային, իսկ հունվարի 23-ին՝ Ախալցխայի Առանձին հայկական գումարտակները²⁰⁵:

Իր հերթին պարսկական ճակատում 1-ին հեծյալ կորպուսի հրամանատար, գեներալ Բարաթովը 1918 թ. հունվարի 2-ին դիմում էր Հայոց ազգային խորհրդի Հատուկ կոմիտեին, որպեսզի բոլշևիզմի ագիտացիայի դեմ հսկա միջոցներ ձեռնարկվեն և պաշտպանական ճակատ (Ղազվին) գործուղվեն պատգամավոր-ագիտատորներ²⁰⁶ : Որոշվում է այդ գործը հանձնարարել Բաքվի Հայոց ազգային խորհրդին²⁰⁷:

ՀԶՄ-ը նույն օրը դիմում է Կովկասյան բանակի երկրամասային խորհրդին կից բանակի «Ազգայնացման բաժին»՝ մանրամասներով մի շարք հանգամանքներ՝ կապված 223-րդ հայկական հետևակային պահեստային գնդի ապակազմավորման և դրա վաշտերը Երևանում, Կարսում, Ելիզավետպոլում, Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում տեղակայելու մասին²⁰⁸: Ինչպես նկատում ենք Էրզրումն այս ցուցակում ևս անտեսված է:

Ախալքալաքի զինվորական խորհրդի նախագահ Մարգարյանցը նույն հունվարի 2-ին հայտնում էր Հատուկ կոմիտեին այն մասին, որ զինապարտ հայերը շտապում են անդամագրվել ազգային զորամասերին և նրանց թիվը կարող է հասնել մի քանի հազարի²⁰⁹:

²⁰⁵ Տե՛ս ԲՆԿԱ, փ. 521, օր. 5, ժ. 41, լ. 1.

²⁰⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 70:

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 96:

²⁰⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 71

²⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 2, գ. 24, I մաս, թ. 72:

Ախալքալաքում ընտրվել էր նույնիսկ պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որին տրվել էին գավառում և քաղաքում անսահմանափակ իշխանություն իրականացնելու լիազորություններ²¹⁰:

Հայրենիքի պաշտպանության կոչին գործնական արձագանք էին ցուցաբերում նաև այլ հայաբնակ ու հայկական շրջաններում:

Հայոց ազգային խորհրդի լիազոր Միքայել Մուզացյանը զեկուցում էր Թիֆլիս, որ շրջել է Վրաստանի հայաբնակ կենտրոնական շրջաններում՝ Գորի, Սուրամ, Քութայիս, Մդնախ, Թելավ, յուրաքանչյուրում հրավիրել է 400-500 հոգուց բաղկացած հանրահավաքներ, որտեղ անմիջապես ձևավորվել են կամավորական ջոկատներ, անկուսակցական, նույնիսկ կանանց կոմիտեներ և իրականացվել են դրամահավաքներ²¹¹:

Նմանատիպ լուրեր էին ստացվում նաև Պյատիգորսկից²¹², Վլադիկավկազից²¹³, Մուխոմից²¹⁴, Նոր-Բայազետից²¹⁵ և այլ վայրերից:

Առկա էր սակայն մի կարևոր հակասություն 1918 թ. հունվարի 10-ին ստացվում է Ռուսաստանի Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Ալ. Մյասնիկյանի ընդհանուր հրամանը. ըստ որի «ոչ մի զինվոր զենքով ու զինամթերքով իրավունք չունի հեռանալ»²¹⁶:

Մինչդեռ հունվարի 5-ին Հատուկ կոմիտեի անունից, անդամներ Խ. Կարճիկյանը, Ամիրյանը, Ս. Բաբայանը հանձնարարում էին «Վլադիկավկազով անցնող հայ զինվորներին զինաթափ չանել»²¹⁷: Մնում է պարզապես ենթադրել, որ Ա. Մյասնիկյանն աչք էր փակում այդ ամենի վրա:

Հատուկ կոմիտեի հունվարի 3-ի նիստում որոշվեց. ա) Ա. Ջամալյանը պետք է փոխարինի բացակա (28.12.1917 թվականից) Ս. Արարատյանին, բ) Միլիցիայի ղեկավարման գործը ևս Արարատյանի փոխարեն հանձնվում էր Ա. Ջամալյանին, գ) զենք գնելու գործը կարգավորելու նպատակով որոշվում է ստեղծել մի մարմին և այդ նպատակով բաց թողնել 100 հազ. ռուբլի և դ) Հատուկ կոմիտեի նիստերին հրավիրել

²¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 75:

²¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 97-98:

²¹² Տե՛ս նույն տեղում, թ. 102:

²¹³ Տե՛ս նույն տեղում, թ. 103:

²¹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 104:

²¹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 100:

²¹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 139:

²¹⁷ Նույն տեղում, թ. 103:

մեկական ներկայացուցիչ ՀԶՄ-ից, զինվորական կենտրոնի հայկական խմբակցությունից, ռազմաճակատի կոմիսարի օգնական Լևոնյանին, Ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանին, Կովկասյան ռազմաճակատի շտաբի ներկայացուցիչ, գնդապետ Ն. Ղորղանյանին²¹⁸:

Հաջորդ նիստին՝ հունվարի 4-ին, Դրոն երկաթուղագիծը պաշտպանելու նպատակով Հատուկ կոմիտեից պահանջում էր պարտիզաններից կազմակերպել երկու գումարտակ²¹⁹:

1918 թ. հունվարի 8-ին Հատուկ կոմիտեի նիստը արձանագրում էր, որ Հայոց ազգային խորհրդի դրամարկղում կա ընդամենը 200 հազ. ռուբլի, մինչդեռ պահանջները հասնում են մոտ կես միլիոնի: Որոշվեց ամենից առաջ բավարարել Արամի պահանջը՝ 200 հազ. ռուբլի, որից 50 հազարը հատկացվելու էր Երևանի գնդին, 105 հազարը՝ Վ. Փափազյանին, այսինքն՝ Ապահովության կոմիտեին: Եվս 100 հազար ռուբլի որոշվում է հատկացնել Սարիղամիշում գտնվող Ռ. Տեր-Մինասյանին²²⁰:

1918 թ. հունվարի 7-11-ը կայացան ՀԱԽ-ի Հատուկ կոմիտեի նիստեր, որոնք փաստորեն ամփոփեցին զորակոչի ուղղությամբ հայկական զինվորական հաստատությունների կատարած աշխատանքը: Հունվարի 7-ի նիստում նախագահում էր Արշակ Ջամալյանը, կազմակերպությունները ներկայացնում էին Ս. Մամիկոնյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Պապաջանյանը, Լևոնյանը, Ա. Շահմազյանը, Ալ. Խատիայանը, Մ. Արզումանյանը, գնդապետ Ղորղանյանը: Որոշվեց՝ զինակոչի վարչական ապարատի կազմակերպման գործը հանձնել Հատուկ կոմիտեին, իսկ բուն զորահավաքինը՝ ՀԶՄ-ին: 1918 թ. փետրվարի 4-ին Հայաստանի ապահովության խորհրդի նախագահը դիմում էր ՀԱԽ Հատուկ կոմիտեին, որպեսզի ուղիղ հեռախոսակապով Դոնի-Ռոստով՝ Սահմանադիր ժողովի անդամ Բժիշկ Օհանջանյանին հաղորդվի հետևյալը. «Հայաստանի ապահովության խորհուրդը խնդրում է Ձեզ մասնակցել և աջակցել արևմտահայերի հարկադիր զորակոչին կանոնների ու դրանց ղեկավարումն արագ իրականացնելու գործին»²²¹ : Անհրաժեշտություն առաջացավ նաև զորահավաքի հռչակագիրը երկրամասային կենտրոնում հավանության արժանացնելու: Հունվարի 10-ի նիստում հաստատվում է Ա. Բաբայանի ներկայացրած նախահաշիվը՝ 10.000 ռուբլի,

²¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 2, գ. 24, I մաս, թ. 89:

²¹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 96:

²²⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 120:

²²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 229:

որը հասկացվելու էր Կովկասյան բանակի զորամասերում պրոպագանդա իրականացնելու նպատակով:

Այս նիստում լսվում է նաև Թիֆլիսից գեներալ Մ. Արեշյանին ենթակա դիվիզիայի շտաբի դուրս գալու խնդիրը, որի վերաբերյալ բացատրություններ են տալիս Ռ. Տեր-Մինասյանը և Մ. Մակարյանը: Որոշվում է ՀԱԽ-ի հետ համաձայնեցված կարգով, առաջարկել գեներալ Թ. Նազարբեկյանին՝ 1-ին դիվիզիայի շտաբը գեներալ Արեշյանի հետ միասին ուղարկել Կովկասյան ռազմաճակատ²²²:

Հունվարի 9-ի նիստում հաստատվում է Հատուկ կոմիտեի գրասենյակի կազմը, մեկ այլ հրամանով հունվարի 12-ից Երևան քաղաքի պարետ է նշանակվում Ավ. Շահխաթունին: Հունվարի 13-ին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը կարգադրում է Հատուկ կոմիտեին Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ ուղարկել անհրաժեշտ քանակությամբ զինվորական պահակախումբ՝ գործարանը պաշտպանելու և ռազմական կարիքների համար օգտագործելու նպատակով²²³:

Նիստերի ավարտին, հունվարի 11-ին²²⁴ ՀԱԽ-ը Հատուկ կոմիտեից պահանջում էր 1918 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվետվություն ներկայացնել հունվարի 15-ին հրավիրվող Ազգային Ժողովի ամփոփիչ նիստին²²⁵:

Ի վերջո Երևանի ազգային խորհրդի մարտի 12-ի նիստում, Հ.Յ.Դ. խմբակցության առաջարկով՝ Ազգային և Զինվորական խորհուրդների Հատուկ կոմիտեն համարվեց լուծարված: Որոշվեց նրա փոխարեն կազմակերպել Ազգային Խորհրդի դիվան, հետևյալ կառուցվածքով. 1. Զինվորական – Արամ, 2. Պարենավորման և ֆինանսական – Հովհ. Մելիքյան, 3. Ինքնապաշտպանության և փոխհարաբերությունների – Արշ. Աստվածատրյան, 4. Ներքին գործերի – (հանձնել սոց. հեղափոխականներին, թեկնածուն դեռ որոշված չէր): Մկրտիչ Մուսինյանն էլ իրականացնում էր առանց պորտֆելի նախագահի պաշտոնը²²⁶:

Ավելի ուշ, Հատուկ կոմիտեի հունվարի 26-ի նիստում Ա. Ջանփոլադյանը Էրզրումի բերդի պաշտպանությունն իրականացնելու համար խնդրում էր 48.000 ռուբլի²²⁷:

²²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թթ. 120-121:

²²³ Տե՛ս նույն տեղում, թ. 152:

²²⁴ Նիստեր հրավիրվեցին նաև հունվարի 13, 14, 15, 16, 17-ին - նույն տեղում, թ. 155:

²²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թթ. 108-109, 120, 130, 138, 142-143, 144:

²²⁶ Տե՛ս Ջանգ, Երևան, 1918, 13 մարտի, թիվ 20:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 227:

Հատուկ կոմիտեի հունվարի 12-ի նիստին մասնակցում էին Խ. Կարճիկյանը, Ա. Ջամալյանը, Ա. Բաբայանը, Ամիրյանը, Հ. Ջավրիյանը, Մակարյանը: Էրզրումի բերդի դրոյթյան մասին զեկուցեց սպա Ա. Ջանփոլադյանը: Այստեղ վերջապես որոշում կայացվեց հեռագրել ՀԶՄ ու Հատուկ կոմիտեի մասնաճյուղերին՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և Սարիղամիշում, որպեսզի իրենց գորամասերից մի հատված ուղարկվի Էրզրում²²⁸:

Հունվարի 18-ին ՀԶՄ Գործադիր կոմիտեի անդամ փոխգնդապետ Տիգրանյանը ՀԱԽ Հատուկ կոմիտեին տեղեկացնում էր, որ Էրզրումի նախկին հրետանային գունդը հրաժարվում է հայանալ և պատրաստ է գրեթե ամբողջ կազմով անցնել Անդրկովկաս, իր հետ տանելով 60 հրանոթ: Այս որոշումը հարկադրում է քաղաքի հայ բնակչությանը ձեռնամուխ լինել նոր գնդի ստեղծմանը և այն անվանել՝ հեռացող պատմական «առաջին»-ի փոխարեն՝ Էրզրումի «երկրորդ» հրետանային գունդ:

Իհարկե, այս տեղեկությունը բավական ուշացած էր. Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի 1917 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 433 հրամանով և դեկտեմբերի 23-ին դերակալ գեներալ (от инфантерии) Պրժնալսկու հաստատմամբ Էրզրումում ձևավորվել էր արդեն 2-րդ Էրզրումյան բերդապահ հրետանային գունդը²²⁹:

Այս փաստը կրկին հաստատում է հայկական կողմի չհիմնավորված հապաղման մասին: Գնդի կազմավորման նախաձեռնողներից էր ՀԶՄ հրետանային բաժնի պետ շտաբ-կապիտան Ա. Ջանփոլադյանը, որն էլ ընտրվում է գնդի հրամանատարի օգնական: Տեղական գործիչներին հաջողվում է գնդում պահել 50-ից ավել սպաների ու այդքան էլ ենթասպաներ ու ավագ զինվորներ: Առայժմ նոր գնդում զինվորագրվել էին 650 հայ զինվորներ և նախատեսվում էր այն համալրել ևս 40 սպաներով ու 3.300 զինվորներով²³⁰:

Նշենք, որ այդ ուշացած, բայց հույժ կարևոր որոշմանը նախորդել էր 1918 թ. հունվարի 4-ին Էրզրումի շրջանի կոմիսարի օգնական Տ. Աղամալյանի և ՀԶՄ գործադիր կոմիտեի միջև հեռախոսազրույցը, որի մի քանի էական մանրամասներ որոշակի լույս են սփռում Էրզրումի շուրջ ստեղծված իրավիճակի վրա²³¹:

²²⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 150:

²²⁹ Տե՛ս РГВИА, ф. 521, оп. 5, д. 41, л. 1.

²³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 187:

²³¹ Տե՛ս նույն տեղում, թ. 166-171:

Տ. Աղամալյանը հաղորդում էր գնդապետ Ն. Մորելի տազնապալի լուրը՝ դեկտեմբերի 31-ից ռադիոհեռագրական կապի ընդհատման և այդ կապակցությամբ ռադիոկայանն Երզնկա անհապաղ ուղարկելու մասին: Պարզվում է նաև, որ այդ պահի դրությամբ Էրզրում էր ուղարկվել ընդամենը 1000 հրացան, որոնցից մի մասը սարքին չէր, կար տաք համազգեստի մեծ պահանջարկ, դրամի կարիք: Անհանգստացնող փաստ էր նաև այն, որ բացակայում էր Սարիղամիշ-Էրզրում ավտոմոբիլային ճանապարհով հաղորդակցությունը²³²:

Հայ գրողների Կովկասյան ընկերությունն ի դեմս նախագահ Հովհաննես Թումանյանի, հունվարի 21-ին ՀԱԽ Հատուկ կոմիտեին հայտնում էր հետևյալը. «Ստացուած է հայ գրողների ընկերության անունով գրած կոմիտեի գրութիւնը, որով առաջարկվում է ընկերութեան անդամներից 50 հոգի տրամադրել Էրզրում ուղարկելու, ուր ինտելեգենտ ուժերի մեծ կարիք կայ: Նախ՝ ընկերութեան անդամների թիւն էնքան մեծ չի այնտեղ, ուր կարելի լինի նրանցից 50 հոգի գտնել Էրզրում ուղարկելու, եղածներն էլ մեծ մասամբ զբաղված են իրենց նոյն գործերով... այդ իսկ պատճառով էլ դժուար է լինում ընկերութեան, նոյնիսկ վարչութեան նիստեր կազմել:

Երկրորդ, խնդրում եմ Կոմիտեին հայտնել, թե ինչ գործի համար են պետք մարդիկ, որ դրանով ղեկավարւենք ժողովում:

Նորերս էլ աշակերտական խումբ ուղարկւած էր Էրզրում, իբրեւ թե նոյն գաղափարով, բայց նրանց Թիֆլիս գրած նամակներից երևում է, որ մնացել են այնտեղ պարապ, մեծ մասը ցրվել են, իսկ մնացած 40 հոգուց գնդապետ Թորգոմը կազմել է «Անմահների գունդ»²³³:

Իսկապէս, 1918 թ. հունվարի 2-ին (15) Էրզրում հասավ Գևորգյան ճեմարանի ուսանող-կամավորների առաջին խումբը²³⁴: ՀԱԽ-ի Հատուկ կոմիտեն հունվարի 25-ին Բաթումից Էրզրում գործուղեց 14 մտավորականների՝ Էրզրումի հայկական զինվորական միության տրամադրության տակ²³⁵: Հունվարի 22-ին քաղաքի կայազորի հրամանատար Թորգոմն էլ հայտնում էր, որ շրջանում ամեն ինչ կարգին է և գտնվում է հայերի հսկողության տակ²³⁶:

²³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 31, թ. 1:

²³³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 194-195:

²³⁴ Տե՛ս Հորիզոն, 1918, 4 հունվարի, թիվ 2:

²³⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 14, թ. 7:

²³⁶ Տե՛ս նույն տեղում, 24 հունվարի, թիվ 16:

Ի դեպ, վերադառնալով Հատուկ կոմիտեի նիստերի շարունակական ընթացքին, պետք է նշել, որ 1918 թ. փետրվարի 12-ի թիվ 30 նիստում հայտնի դարձավ, որ փետրվարի 14-ին լրանում է այդ կազմակերպության լիազորությունների ժամանակը և այդ օրվանից Կոմիտեի նախագահ Խ. Կարճիկյանը «լիկվիդացիայի էր ենթարկելու Հատուկ կոմիտեն, հանձնելով գործերը Ազգային խորհրդին»²³⁷ : Ստացվում է, որ փետրվարի 10-ին թուրքական արշավանքով ՀԱԽ Հատուկ կոմիտեն դադարեցրեց իր լիազորությունները:

Ասվածը ամփոփենք Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկու հրամանով: 1918 թ. հունվարի 9-ին նա հայտարարում էր հետևյալը. «Կովկասյան բանակի շարքերը կամավոր կերպով զինվորագրվածները, ներկա պատերազմի ընթացքում, որպես մինչև պատերազմի ավարտը պարտավորության վերցրած անձիք, ենթակա չեն ծառայությունից ազատման, սակայն նրանց հնարավորություն է տրվում իրենց հայեցողությամբ ընտրել ազգային զորամասեր, որտեղ նրանք կշարունակեն իրենց ծառայությունը»²³⁸:

Այսպիսով, չնայած մի կողմից Կովկասյան բանակի հրամանատարության, մյուս կողմից ՀԱԽ-ի և ՀԶՄ ձեռնարկած միջոցառումներին, դրությունը ռազմաճակատում և հատկապես Երզնկա-Էրզրում կարևորագույն ռազմավարական հատվածում մնում էր տագնապալի և չհուսադրող: Տիրում էր ընդհանուր անկազմակերպվածություն և խուճապ: Հասկանալի է, որ այդ ամենի խորքային պատճառը բոլշևիկյան հեղաշրջումն ու Կոմիսարիատի հակախորհրդային ու հակառուսական քաղաքականությունն էր: Այդ քաղաքականության հետևողական ու «առաջամարտիկի» դերում հանդես էր գալիս երկրամասային իշխանության ղեկավար դիրքերը զբաղեցրած վրաց-թաթարական քաղաքական դաշինքը:

Միաժամանակ, դանդաղում էր և հայկական կողմը: Եթե Կոմիսարիատի քաղաքականությամբ, փաստորեն արագանում և անարխիկ կերպարանք էր ձեռք բերում ռազմաճակատի քայքայման գործընթացը, ինչը հանգեցրեց Թուրքիայի հետ անջատ զինադադարի ստորագրմանը, ապա առավել անբացատրելի է հայկական կազմակերպությունների հապաղման վարքագիծը: Իհարկե, հնարավորինս արվում էր մեծ ծավալի աշխատանք, փորձ էր արվում Անդրկովկաս ու այդպիսով Կովկասյան

²³⁷ Նույն տեղում, թ. 245 շրջ.:

²³⁸ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 119, թ. 10:

ռազմաճակատ տեղափոխել անգամ Հյուսիսային Կովկասից ու Մերձսևծովյան շրջաններում կուտակվող հայազգի զինյալներին, սակայն, միննույն է, չէր լուծվում ժամանակի, մեր կարծիքով Բախտորոշ հիմնահարցը՝ Հայաստանի ու Կովկասի բանալի Էրզրումի պաշտպանության խնդիրը:

Անդրկովկասյան իշխանությունների թուրքամետ ու հակառուսական քաղաքականության գազաթնակետը, իհարկե, ապրիլին Կարսի հանձնումն էր, ինչը և բացատրում է քաղաքական ընտրության տրամաբանությունը, բայց միննույն է, չի արդարացվում հայկական կողմի գործունեության չափն ու նպատակը:

Հարյուրավոր փաստերի մեջ առանձնանում են հատկապես Էրզրումի շրջանի հայ բնակչության և վարչակազմի աղաղակող խնդրանք-գրությունները, որոնց համար միանգամայն ակնհայտ էին բերդաքաղաքի անկման հետևանքները հայ ժողովրդի համար:

Այդ մասին էր վկայում և Էրզրումի շրջանի հայ բնակչության հունվարի 11-ի կոչն ուղղված ՀԶՄ-ը: «Խնդրում ենք չհապաղել, գտեք բոլոր միջոցները, օգտագործեք անհնարինը, մեր դրության մասին անմիջապես հայտնեք Նազարբեկովին, Դրոյին, ՀԶՄ-ը, Հայոց Ազգային խորհրդին, Երևանի ապահովության խորհրդին: Մի խոսքով, ում մոտ բաբախում է հայկական սիրտը, ում մոտ կենդանի է հայկական լավագույն իդեալը»²³⁹:

²³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 100, թ. 43-44:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԷՐՁՐՈՒՄԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

3.1. ԲԵՐԴԱՄՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՊԱՅՔԱՐ ԵՐՁՆԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Էրզրումի պաշտպանության հիմնահարցի *երկրորդ պայմանական փուլը* կարելի է սկսել 1918 թ. փետրվարի առաջին տասնօրյակից, ինչը համընկնում է թուրքական արշավանքի հետ: Այժմ արդեն պարզ էր, որ նախապատրաստական կազմակերպման փուլն ավարտվել էր, այն ինչ հնարավոր էր իրականացնել թե՛ ռազմաճակատի և թե՛ հայկական տարաբնույթ կազմակերպությունների ուժերով և միջոցներով: Սկսվում էր մի շրջափուլ, որն ավարտվեց միայն Մայիսյան հերոսամարտերով և Բաթումի պայմանագրի ստորագրմամբ:

Այս փուլում կարևորվում էր Էրզրումի երկաթուղագծի «հայացումը», ինչն հնարավոր էր իրականացնել միմիայն կենտրոնական համապատասխան կազմակերպությունների հրահանգով: Տվյալ դեպքում Էրզրումի ջոկատի շտաբի պետ գնդապետ Ե. Վիշինսկին ՀԶՄ-ը զգուշացնում էր, որ եթե այդ կենսական խնդիրը չլուծվի մինչև փետրվարի 1-ը, ապա «Հայաստանում գտնվող հայկական զորամասերը ստիպված կլինեն դատարկել այն և ամբողջ գործը կմեռնի»²⁴⁰:

Հատուկ ուշադրություն էր դարձվում ռազմաճակատի կարևոր հանգույցների ու նաև Էրզրումի հետ ռադիոկապի պահպանման խնդրին²⁴¹:

Հունվարի 13-ին նույն Ե. Վիշինսկին Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի օգնական Հ. Զավրիյանին հայտնում էր Երզնկայի շրջանում ստեղծված օրհասական վիճակի մասին: Այդ հեռագրից պարզ է դառնում, որ Էրզրում ժամանած Հայկական 1-ին Հրաձգային գունդը հրաժարվել էր Երզնկայի ուղղությամբ հարձակումից:

«Մշակ»-ը զգուշանալով և ուշացումով միայն 1918 թ. հունվարի 20-ին է հրապարակում Թ. Նազարբեկյանի հաղորդագրությունը Հայկական 1-ին հրաձգային գնդի վարքագծի վերաբերյալ: Նա նույնպես հաստատում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի տեղեկությունը, ըստ որի գնդին հրամայված էր մեկնել Էրզրում նոյեմբերի 1-ին, բայց նա Երևանից շարժվել էր դեկտեմբերի 1-ին և հասել

²⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 31, թ. 43:

²⁴¹ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 103, թթ. 23-24:

Էրզրում դեկտեմբերի 26-ին: Դա դեռ սկիզբն էր. տեղում պարզվել էր, որ 1000 զինվորներից 525-ը ճանապարհին դասալքել և իրենց հետ տարել են զենքն ու հանդերձանքը: Մնացած 475 հոգին իրենց հերթին հրաժարվում էին շարժվել Երզնկա, հիմնավորելով, որ իրենց նախապես խոստացել էին մնալ Էրզրումում: «Մշակ»-ը այս դեպքը բացատրում էր նախ՝ բոլշևիզմի ազդեցությամբ, ապա և նրանով, որ դաշնակցականների ձեռքով կազմված գունդը ընդունել էր իր շարքերը ամեն տեսակ մարդկանց, որոնց համար պարտաճանաչություն, հայրենասիրություն և նման բառերը գուրկ են որևէ իմաստից²⁴²:

Ինչ վերաբերում էր Հայկական կորպուսի 4-րդ և 6-րդ հրաձգային գնդերի ու համապատասխան շտաբների դեպի Էրզրում շարժին, ապա նրանց մասին անգամ Ե. Վիշինսկին տեղեկություն չունեի²⁴³: Ցավալի է, բայց այս փաստը ևս մեկ անգամ վկայում է Հայկական կորպուսի անբացատրելի վարքագծի մասին: Ե. Վիշինսկին փորձում էր ավելի գործնական հանձնարարականներ տալ հայկական կողմին, ինչպես օրինակ, տխրահռչակ 4 և 6-րդ հայկական գնդերի ուղարկման, Հայկական 1-ին հրաձգային գունդը ռուսահայերով, 1-ին Հայկական Առանձին գունդը՝ արևմտահայերով համալրելու վերաբերյալ: Ծանր էր նաև Վան-Խնուս ուղղությամբ գեներալ Ֆ. Վոլոշինի վիճակը. Գլխավոր հրամանատարը հատուկ մտահոգված էր նաև Խնուսում գտնվող գեներալ Անդրանիկի Առանձին դիվիզիայի ճակատագրով և գտնում էր, որ նման վերաբերմունքը կարող է հանգեցնել վերջինիս լիակատար քայքայմանը²⁴⁴:

Հունվարի 21-ին Հ. Զավրիյանի և Էրզրումի կոմիսարիատի ներկայացուցիչների միջև կայացած հեռախոսազրույցից էլ պարզ է դառնում, որ Էրզրումի համար նախատեսված էշելոնները Երևանի նահանգից դեռևս դուրս չեն եկել²⁴⁵:

Պետք է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք: Այն ժամանակ, երբ, մասնավորապես, Էրզրումից ու հարակից շրջաններից հասնում էին տագնապալի լուրեր, մնացած շրջաններում նկատելիորեն ավելի բարվոք էին թե՛ բարոյա-հոգեբանական և թե՛ ռազմական պատրաստվածության խնդիրները: Այս հանգամանքը կրկին վկայում է այն մասին, որ գոնե հայկական ազգային մարմինները կարծես

²⁴² Տե՛ս Մշակ, 1918, 20 հունվարի, թիվ 13:

²⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 100, թ. 55:

²⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁴⁵ Տե՛ս Армяне в Первой мировой войне, էջ 234:

հաշտվել էին Երզնկա-Երզրում հատվածի անհույս վիճակի և հակառակորդին զիջելու խնդրի հետ:

Հուսալքության մի արտահայտություն էր նաև 1918 թ. փետրվարի 3-ի Անդրանիկի «Կոչը հայ երիտասարդությանը»: «Ձեզ, հայ պատանիներ, ուսանողներ, զիմնազիստներ և ինտելեգենտ երիտասարդություն, դիմում ենք այս կոչով՝ արձագանք տալ ժողովրդական գործին,- գրում էր Անդրանիկը,- Այս պատմական բուռն երբ ամեն ինչ տրւած է մեզ և հարկաւոր է միայն, որ կարողանանք մեր ձեռքին պահել մեր հայրենի հողը և ապահովենք մեր տանջւած ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը, դո՛ւք անբիծ երիտասարդութիւն, մեր ժողովրդի խիղճը, լցվեցեք կազմակերպող հայ գորքերի փառապանծ շարքերը և օգնեցեք, որ ուժեղ բանակ ստեղծինք... մեր կոչը ընդունողներին խնդրում ենք դիմել Թիֆլիզ, Լերմոնտովսկայա փողոց, տ. 14, Հայ միացյալ գորաբաժնի արտիլերիայի ինսպեկտորի վարչություն»²⁴⁶:

Լավատեսության ալիքն առավելապես վերաբերում էր Հայաստանից դուրս կատարվող միջոցառումներին: Խոսքը վերաբերում է հայկական համայնքներում գործող կոմիսարիատների գործունեությանը:

Այսպես, «Ուկրաինայի, Մոլդովայի և Ղրիմի հայկական ռազմական կոմիսարիատը» 1918 թ. փետրվարի 17-ին, ի դեմս կոմիսար Տոնիևի, տեղյակ էր պահում, որ հունվարի 7-ից Կիևում սկսել է գործել հայկական ռազմական կոմիսարիատ, որը ձեռնամուխ է եղել հայ զինվորականների հավաքագրմանը: Նրա զեկույցից պարզվում է, որ գործող կենտրոնական ռազմական կոմիսարիատի բաժանմունքները կամ գործադիր կոմիտեները գտնվում էին Քիշնևում՝ նախագահ, պորուչիկ Մելիք-Հարությունյան, Օդեսայում (Խերսոնի նահանգ)՝ կոմիսար, գնդապետ Մելիքյան, Ղրիմում՝ կոմիսար բժիշկ Միքելյանց, Սիմֆերոպոլում, Խարկովում, Ռումինական ճակատում, կոմիսար՝ բժիշկ Տեր-Գրիգորյանց, Հարավարևմտյան ռազմաճակատում, կոմիսար՝ պորուչիկ Կոջանյանց: Հաղորդվում էր նաև, որ փետրվարի 17-ին երկրորդ էշելոնով Կիևից ուղարկվել է ուսանողական առաջին հարյուրյակը՝ 130 ուսանող, Խարկովից մի քանի խումբ, Օդեսայում պատրաստվում են ուղարկել 300 մարդ, Սիմֆերոպոլում՝ 700: Ենթադրվում էր աշխատանքներն ավարտել ոչ ուշ, քան մինչև մարտի կեսերը:

²⁴⁶ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 64, թ. 2:

Մոսկվայում ևս ստեղծվել էր «Հայաստանի պաշտպանության Մոսկվայի խորհուրդ»։ Եվ այսպես շարունակ մինչև 1918 թ. մայիս – հունիս ամիսները²⁴⁷:

Էրզրումում և նրա շուրջ կատարվող իրադարձությունների համապատկերը հնարավոր է լուսաբանել գնդապետ Ն. Մորելի, գեներալներ Թ. Նազարբեկյանի և Գ. Ղորղանյանի, Սեպուհի և այլոց հուշագրությունների և հաղորդագրությունների հիման վրա:

Իրադարձությունների զարգացման ակունքները գտնվում են Երզնկայում:

1918 թ. ապրիլի 14-ին, Կարսի անկումից հետո, Հայկական կորպուսի հրամանատարությունը հանդես է գալիս թիվ 15 գաղտնի հրամանով, ըստ որի կորպուսի բոլոր ստորաբաժանումները պետք է կենտրոնանային Ախուրյանի աջ ափին: Դրանց մեջ էր Ալագյազի ջոկատը՝ հետևակային առաջին հատուկ գումարտակի պետ, գնդապետ Ն. Մորելի հրամանատարությամբ: Ջոկատի մեջ մտնում էին հայկական առաջին հետևակային հատուկ գումարտակը, Էրզրումի և Երզնկայի երկրորդ հատուկ գումարտակը, Խնուսի, Ղարաքիլիսայի հայկական հետևակային գնդերը, հայկական հատուկ հեծյալ գունդը, դաշտային ռադիոկայանը²⁴⁸:

Փարիզի խաղաղարար վեհաժողովի շրջանակներում Ավ. Ահարոնյանի առաջարկով ստեղծվեց ռազմա-պատմական հանձնաժողովը՝ գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինի գլխավորությամբ: Ենթադրվում էր, որ Հայաստանին նվիրված քարոզչության հիմքում պետք էր դնել Արևմտյան Հայաստան և Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի դեմ հայերի հերոսական պարտքը, Մայիսյան հերոսամարտերը: Անվանի հայ զինվորականների շարքում նյութեր էր տրամադրել նաև գեներալ Ն. Մորելը²⁴⁹:

Ն. Մորելը²⁵⁰ իր հուշագրության մեջ վկայում է, որ 1917 թ. դեկտեմբերի 17-ին, երբ ինքը գտնվում էր Սանսում որպես 7-րդ Կովկասյան հրաձգային դիվիզիայի շտաբի պետ,

²⁴⁷ Տե՛ս Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 102-105:

²⁴⁸ Տե՛ս Հրանտ Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թ. մայիս, Ե, 1998, էջ 87:

²⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 146:

²⁵⁰ Ն. Մորել – ուղղափառ, ազնվական, ծնվել է 1869 թ. մարտի 3-ին Ս. – Պետերբուրգում, կրթություն ստացել է տեղի 3-րդ գիմնազիայում: Ջինվորական ծառայության է անցել 1889 թ. ավարտել է Միխայլովյան հրետանային ուսումնարանը 1892 թ.: Պորուտչիկից (1894) հասել է գնդապետի աստիճանի 1914 թ.: 1913 – 1917 թթ. ընթացքում ծառայել է Ճապոնիայում, որպես ռազմական կցորդի օգնական: 1917 թ. հունվարի 1-ից՝ Կովկասյան 27-րդ հրաձգային գնդի հրամանատար, 1918 թ. մայիսից՝ Առաջին հատուկ հայկական հետևակային (քրիզադի) գումարտակի պետ: Մայիսի 13-ին պարզևատրվել է Սուրբ Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանով: Մասնակցել է Սպիտակ շարժմանը Ռուսաստանի հարավում, որպես

ստացավ Երզնկայի շրջանի պաշտպանության գործը ղեկավարելու առաջարկը: Առաջարկը ներկայացնողը՝ Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Վիշինսկին ընդունելով այդ խնդրի բարդությունը, մասնավորապես ճակատում մնացած հայկական ուժերի քանակը, այնուամենայնիվ կարծում էր, որ հեռացած ռուսական զորամասերը 1918 թ. հունվարի սկզբին համալրելու պարագայում, կարելի էր պաշտպանությունն իրականացնել²⁵¹: Բայց հենց հունվարի սկզբին Շամխորի նախճիրով ոչ միայն ձգձգվեց, այլև վերջնականապես վերացավ ռուսական, այն էլ բոլշևիկացած զորամասերը ռազմաճակատում պահելու վերջին հույսը:

Ն. Մորելը հստակ գիտակցում էր իրավիճակը թե՛ ճակատում և թե՛ թիկունքում, այդ թվում հայ զինվորների տրամադրությունները, դեպի թիկունք հեռանալու նրանց վարքագիծը, հայերի նկատմամբ տեղի մահմեդականների, քրդերի թշնամական վերաբերունքը, թիկունքի ընդհանուր քայքայվածությունը «թվապես ու բարոյապես թույլ հայկական ուժերով 70 վերստ երկարությամբ ճակատի պաշտպանության գործը», երբ դրսից հազարավոր ռազմատենչ քրդեր, իսկ ներսից էլ զինված մահմեդական բնակչությունը սպառնում էր Երզնկայի շրջանին: Դեկտեմբերի 20-ին Ն. Մորելը ժամանում է Էրզրում և ձեռնմուխ լինում Երզնկայի զինուժի ձևավորմանը. դեկտեմբերի 31-ին նա արդեն Երզնկայում էր²⁵²: 1919 թ. փետրվարին Ն. Մորելը հիշում էր. «Ես իմ պարտքը համարեցի ընդունել հրամանը ոչ միայն հայ ժողովրդի կործանարար վիճակից ելնելով, այլև ռուսական պետական շահերի տեսակետից»²⁵³:

Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի հրամանի համաձայն 1,6 և 2-րդ Թուրքեստանյան կորպուսների կողմից պետք է առանձնացվեին հայ զինվորները իրենց զենքով ու զինատեսակներով: Այդ իմաստով առավելապես պլանավորված կերպով այդ ծրագիրն իրականացվեց 2-րդ կորպուսում: 1917 թ. դեկտեմբերի 18-ին վերջինիս կողմից ձևավորվեց առանձին հայկական վաշտը, որի հրամանատար նշանակվեց 18-րդ

գեներալ-մայոր ծառայել է գեներալ Վրանգելի գլխավորած Ռուսաստանի հարավի զինվորական միության գլխավոր հրամանատարի շտաբում: 1920 թ. հոկտեմբերին գերի է ընկել կարմիրների կողմից Նովո-Դմիտրովկա գյուղում:

1920 թ. դեկտեմբերի 5-ին Հարավային ռազմաճակատի Հեղափոխական զինվորական խորհրդին կից Արտակարգ հանձնաժողովի հատուկ բաժնի եռյակի որոշմամբ գնդակահարվել է Ջանկոյի շրջանում: Տե՛ս Zia 1914, info, տե՛ս նաև Վարդգես Ահարոնեան, Կովկասեան ռազմաճակատը եւ հայերը, Հայրենիք, Բոստոն, 1955, հոկտեմբեր, թիվ 10, էջ 31:

²⁵¹ Տե՛ս Армяне в Первой мировой войне, с. 276.

²⁵² Տե՛ս նույն տեղում:

²⁵³ ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 76, թթ. 7:

Թուրքեստանյան հրաձգային գնդի հրամանատար Կ. Հասանփաշայանը: Ըստ վերոհիշյալ հրամանի արդեն առանձնացված զորամասերը պետք է կենտրոնանային համապատասխան գնդերում՝ 5-րդ Թուրքեստանյան հրաձգային դիվիզիայի զորակազմից՝ Կալկուտում, 4-րդից (16 սպա և 1000 զինվոր) Երզնկայում: Կալկուտի զորամասի հանձնարարվում է շարժվել Երզնկա՝ 1-ին կովկասյան բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Վ. Լյախովի տրամադրության տակ, միավորվել հայկական վաշտերի հետ և ուղղվել Էրզրում: Դեկտեմբերի 25-ին մեծ դժվարություններով այդ զորամասերը հասան Երզնկա: Հաջորդ օրը Երզնկայից արևմուտք և հարավ ընկած դիրքերում գտնվում էին միայն 16-րդ Թուրքեստանյան գունդը, մի քանի հարյուր կազակներ և 1-ին կովկասյան բանակային կորպուսի շտաբը, իսկ մյուս զորամասերը թողնելով դիրքերը շարժվում են Էրզրում: 4-րդ դիվիզիայի հայ զինվորները տեղափոխվում են թիկունք: Երզնկայից դուրս 16-րդ թուրքեստանյան գնդից, մնաց մեկ հայկական վաշտ (4 սպա, 200 զինվոր): Գեներալ Վ. Լյախովը դեկտեմբերի 27-28-ին վերջին ռուսական զորամասերի հետ միասին հեռացավ Երզնկայից՝ հրամանատարությունը և շտաբի գործառույթները հանձնելով գնդապետ Ն. Մորելին. Նա էլ նշանակվեց Երզնկայի ջոկատի պետ: Երզնկայի հայկական ջոկատը ներառում էր 7-րդ Թուրքեստանյան կորպուսի կազմից 7 վաշտ (1400 սվին), արևմտահայերի 4 վաշտ (500 զինվոր), 1-ին հարյուրյակում 60 սուր, 2 դաշտային և 2 լեռնային հրանոթներ²⁵⁴:

Բացի դրանից, Երզնկայի ջոկատի մեջ էին մտնում Փամբ գյուղի կամավորական գումարտակը՝ 3 վաշտերով (350 սվին), հիմնականում արևմտահայեր և շատ քիչ զինվորներ 6-րդ Կովկասյան հրաձգային դիվիզիայից: Թուրքեստանյան հայկական գնդերի վաշտերը ղեկավարում էր կապիտան Կ. Հասանփաշայանը, բոլոր կամավորներին՝ Սեբաստացի Մուրադը, վաշտերը՝ առանձին սպաներ, հարյուրյակը՝ խմբապետ Թորգոմը, Փամբի գումարտակը՝ շտաբ-կապիտան Կաֆիևը²⁵⁵. ընդհանուր առմամբ՝ մոտ 3000 զինվոր:

²⁵⁴ Տե՛ս Հայկական կորպուսը թուրքական զորքերի դեմ 1917-1918 թթ., գեներալ Ֆ. Նազարբեկովի հուշերը, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 3(94), Երևան, 1982, էջ 44-45 (այսուհետև տե՛ս Հայկական կորպուսը...):

²⁵⁵ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 45, նաև՝ Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, Հայրենիք, Բոստոն, 1925, թիվ 3, հունվար, էջ 119:

Գնդապետ Ն. Մորելն իր հերթին բավարար համարելով զորակազմի բարոյական և ռազմական հագեցվածության վիճակը, այնուամենայնիվ Երզնկայի շրջանի վստահելի պաշտպանության նպատակով բանակի հրամանատարից 1918 թ. հունվարի 30-ին պահանջում էր լեռնային հրանոթներ ու գնդացիներ՝ տեխնիկական միջոցներով զորակազմի պակասը լրացնելու համար²⁵⁶: Գեներալ Գ. Ղորղանյանի տվյալներով, թուրքական հարձակման նախօրեին Երզնկայի կայազորի կազմում կային մեկ հետևակային գունդ, մեկ կամավորական գումարտակ, մեկ դաշտային հրետանային մարտկոց, մեկ լեռնային հրետանային դասակ: Ջոկատում ընդամենը կար 1800 սվին, 120 սուր, 4 դաշտային, 2 լեռնային հրանոթ և 6 գնդացի, անձնակազմում կար 902 մարդ: Ն. Մորելի վկայությամբ սպայական կազմի 90%-ը հայեր էին և միայն 10%-ն էին կազմում ռուսները²⁵⁷:

Հատկապես կարևոր ենք համարում Ն. Մորելի այն նկատառումը, որ Երզնկայի ջոկատի կազմավորումն ընթանում էր Կովկասյան բանակի ու ռազմաճակատի քայքայման հետևանքով առաջացած աննախադեպ բարոյական անկման պայմաններում:

«Կազմավորումը տեղի էր ունենում այն ժամանակ,- գրում էր Ն. Մորելը,- երբ երբեմնի ամենահերոսական Կովկասյան բանակի զորքերը այժմ հեղափոխության տոգետ ու չպահանջված ղեկավարների կողմից կազմաքանդված, զրկված հիմնարար հիմքերից՝ կրոնից, օրենքից և կարգապահությունից՝ տարերայնորեն շարժվեցին թիկունք, մոռանալով հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը և մտահոգվելով միայն այն մասին, թե ինչպես արագ կարելի է հեռանալ աշխատանքային և վտանգավոր իրավիճակից, փրկել սեփական կաշին և ունեցվածքը: Կազմաքանդման վիրուսը, որն իր մեջ է ներքաշել այս կամ այն չափով Կովկասյան բանակի բոլոր զորամասերը, անկասկած հարվածել է նաև հայ զինվորներին՝ բարոյագրկելով ու տանելով նրանց թիկունք²⁵⁸»: Միաժամանակ նա առանձնացնում էր հայ զինվորներին, որոնք ցավալիորեն արդարանում էին նրանով, որ իրենք վերադառնում են իրենց երկրամասը պաշտպանելու՝ «Արևմտյան Հայաստանի պաշտպանությունը թողնելով արևմտահայերին»:

²⁵⁶ Տե՛ս և Из истории иностранной интервенции в Армении в 1918 году (Документы и материалы), Ереван, 1970, с. 17-18.

²⁵⁷ Տե՛ս Армяне в Первой мировой войне, էջ 277:

²⁵⁸ Նույն տեղում, с. 278.

Ն. Մորելն իր հուշագրությունը բաժանել էր երեք բաժինների.

ա) Երզնկայի հայկական ջոկատի ձևավորումը, բ) կամավոր հայերը և նրանց մարտունակությունը, գ) շարային գորամասերի հայ սպաները և նրանց բնութագիրը: Գնդապետը բարձր էր գնահատում հայ կամավորներին, Հայրենիքի նկատմամբ նրանց նվիրվածությունը, ինչը օտարազգի սպայի կարծիքով բացատրվում էր ոչ վաղ անցյալի թուրքական բռնություններով: Ինչ վերաբերում էր նրանց պատրաստվածությանը, ապա Մորելի կարծիքով հայ կամավորներն այդ հարցում զիջում էին հայկական կանոնավոր զինուժին և նրանց մարտունակությունը կապում էին փորձված հերոս հրամանատարի գործոնի հետ: Հայ սպաների 5 %-ն էր կադրային զինվորական, բայց Մորելը էական տարբերություն չէր տեսնում սպաների գործելակերպի մեջ՝ թե՛ մարտում, թե՛ նրանից դուրս: «Բոլոր սպաները,- ասում էր նա,- ունեն բավարար մարտական պատրաստվածություն, զիտելիք, փորձ, ինքնագոհություն, բայց հաճախ անօգնական վիճակում են հայտնվում, երբ խոսքը վերաբերում էր զինվորին ոտքի հանելու հարցին»²⁵⁹ : Բոլշևիկների անունը երբևիցե չտալով Մորելը վերջինիս պատճառը հիմնավորապես տեսնում էր բարոյագրկման, ռազմաճակատի ընդհանուր անմխիթար վիճակի մեջ: Նա առանձնացնում էր նաև մի շարք հրամանատարների, որոնք այժի էին ընկել իրենց պարտքի բարձր զիտակցության, վճռականության, նախաձեռնության, քաջության, զինվորի վրա ունեցած ազդեցության մակարդակով: Այդ շարքում էին Փամբի գումարտակի հրամանատար Կաֆիլը, կապիտան Կ. Հասանփաշայանը, շտաբս կապիտան Իշխանյանը, պորուչիկներ Մեայանն ու Բերջյանը²⁶⁰:

Խորհրդանշական են Ջավեն եպիսկոպոսի ոգեկոչման խոսքերը. «Արթնցեք ամենքդ, ում մեջ դեռևս չի մարել պարտքի և կարեկցութեան զգացումը դեպի հայրենի ժողովուրդը, որովհետև հասնում է նրա մնացորդների վիճակի որոշման ժամը. այդ է պահանջում րոպեն, այդ են պահանջում մեր պապերի և ազատութեան համար ընկած մեր հերոսների արիւնով ողողուած անթիւ գերեզմանները: Հասել է վճռական ժամը: Դուք, հայրենիքի զաւակներ և դասալիքներ, և դուք, որ դեռ չէք կորցրել մարդկային կերպարանքը, ձեր օգնութեան է սպասում արիւնաներկ երկիրը, որովհետև նրա փրկութիւնը ոյժի մէջ է»²⁶¹:

²⁵⁹ Տե՛ս Արмяне в Первой мировой войне, էջ 280:

²⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 281:

²⁶¹ Տե՛ս Վան-Տոսպ, 1918, 14 հունվարի, թիվ 1:

Թուրքական բանակի հարձակման նախապատրաստական շրջանը սկսվում է հունվարի 1 (13)-ից, երբ բանակի հրամանատար Ի. Օղիշելիձեի միջոցով Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկու անունով ստացվում է Վեհիբ փաշայի նամակը, որտեղ ցանկություն էր հայտնվում կնքել հաշտություն թուրքական ու անդրկովկասյան կառավարությունների միջև²⁶²: Կոմիսարիատի հունվարի 15 (28)-ի պատասխանում շեշտվում էր այն հանգամանքը, որ պատերազմի դադարեցման հարցում անհրաժեշտ է ձեռք բերել ռուսական պետության այլ տարածքային միավորների, ինքնավար կառավարությունների կարծիքներն ու համաձայնությունը, ինչը սպասվում է երեքշաբաթյա ժամանակամիջոցում:

Նույն օրը, Ալաշկերտի Ղարաքիլիսայի կոմիսար Գրոզդովի և Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի միջև կայացած հեռախոսազրույցից պարզվում է, որ Դերսիմի մոտ խախտելով չեզոք գոտին, 1000 զինված քրդեր դիրքեր են գրավել Քիշտիմ – Ջիմին գծի վրա: Թուրք-քրդական պլանը նախատեսում էր հունվարի 8-ին հարձակվել Երզնկայի հրետանային պահեստների վրա և կոտորել հայ բնակչությանը²⁶³:

Հաջորդ փուլը թուրքական շանտաժով է սկսվում. Հունվարի 9 (22)-ին Վեհիբ փաշան Ի. Օղիշելիձեին է ուղարկում մահմեդական բնակչության նկատմամբ հայերի իրականացրած բռնությունների վերաբերյալ հայտնի նամակը, որը տեղ է հասնում միայն հունվարի 18 (31)-ին: Այդ նամակի հիման վրա կայացվում է գլխավոր հրամանատարի հրամանը՝ մահմեդականների նկատմամբ բռնությունները դադարեցնելու և դեմարկացիոն գծից ետ քաշվելու մասին և այդ որոշումն անմիջապես հաղորդվում է Վեհիբ փաշային²⁶⁴:

Նույն օրն իսկ հետևում է Ի. Օղիշելիձեի հրամանը Էրզրումի շրջանի կոմիսարին, որն էլ կարելի է համարել *երրորդ փուլի սկիզբը*, երբ սկիզբ է դրվում Երզնկայի ու Էրզրումի ռազմական գործողություններին կամ այլ խոսքով՝ թուրքական արշավանքին: Ի. Օղիշելիձեն հիմնվելով Վեհիբ փաշայի զգուշացման վրա, այն է՝ ստեղծված իրադրությունն ինձ ստիպում է չխախտելով զինադադարը մի քանի զորամաս առաջ շարժել մեր զբաղեցրած տարածքում», հրամայում էր՝ դեպի Երզնկա թուրքական զորամասերի հարձակման դեպքում հավաքել ողջ ջոկատը և թուրքերի հետ մարտի

²⁶² Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 46-47:

²⁶³ Տե՛ս Кавказское Слово, Тифлис, 1918, 13 января, N 9.

²⁶⁴ Տե՛ս նույն տեղում, 15 февраля, N 36:

չքոնվելով սկսել աստիճանական նահանջը մինչև Կարճիլու: «Մի շտապեք նահանջել, եթե հնարավոր է՝ կանգնեցնել Չելիկից արևմուտք, դեպի Եփրատի կիրճը տանող ճանապարհի սկզբին, որպեսզի հնարավորություն տաք Չելիկից և Փամբից դուրս բերել պաշարները: Երզնկայում և մյուս կետերում եղած պաշարները ոչնչացնել»²⁶⁵:

Հունվարի 16 (29)-ին հետևում են Վեհիբ փաշայի նոր հեռագրերը Մ. Պրժևալսկուն և Օդիշելիձեին, այս անգամ՝ հայերի դաժանությունների մասին բողոքով: Հատկապես շեշտվում էին Երզնկայում Սեբաստացի Մուրադի, իսկ Բաբերդում՝ Արշակի (Սեպուհ – Վ.Մ.) «գազանությունները»: Օդիշելիձեն հունվարի 18 (30)-ին պատասխանում էր, որ «Վեհիբ փաշայի բոլոր տեղեկությունները նկատելիորեն չափազանցված են»: Այդ մասին նրան հայտնել էին Երզնկայի ջոկատի հրամանատար, գնդապետ Ն. Մորելը և Բաբերդի շրջանի կոմիսարը, որոնց տեղեկության համաձայն տեղի մահմեդականները նույնիսկ շնորհակալություն էին հայտնել իրենց անվտանգությունն ապահովելու վերաբերյալ:

Չնայած Մ. Պրժևալսկու և Ի. Օդիշելիձեի պատասխան հեռագրերին, 1918 թ. հունվարի 18 (30)-ին Վեհիբ փաշայի կողմից ստացվում է թուրքական զորքերի հարձակման մասին հեռագիրը: Թուրք հրամանատարը ընդգծում էր, որ այդ քայլին նա գնում էր իբրև ոչ թե ռուսական զորքերի նկատմամբ թշնամական գործողություններից ելնելով, այլ մահմեդական բնակչությանը բռնություններից պաշտպանելու համար²⁶⁶:

«Հայկական բռնությունների» խնդիրը Հայոց ցեղասպանության հիմնահարցի շրջանակներում այսօր էլ օգտագործվում է թուրքական պատմագրության կողմից՝ փորձելով նույն հարթության վրա դնել Մեծ եղեռնի ու տվյալ դեպքում 1918 թ. Երզնկայի շուրջ կատարվող իրադարձությունները:

Այս հարցում թերևս առաջիններից մեկը (Ն. Մորելից հետո – Վ.Մ.) Թ. Նազարբեկյանն էր, որը 1929-1931 թթ. ընթացքում իր գրած «Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г. – июнь 1918 г.)» հուշագրության մեջ²⁶⁷ հայկական

²⁶⁵ Հայկական կորպուսը..., էջ 47:

²⁶⁶ Տե՛ս նաև Հայկական կորպուսը..., էջ 48, նաև Հորիզոն, 1918, 4 փետրվարի, թիվ 26:

* Գեներալ-լեյտենանտ Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանը 1917 թ. հոկտեմբերի 29-ին գործուղվել է Ուլախանլու (Մասիս) կայարան՝ զեկուցելու կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարին՝ դիվիզիայի ապակազմավորման մասին: Նշանակվել է Երևանի ջոկատի և նահանգի զորքերի պետ՝ Ոչ առանձին կորպուսի հրամանատարի իրավունքով և ռազմաճակատի շտաբին անմիջականորեն ենթարկվելու պայմանով: Նշանակվել է Առանձին Հայկական կորպուսի հրամանատար: 1918 թ. մարտի 1-ին նշանակվել է Առանձին կորպուսի հրամանատար: 1918 թ. սեպտեմբերի 5-ին կորպուսը ապակազմավորվել է և Թ. Նազարբեկյանը նշանակվել է ՀՀ ռազմական նախարարի տրամադրության տակ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 126, թ. 5):

²⁶⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 13, թթ. 1-48, ձեռագիր:

գործողություններին տվել է հետևյալ բացատրությունը: «Կասկած չկա,- գրում էր գեներալը,- որ Մուրադը, Արշակը և այլոք մահմեդական բնակչության նկատմամբ բռնություններ են կիրառել՝ վրեժ լուծելով իրենց մտերիմների համար, բայց ոչ այդ չափազանցված չափերի մեջ, ինչպես նշում է թուրքական բանակի հրամանատարը: Մյուս կողմից, քրդերը ևս անընդմեջ հարձակումներ են իրականացրել Երզնկայի թիկունքում գտնվող փոքրաթիվ ջոկատների, առանձին անհատների և փոխադրամիջոցների նկատմամբ: Դա նրանք անում էին մասամբ իրենց նախաձեռնությամբ, բայց հիմնականում նրանց այդ քայլին դրդում էր թուրքական բանակի հրամանատարական կազմը՝ իրենց ակտիվ գործողությունների համար առիթ ապահովելու նպատակով»²⁶⁸: Հավելենք միայն, որ նմանատիպ գնահատական տրվել էր դեռ 1918 թվականի փետրվարի 8-ին Ախալցխայի «Շարժում» թերթում²⁶⁹:

Վեհիբ փաշան Երզնկայի դեպքերի կապակցությամբ դաս էր տալիս Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ Լևանդովսկուն, Լեբեդինսկուն, Օդիշելիձեին, հնարամտորեն հենվելով Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման Թուրքիայի համար նպաստավոր հետևանքների ու հատկապես Կովկասյան ռազմաճակատի փլուզման, բանակի բարոյալքման վրա: Այս ամենը նա, իհարկե, ուղղում էր հայերի դեմ և բնորոշ թուրքական հիմնավորումներ հրամցում, գտնելով, որ «հայկական զորամասերի ձևավորումը Օտոմանյան հպատակ հայերից, երբ դեռ չի կքնված հաշտություն և չի որոշված գրավված թուրքական տարածքների ճակատագիրը, անօրեն է ուստի և առաջացող այդ զորամասերը չեն խոչընդոտելու իրականացվող բռնությունները»²⁷⁰: «Ազնիվ հակառակորդ» ռուսների հասցեին գովեստների շարանն էլ հետապնդում էր մեկ գերխնդիր՝ ցույց տալ հայերի «վայրագությունները» և հիմնավորել թուրքական բանակի հարձակումը:

Հայկական կողմի պատժիչ գործողությունների մասին վկայում էր Էրզրումի շրջանի կոմիսար Գլոտովը 1918 թ. փետրվարի 9-ին: Նա գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովին տեղեկացնում էր, որ «փախստականների հետ միասին նահանջող զինվորները սպանում են իրենց հանդիպող թուրքերին ու հարակից գյուղերի բնակչությանը: Կոմիսարների վկայությամբ Իլիջան, Ենի-Քոյն ու Մամախաթունը

²⁶⁸ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 48:

²⁶⁹ Տե՛ս Շարժում, Ախալցխա, 1918, 8 փետրվարի, թիվ 10:

²⁷⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 5:

դատարկված են, իսկ Մամախաթունի կոմիսարի տեղակալի հաղորդմամբ տեղում սպանվել են 40 քուրդ, որոնց իր իսկ հանձնարարականով բերել էր Մեպուհը: Էրզրումի և Բլիջայի միջև փետրվարի 7-ին սպանվել են ավելի քան 30 թուրքեր ու քրդեր, նույն օրը Էրզրումում գտնվել են թուրքերի 5 դիակներ: Երեկոյան, քաղաքի հրետանային գնդի կայազորի շենքի նկուղում հրամանատարը (Մորելը – Վ.Մ.) քաղաքային վարչության նախագահ Ստավրովսկու ներկայությամբ հայտնաբերում են արգելափակված 100 թուրք զինվորների: Քաղաքի թուրք բնակչությունը ահաբեկված է, երկրորդ օրն է, որ շուկան ու կրպակներ փակ են: Կարգի վերահաստատման համար անհրաժեշտ են զորամասեր՝ այլ հոգեբանությամբ²⁷¹:

Ակնհայտ է, որ բոլոր դեպքերում հայերի կողմից իրականացված գործողությունները պատասխան քայլեր են, նախ՝ ելնելով կոնկրետ ռազմա-քաղաքական իրավիճակից, ինչ-որ առումով վրեժի ակցիաներ են 1915-1916 թթ. Մեծ եղեռնի դիմաց և վերջապես Անդրկովկասյան կոմիսարիատի նպատակամղված ու վտանգավոր անտարբերության հետևանքով մի կողմից՝ Հայրենիքի վերջնական կորստյան դեմ իրականացված քայլեր են և անսահման հուսալքության դրսևորում, իսկ մյուս կողմից թուրք-քրդական հարձակումների դեմ իրականացված պաշտպանական միջոցառումներ: Չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ այդ հատվածում կովող հայկական զինուժի մեծ մասը արևմտահայերն էին ներկայացնում:

Մեր կարծիքով ուշադրության է արժանի նաև թուրքական արշավանքի սկզբի ժամանակագրական խնդրի պարզաբանումը: Ընդունված է, որ այն սկսվել է 1918 թ. փետրվարի 10-ին:

Մինչդեռ հայտնի է, օրինակ, որ փետրվարի 7 (20)-ին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ե. Լեբեդիևսկին տեղեկացնում էր Վեհիբ փաշային, որ «թուրքական զորամասերի առաջխաղացումը հանգեցրել է քրդերի անդադար հարձակումների հետևանքով նրան, որ Երզնկայի սարահարթից ձեր գործերից փախչող գաղթականների կեսը զոհվել է քրդերի հարվածներից»:

Մեծ կորուստներ էր կրել արդեն նաև գնդապետ Ն. Մորելի ջոկատը: Գլխավոր հրամանատարը խնդրում էր Վեհիբ փաշայից «զերծ մնալ զինադադարի նման

²⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 4:

խախտումներից, որոնք կարող են հետաձգել հաշտության վերաբերյալ Ձեր և անդրկովկասյան կառավարության միջև սկսվող բանակցությունները»²⁷²:

Ուստի և վստահաբար, կարող ենք եզրակացնել, որ թուրքական բանակի հարձակման օր պետք է ընդունել փետրվարի 7-ը: Քանի որ անգամ Վեհիբ փաշայի փետրվարի 20-ով թվագրվող հայտնի հեռագիրը վերաբերում էր միայն «հայկական բռնություններին», իսկ Ի. Օդիշելիձեի կողմից Վեհիբ փաշայի գլխավոր հեռագրի ստացման ամսաթիվը ըստ Թ. Նազարբեկյանի՝ հին տոմարով հունվարի 30-ն է, այիսնքն՝ նոր տոմարով՝ փետրվարի 11-ը:

Կարևոր ենք համարում թուրքական հարձակման արդյունքում երկրամասի ռազմա-քաղաքական իշխանությունների միջավայրում ձևավորվող առաջին անմիջական արձագանքների լուսաբանումը, թեև ամեն ինչ պարզ էր նաև Երզնկայի զինադադարի շուրջ ծավալվող քննարկումների համատեքստում²⁷³:

Վեհիբ փաշայի հեռագիրը ցնցեց բոլորին, հատկապես կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը, Կոմիսարիատին և Հայոց ազգային խորհրդին:

Թ. Նազարբեկյանն է վկայում, որ հեռագրի ստացման օրը ՀԱԽ-ն արտակարգ նիստ հրավիրեց Թիֆլիսի բանկային իր շենքում, իսկ գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկին Շրջանային շտաբի շենքում: Հայազգի գեներալը մասնակցում է երկու նիստերին: Հայոց ազգային խորհրդի անդամները ցանկություն էին հայտնում պահել ողջ Արևմտյան Հայաստանը, ինչին հետևում է Թ. Նազարբեկյանի կողմից իրական պատկերի ներկայացումը, մասնավորապես այն, որ այդ հսկայական տարածքը առկա չնչին ուժերով անհանր է պաշտպանել: Միաժամանակ Թ. Նազարբեկյանը պնդում էր, որպեսզի Փոքր Ասիայի բանակի համարվող Էրզրումը ամեն գնով «մնա մեր ձեռքում»:

Շրջանային շտաբում ներկա էին գեներալներ Ե. Լեբեդինսկին, Վ. Լևանդովսկին, Գ. Ղորղանյանը, վրացական, ռուսական «ադրբեջանական» ազգային կորպուսների հրամանատարները և Հունական դիվիզիայի պետը²⁷⁴:

Գլխավոր հրամանատարը պաշտոնապես հայտարարեց թուրքական բանակի հարձակման մասին և ցանկություն հայտնեց պարզել հնարավոր հակահարվածի

²⁷² Տե՛ս Кавказское Слово, 1918, 15 февраля, N 36, նաև՝ Из истории иностранной интервенции в Армении в 1918 году, с. 19-20.

²⁷³ Տե՛ս Հանգամանորեն, Վ. Մելիքյան, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. մարտ), Երևան, 2010, էջ 145-181:

²⁷⁴ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 50:

ուժերը: Ըստ Թ. Նազարբեկյանի տեքստի Ադրբեջանական կորպուսի²⁷⁵ հրամանատար գեներալ Ալի Ադա Շիխլինսկին և Հունական դիվիզիայի պետը զեկուցում են, որ իրենք ոչ մի պատրաստի գորամաս չունեն (չնայած ազգային գորամասերի ձևավորման գործընթացը շարունակվում էր արդեն երեք ամիս – Վ.Մ.): Ռուսական կորպուսի հրամանատար, գնդապետ Դրոցենկոն հայտնում է, որ իր տրամադրության տակ առայժմ կա միայն սպայական ջոկատ: Վրացական ազգային կորպուսի հրամանատար, գնդապետ Ախմետելովը տեղեկացնում է, որ իրենք ունեն մի քանի գումարտակ, «սակայն դրանք կուղղվեն միայն Բաթում, իսկ գլխավոր ճակատի համար ոչինչ չեն կարող տրամադրել»: Ախմետելովի զեկույցից ոգևորված, գեներալ Ա. Շիխլինսկին հայտարարում է, որ «վրացի գործընկերոջ անկեղծ մոտեցումը իրեն թույլ է տալիս ասել, որ եթե ձևավորվեն էլ մահմեդական գնդեր, ապա նրանք չեն գնա թուրքերի դեմ կռվելու»²⁷⁶: Այս առթիվ Թ. Նազարբեկյանը փաստում է, որ «ներկաներին ցնցել էր այս անկեղծությունը, չնայած որ այն սպասելի էր մեր կողմից»: Իրեն ավելի շատ զարմացրել էր Գլխավոր հրամանատարի պահվածքը, որն ամենևին չէր հակաճառել այդ հայտարարություններին, քանի որ ռազմաճակատի պաշտպանական տեղամասերի բաժանման գործը հենց իր, այլ ոչ թե ազգային կորպուսների հրամանատարների իրավասությունն էր: «Ինձ թվում էր,- նշում էր Թ. Նազարբեկյանը,- որ եթե նա (Լեբեդինսկին – Վ.Մ.) այս զեկույցներից հետո ռազմաճակատի պաշտպանության համապատասխան բաժանում կատարեր, ապա կորպուսների հրամանատարները պետք է որ ենթարկվեին այդ հրամանին: Սակայն ինձ թվում է, որ նա համաձայնվեց զեկույցների հետ կամ ավելի ճիշտ չկարողացավ փոխել դրանց մոտեցումը»²⁷⁷:

Ավելացնենք, որ վրացական հրամանատարներից առաջ զեկուցել էր Թ. Նազարբեկյանը. ըստ այդմ հայկական կողմն ուներ 8 հրաձգային գունդ՝ 2 գումարտակային կազմով, 8 լեռնային ու դաշտային, 1 հաուբիցային մարտկոցներ, 2 տեղական գնդեր՝ Լոռվա ու Ղազախի, 2 պահեստային գնդեր, սակրավորների մեկ գումարտակ, 2 հեծյալ գունդ, Անդրանիկի հավաքական հատուկ ջոկատը, ինչպես նաև Երզնկայի, Խնուսի, Խլաթի ու Վանի դիրքերում գտնվող կամավորական գորամասերը²⁷⁸:

²⁷⁵ Քանի որ Թ. Նազարբեկյանի հուշապատումը գրվել է 1929-1931 թթ. ընթացքում, ուստի և հեղինակը օգտագործում է «Ադրբեջան» անվանումը:

²⁷⁶ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 50:

²⁷⁷ Նույն տեղում:

²⁷⁸ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 50:

Փետրվարի 14-ին միայն «Հորիզոնը» արտատպում էր Օդիշելիձեի ու Լեբեդինսկու հեռագրերը²⁷⁹:

Այսպիսով, գլխավոր ռազմաճակատը, որտեղ նախկինում կար ռուսական երեք կորպուս, այժմ լիովին տրամադրվում էր հայկական ազգային զորամասերին: Թ. Նազարբեկյանը եզրափակում էր, որ նման պայմաններում «դժվար էր ակնկալել ինչ-որ բարենպաստ արդյունքներ»²⁸⁰:

Անդրկովկասյան կոմիսարիատը իր փետրվարի 1 (14)-ի և 10 (23)-ի նիստերում քննարկման նյութ դարձրեց Երզնկա – Էրզրումի շրջանում զարգացող իրադարձությունները: Բացի մշտական ներկաներից նիստին մասնակցում էին նաև Ն. Ռամիշվիլին, Մ. Պապաջանյանը, երկրամասային Խորհրդի նախագահությունը, գյուղացիական կենտրոնի ներկայացուցիչը, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկին և շտաբի պետ Ե. Վիշինսկին:

Առաջինը լսվեցին գնդապետ Շատիլովի հունվարի 31-ի օպերատիվ հաղորդագրությունը Երզնկայի իրադրության և նույն օրը Ֆ. Վեհիբ-Մեհմեդ փաշայի կողմից ուղարկված ու դրա պատասխան՝ գեներալ Ե. Լեբեդինսկու հեռագրերի մասին:

Մ. Ջաֆարովի հարցին, թե ի՞նչ վիճակ է տիրում գրավված վայրերի բնակչության շրջանում (նկատի ունի մահմեդականներին - Վ.Մ.) և ովքեր են այրել Ռիզե քաղաքը, գեներալ Ե. Լեբեդինսկին հայտնում է Երզնկայից՝ գնդապետ Ն. Մորելի և Տրապիզոնից՝ գեներալ Կոլոսովսկու հաղորդած լուրերը: Ըստ այդմ Ռիզեն այրել ու թալանել են նահանջող զինվորական զորամասերը: Երզնկայի, Էրզրումի մասին ոչ միայն ինֆորմացիա չի տրվում, չեն հնչում ելույթներ, այլև որոշում չի կայացվում, ինչը վկայում էր Արևմտյան Հայաստանի նկատմամբ երկրամասային իշխանության ցուցաբերած միտումնավոր անտարբերության մասին:

Ավելին՝ որոշումները վերաբերում էին զուտ Թուրքիայի հետ Թիֆլիսում և Բաթումում սպասվող բանակցությունների խնդիրներին²⁸¹: Դրան էր հիմնականում նվիրված և փետրվարի 10 (23)-ի Կոմիսարիատի նիստը²⁸²:

Ինչ վերաբերում էր ռազմաճակատի ընդհանուր վիճակին, ապա Ե. Լեբեդինսկու եզրահանգումը միանշանակ էր, այն է՝ «պատերազմը շարունակելու համար զինված

²⁷⁹ Տե՛ս Հորիզոն, 1918, 14 փետրվարի, թիվ 33:

²⁸⁰ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 50:

²⁸¹ Տե՛ս ՀԱԴ, փ. 1818, օր. 2, ժ. 12, լս. 72-74 օժ.

²⁸² Տե՛ս նույն տեղում, թթ. 93-95:

ուժեր գոյություն չունեն»։ Ավելին, Երզնկայի ու Էրզրումի վերաբերյալ ակնկալիքներ ունենալու մասին իշխանության կենտրոնական մարմինը չէր էլ ակնարկում։ Բանակցությունների օգտին այս նիստում ելույթներով հանդես եկան Ս. Վրացյանը, Ս. Տիգրանյանը²⁸³։

Նրանց դեմ՝ գեներալ Ն. Ղորղանյանի տվյալներով թուրքական կողմը կենտրոնացրել էր Էրզրումի ուղղությամբ խմբավորում, որը տեղացի 20.000 մահմեդական թուրքերի, քրդերի և աջարացիների աջակցությունն էր ստանում։ Դրանցից 7.000-ը զինված էին, 1-ին բանակային կորպուսի կազմի մեջ մտնող 36-րդ Կովկասյան դիվիզիան Երզնկայի ուղղությամբ ուներ 1500 քրդական անկանոն հեծելազոր և մահմեդականների այլ ջոկատներ²⁸⁴։

«Հորիզոնի» տվյալներով՝ Թուրքիան Սև ծովի առափնյա շրջաններից մինչև Վանա լիճ տիրապետում էր «ցաք ու ցրիվ 18-20.000 զինվորների, ոմանք այդ թիվը իջեցնում են մինչև 12.000-ի։ Մոտակա վայրը, որոնցից կարող է օգնություն հասնել՝ Սվազն է, ուր գտնվում է պահեստային մի դիվիզիա, մոտ 4.000 հոգի»²⁸⁵։ Դաշնակցության օրգանը վստահեցնում էր, որ «հիմա ավելի հեշտ է վերագրավել Թուրքահայաստանը, քան ավելի ուշ, երբ թուրքահայ և անդրկովկասյան զորքը կազմակերպված կլինի»²⁸⁶։

Այս «հուսադրող» ինֆորմացիան կուսակցությունը հրապարակում էր փետրվարի 11-ին, երբ թուրքական զորքերն անցել էին լայնամասշտաբ ռազմական գործողությունների։ Անգամ դժվար է եզրակացնել, թե Դաշնակցությունը տեղյակ չէ՞ր արդյոք ռազմաճակատի գծի վրա տեղի ունեցող իրադարձություններից, թե՞ կարծում էր, որ անգամ 20.000 զորք ունեցող թուրքական բանակը Երզնկայի մատույցներում պետք է ջախջախվի անպատճառ։ Դժվար չէր հայտարարել, թե՞ «հիմա ավելի հեշտ է վերագրվել Թուրքահայաստանը, քան ավելի ուշ», բայց չէր պատասխանում գլխավոր հարցին՝ ի՞նչ միջոցներով։

Նույն տրամադրությունն էր իշխում նաև «Հորիզոնի» փետրվարի 4-ի խմբագրականում, այստեղ արդեն Դաշնակցությունը մեղադրում էր Հայոց ազգային խորհրդին, բոլոր հասարակական կազմակերպություններին, Անդրկովկասյան

²⁸³ Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1818, օպ. 2, ձ. 12, լլ. 93 օբ., 94 օբ.

²⁸⁴ Տե՛ս Ե.Փ. Լյուծսուեյտ, *Турция в годы Первой мировой войны (1914-1917гг.)*, М., 1966, с. 173.

²⁸⁵ Տե՛ս Հորիզոն, 1918, 11 փետրվարի, թիվ 31։

²⁸⁶ Տե՛ս նույն տեղում։

կոմիսարիատին – «գտնվեցին անկարող և անընդունակ ըմբռնելու վայրկեանի լրջութիւնը», փոխարենը՝ հանդես գալով մարգարեի կարգավիճակում:

«Մեր կասկածներն արդարանում են,- գրում էր թերթը,- կրկնում է Ադրիանապոլի պատմութիւնը²⁸⁷: Ջինադադարը կնքելու հենց սկզբին մենք նախագգուշացրինք, որ էնէր փաշան կը փորձէ օգուել ստեղծած կացութիւնից և կաշխատէ վերագրաւել Տաճկա-Հայաստանը: Միննոյն ժամանակ մենք կոչ արինք կազմակերպելու, առանց դանդաղելու զինուորական ոյժ պատրաստելու և ռուս զինվորների լքած դիրքերը գրաւելու: Մենք այն կարծիքի էինք, որ տաճկական քայքայւած բանակի դէմ բաւական էր մի քանի կէտերում ամուր արգելքներ դնել, որպէսզի կատաստրոֆը տեղի չունենայ»²⁸⁸:

Եզրակացութիւնն ավելի անհույս էր հնչում. «Էլ նա (Թուրքիան – Վ.Մ.) չի յաջողի ոչ միայն Կովկասի դռներին մօտենալ, այլ և Երզնկային ձեռք տալ, եթէ մենք շտապենք այնտեղ հասցնել այն զինուորական մասերը, որոնք կազմ ու պատրաստ են արդէն թիկունքում, եթէ մենք փութանք իրական մոբիլիզացիայի ենթարկել մեր բոլոր կենդանի ոյժերը»²⁸⁹:

Դաշնակցութիւնը ոչ միայն քաջատեղյակ էր, այլ փաստորեն իր կուսակցութեան մարմնի՝ Հատուկ կոմիտէի միջոցով էր փորձում իրականացնել զորահավաքը, տեղյակ ռազմաճակատի դասալքութեան չափերին և այլն: Ցավալի է, բայց վճռական պահին, որ արդէն ուշացած էր, ՀՅԴ-ը միայն մեղադրանքներով էր հանդես գալիս, մինչդեռ հայ իրականութեան մեջ գլխավոր ազգային ուժի դերակատարութիւնը ստանձնած կուսակցութիւնը հենց ինքը պէտք է դեկավարէր ամբողջ գործը:

Թուրքական հարձակման սկզբից Թ. Նազարբեկյանը կարգադրեց Էրզրում ուղարկել 1-ին և 4-րդ հայկական հրաձգային գնդերը, որոնք իրենց զորաշարժը սկսեցին առանց հրամանատարների. 1-ին գնդի հրամանատար, գնդապետ Կարաքէշիշյանը հիվանդացավ, իսկ 4-րդ գնդի հրամանատար, գնդապետ Արտեմ Հովսէփյանը Դրոյի հետ ունեցած հակասութիւնների պատճառով չհասավ Էրզրում: Փաստորեն Թ. Նազարբեկյանի հրամանը չկատարվեց, հիմնականում նաև զանգվածային դասալքութեան պատճառով: Էրզրում հասան Անդրանիկն իր ջոկատով և շտաբի պետ Մ.

²⁸⁷ 1877-78 թթ. Ռուս-թուրքական պատերազմի հունվարի 19-ի զինադադարը – Վ.Մ.:

²⁸⁸ Հորիզոն, Թիֆլիս, 1918, 4 փետրվարի, թիվ 26:

²⁸⁹ Նույն տեղում:

Զինկևիչը: Ուշագրավ ու զավեշտական է այս կապակցությամբ Թ. Նազարբեկյանի նկատառումը, թե այդ մասին ինքը պատահմամբ է տեղեկացել²⁹⁰:

Բացի այդ, Երզնկայի ջոկատի հյուսիսային հատվածում պետք է տեղակայվեին վրացական զորամասերը, իսկ արևելքում Խնուսի ջոկատը: Իրականում մինչև Տրապիզոն այդպես էլ ոչ մի վրացի զինվոր չհայտնվեց:

Այս ընդհանուր անօգնական վիճակը նկատի ունենալով Թ. Նազարբեկյանը նշում էր. «տաք գլուխները, ռազմական գործից անտեղյակ, Հայոց ազգային խորհրդի մի քանի անդամների ոգով պաշտպանվելով՝ ցանկանում և անընդմեջ պահանջում էին պաշտպանել ամբողջ ռազմաճակատը: Եթե այս ամենին ավելացնենք ճակատի պաշտպանների փոքրաթիվ՝ բացառությամբ հայրենասիրություններից զուրկ տրամադրությունները, ապա ամենքին պարզ կդառնա, թե ինչպիսի կատաստրոֆիկ դրություն էր ստեղծվել հայերի համար գլխավոր ճակատում՝ թուրքական հարձակման նախօրեին»²⁹¹:

Կովկասյան ռազմաճակատը, Արևմտյան Հայաստանը պաշտպանելու, հայերի զորահավաքը կազմակերպելու և ընդհանրապես՝ Թուրքիային դիմադրելու հարցում մամուլում մի արմատական տեսակետ էր բարձրացվում: 1918 թ. հունվարի 4-ի համարում «Հայաստան»-ը արտաստպում է Թիֆլիսի կադետական ուղղության վրաց ազգայնական «Возрождение»-ի «Հայերի նոր օրհասական սխալը» վերտառությամբ հոդվածը:

Առաջին հայացքից՝ այլընտրանքային ու հեռատես վերլուծությամբ ու դրանից բխող առաջարկ անելով, հայ իրականությանը շատ վտանգավոր, կործանարար ուղի էր պարտադրվում:

«Հայերի առաջին օրհասական սխալը» Ռուսաստանի կողմից Թուրքիայի դեմ պատերազմելն էր. «ենթարկելով կոմս Վորոնցով-Դաշկովի և մինիստր Սազոնովի քաղցրահնչիւն ճառերի և խոստումների ազդեցութեանը,- նշում էր հեղինակը,- նրանք պատերազմ հայտարարեցին Թուրքիային և հայկական կամաւորները ներս խուժեցին Թուրքիայի սահմանները»²⁹²: Հոդվածագրի կարծիքով հայերն ականջալուր չեղան իրենց զգուշացումներին, երբ «ապացուցում էինք այդ վտանգաւոր, անօգուտ

²⁹⁰ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 51:

²⁹¹ Նույն տեղում, էջ 53:

²⁹² Տե՛ս Հայաստան, 1918, 4 հունվարի, թիվ 2:

գործողությունների վնասակարությունը փոքրիկ հայ ժողովրդի համար, խորհուրդ էինք տալիս, աւելի հեռատես լինել ջերմագին ազգային շովինիզմը բորբոքող ղեկավարների վրա:

Մենք նրանց ոչ մի բան չկարողացանք հասկացնել, այլ գրգռեցինք նրանց մեր դեմ և մինչև անգամ հայ լրագրներում «հայակեր» անունը վաստակեցինք»²⁹³: Հեղինակը վստահ էր, որ ռուսահայերի անմիտ քաղաքականության պատճառով Արևմտյան Հայաստանը ջախջախվեց և ոչնչացավ, իրագործվեց Վորոնցովների «Հայաստան առանց հայերի» քաղաքականությունը: Ռուսական և թուրքական զորքերը հայկական նահանգներում մի շարք վայրագություններ ու տեղափոխություններ կատարելուց յետոյ (նկատի ունի հատկապես Վանի 1915 հուլիսյան նահանջը – Վ.Մ.) Հայաստանը հայերից բոլորովին դատարկվեց, Հայութեան բարձր շրջանները ենթարկեցին արքայական բիրոկրատների պրովակացիային և կուրօրեն չնկատեցին, թե ինչպես նրանց դարձրեցին իրենց մեքենայությունների գործիքը»²⁹⁴: Ջուզահեռ էր բերվում Լեհաստանի օրինակը, որը հպատակի կարգավիճակում չդավաճանեց ո՛չ Ռուսաստանին և ո՛չ էլ Գերմանիային, ոչ մեկին պատերազմ չհայտարարեց և «զգալով իր անզօրությունը, որքան հնարաւոր էր չեզօրութիւն էր պահպանում»²⁹⁵:

Մոայլ ու սարսափազդու նախաբանից հետո հայտարարվում էր, որ «Հայ ղեկավարներն այժմ մի նոր օրհասական սխալ են գործում»: Ո՞րն էր այդ սխալը. Այն, որ Ռուսաստանը Թուրքիայի հետ կնքում էր Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, ռուսական զորքերը հեռանում էին Կովկասյան ռազմաճակատից, «բոլոր ազգերը ծարաւի են խաղաղութեան, իսկ հայերը նորից ցանկանում են անկախօրեն պատերազմ մղել Թուրքիայի հետ: Նրանք զօրահաւաք են յայտարարել և պատրաստում են պաշտպան կանգնել ռուսների կողմից լքած թուրքական ճակատը: Վերջացած ռուս-թուրքական պատեազմի տեղն սկսում է հայ-թուրքական պատերազմը»²⁹⁶: Ո՞ւմ հետ են հայերը հույս կապում հարցին նա պատասխանում է, որ չի կարելի ապավինել անգլիացիների, Լենինի, Կովկասի թաթարների, լեռնականների և վրացիների աջակցությանը, մնում է սեփական ուժը, որն էլ անբավաար է: Արվում էր գլխավոր եզրակացությունը և տրվում միակ հնարավոր խորհուրդը՝ «Անհրաժեշտ է արմատական կերպով փոխել ընդհանուր

²⁹³ Տե՛ս Հայաստան, 1918, 4 հունվարի, թիվ 2:

²⁹⁴ Նույն տեղում:

²⁹⁵ Նույն տեղում:

²⁹⁶ Նույն տեղում:

քաղաքականության ընթացքը և վերածել խաղաղության, բարեկամության և համերաշխության քաղաքականության, նախ և առաջ մերձադուր հարևանների հետ: Այս բոլորը ծանր է կարդալը, սակայն պետք է արիություն ունենալ լսելու դառն ճշմարտությունը»²⁹⁷:

Հիմա արդեն ամեն ինչ պարզ է և իր տեղն է ընկնում, մանավանդ, որ հիշեցվում էր, թե «վրաց դեմոկրատիան չի ցանկանում շարունակել պատերազմը, ոչ մի արկածախնդրության մեջ չի մտնում, մանաւանդ, որ հայերը հրապարակ են հանում վարչական սահմանաբաժանման հարցը՝ վրացական տերիտորիայից նրա ամենալաւ, սեփական գաւառները իւլելու նպատակով, վրացիների վերաբերմամբ շարունակում են նախկին քաղաքականութիւնը վարել եւ բորբոքում են ազգայնական կրքերը»²⁹⁸:

Վրացական ազգայնականության մունտեիկ՝ “Возрождение” թերթը, փաստորեն, խորհուրդ էր տալիս հանձնվել, չկռվել թուրքերի դեմ և հասկացնում էր, որ իրենք այդ պայքարում չեն օգնելու հայերին, ավելին՝ նրանց զոհաբերելու են թուրքական հորդաներին:

Այսպիսով,

ա) Գերմանո-թուրքական խմբավորման հետ բոլշևիկների որդեգրած «առանց հողագրավումների ու ռազմատուգանքների» կարգախոսը քայքայեց Կովկասյան ռազմաճակատը և արևելահայ զինվորների ու սպաներից ոմանց մոտ խորացրեց պարտվողական, դեպի թիկունք շարժվելու տրամադրությունը:

բ) Վերջնականապես պարզվեց, որ Անդրկովկասյան կոմիսարիատն ու ավելի ուշ ձևավորված Սեյմը՝ իր վրաց-թաթարական քաղաքական մեծամասնությամբ ոչ թե պասիվ, այլ հետևողական ու բացահայտ ոչ հայամետ դիրքորոշում էր որդեգրել, ինչը ցավոք նոր էր միայն փաստվում Դաշնակցության մի հատվածի ու ՀԱԽ-ի կողմից: Մասնավորապես հոդս ցնդեց Կովկասյան ռազմաճակատը միացյալ անդրկովկասյան ուժերով պաշտպանելու ի սկզբանե սնանկ ու անհեռանկար դիրքորոշումը:

գ) Առավել տագնապալի ու վտանգավոր էր Հայոց ազգային խորհրդի վարքագիծը: Այն մի կողմից թվացյալ հայրենասիրական կոչերով փորձում էր համապատասխան քաղաքականություն վարել և Երզնկա-Էրզրում ճակատի ուղղությամբ ինչ-որ ցուցադրական հայրենասիրական ու կազմակերպական աշխատանք տանել, բայց մյուս

²⁹⁷ Տե՛ս Հայաստան, 1918, 4 հունվարի, թիվ 2:

²⁹⁸ Նույն տեղում:

կողմից չէին իրականացնում վճռական գործողություններ: Ստացվում է, որ Վեհիբ փաշայի հեռագրերի շարքից հետո միայն, օրհասական ու անխուսափելի վտանգի պահին ՀԱԽ-ը որոշեց, որ Էրզրումի պաշտպանությունն անհրաժեշտ է, ավելին՝ եթե նկատի ունենանք որ հունվարի 9-ից այդ վտանգն արդեն իրականություն էր դարձել:

դ) Հիմնականում բացակայում էր ՀԱԽ-ի, ՀԶՄ և Թ. Նազարբեկյանի միջև գործնական համագործակցության գործոնը: Դրա պատճառը ոչ միայն հայկական կողմի նախաձեռնության բացակայությունն էր և սրբնթաց զարգացող դեպքերին ուշացած հետևելու միտումը, այլ հիմնականում քաղաքական կողմնորոշման ոչ հստակ ու հետևողական իրականացումը, ինչն ուղղակիորեն հանգեցնում էր բանակցային գործընթացին նախապատվություն տալու հանգամանքով: Այլ խոսքով, Ալեքսանդրապոլի՝ իր հերթին ուշացած ապրիլյան հայտնի խորհրդակցությունը պետք է կայանար 1917 թ. դեկտեմբեր – 1918 թ. հունվար ժամանակահատվածում, երբ մեր կարծիքով լիովին պարզ էր երկրամասային իշխանության քաղաքականության ուղղվածությունը և հատկապես ռազմաճակատի պաշտպանության այլընտրանքը:

3.2. ԵՐԶՆԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 2-ին Երզնկայի Հայոց առաջնորդարանի հրապարակում կայացավ հանրահավաք, որտեղ որոշվեց Երզնկան չլքելու և դիմադրելու վերաբերյալ պատմական վճիռը: Երեկոյան ժամը 12-ին Առաջնորդարանի շենքում լսվեցին Մեքաստացի Մուրադի և Արշակ Ջամալյանի զեկուցումները և համապատասխան հրահանգները: Հույս էր հայտնվում, որ 20 օր ճակատը պաշտպանելու պարագայում, Մարիդամիշում և Կարսում կուտակված 40.000 արևելահայ կամավորները տեղ կհասնեն²⁹⁹:

Ինչպես ցույց կտան հետագա իրադարձությունները, այդ գորաքանակը այդպես էլ չժամանեց ռազմաճակատի առաջին գիծ՝ Երզնկա-Էրզրում հատվածը:

Այդ պահին իսկ Մեքաստացի Մուրադը չէր վստահում Ա. Ջամալյանի «շոսյլած մեծամեծ խոստումներին» և վկայում էր, որ «երբ երկու օր առաջ Մամախաթունեն կը վերադառնայի, ճամբուն վրայ տեսայ հարիւրաւոր հայ զինուորներ, որոնք խառնուած

²⁹⁹ Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 20:

ռուս զինուորներուն, 5-10 բուսիլի փոխարէն իրենց զէնքերը ծախելով քիւրտերուն, հեւ ի հեւ կը վազէին տուն երթալու համար»³⁰⁰:

Ա. Ջամայանին ուղղված հարցերի մեջ, որոնց նա հիմնականում խուսափողական և չհիմնավորված պատասխաններ էր տալիս, հնչեց նաև մեկը, որը թերևս ամենագլխավորն էր՝ թե ռուսական կովկասյան բանակի դասալքման պայմաններում, ինչպէ՞ս կարելի է վստահել թուրքերի հավաստիացումներին, որ իրենք չեն խախտի Երզնկայի զինադադարը: Դեկտեմբերի 3-ին Ա. Ջամայանը հեռացավ Կարին³⁰¹:

Մինչև դեկտեմբերի 10-ը Տրապիզոնից, Գյումուշխանէից, Բաբերդից և Երզնկայի մյուս ճակատներից կուտակվող արևելահայ զինվորների թիվը հասավ 2.000-ի:

Դեկտեմբերի 25-ին գեներալ Վ. Լյախովը փաստորեն պաշտոնանկ է արվում և վերադառնում է Թիֆլիս: Մեկնելուց մեկ օր առաջ Երզնկայի Ազգային խորհուրդը Մոսկվայի հայկական միության գրասենյակում Մուրադի և բժ. Արսլանյանի հետ հրավիրեց խորհրդակցության, որտեղ որոշվեց.

ա) սերտ հարաբերություններ հաստատել Դերսիմի և Դերջանի քուրդ ցեղապետերի հետ և ամեն կերպ աշխատել որպեսզի լարված մնան թուրք-քրդական հարաբերությունները, բ) արգելել Երզնկայում բնակվող քրդերին ու թուրքերին հեռանալ քաղաքից՝ ներքին գաղտնիքները թշնամուն չհաղորդելու նպատակով, գ) զինաթափել Երզնկայում բնակվող բոլոր մահմեդականներին:

Դեկտեմբերի 27-ին, Սեբաստացի Մուրադը, որպես այդ խորհրդակցության կողմից ստեղծված ազգային մարմնի ներքին գործերի և արևմտահայ զինվորականությունը կազմակերպող բաժնի ղեկավար, պաշտոնապես հրավիրեց Երզնկայի թուրք ղեկավարությանը: Յուսուֆ Ալիին, Զիային և մի շարք կրոնավորների նա հայտնեց, որ ձևավորվել է Հայկական կառավարություն և որ Երզնկայի թուրքերը պետք է հպատակվեն այդ ազգային իշխանությանը: Հիշատակելով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, Մուրադն այդուհանդերձ խաղաղ համակեցության կոչ էր անում թուրք գործիչներին³⁰²:

Սեբաստացի Մուրադը թուրքերեն գրված պաշտոնական գրությամբ Յուսուֆ Ալիին նշանակեց Երզնկայի քաղաքապետ, իսկ Կամախցի Մկրտիչին և Զիա Էֆենդիին՝

³⁰⁰Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 20:

³⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 21:

³⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 27:

տեղակալներ: Ոստիկանական գործը ամբողջովին հանձնվեց հայերին, Կոմիսարիատի վերահսկողության իրավունքը՝ կարսեցի բժ. Բաղդասարյանին, հակահետախուզությունը՝ Գևորգ Չուլճյանին³⁰³:

Համաձայն ՀԱԽ-ի խոստումին զինվորական աջակցության վերաբերյալ, մինչև հունվարի 7-ը այդպես էլ Երզնկա չժամանեցին ոչ հայկական 1-ին հրաձգային, և ոչ էլ Էրզրումի գնդերը:

Հունվարի 8-ին Թուրքեստանյան գնդերը ևս ցանկանում էին հեռանալ Էրզրում, սակայն հաշվի առնելով բազմաթիվ, մասնավորապես բժիշկ Բաղդասարյանի խոստումները՝ համոզվեցին մինչև հունվարի 20-ը մնալ տեղում³⁰⁴. 5-րդ և 6-րդ վաշտերն այնուամենայնիվ լքեցին քաղաքը: Նրանց հեռանալը, Էրզրումի հետ կապի ընդհատումը, տեղի թուրքական բնակչության տրամադրության կտրուկ փոփոխումը, հակահայկական ելույթները, առանձին անհատների գիշերային սպանությունները ստիպեցին Երզնկայի ջոկատին ամրացնել քաղաքից 2 վերստ հյուսիս արևմուտքում գտնվող (Տրապիզոնի մայրուղու վրա) ռազմական հենակետը: Վերջինիս ամրացումն անհրաժեշտ էր նախ և առաջ քաղաքում զինված 10 հազար թուրքերի ապստամբությունը կանխելու, ապա և թուրքական հարձակմանը դիմագրավելու համար: Հիմնականում Բիջանի ու Չորսի մոտ տեղի ունեցած առաջին ընդհարումների ժամանակ հայկական կողմը կորցրեց 35 զինվոր և 2 վիրավոր սպա: Երզնկայի շուրջ ռազմական գործողությունների սկիզբ կարելի է համարել հունվարի 30-31-ը ընկած ժամանակահատվածը, երբ Խսր-Խանիի, Չարդախլուի, Կամախի շրջանում սկսվեց թուրքական ուժերի նկատելի գորաշարժ: Տրապիզոնի մայրուղու կողմից թուրքերի առաջխաղացման պայմաններում Երզնկայում կայացավ զինվորական խորհրդակցություն, որտեղ քննարկվեց հնարավոր դիմադրության և Էրզրում նահանջելու խնդիրը: Վճռվեց մարտի բռնվել և դիմադրել այնքան ժամանակ քանի դեռ Երզնկայի 5.000-ի հասնող հայ ազգաբնակչությունը ապահով կերպով պատրաստ կլինի արտագաղթի: Սեբաստացի Մուրադը և այլոք պնդում էին Էրզրում նահանջելու վրա՝ հակառակ Տրապիզոնի մայրուղի դուրս գալու ծրագրին, քանի որ նրա կարծիքով անթույլատրելի էր համարվում առանձին հատվածներում կռվող զինվորներին անօգնական թողնելը, ապա և կարևորում էր նահանջի ճանապարհին հայկական

³⁰³ Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 29:

³⁰⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 27, թ. 14:

գորամասերի հետ հանդիպելու գործոնը, ինչը Տրապիզոնի մայրուղի դուրս գալով անհնար էր դառնում: Խորհրդակցության ընթացքում դիրքերում արդեն սկսվել էր հրաձգություն, ուստի անհրաժեշտ էր անհապաղ որոշում կայացնել:

Առատ ձյան պատճառով թուրքերը դանդաղ մոտենում էին թուրքեստանյան վաշտերի դիրքերին³⁰⁵: Երզնկայի ջոկատի կապը Էրզրումում գտնվող Կովկասյան բանակի շտաբի հետ անկայուն էր: Հաղորդակցությունը հեծյալ բանբերների միջոցով Երզնկա – Մամախաթուն գծի վրա տեղի ունեցավ միայն մինչև հունվարի 23-ը և այնուհետև այլևս չվերահաստատվեց³⁰⁶:

Փետրվարի 13-ի վաղ առավոտյան թուրքերը Տրապիզոնի մայրուղու կողմից սկսեցին հարձակումը ռազմական հենակետի վրա: Կամավորների մեծ մասը փախել էին իրենց տները և տեղում մնացել էր ընդամենը 160 զինվոր: Մուրադին իր մի քանի հեծյալներով հաջողվեց շատ կարճ դիմադրել, մինչև տեղի 4 հրանոթները տեղափոխվեցին Երզնկա: Ցավոք այդ հրանոթները ոչ մի արկ չարձակեցին, որովհետև հրաձիգ-կամավորները չէին տիրապետում հրետանային մասնագիտությանը և ընդամենը մեկ պրապորշչիկ ոչինչ չկարողացավ ձեռնարկել: Թուրքերը գրավեցին գլխավոր հենակետը, Թուրքեստանյան վաշտերի դրությունը դարձավ օրհասական և թուրքերի հրետակոծության հետևանքով նրանք քշվեցին Երզնկայի արևմտյան ծայրամասը, փաստորեն մեկուսացվեցին գլխավոր մարտից: Երեկոյան վեցին, երբ Ն. Մորելի հրամանով սկսվեց նահանջը դեպի Էրզրումի մայրուղի, քրդերի հսկայական զանգվածներն անցան Եփրատը՝ նպատակ ունենալով թալանել մթերային պահեստները: Այստեղ ուժգին մարտ սկսվեց թուրքերի ու քրդերի միջև: Երզնկայի մատույցներում Ն. Մուլերի ջոկատը կորցրեց թուրքեստանյան վաշտերից սպանված ու վիրավոր 22 զինվոր, 1 սպա և 10 կամավոր:

Փետրվարի 15-ին, ժամը 14-ին Երզնկայի ջոկատը հեռացավ քաղաքից, արևմտյան ծայրամասում թողնելով հետնապահ երկու գումարտակ. նրանք էլ լքեցին Երզնկան ժամը 15-ին: Երեկոյան ժամը 19-ին ջոկատի գլխավոր ուժերը կենտրոնացան Խան գյուղում: Երկու ժամ հանգստանալով և թողնելով փախստականներին առաջ անցնել, փետրվարի 14-ին առավոտյան ժամը 4-ին հասան Չելիկի ռազմակայանը՝ մեկ օրվա

³⁰⁵ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 54-56:

³⁰⁶ Տե՛ս Գաբրիել Ղորղանեան, Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ, Հայրենիք, Բոստոն, 1927, թիվ 12, էջ 156-157:

ընթացքում անցնելով 40 կիլոմետր ճանապարհ: «Աննկարագրելիօրեն դժուար էր քայլել գիշերային թանձր խաւարի մէջ խոր ձիւնով ծածկուած ճանապարհով, շարունակ քուրդերու յարձակման ենթակայ: Սայլերը գառիվայրէրէն Եփրատը կ'իջնային, կը թաղուէին ձիւնի մէջ, մարդիկը կը սառէին: Մինչեւ Չելիկ հասնիլը ուրեմն միայն մէկ օրուան ընթացքին շուրջ 100 փախստական մեռան», - հիշում էր Գ. Ղորղանյանը³⁰⁷:

Փետրվարի 14-ին, գնդապետ Ն. Մորելի հրամանով ջոկատը շարժվեց դեպի Չորս: 8-րդ կիլոմետրի վրա, հայտնվելով դեռ 1916 թ. հայտնի տխրահռչակ կաթսայաձև հովտում, ջոկատի առջապահ գումարտակը ենթարկվեց խաչաձև կրակի: Միացնելով առաջապահներին ևս մէկ գումարտակ, ինչպէս նաև Մուրադի կամավորական հեծելախումբը, Մորելն անձամբ գլխավորեց առաջապահներին և գրոհեց թշնամուն՝ նպատակ ունենալով գրավել հովիտի ելքը փակող բարձրունքները: Այս գրոհը վճռական ներգործություն ունեցավ քրդերի վրա և երեկոյան ժամը 17 և կեսին ճամփան բացված էր, երեք ժամ հետո Երզնկայի ողջ ջոկատը հավաքվեց Չորսի մոտ տալով 25 զոհ և 80 վիրավոր. 40 հոգի էլ փախստականներից վիրավորվեցին: Բիջանին չհասած Եփրատի երկրորդ կամուրջի մոտ տեղի ունեցած փետրվարի 16-ի մարտերի ընթացքում Երզնկայի ջոկատի կորուստները կազմեցին 28 զոհ ու 61 վիրավոր, ցրտահարվել էին զինվորներից՝ 40, փախստականներից շուրջ 100 հոգի: Փետրվարի 17-ին ջոկատը հասավ Մամախաթուն: Քարճիլի և Մամախաթունի միջև նրանց միացան մոտ 2000 փախստականներ, իսկ փետրվարի 18-ին անցան Ենի-Քեոյ:

Փորձում եմ,- եզրափակում էր իր զեկուցագիրը գնդապետ Ն. Մորելը,- կապիտան Կաֆիևի և այլ հոգով ուժեղ սպաների օգնությամբ ձևավորել ոչ մեծ բայց հուսալի զորամաս՝ Մամա-Խաթունի պաշտպանության համար ու որպէսզի պահպանեն կամավորների ու զինվորների մնացյալ զանգվածը՝ ինքնակամ թիկունք փախչելուց»³⁰⁸:

Փետրվարի 24-ին Երզնկայի ջոկատը մտավ Կարին, այստեղ կազմալուծվեց և կրկին վերակազմավորվեց որպէս Երզնկայի գունդ, որը տեղացի հայերից կազմված Կարինի գնդի հետ միասին կազմեց Անդրանիկի դիվիզիայի առաջին կիսաբաժինը³⁰⁹:

Այսպիսով, Երզնկայից դուրս գալուց հետո, փետրվարի 14-24-ի ընթացքում Երզնկայի ջոկատը իր կարողության և հնարավորությունների սահմաններում

³⁰⁷ Տե՛ս Գ. Ղորղանեան, նշվ. աշխ., էջ 158:

³⁰⁸ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 60.

³⁰⁹ Տե՛ս Գ. Ղորղանեան, նշվ. աշխ., էջ 159-160:

կատարեց իր առջև բարձրացած ռազմական առաջադրանքը: Այն իր հերոսական գործողություններով հիմնականում կարողացավ պատվար հանդիսանալ Կարինին:

Երզնկայի ջոկատի նահանջի մանրամասները պահպանվել են Ն. Մորելի կողմից բանակի շտաբի պետին հունվարի 3 (17)-ին, թուրքեստանյան վաշտերի հրամանատար կապիտան Կ. Հասանփաշայանի և Գ. Ղորղանյանի զեկուցագրերում³¹⁰:

Այդ մանրամասներին հետամուտ չլինելով նշենք, որ փետրվարի 12 (25)-ին Էրզրումի ջոկատի շտաբից հրաման ստացվեց, ըստ որի Երզնկայի ջոկատը պետք է ետ քաշվեր Էրզրում, իսկ 1-ին Հայկական հրաձգային գունդն ու կամավորները հակառակը՝ Էրզրումից առաջանալով զբաղեցնեին Աշկալայի դիրքերը: Փետրվարի 14 (27)-ին ջոկատը դուրս գալով Ենի-Քեոյից, ուղղվեց Էրզրում: Էրզրումից տեղ հասած 2-3 կամավորական վաշտերը և Իլիջայում³¹¹ տեղավորված Հայկական 1-ին հրաձգային գունդը փետրվարի 15 (28)-ին շարժվեցին Էրզրում: Այս կապակցությամբ կարևորում ենք Երզնկայի պահպանված զինուժի Էրզրում հասնելու ժամկետը. Այն ըստ Թ. Նազարբեկյանի, որն էլ իր հերթին հենվում էր Ն. Մորելի ու Կ. Հասանփաշայանի զեկուցագրերի վրա, տեղի է ունեցել ոչ շուտ քան փետրվարի 15 (28)-ին³¹²: Ի դեպ, Ա.Հ. Հարությունյանը հիշատակում է փետրվարի 11 (24)-ը՝ իր հերթին հենվելով Գ. Ղորղանյանի հուշերի վրա³¹³: Ա. Հարությունյանը նկատի ուներ ավելի վաղ՝ փետրվարի 11 (24)-ին այստեղ հասած այլ զորամասերին: Երզնկայի ջոկատի ժամանումով անմիջապես հրաման արձակվեց այն վերակազմավորելու մասին:

Թուրքեստանյան 7-րդ վաշտից, Փամբի 250 հոգանոց ջոկատից, որը փետրվարի 11 (24)-ին մտել էր Էրզրում և Երզնկայի ջոկատի կամավորներից (200 զինվոր), նույն հրամանով ձևավորվեց Երզնկայի հետևակային գունդը (3 գումարտակ), որի հրամանատար նշանակվեց կապիտան Կ. Հասանփաշայանը: Թորգոմի Էրզրումյան գնդին միավորվեցին մնացած կամավորական վաշտերը՝ ձևավորելով 600-700 հոգուց բաղկացած զորաջոկատ³¹⁴:

³¹⁰ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 57-65:

³¹¹ Տե՛ս Кавказское Слово, Тифлис, 1918, 8 февраля.

³¹² Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 69:

³¹³ Տե՛ս Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 120:

³¹⁴ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 65:

Բացի դրանից Էրզրումում էին գտնվում 4-րդ Հայկական հրաձգային գնդի մեկ գումարտակ, 1 դաշտային և 1 լեռնային հրետանային մարտկոցներ և ամրոցի հրետանին³¹⁵:

Այսպիսով, Երզնկայի պաշտպանական ուժերը՝ գնդապետ Ն. Մորելի, Սեբաստացի Մուրադի և այլոց գլխավորությամբ, հաղթահարելով անասելի նյութական և բարոյական դժվարություններ ու խոչընդոտներ, ցրտաշունչ ձմռան պայմաններում, 5000 հայ գաղթականների հասցրին Էրզրում: Նրանց նահանջն այս իմաստով արդարացվում է, որովհետև նախ՝ ջոկատն էր մեկուսացված, իսպառ բացակայում էր օգնության հույսը, ուստի և մարտավարական տեսակետից, չնահանջելու դեպքում ջոկատի ջախջախումն անխուսափելի էր: Երզնկայի շուրջ ծավալվող իրադարձությունների շրջանակներում գնդապետ Ն. Մորելն իր վերադասներից չստացավ ո՛չ օգնություն և ո՛չ էլ ցուցում: Մեր կարծիքով, այդ նահանջի գլխավոր ռազմավարական բաղադրիչը անդրկովկասյան իշխանության քաղաքական որոշումն էր: Էական է, իհարկե, ռազմաճակատի քայքայման ու դրա անմիջական հետևանքը համարվող հայկական պաշտպանական ուժերի բարոյալքման ու պարտվողականության գործոնը:

Թ. Նազարբեկյանն է անգամ հավաստում, որ «զինադադարի կնքումից ի վեր Կովկասյան ռազմաճակատում տարօրինակ ու անհասկանալի իրադրություն էր ստեղծվել, որ թվում է, թե երկու կողմերին էլ պետք է որ հանգստություն պատճառեք»³¹⁶: Մի կողմից, ի դեպ՝ Թուրքիայի նախաձեռնությամբ, իսաղաղ բանակցությունների գործընթաց էր սկսվել, իսկ մյուս կողմից՝ նույն թուրքական կողմը ամբողջ ճակատի երկայնքով լայնածավալ հարձակում էր իրականացնում: Մի խոսքով, սկսվում էր Տրապիզոնի բանակցությունների տխրահռչակ գործընթացը, որի ռազմական և առավելապես քաղաքական հետևանքները Անդրկովկասյան Մեյմի կողմից ավարտվեցին Կարսի հանձնումով և երկրամասի անկախության հռչակումով:

Էրզրումի հանձնման քաղաքական որոշումը ևս վաղ էր կայացվել: Բուն գործընթացի սկիզբ կարելի է համարել երկկողմ հաշտության բանակցությունների և Թուրքիայի կողմից պատերազմական գործողությունների հրահրման հետ կապված հեռագրերի շարքը:

³¹⁵ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 65:

³¹⁶ Նույն տեղում:

Փետրվարի 6 (19)-ին Անդրկովկասյան կոմիսարիատը Վեհիբ փաշային տեղեկացնում էր Սեյմի ձևավորման և պատվիրակությունների հանդիպման ժամկետների ու վայրի ընտրության մասին: Փետրվարի 10 (23)-ին Ե. Գեգեչկորիի անունով ստացված Վեհիբ փաշայի պատասխան հեռագրերը ընդգծում էին հատկապես Անդրկովկասի կառավարության ճանաչման խնդիրը և այն, որ բանակցությունների ավարտական փուլի վայր էր ընտրված Թիֆլիսը: Ուշագրավ է, որ թուրքական պատվիրակությունը Թիֆլիս էր ժամանել փետրվարի 9 (22)-ին: Արդեն իսկ բացահայտվում է թուրքական կողմի դավադիր քաղաքականությունը. չէ՞ որ Թիֆլիս ժամանելու փոխարեն, հաջորդ օրը՝ փետրվարի 10 (23)-ին և ավելի վաղ սկսվել էին թուրքական հարձակումները: Կոմիսարիատի փետրվարի 10 (23)-ի պատասխան հեռագիրը առաջարկում էր միայն հանդիպման վայր ընտրել Տրապիզոնը, կամ այլ չեզոք տարածք. նշվում էր նաև, որ անդրկովկասյան պատվիրակությունը այնտեղ կմեկնի փետրվարի 17 (30)-ին³¹⁷ : Այնուհետև հետևում են սթափված ռուսական հրամանատարարության զուտ ռազմական, ոչ քաղաքականացված պատասխանները: Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Ե. Լեբեդինսկին փետրվարի 7 (20)-ին արդեն կշտամբում էր Վեհիբ փաշային իր առջև դրված իբր մարդասիրական խնդիրները զորքերի առաջխաղացման միջոցով լուծելու հարցում, ուստի և պահանջում էր դադարեցնել առաջխաղացումը³¹⁸:

Եվ վերջապես, փետրվարի 9 (22)-ին հետևում է Կովկասյան բանակի հրամանատար Ի. Օդիշելիձեի հեռագիրը Ե. Լեբեդինսկուն, որում փաստի առջև կանգնած գործող գեներալը խնդրում էր, որպեսզի Էրզրում ուղարկվեն ռուսական կորպուսի մի քանի գումարտակներ և փորձեն ավանգարդի դերում կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: «Առանց այդ օգնության,- պնդում էր Օդիշելիձեն,- այսինքն՝ **երբ Էրզրումը կպաշտպանեն միայն հայկական զորամասերը, Էրզրումը անխուսափելիորեն կգրավվի թուրքերի կողմից** (ընդգծումը մերն է – Վ.Մ.)³¹⁹:

Բացի այն, որ պահանջվող օգնությունը տեղ չհասավ, այս հարցում Թ. Նազարբեկյանն իր համոզմունքն էր կիսում, որ անգամ եթե այդ զորամասը հայտնվեր ճակատում, միևնույն է թուրքերը չէին կանգնեցնելու առաջխաղացումը, որովհետև

³¹⁷ Տե՛ս Դոկումենտի և մատերիալի պո վնեշնեյ փոլիտիկե Զակավկազյա և Գրուզիա, ս. 60, 62, 66.

³¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

³¹⁹ Նույն տեղում:

նպատակը կորցրած տարածքների վերադարձն էր և Անդրկովկասի ու Կովկասի մահմեդական բնակչության հետ միավորվելու գերխնդիրը, այսինքն՝ պանթուրքիզմը³²⁰:

Սեյմի կողմից փետրվարի 16 (մարտի 2)-ի նիստում ընդունած «հայրենասիրական» որոշումները հատկապես չէին անհանգստացնում թուրքերին քանի որ նրանք լավ գիտեին, թե բանակցությունների խզման պարագայում ում և ինչ ուժերի հետ իրականում գործ ունեն: Ավելին, Վեհիբ փաշան հաղորդում էր, որ զինադադարի բոլոր պայմանները պահպանելու են, բացի դեմարկացիոն գծի մասին հոդվածից: Ինչի մասին է խոսքը, եթե ստացվում է նաև Լ. Կարախանի հեռագիրը՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրման վերաբերյալ, որով Կարսը, Արդահանը և Բաթումը հանձնվում էին Թուրքիային: Այլևս Էրզրումի և մնացյալ հայկական տարածքների ի՞նչ պաշտպանության մասին կարելի էր մտածել: Այստեղ ճիշտ է այն, որ Անդրկովկասյան սեյմը բոլշևիկյան բացահայտ դավաճանական քայլը թմրկահարելով և իրացնելով հակառուսական քաղաքականությունը՝ վրաց-թաթարական մեծամասնության առաջնորդությամբ հետևողական գործողություններով ընթացավ դեպի Ռուսաստանից անջատման ու անկախացման ուղիով³²¹: Այս քաղաքականությամբ հիմնականում բացատրվում նաև Էրզրումի անկումը:

3.3. ԷՐԶՐՈՒՄԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ. ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կովկասյան բանակի գլխավոր շտաբի գնդապետ Ալ. Շնեուրը տարանջատում էր Թուրքական բանակի հարձակման չորս ուղղություններ, որոնցից առաջինն ու երկրորդը համարում էր ամենակարևորը: Առաջինն իր մեջ ներառում էր Երզնկա, Դերջան, Էրզրում, Դնե - Բոյնու, Հասան – Կալա, Քեոփրի քեոյ (Հովվի կամուրջ – Վ.Մ.), Խորասան, Զիվին, Կարաուրգան, Սարիղամիշ, Կարս, Ալեքսանդրապոլ, Անի և Սարդարապատ, իսկ երկրորդը՝ Էրզրում, Դնե-Բոյնու, Բասենի դաշտ, Օլթի, Արդահան, Ախալքալաք ուղղությունները³²²: Նպատակը Թիֆլիսի և Բաքվի գրավումն էր:

³²⁰ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 67:

³²¹ Տե՛ս հանգամանորեն Վ.Հ. Մելիքյան, Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, ԵՊՀ Հայագիտության հարցեր, Երևան, 2014, թիվ 3, էջ 105-125:

³²² Տե՛ս Ալեքսանդր Կ. Շնեուր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնո, 1967, էջ 11:

Էրզրում-Կարինի ամրոցը անառիկ էր. Այն պաշտպանվում էր 11 ամրություններով (ֆորտ), մի քանի ամրացված գոտիներով, Դևե-Բոյնու լեռնաշղթայով: Այն որպես կարևորագույն ռազմավարական ճանապարհների հանգույց հավասարը չուներ Առաջավոր Ասիայում և Մերձավոր Արևելքում:

Վարչական տեսակետից Կարնո դաշտը 1917 թ. նոյեմբերի 20-ի դրությամբ բաժանված էր հինգ տեղամաս. գյուղախմբերի. Առաջին գյուղաշրջան՝ կոմիսար Բոնդերի (ռուս), թարգման՝ Տ. Հակոբյան, երկրորդ՝ կոմիսար կապիտան Վասիլին, թարգման՝ հույն, երրորդ՝ Տորանսկի (լեհ), օգնական՝ պրապորշչիկ Ռատիչ, թարգման Ռամիս Թորսուն-օղլի, Չորրորդ՝ կոմիսարի պաշտոնակատար Ստապչենկո, թարգման չուներ, Հինգերորդ՝ պաշտոնակատարը գրագիր Զալաչևսկի, թարգման՝ Գուրբան Մեվլուտ-օղլի:

Էրզրում քաղաքը նույնպես բաժանված էր չորս թաղամասերի: Թաղամասերի կոմիսարները նշանակվել էին նախկին գործադիր կոմիտեի կողմից (ժամանակավոր կառավարության տեղական իշխանության մարմին – Վ.Ս.), հիմնականում՝ ռուս զինվորականներից: Քաղաքի կոմիսարն էր երևանցի թուրք սպա Շերիֆովը, օգնականը՝ Ուրյուտինը: Շրջանային կոմիսարն էր կադետ Վասիլևը, օգնականը՝ Սիմեոն Ֆառոշյանցը, որը 1917 թ. նոյեմբերի կեսերից գեներալ-կոմիսարիատի հեռագրով ժամանակավորապես ստանձնեց շրջանային կոմիսարի պաշտոնը:

Կարինի քաղաքային ինքնավարության վարչությունը հետևյալ պատկերն ուներ. 1916 թ. Էրզրումի գրավումից հետո քաղաքի պարետ է նշանակվում խան Յամուտսկին, որի կարգադրությամբ քաղաքում մնացած թուրք պաշտոնյաներից ձևավորվում է «քաղաքային ինքնավարության» կազմը: Տեղի հայ ազգաբնակչությունն իր իրավունքները փորձում էր արտահայտել երեք՝ Կարնեցիների (150 հոգի), Քղեցիների և Խարբերդցիների հայրենակցական միությունների միջոցով³²³:

1916 թ. փետրվարի փառահեղ իրադարձություններից ու քաղաք – ամրոցի գրավումից անցել էր երկու տարի, նաև Էրզրումն էր ապրել ռուսաստանյան 1917 թ. երկու հեղաշրջումների ցնցումները և փոփոխությունները: Ռազմաճակատի ընդհանուր իրավիճակի բոլոր վայրիվերումները կազմալուծել էին Էրզրումի պաշտպանության գործը: Հրանոթները ծածկված էին ձյան շերտով, մեխանիզմները սառած էին կամ

³²³ Տե՛ս Ազատամարտ, 1917, 25 նոյեմբերի, թիվ 45:

Ժանգոտած, դեպի ամրոցները տանող և նրանց իրար կապող խրամատներն ու անցուղիները ավերված էին, բացակայում էին հրանոթների հաշվարկները, արկերի պաշարները, որոնց մի մասը վաղուց դասավորված էին ըստ ֆորտերի, և ամենակարևորը՝ բացակայում էր դիմադրական ոգին և կամքը: «Կեանքը դադրած է Կարնոյ մեջ և շրջանները: Ջինադադարի և հաշույն ռուսական զինուորները կը թողուն ֆրոնտը: Քղիի ճակատեն ետ եկող զինուորները այնտեղ թողուցին մօտ 400 գաղթականներ: Անապահով դրուժին է»³²⁴:

1917 թ. Դեկտեմբերից նահանջելով ռուսական զորքերը պահեստներում, խրամատներում, բերդերում թողեցին անսահման քանակությամբ զենք, զինամթերք, պարեն, հանդերձանք: Խուճապահար հեռանալիս, ռուս զինվորները բացի անձնական պիտույքներից իրենց հետ պետական պահեստներից ոչինչ չէին վերցնում, ամեն ինչ ձգում էին երեսն ի վար: Հեռանալով, ռուսները թողեցին 3000 թնդանոթ, 3000 գնդացիր, մեկ միլիարդ փամփուշտ, մոտ մեկ միլիոն ռումբ և շրապնեյ, 100 000 հրացան, 100 000 զինվորի համար հագուստ, անհամար թվով կոշիկներ, 15-17 հազար ձի, փոխադրության անհաշիվ միջոցներ, այդ թվում՝ ավտոմոբիլներ և դրանց գործածության մասեր ու նյութեր՝ բենզին, քսայուղեր, դողեր և այլն: Միայն թողած պարենամթերքը բավական էր 100 000 զինվոր մեկ տարի կերակրելու համար: Շաքարի հակերը բլուրների նման դիզված էին Երզնկայի հյուսիսային մասում, սբ. Գրիգոր լեռան ստորոտում գտնվող հսկա գորանոցների մեջ: Անհաշիվ էր մսի պահածոներով լի արկղերի թիվը:

Էրզրումում տիրող իրավիճակն է արտացոլում նաև Հայկական 1-ին հրաձգային գնդի ուղերձը՝ ուղղված «գնդի պատգամավորներին ու հայ ժողովրդին»: Փաստաթուղթը, որը աչքի է ընկնում անկեղծությամբ հեղինակել էին և ստորագրել գնդի հրամանատար, փոխգնդապետ Ղարաբյոզյանը³²⁵, համհարզ, պորոչիկ Մուրադյանը, գնդի կոմիսար պրապորշչիկ Երամյանը և զինվորական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Տեր-Գրիգորյանը³²⁶:

Այստեղ արձանագրվում էին հետևյալ հիմնահարցերը.

1. գնդի աստիճանական փոշիացում.

ա) հարաճուն և անպատիժ դասավորություն – 60%

³²⁴ Հայաստան, 1917, 9 դեկտեմբերի, թիվ 172:

³²⁵ Սպանվել է 1918 թ. նոյեմբերին Շուլավեր-Սանահին հատվածում – ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 16, թ. 13:

³²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 1:

2. Ոգու անկում.

ա) թիկունքի ամեն կարգի պաշտպանության բացակայություն,

բ) թիկունքի քայքայիչ ազդեցություն,

գ) թալան ու դիակապտություն

դ) արձակուրդից չվերադարձող զինվորներ,

3. Էրզրումի երկաթուղու լիակատար փլուզում.

4. Շփոթվածություն Էրզրումում.

ա) գորամասերի բացակայություն

բ) կոմպետենտ իշխանության բացակայություն,

5. Գնդերի հետ թիկունք են նահանջում նաև հայ սպաները ու զինվորները,

6. Կոմիսար Դրոյի կողմից խոստացված համալրման բացակայություն,

7. Գունդը ի վիճակի չէ այլևս առաջ շարժվել, քանի որ գումարտակներում մնացել են 20-25 զինվոր,

8. Գնդի պահպանման անհրաժեշտությունը,

9. Նոր հայկական գնդերի դեպի Էրզրում տեղափոխում,

10. Էրզրումի երկաթուղու վերանորոգում,

11. Դաժան պայքար դասալքության դեմ,

12. Թաքնված արևմտահայերի հայտնաբերում,

13. «Ստեղծված իրավիճակը և երկրի պաշտպանության բացառիկ դրությունը թելադրում է Ժամանակավոր իշխանության փոխանցումը զինվորական կոմիտեների հրամանատարների միանձնյա ղեկավարմանը՝ անսահմանափակ լիազորություններով»³²⁷:

Բոլշևիկյան հեղաշրջման նախաշեմին, հոկտեմբերի 22-ին Կարինում տեղի ունեցավ Հայ զինվորների միության ընդհանուր ժողովը: Վարչության անդամներ ընտրվեցին բժիշկ Ռուբեն Միքայելյանը (Քրիստափոր Միքայելյանի որդին), Տիգրան Աղամալյանը, Մակեդոն Միրզախանյանը, Ս. Ֆառոշյանցը, Լևոն Մղիվանյանը, Տիգրան Օհանյանը և ուրիշներ³²⁸:

Կարինի շուրջ ստեղծված իրավիճակին և մասնավորապես գաղթականության հետ կապված հիմնախնդիրների քննարկմանն էր նվիրված տեղի գաղթականական կոմիտեի

³²⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 1:

³²⁸ Տե՛ս Ազատամարտ, 1917, 10 նոյեմբերի, թիվ 31:

8-ամսյա գործունեության հաշվեհտու ժողովը: Այն հրավիրվել էր սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ակումբի շենքում նոյեմբերի 19-ին: Վերջում ընտրվեց վերստուգիչ հանձնաժողով՝ գերապատիվ Կարապետ վրդ. Երկանյանի, Ա. Միրզոյանի, Հ. Հայրունու, Փ. Գարագաշյանի և Ն. Մսրյանի անդամակցությամբ³²⁹:

Էրզրումի պաշտպանության գլխավոր հայկական զինվորական միավորման՝ 1-ին Հայկական հրաձգային գնդի վերջնական տեղակայման մասին հայտնի է հետևյալը: 1918 թ. հունվարի 3-ով թվագրված գեներալ Ի. Օղիշեղիձեի զեկուցագրի հիման վրա, ՀԱԽ-ը հունվարի 12-ին Հատուկ կոմիտեին, ռազմաճակատի գլխավոր հրամանատարին և Հ. Զավրիյանին տեղեկացնում էր, որ դեկտեմբերի 30-ին վերջապես Էրզրում է ժամանել Հայկական առաջին հրաձգային գունդը³³⁰: Այս կապակցությամբ մեկ անգամ ևս ընդգծենք այն կարևոր հանգամանքը, որ Ի. Օղիշեղիձեի կողմից համապատասխան կարգադրությունը արձակվել էր դեռ 1917 թ. նոյեմբերի 24-ին: Փաստորեն 1917 թ. նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 30-ը, այսինքն՝ պատերազմական իրավիճակում միայն 36 օր հետո զորակազմը տեղ հասավ:

Ավելին՝ գունդը 1000 հոգի կազմով դուրս գալով Քանաքեռից, Էրզրում մտավ 521 հոգով, որից 300-ը՝ սվին-զինվորներով: Անիշխանությունն ու հուսալքությունը հասել էր այն աստիճանի, որ գլխավոր հրամանատարի կարգադրությունն՝ անհապաղ Երզնկա մտնելու վերաբերյալ զինվորների կողմից վճռականորեն մերժվեց: Զինվորները դա հիմնավորում էին նախ՝ զորակազմի թուլությամբ, ապա և իրենց տրված կովկասյան հրամանատարության այն հայտնի խոստումով, ըստ որի իրենք պետք է տեղակայվեին Էրզրումում և այնտեղից այլևս առաջ չչարժվեցին: Ըստ Ի. Օղիշեղիձեի, պարզվում է, որ այդ հրամանը նրանք Երևանում ստացել են կոմիսար Դրոյից, որը զինվորներին հավաստիացրել էր նաև, որ Էրզրումում իրենց արդեն սպասում են 3000 զինվորներ՝ գնդի հետ միաձուլվելու նպատակով³³¹:

«Այսպիսով,- վկայում էր Ի. Օղիշեղիձեի,- առանց իմ գիտության տրված կոմիսարի խոստման պատճառով, առանձն հաշվի առնելու իմ պլանները և իրական վիճակը, հատկապես այն, որ ոչ մի 3000 զինյալ չկա Էրզրումում, հանգեցրին նրան, որ 1-ին Հայկական հրաձգային գունդը վստահ է այժմ, որ իրեն խաբել են: Ստեղծված

³²⁹ Տե՛ս Ազատամարտ, 1917, 10 նոյեմբերի, թիվ 31:

³³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թթ. 147-148:

³³¹ Տե՛ս նույն տեղում:

իրավիճակում ենթադրում եմ Երզնկայի անկումը, իրականացնում եմ անհապաղ միջոցներ Էրզրումում հայկական գորաջոկատներ ձևավորելու ուղղությամբ»³³²: Ըստ այդմ, Անդրանիկի Հատուկ հավաքական ջոկատի Ն. Մորելի գլխավորած Էրզրումի Առաջին Հատուկ բրիգադի կազմը հետևյալն էր. 1. Էրզրումի հետևակային գունդ – հրամ. գնդապետ Թորգոմ Արսենյան, 2. Երզնկայի հետևակային գունդ – կապիտան Կարապետ Հասան-Փաշայան, 3. Էրզրումի պահեստային առանձին գումարտակ, 1-ին հեծյալ հատուկ գունդ – գորային ավագ Զոլոտարյով, 4. 1-ին հայկական հատուկ լեռնահրետանային դիվիզիոն – փոխգնդապետ Վլադիմիրով, 5. 1-ին Հայկական հատուկ հրացանա – գնդացրային պարկ-շտաբային կապիտան Ահարոնյան³³³:

Փետրվարի 12 (25)-ին թուրքական առաջապահ ուժերը՝ Կովկասյան 36-րդ դիվիզիայի 2 գնդերը և քրդերը մոտեցան Էրզրումին: Հայերը ետ քաշվեցին Իլիջա³³⁴:

Մինչ Էրզրումում ծավալվող ռազմական գործողությունների նկարագրմանն անցնելը հարկ ենք համարում ներկայացնել քաղաքում տիրող հասարակական-քաղաքական իրավիճակը հայկական կազմակերպությունների և առանձին գործիչների շուրջ զարգացող մոտեցումներն ու տրամադրությունները:

Թուրքական արշավանքի պահին Էրզրումում ապրում էր 25.000 հայ ազգաբնակչություն, հիմնականում ծերեր, կանայք, երեխաներ, անկազմակերպ տղամարդիկ: Միաժամանակ թուրքերն ունեին 25.000 տղամարդ, որոնց զգալի մասը հասցրել էր զինվել և պատրաստվել խռովության:

Ստեղծված պայմաններում քաղաքում գործող հայկական կազմակերպությունները և գործիչները փոխանակ պահանջվող և անվիճարկելի համախմբվածության ուղղությամբ աշխատանքներ կազմակերպելուն, հակառակը՝ յուրաքանչյուրն իր հերթին իշխանության դեր կատարելու հավակնություններ էին ցուցաբերում:

Այս առումով այս արատավոր երևույթը թերևս առաջինը փորձել է վեր հանել 1920 թ. Կ. Պոլսում հրապարակված «Զորավար Անդրանիկ և իր պատերազմները» հուշագրությունը: Անդրանիկի զինակից երկու հեղինակները՝ Լևոն Թութունջյանն ու Վահան Թոթովենցը հանդես են եկել մի գրական անվամբ՝ Արսեն Մարմարյան: Հավելենք, որ այդ նյութը «Արարատի» մատենաշարը՝ «Ազգային հերոս Զոր. Անդրանիկ»

³³² ՀԱՍ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թթ. 147-148:

³³³ Նույն տեղում:

³³⁴ Տե՛ս Վ. Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 33-34:

վերտառությամբ հրատարակել էր Բեյրութում 1959 թ.³³⁵: «Կարնո մէջ գոյություն ունեին զանազան և զարմանազան իշխանություններ, գունդեր, աշիրեթներ, միահեծանություններ», - գրում էր հեղինակը: Դրանց շարքում էին ՀԶՄ-ի տեղական մասնաճյուղը՝ Ս. Աղամալյանի գլխավորությամբ: Նա միաժամանակ վարում էր նաև Կարնո շրջանի կառավարչի, կոմիսարի, մթերանոցների ընդհանուր կառավարչի, Ազգային խորհրդի Կարնո մասնաճյուղի նախագահի պաշտոնները: Գործում էին նաև Մոսկվայի հայկական կոմիտեի լիազորը, Ազգային խորհուրդը, Հայաստանի Ապահովության խորհուրդը, Օդիշելիձեի շտաբը, Թորգոմը, Սեբաստացի Մուրադը Քղիի, Երզնկայի, Բաբերդի գնդերը՝ համապատասխանաբար իրենց ղեկավարներով: «Այս բոլորը իրարու հետ վեճի և պայքարի մեջ, - ավելացնում էր Ա. Մարմարյանը, - ամեն մեկը մյուսի համար ոչ սիրելի»³³⁶: Չմոռանանք նաև կուսակցությունների մասնաճյուղերը, Կոմիսարիատի ապա և Սեյմի հեռակա դերակատարությունը, մամուլի խայտաբղետ և հաճախ իրարամերժ կարծիքները:

Անմխիթար վիճակում էին գտնվում Կարնո բերդերն ու ամրությունները: Այդ գործի կազմակերպիչ էր նշանակվել գնդապետ Ա. Ջանփոլադյանը, որն անգամ Անդրանիկի ժամանումից հետո էլ տաս օրվա ընթացքում փաստորեն ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց բերդերի 700 թնդանոթների պատրաստման ուղղությամբ և չկատարեց բանակի ընդհանուր հրամանատարության համապատասխան հրահանգները:

Նա երկու անգամ, նույնիսկ պաշտոնանկ արվելուց հետո, անպտուղ երդում տվեց Անդրանիկին, մասնավորապես, սբ. Նշանի բերդը պաշտպանելու հարցում:

Առավել տագնապալի էր մթերանոցների վիճակը: Մոսկվայի հայկական կոմիտեի լիազոր Սողոմոնյանը Անդրանիկին զեկուցում էր, որ քաղաքում մնացել է ութ օրվա պաշար, բայց գորավարի սպառնալիքներից հետո խոստովանում էր, որ առկա է վեց ամսվա պաշար: Վ. Թոթովենցը վկայում էր, որ «Ի միջի այլոց ըսեմ, որ Անդրանիկ Կարին գալեն հետո երեք օր տակավին կկերակրվեր Թիֆլիսեն մեզի հետ բերված ձիթապտուղով: Քանի անգամ դիմում ըրինք պարեն ստանալու համար, բայց մերժում ստացանք»³³⁷: Անդրանիկը պարզում է նաև, որ Ս. Աղամալյանը ՀԶՄ անդամ Թորոսյանին բաց է թողել 400 փուր շաքար, որն անձամբ Հ. Ջավրիյանի ներկայությամբ

³³⁵ Տե՛ս Ազգային հերոս Զօր. Անդրանիկ, Պեյրութ, 1959:

³³⁶ Տե՛ս Արսեն Մարմարյան, Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 333-334, նաև՝ Վերածնված Հայաստան, թիվ 6, Երևան, 1989, էջ 57:

³³⁷ Ա. Մարմարյան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 8, 1989, էջ 59:

գորավարը դուրս բերեց միջնաբերդից: Թորոսյանը փորձում էր հիմնավորել, որ այդ քանակությունն անհրաժեշտ է իր «անձնական գնդի» 25 զինվորներին և հասկանալի է, որ ստանում է գորավարի կշտամբանքը: Քննությունից պարզ է դառնում նաև, որ Կարինից-Սարիղամիշ պարբերաբար կառքերով շաքար և այլուր էր տեղափոխվում: Զավեշտի գագաթնակետն այն էր, որ Անդրանիկին տեղեկացնում են, թե «եկեղեցու ապրանքը աճուրդի է հանվել և վաճառվում է թուրքերին»³³⁸:

Էրզրումի իրադարձությունների համատեքստում թերևս ամենահակասական կերպարը Թորգոմն է (Արսեն Թորգոմ - Արշակ Երվանդյան):

Նրա «արատավոր» կերպարի ձևավորման գործին մեծապես նպաստել է Վահան Փափագյանը: Կ. Պոլսում ֆրանսերեն թերթի խմբագիր եղած ժամանակ Թորգոմը բանավեճի ապա և մենամարտի մեջ է մտնում հակահայկական հատվածի հեղինակ Պիեռ Լոթիի հետ, Առաջին աշխարհամարտի ժամանակ Օլթի-Ջնիկի շրջանում հաղթական կռիվներ է մղում թուրքերի դեմ և Ի. Օդիշելիձեի կողմից ի վերջո նշանակվում է Էրզրումի շրջանի հրամանատար: «Վառվռուն, 40 անց, բարձրահասակ, գանգուր մազերով և փոքր մորուքով, համակրելի արտաքինով մարդ մը,- գրում է Վ. Փափագյանը: Իր խոսքերն ալ հրմշակելով՝ բերանէն կը թմբկահարէին դիմացինը. մոլեռանդ էր: Մեծ ծրագիրներով, վատ երեւակայութիւններով լեցուն՝ կը խօսէր անդադար, կը պարզէր իր ծրագիրները: Զինուորական գնդապետի փայլուն համազգեստի մէջ կը խայտար, բայց ուսադիրները նոր օրինակ էին, ոսկեզօծ երիզներով ոսկիէ և հայատառ ոսկեայ երկու գիրերով – ինչ էր չհասկցայ: Բացատրեց որ եկած է Թիֆլիզ իր «առանձին ծրագիրները պարզելու հրամանատարներուն»: Թուրքահայաստանը անկախ պիտի ըլլայ» կ'սէր մոլեռանդորեն: Էրզրումի մեջ միտք ունի անկախութիւն հայտարարելու շատ մեծաշուք զօրահանդէսի մը մէջ...: Եւ այդ մեծաշուք և յիշատակելի օրուան համար «արդէն իսկ պատրաստել տուած է յիշատակի շքադրամներ, շքանշաններ և կնիք: Հատ մը անոնցմէ հանեց դարակէն, ոսկեզօծ շքադրամ մըն էր՝ Արարատներով զարդարուն հատ մը արդէն ամբացուած էր իր կողքին: Տուցուց նաեւ կնիքի նմուշ մը որուն վրայ չեմ յիշէր ի՞նչ խորհրդանիշ պատկեր մը դրած էր եւ շուրջը գրուած «Հայկական զինուորական կառավարութիւն»³³⁹:

³³⁸ Ա. Մարմարյան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 8, 1989, էջ 59:

³³⁹ Վահան Փափագեան, Իմ յուշերը, Հատոր երկրորդ, Պէյրուք, 1952, էջ 462:

Եվ իրոք, 1918 թ. հունվարի 30-ին Կարինում հռչակվեց հայկական պետականության վերականգնումը՝ Էրզրում մայրաքաղաքով: Ռուսական հրամանատարությունը այդ փաստը չընդունեց ³⁴⁰: Թորգոմի այդ քայլի մասին հեզմանքով է արտահայտվել Սեպուհը. «Տեսայ, որ դրոշակ եւ կնիք շինելու հիւանդութենին բռնուած էր. Զիս զարմացուց մանաւանդ անոր մեծամտութիւնը: Գնդապետ Թորգոմ կիսաբաժնի (բրիգադ) կնիք կը պատրաստէր, մինչ ինքը պիտի հրամայէր գունդի մը»³⁴¹:

Թորգոմի «անհնազանդության» հարցը քննարկվում էր դեռ 1917 թ. նոյեմբերի 24-ին: Այդ է վկայում Սեպուհը, որն այդ օրը հասնում է Կարին և Տ. Աղամալյանի բնակարանում մասնակցում է ժողովի. ներկա էին Ռ. Տեր-Ղևոնդյանը, Մակեդոնը, Սեդրակ վարժապետը, Արմենակ Միրոյանը, Տիգրան Դեմյանը: Քանի որ այդ պահին Էրզրումում տեղակայված հայկական 1-ին գնդի հրամանատարը գնդապետ Կարաքեշիջյանն էր, ուստի և ստեղծվում էր հակասություն: Ռազմական օրենքներով և ժամանակագրական կարգով ով շուտ էր աստիճան ստացել, նա էլ իրավունք ուներ կարգադրել: Առաջինը Կարաքեշիջյանն էր, Թորգոմը չէր ենթարկվում, նշելով, որ Հայոց Ազգային խորհուրդն իրեն էր նշանակել Կարնո հրամանատար, ավելին, դրանով էր հիմնավորում իր կողմից կնիքների պատրաստումը³⁴²:

Ի վերջո Թորգոմը կարողացավ հաշտվել Կարաքեշիջյանի հետ: Ինչ վերաբերում է Էրզրումում անկախ պետականության հռչակմանը, ապա Սեպուհն այն որակում էր արկածախնդրություն ³⁴³: Վ. Փափազյանն այդ վարքագիծը չէր մեկնաբանում, բավարարվելով Թորգոմի տաքարյուն բնավորությամբ: Բոլորովին այլ է Վ. Թոթովենցի վերաբերմունքը Թորգոմի հանդեպ, երբ նա արդեն Անդրանիկի կողքին մասնակցում է Կարինի պաշտպանությանը³⁴⁴:

Գեներալ Ի. Օդիշելիձեի դեմ պայքարում Թորգոմին ցավոք մերժում է նաև տեղի ՀԶՄ-ը, հասկանալի է, ընդհարում է սկսվում Թորգոմի ու այդ հաստատության գործիչների միջև: Թորգոմին է միանում Հայաստանի Ապահովության խորհրդի Կարնո մասնաճյուղը: Թորգոմը հանդգնում է սպառնալ Ի. Օդիշելիձեի կյանքին, վերջինս էլ՝ իր

³⁴⁰ Տե՛ս Չարրզ Ղ., Հուշամատեն Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957:

³⁴¹ Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, Պոսթրն, 1925:

³⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 361:

³⁴³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 365:

³⁴⁴ Տե՛ս Ա. Մարմարյան, նշվ. աշխ., էջ 51:

հերթին՝ հանձնել Թորգոմին ռազմական տրիբունալին: Բայց այդ ընթացքում գեներալը հասցնում է փախչել Կարինից, իր հետ տանելով 5 միլիոն ռուբլի: Թորգոմը կրկին դիմում է ՀԶՄ-ը՝ Դևե-Բոյնուի վրա կանգնեցնելու Ի. Օդիշելիձեին և հափշտակված գումարը վերադարձնելու նպատակով: Զինվորական միության անդամները այդ մասին տեղեկացնում են գեներալին և երկուսի միջև կայանում է բաց ընդհարում, որի հետևանքով Ի. Օդիշելիձեն Թորգոմին հանձնում է զինվորական տրիբունալին ու հեռացնում Սարիղամիշ, որտեղից էլ նա անցնում է Թիֆլիս: «Համոզված էի, որ խոստացած արտաքին օգնությունը պիտի չգար,- հիշում էր Թորգոմը,- Կովկասահայ զորքեն անկարելի կըլլար օգտվիլ: Հարկ էր ուրեմն մեր ունեցած անփորձ և անվարժ զինվորներով պաշտպանել բերդաքաղաքը և ազատիլ դավաճաններեն: Այս ուժերը հուսալքված էին անդադար դրսեն գալիք օգնական ուժերու սպասելով: Պետք էր մանավանդ ազատեինք մեր հայրենիքը Անդրկովկասի դավաճան Սեյմին իշխանութենեն: Ես հուսահատորեն կհամբերեի այն օրը, ուր Էրզրում կրնար իյնալ. Նախքան այդ անկումը փորձեցի անկախութիւն հայտարարել, Սերպի և Պելճիքայի (Սերբիա, Բելգիա – Վ.Մ.) նման իրավունք ունենալու համար իբրև տարգիր պետություն գործելու»³⁴⁵:

Կարինում անկախ հայկական իշխանության հաստատման հարցում Թորգոմն արժանանում է թե՛ Անդրանիկի և թե՛ Հ. Զավրիյանի կշտամբանքին: Հ. Զավրիյանին նա բացատրում էր, որ դա արել է առհասարակ ճակատի տրամադրությունը բարձրացնելու, ինչպես նաև Ի. Օդիշելիձեի դեմ պայքարելու նպատակով:

Մեր կարծիքով, ավելի համոզիչ էր երկրորդ փաստարկը, որին սակայն Հ. Զավրիյանը զայրույթով ընդիմանում է դուրս գալով հունից պատասխանում, թե «Ես իբրև Հայաստանի քոմիսար (նկատի ունի Արևմտյան Հայաստանի գեներալ կոմիսարության պաշտոնը – Վ.Մ.) միայն իրաւունք ունեի անկախութիւն յայտարարելու և ուրիշ ոչ ոք»³⁴⁶:

Ազատագրական շարժման գործիչ հնչակյան Սեբաստացի Վահագնի (Գրիգոր Նալբանդյան) կյանքին ու գործունեությանը նվիրված Եղիկ Ճերեճյանի

³⁴⁵ Ռաֆայել Թադևոսյան, Դրվագներ Հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, Երեվան, 2012, էջ 339:

³⁴⁶ Ազգային հերոս Զոր. Անդրանիկ, էջ 52-53:

աշխատասիրությունից պարզ է դառնում, որ Ս. Վահագնը էական դերակատարություն է ունեցել նաև Էրզրումի իրադարձություններում³⁴⁷:

1918 թ. հունվարի 30-ին Սեբաստացի Վահագնը անակնկալ կերպով ներկա է գտնվում Թորգոմի նախաձեռնությանը և հանդիմանում է նրան. «դու ի՞նչ իրաւունք ունիս ինքնագլուխ, մանաւանդ այս անորոշութեան մէջ, քեզ ո՞վ է իրաւունք տալիս: Ճակատներից ամէն օր աղաչանքներ են հասնում: Դու այստեղ վրացի հայահալած, թուրքի լրտես ժեներալին (նկատի ունի Օդիշելիձէին – Վ.Ս.) համաձայնութեամբ նման յիմարութիւններ ևս սարքում քո փառասիրութեան համար»³⁴⁸: Միաժամանակ, նա դեմ էր Թորգոմի ձերբակալմանը. «նախ ես դեմ եմ նրա համար, որ Թորգոմ ունի իր մօտ մնայուն 40-50 զինուած տղաներ: Եթէ դուք փորձէք այդպիսի մի բան անելու, նա էլ իր տղաներուն պիտի հրամայէ. ահա ձեղի երկու կողմից տուրուդմբոց: Մեր այս տուրուդմբոցից պիտի օգտուեն տեղացի թուրքերը, եւ մեզ ոչ թէ զենքերով այլ թուքով պիտի խեղդեն»³⁴⁹:

Նա հիշեցնում էր նաև, որ գնդապետ Թորգոմն ուղղակիորեն ենթարկվում է գեներալ Օդիշելիձէին, ապա և Արևմտահայ դիվիզիայի հրամանատար Անդրանիկին, ուստի և որոշումը տեղում չի կարող կայացվել:

Այդուհանդերձ, Կարնո շՅԴ կոմիտեն Թիֆլիսի առաջ պահանջ դրեց, որպեսզի «ինչ գնով լինի Թորգոմին հեռացնեն Կարինից, թուրքերի գրգռութիւնը հանդարտեցնելու համար»³⁵⁰:

Վստահաբար կարող ենք նշել, որ մի հարցում Ս. Վահագնը ինքն է սխալվում, երբ մեղադրում է Թորգոմին գեներալ Օդիշելիձէի հետ ունեցած համաձայնության ու գործարքի մէջ: Առկա բոլոր փաստերը վկայում են այդ երկու գործիչների ոչ թէ հակասությունների, այլ բացահայտ թշնամանքի մասին:

Մեր կարծիքով Էրզրումում անկախ հայկական պետականություն հռչակելով, Թորգոմը որպես արևմտահայ ազգային - ազատագրական շարժման գործիչ և Անդրանիկի զինակից, իր խորին համոզմամբ իրականացնում էր Արևմտահայ խորհրդակցությունների որոշումները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արևմտահայերի ազգային խորհուրդն ու Թիֆլիսի կենտրոնական Արևելահայ կամ

³⁴⁷ Տե՛ս Եղիկ Ճերեճեան, Ս. Վահագն (Գրիգոր Նալպանտեան), Պէյրոթ, 2017:

³⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

³⁴⁹ Նույն տեղում:

³⁵⁰ Նույն տեղում, էջ 138:

Հայոց ազգային խորհուրդը ոչ միայն չէին համագործակցում, այլև հաճախ սուր հակասությունների մեջ էին հայտնվում, կարելի է եզրակացնել, որ Թորգոմի միանձնյա որոշումը բխում էր արևմտահայ որոշ գործիչների շրջանակի տրամադրություններից և տվյալ դեպքում արվում էր ի հակակշիռ Արևելահայ ազգային խորհրդի վարքագծի: Թորգոմի որոշման որպես քաղաքական հիմք ու երաշխիք պետք է, իհարկե, ընդունել նաև «Թուրքահայաստանի մասին» բոլշևիկյան հրովարտակը, այն, իհարկե, Անդրանիկի միջոցով մեծապես ոգևորել էր նաև Թորգոմի կերտվածքն ունեցող ազգային գործչին: Թորգոմի մեկնաբանմամբ էական դեր էր խաղացել նաև գեներալ Ի. Օդիշելիձեի բացահայտ դավաճանական վարքագիծը և նրա հետ խմբապետի առճակատումը: Հասկանալի է, որ կանոնադրական տեսակետից Թորգոմը խախտել էր բոլոր գործող օրենքները, առհամարելով, թե Հայոց Ազգային խորհուրդը և թե Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության վարչակարգը, ավելին, նա դեմ էր գնում նաև ՀՅԴ հիմնական քաղաքական գծին:

Առավել բացասական են Ս. Աղամալյանի մասին եղած գնահատականները: Դրանք հնչում էին թե Անդրանիկի թևի գործիչների և թե մյուսների կողմից: «Կարնոյ զինուորական պետ պրն. Տիգրան Աղամալեան անճարակ դաշնակցական ուսուցիչ մըն էր,- նշում էր Արսեն Ժամկոչյանը: Ուսուցիչ մը կարնոյ պէս ռազմական քաղաքի մը զինուորական պետն էր Աղամալեան կրցած էր ոչ զիւորները դասաւորել եւ ոչ ալ թնդանօթներուն հօգ տանիլ: Թոյլ եւ մեղկ կէանք մը ապրած էր իր խմբակին հետ: Թրքական դաւադրութիւնները օրէ օր կուժեղանային: Թուրքական լրտեսները թրքական բանակին հետ յարաբերութեան մէջ էին: Աղամալեան եւ իր օգնականները Ֆառոշեանց և Թորոսեան Կարնոյ արհեստանոցները բանալով շաքար, իւղ, ալիւր, հրացան կառքերու մէջ լեցնելով Կովկաս կը փոխադրէին գորգերու հետ եւ թղթէ դրամները ոսկիի կը վերածէին: Թրքահայ գաղթականը եւ զինուորը թուրք բռնուած լրտեսները կը բերէին եւ զինուորական այս ներկայացուցիչներուն կը յանձնէին ասոնք կաշառքներու կամ ցոփ հեշտանքի մը փոխարէն ազատ կ'արձակէին: Կարինը վտանգի տակ էր»³⁵¹:

Նույնը վկայում էր և Արամ Ամիրխանյանը. «Տիգրան Աղամալեանի համար կը խօսվէր որ 75 արկղ մօսին հրացան, 60.000 փամփուշտով ծախած էր թուրքերուն: Անոնք պաշտօնի կանչուած օրերէն մինչեւ իրենց փախուստը Հայրենիքի ու ազգին ծառայելէն

³⁵¹ Արսեն Ժամկոչեան, Զօրավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 87:

աւելի հետեւած են իրենց վաւաշոտ կիրքերուն և հաճոյքներուն: Քանի մը մանկամարդ հարսներ և օրիորդներ, ի գին պատառ մը հացի և ձեռք մը հագուստի, հանել տուած են զանոնք պարկեշտութեան սահմանին»³⁵²: Տ. Աղամայանի և այլոց «ճճադավ շարժումը» հունից հանել էր նաև Կարին մտած Սեբաստացի Մուրադին: «Դուք հրէշներ էք, ու մարդ կոչուելու արժանիք չունիք,- զայրանում էր Մուրադը: Ըսի ինչ (դիմում է Տ. Աղամայանին – Վ.Մ.), ի՞նչ ըրիք մինչեւ այսօր, ո՞ւր է ձեր կազմակերպութիւնը, ո՞ւր է զինուորը, ո՞ւր են աֆիցերները: Այ՞ս խելքով Կարինը պիտի պահէք: Թքնեմ ձեր հայրենասիրութիւնը երանի թէ ամչնալու երես ունենայիք»³⁵³:

Այժմ կանգ առնենք Անդրանիկի գործունէության վրա. Նա Կարինում ու նրա շուրջ ծավալվող իրադարձությունների ավարտական, վճռական փուլի գլխավոր դերակատարն է: Այդ գործունէությունն իր հերթին կարելի է բաժանել երկու փուլի. ա) Թիֆլիսից մինչև Կարին նրա ծավալած կազմակերպական նախապատրաստական փուլ, և բ) բուն Կարինում իրականացրած միջոցառումների ու դիմադրության փուլ:

Առաջին փուլը հիմնականում բնորոշում է նրա անձի և քաղաքական կերպարի շուրջ ձևավորվող մթնոլորտը, որը 1917 թ. մայիսից, Արևմտահայերի առաջին համագումարից հետո սկզբնավորված ու արմատավորված արևելահայ – արևմտահայ հակասությամբ էր արտահայտվում: Արևմտահայ գործիչ Վահան Փափագյանը անթաքույց ասելությամբ էր խոսում Անդրանիկի համախոհների՝ Խ. Բոնապարտյանի, Վ. Թոթովենցի ու Լևոն Թութունջյանի մասին: Նա գտնում էր, որ Անդրանիկի «թերությունները» «գռեհկօրեն և բովանդակ ծավալով շահագործեցին քանի մը մարդիկ, որոնք աններելի միտումներով, թոյն հոսեցողին Անդրանիկի այնքան մաքուր մնացած արեան մէջ»³⁵⁴ : Մենք այս խնդրին բազմիցս ենք անդրադարձել մեր աշխատություններում և համոզված ենք, որ Դաշնակցություն կուսակցության մի շարք ղեկավար գործիչների և Անդրանիկի միջև ձևավորվող հարաբերությունները չի կարելի մեկնաբանել զուտ անձնական ու մարդկային որակների արտահայտմամբ, հակասություններն առավելապես քաղաքական են, այն էլ բոլշևիկյան հեղաշրջումից հետո: Մի կողմից, օրինակ, զորակոչի հաջողությունը վերագրելով միայն Անդրանիկին, նրա «հմայքին ու ժողովրդականությանը», մյուս կողմից Վ. Փափագյանը, նաև Կ.

³⁵² Ա. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 130:

³⁵³ Նույն տեղում, էջ 130-131:

³⁵⁴ Տե՛ս Վ. Փափագեան, նշվ. աշխ., էջ 456, Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 160:

Մասունին եզրակացնում էին միանգամից, որ «ափսոս որ չկրցավ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը: Ու փոխանակ համեստօրէն աշակերտելու զինվորական արուեստին, ու օգտագործելու իր այդքան թանկագին ժողովրդականութիւնը՝ արհամարհեց ամէնը...»³⁵⁵: Այստեղ առկա է անբացատրելի մի հակասություն. ոչ միայն Կարինի, այլև ողջ ռազմաճակատի պաշտպանության գործը վստահելով մի գործչի՝ Անդրանիկին, Վ. Փափագյանն ու իր համախոհները և հիմնականում Հայոց ազգային խորհուրդը համազգային բախտորոշ խնդրի լուծումը կապում էին այդ մեկ անձի հետ, ինչն ինքնին արդեն ազգային ողբերգության և անճարակության յուրահաստուկ դրսևորում էր:

«Անդրանիկ Էրզրում մտնելէ յետոյ պիտի չափեր նաեւ երբեմն իրենը եղող, իսկ այժմ իրեն դէմ կանգնած կուսակցութեան (Դաշնակցության – Վ.Մ.) միջեւ բացուած խրամատին տուած արդիւնքները», - արձանագրում էր Հ.Յ.Դ.-ին ընդդիմադիր Սահմանադիր Ռեակավար կուսակցության ղեկավարներից Ա. Դարբինյանը³⁵⁶:

Այս իրադարձությունների վերաբերյալ մեր բազմաթիվ գործիչների հուշագրություններում գրեթե չենք հանդիպել քննադատություն գլխավոր դերակատարի՝ ի դեմս Թ. Նազարբեկյանի՝ Հայոց ազգային կորպուսի վերաբերյալ, որի անմիջական պարտականությունն էր Երզնկա-Էրզրումի գիծը պաշտպանելու գործը: Եվ այդ գործը, որ պետք է սկսվեր 1917 թ. դեկտեմբերից գոնե, թափ ստանար 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին, սկսեց կիրառվել միայն Ալեքսանդրապոլի անկումից հետո՝ մայիսին:

Անդրանիկն ու իր շրջապատը դեմ էին հենց Դաշնակցության որդեգրած գերմանո-թուրքական կողմնորոշմանը, ինչն առայժմ՝ Երզնկայի զինադադարի համատեքստում հանգեցրեց ժամանակի գլխավոր քաղաքական ձախողմանը՝ Տրապիզոնի բանակցություններին:

Ինչևէ, հարկ ենք համարում ներկայացնել Վ. Փափագյանի կարծիքը վերոհիշյալ գործիչների մասին.

«Առաջին գիծին վրայ կանգնած էր սօքթ. Պօնաբարդեանը, յանդուգն բժիշկ-զինուոր մը, որ իր յախուռն բնաւորութեամբ եւ խօսելու շոնդալից եւ ամբոխավար շնորհքով՝ կըրնար ամբոխներ խռովել ու շարժել...: Երկրորդ չար ոգին Վահան

³⁵⁵ Տե՛ս Վ. Փափագեան, նշվ. աշխ., էջ 456:

³⁵⁶ Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր, 1890 Էն 1940, Երեւան, 2003, էջ 222:

Թոթովենցն էր – դաւադիր եւ «յարդին տակէն վագող ջուր» մը եւ Լեւոն Թիթինճեանը՝ երեւոյթով կիրթ եւ մեղմ տղայ մը, երեքն ալ դաշնակցականներ էին, բայց ռուսահայ գործիչներու եւ հիմնարկութիւններու դէմ թունաւոր կիրքերով լեցուած, արեւմտահայ – արեւելահայ հատուածներու մէջ անջրպետը աւելի խորացնող՝ թագուն, կրքոտ և աններելի բոլոր միջոցներով գործող մարդիկ»³⁵⁷:

Վ. Փափագյանը հեգնանքով ու ասելոյթամբ է մեկնաբանում նաև Անդրանիկի գեներալ-մայորի աստիճան ստանալու փաստը:

Իմիջայլոց նշելով, որ դա «տօքթ. Զաւրեանի գործն էր», Վ. Փափագյանը փաստորեն անտեսում էր այն կարևորագույն հանգամանքը, որ կործանվող ռազմաճակատը փրկելու համար ռուսական հրամանատարությունը գնում էր իր համար անընդունելի ու ծայրահեղ քայլի, գեներալի աստիճան էր շնորհում հայ ֆիդայական շարժման գործչին: Վ. Փափագյանի ու մյուսների քաղաքական անհեռատեսությունը նրանում էր, եթե իրենք դա իսկապես չէին հասկանում, որ այդ քայլով նաև փորձ էր արվում մի վերջին ճիգ գործադրել հայ-ռուսական միասնական ուժերով ռազմաճակատը և այդպես, իհարկե, Արևմտյան Հայաստանը փրկելու ճանապարհին:

Առնվազն անհասկանալի է Վ. Փափագյանի հռետորական հարցն ուղղված Անդրանիկին, այն էլ 1918 թ. իրականության մեջ. «որքա՞ն լաւ ֆիտայի էիր Անդրանիկ» հարցին վերջինս շատ տեղին պատասխանում է, թե «հիմա ալ լաւ զօրավար չե՞մ կըրնար ըլլալ»³⁵⁸ : Իսկ այդ անհրաժեշտությունն իր ծավալուն զեկուցագրում հիմնավորում էր գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկին, երբ 1918 թ. հունվարի 16-ին Անդրանիկին շնորհում է գեներալ-մայորի կոչում և դա բացատրում էր Արևմտահայերի հատուկ դիվիզիայի ձևավորման ու Անդրանիկի կողմից այն ղեկավարելու հանգամանքով³⁵⁹:

Նշանակումից հետո Անդրանիկը հունվարի 26-ին Թիֆլիսում հարցազրույց է տալիս «Մշակ» թերթի թղթակցին, գնահատում է ստեղծված իրավիճակը, կանգ է առնում քրդական գործոնի վրա: Հատկանշական է, որ նա հայ-քրդական համագործակցությունն իրական էր համարում միմիայն ուժերի հավասարագործության

³⁵⁷ Վահան Փափագեան, Իմ Յուշերը, էջ 456:

³⁵⁸ Տե՛ս Վահան Փափագեան, նշվ. աշխ., էջ 460:

³⁵⁹ Տե՛ս Андраник Озаян, Документы и материалы, Вестник архивов Армении, № 1-2, Ереван, 1991, с. 246-248.

պայմաններում³⁶⁰: Նա կողմ էր արտահատվում նաև ռուսական ներկայությանը, նրանց կողմից ճակատը դասալքելը բացատրում էր մասամբ նաև Անդրկովկասյան կոմիսարիատի ու Մեյմի քաղաքականությամբ, մասնավորապես Շամխորի ու Ելիզավետպոլի հակառուսական գործողություններով: Անդրանիկը փաստում էր նաև Հայոց ազգային խորհրդի հետ կապի բացակայությունը, միաժամանակ առանձնացնելով կորպուսի հետ ունեցած համագործակցության լուրջ դրսևորումները³⁶¹:

Արևմտահայ դիվիզիայի հրամանատարությունից Անդրանիկի խուսափելու հանգամանքը Մեպուհը հիմնավորում էր յուրովի:

1917 թ. դեկտեմբերի սկզբին Անդրանիկը բնակվում էր Թիֆլիսում, Գարեգին Վասիլյանի տանը: Նրա հետ էին նաև Սմբատ Բորոյանն ու Վահագն Նալբանդյանը: Մեպուհը առաջարկում էր Անդրանիկին ներկայանալ Ազգային խորհուրդ և հրաժարական տալ զորաբաժնի հրամանատարի պաշտոնից: Եվ դա հիմնավորում էր նրանով, որ կա արդեն Թ. Նազարբեկյանի կորպուսը և եթե ինքը հրաժարական տա, ապա կարելի է Ռուսաստանի քաղաքներում իր, Սմբատի, Դրոյի, Մուրադի և Անդրանիկի ջանքերով հրավիրել հանրահավաքներ, գումար հավաքել և զինվորագրել երիտասարդներին: «Եւ ես հաւատացած եմ,- նշում էր Մեպուհը,- որ երկու-երեք ամիսէն ամբողջ հայ ժողովուրդը ոտքի պիտի կանգնեցնենք եւ ճակատ ուղարկենք»³⁶²: Նա ծրագրում էր առաջին ժողովը կազմակերպել Թիֆլիսում, ապա և Բաթումում, Փոթիում, Մուխումում, Մոչխում, Նովոռոսիյսկում, Ղրիմում, Դոնի շրջանում, Բաքվում, Ղարաբաղում: Մեպուհի համոզված հորդորներին Անդրանիկը պատասխանում է. «Ես ալ կարծեցի թե մի գիւտ պիտի ընէիր: Տնաշէ՛ն, ես ինչ գործ ունիմ քաղաքները շրջելու: Իմ մի նամակս ոտքի կը հանէ ամբողջ ժողովուրդը»³⁶³: Հավելենք, որ Հ. Զավրիյանի հետ տեսակցությունից հետո Մեպուհը Ի. Օդիշելիձեի հրամանով նշանակվում է Բաբերդի շրջանի զինվորական պետ³⁶⁴: Նա սկզբում հրաժարվում է, հետո՝ համաձայնվում առնվազն տարօրինակ հիմնավորմամբ. «Չկրցայ մերժել, եւ միայն մեկ պայմանով ընդունեցի, որ գալիք պատասխանատուութենէ զերծ մնամ»³⁶⁵:

³⁶⁰ Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1918, 25 հունվարի, թիվ 17:

³⁶¹ Տե՛ս Андраник Озаян, с. 252, 254.

³⁶² Տե՛ս Մեպուհ, Էջեր իմ յուշերէն, Պոսթըն, 1925, էջ 331-332:

³⁶³ Տե՛ս Մեպուհ, նույն տեղում, էջ 332:

³⁶⁴ Նույն տեղում, էջ 329:

³⁶⁵ Նույն տեղում, էջ 370:

Ուշագրավ է, որ Սմբատը ևս համաձայնվում է Սեպուհի հետ, ինչին հետևում է Անդրանիկի ևս մեկ զուտ անդրանիկյան պատասխան. «Ձեր համաձայնությունը թող ձեզի մնայ, ես գիտեմ իմ գործս: Լսե՛, Սմբատ, վաղն անմիջապես կը մեկնիս Պայազիս եւ անկէ Ախլաթ»³⁶⁶:

Վ. Փափագյանը բացասաբար էր գնահատում ևս մի զինվորական գործչի, որը Հյուսիսային Կովկասից մի քանի խմբերի հետ Թիֆլիս էր ժամանել: «Երանի թէ եկած չըլլային. Խառնիճաղանձ, մեծ մասամբ զինուորական կրթութենէ զուրկ մօտ 200 հոգի – որոնք ժամանակաւոր կերպով տեղաւորվեցան Թիֆլիզի հանդիպակաց բարձրութեան վրայ գտնուող դատարկ զօրանոցներէն մէկուն մէջ: Իրենց առաջնորդն էր Քիրեմիթչեան անունով մէկը: Շատ չանցած իր գոյնը դուրս տուաւ, անոր խմբին զգալի մասը՝ վարակուած պոլշեիկեան քարոզութիւններով՝ եկած էր քայքայելու «հակայեղափոխական» պատերազմական մեր ճակատը: Յաջորդ տարին, երբ Հիւս. Կովկաս էինք Արմաւիր հանդիպեցանք անոր... իբրեւ պոլշեիկներու կոմիսարներէն մէկը»³⁶⁷:

1917 թ. դեկտեմբերի 18-ին Անդրանիկը Թիֆլիսի Հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի և ՀԱԽ-ի նախաձեռնությամբ հրավիրեց հանրահավաք: Այն սկսվեց ժամը 12-ին Մեծ Վանքի բակում: Վանքի դահլիճում զուգահեռաբար ընթանում էր Արևմտահայ խորհրդակցության Բ նիստը: «Ժողովը պահ մը ընդհատեց իր աշխատանքները և Անդրանիկը սանդուխքի աստիճաններուն վրայ կանգնած և յուզումով բռնւած կոչ ուղղեց հայութեան երկու հատուածի երիտասարդութեան՝ իր հետ զենք վերցնել և երթալ երկիրը պաշտպանելու. 50-ը անց, յոգնած ու հիւանդ զինուոր եմ ես, բայց ահա այսօր հայրենիքի ձայնը նորէն կը կանչէ զիս ու ես նորէն կառնեմ սուրս ու հրացանս և կերթամ մեռնելու.- ո՞վ ձեզմէ կը հետևի ինձի»³⁶⁸: Ջերմորեն ընդունվում են Անդրանիկի, Սեպուհի և Ա. Ջամայանի ելույթները: Նույն օրը հրապարակվում է նաև Հայ ժողովրդին ուղղված Հայոց ազգային խորհրդի կոչը³⁶⁹: Հիշարժան է նաև այստեղ նրա ունեցած ելույթը. «Տաճկահայերուս սանձը ձեռքներդ առած էք. Ամենքդ ալ պոլիթիկայէն կը ճառէք, ռազմավարութենէ կը ճառէք, բայց ոչինչ չէք հասկնար, կը քննադատէք մեր

³⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 333:

³⁶⁷ Վ. Փափագեան, նշվ. աշխ., էջ 463:

³⁶⁸ Տե՛ս Ազատամարտ, 1917, 19 դեկտեմբերի, թիվ 50:

³⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

ամեն մեկ քայլը, դրամը ձեր ձեռքը կը պահիք... վարժապետներ էք, ուրիշ ոչինչ»³⁷⁰: Ավելի ուշ նա ելույթ ունեցավ նաև Ալեքսանդրապոլում, Յոթ վերք եկեղեցու մոտ³⁷¹:

Թեև Անդրանիկը արևմտահայ հավաքական գորաբաժնի հրամանատար էր առաջադրվել Արևմտահայ ազգային խորհրդի 1917 թ. դեկտեմբերյան հայտնի խորհրդակցության կողմից, սակայն այդ որոշումը կարող էր ուժի մեջ մտնել միայն Հայոց ազգային (Արևելահայոց) խորհրդի հավանությանն արժանանալուց հետո: Մեզ հայտնի է նաև, որ Հայոց ազգային խորհրդում ևս այն տրամադրությունն էր ձևավորվել, թե ֆիդայի Անդրանիկը միայնակ չի կարող իր վրա վերցնել արևմտահայ գորամասի՝ Հայաստանի Երկրապահ գորամասի կազմակերպման ու կառավարման ողջ պատասխանատվությունը: Հատուկ կոմիտեի դեկտեմբերի 15-ի նիստում Ռ. Տեր-Մինասյանն այդ կապակցությամբ զեկուցում է, որ Արևմտյան Հայաստանի Կոմիսարիատին կից իր կողմից ստեղծվել է գործադիր մարմին՝ Ռ. Տեր-Մինասյան, Սեպուհ և Վահան Փափազյան կազմով: Այդ գործադիր մարմինը կոմիսար Հ. Զավրիյանի մասնակցությամբ Անդրանիկին հրավիրել էր նիստի՝ որոշելու նրան գորաբաժնի պետ նշանակելու հարցը³⁷²: «Երբ Անդրանիկ դարձեալ կը կմերժէ ստանձնել իրեն առաջարկուած պաշտօնը,- վկայում է Ս. Վահագնը,- Զարեան կ'ըսէ. «Անդրանիկ, ի նկատի ունեցիր թոպեն: Ահա քանիերորդ անգամն է հեռագիր կու գայ Մուրատէն (Երզնկայէն): Ոչնչով կրցանք պատասխանել անոր: Այժմ յուսահատ մեր ընթացքէն, Մուրատ դիմեր է Վահագն Նալբանդեանին, որ եկած է այսօր Ազգային Բիւրոյի (Հայոց ազգային խորհուրդը – Վ.Ս.) մօտ»³⁷³: Այդ խնդիրը հանդիպել էր բարդությունների և առարկությունների, ինչպես Հ. Զավրիյանի, այնպես էլ Անդրանիկի կողմից: Ցավոք, պարզ չեն այդ առարկությունների հիմնավորումները. միաժամանակ չի կարելի պնդել, որ Հ. Զավրիյանը դեմ էր Անդրանիկի նշանակմանը, ինչպես, օրինակ կարծում էր ակադեմիկոս Հ. Սիմոնյանը³⁷⁴:

Լսելով զեկուցման մանրամասնությունները, Հատուկ կոմիտեն որոշեց դիվիզիայի կազմակերպության իրավասության, ինչպես և Անդրանիկի նշանակման խնդիրը հանձնել Ազգային խորհրդի քննությանը, խնդրելով որոշել այդ հարցը Հայոց ազգային

³⁷⁰ Տե՛ս Վ. Փափազեան, նշվ. աշխ., էջ 465:

³⁷¹ Տե՛ս Սեպուհ, նշվ. աշխ., էջ 337:

³⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 29:

³⁷³ Տե՛ս Միքայել Վարդանեան, Մուրատ, Պոսթոն, 1931, էջ 252-254:

³⁷⁴ Տե՛ս Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 677:

խորհրդի և Արևմտահայ ազգային խորհրդի գործադիր մարմնի խառը նիստում: Հատուկ կոմիտեի ղեկավարների 17-ի նիստում էլ որոշվեց ընդունել, որ գորաբաժնի գործի կազմակերպումը պետք է հանձնվի մեկ խառը մարմնից կազմված Հատուկ կոմիտեից ու արևմտահայության ներկայացուցիչներից: Այս մարմինը գործելու էր Արևմտյան Հայաստանի Կոմիսարիատին կից: Ի պաշտոնե, անդամ էր համարվում այդ մարմնի կոմիսարի տեղակալ Հ. Զավրիյանը: Այդ խառը մարմինը լիազորելու էր իր հայեցողությամբ կազմակերպելու արևմտահայկական դիվիզիան, այն հիմքերով որ կորոշվեր ՀԱԽ-ի և արևմտահայերի պատվիրակության խառը նիստում³⁷⁵:

Դեկտեմբերի 29-ի նիստում արդեն, դիվիզիայի կազմակերպման համար անհրաժեշտ առաջիկա ֆինանսական ծախսերն էին նշվում, որը ներկայացրել էր Հ. Զավրիյանը. հատուկ ընդգծվում էր, որ այն ձևավորվում է Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության կողմից³⁷⁶:

Այդ ծախսերից էին 1. 18000 ռ. – 9 շրջաններում կամավորների հավաքագրման նպատակով ազիտատորների գործուղումը, 24500 ռ. Նույն նպատակով Անդրանիկի գործուղումը՝ համհարզի և 2 թիկնապահների հետ, 3. 125800 ռ. – 37 էտապային հավաքակետերի կազմակերպումը, 43000 ռ. – զենքի և համազգեստի տեղափոխում զինապահեստից պահեստներ ու երկաթուղային վագոններ, 5. 200000 ռ. – կամավորների ճանապարհային ծախսերի համար, 6. Ռազմական ավտոմեքենաների ձեռք բերում՝ թալանչիներից ու անկարգություններ իրականացնող զինվորներից պետական գույքը հետ գրավելու նպատակով: Ընդհանուր գումարը կազմում էր 423800 ռուբլի³⁷⁷:

Այնուհետև Թիֆլիսում, Համբարձում Մելիքյանի բնակարանում իրականացան ՀԱԽ-ի և Ապահովության խորհրդի միացյալ նիստերը՝ Ավետիս Ահարոնյանի նախաձեռնությամբ: Առաջին նիստին Անդրանիկը չէր եկել, երկրորդ նիստում նա հայտարարեց. «Ես հասարակ գիղացի մըն եմ, իսկ դուք համալսարանական մարդիկ: Դուք կարդացած եք այս գրքերը, ես չեմ կարդացած, բայց կճանչնամ հայ ժողովուրդը, կզգամ անոր ցավերը... թշնամին Երզնկա հասած է»³⁷⁸: Մերժելով հրամանատարության առաջարկը Անդրանիկը ավելացրեց. «Վաղ առավոտ կանուխ կը հագնիմ հասարակ զինուորի լաթեր, հրացանը կձգեմ ուսիս, կերթամ զորավար Նազարբեկովին և կը մեկնիմ

³⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 31:

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 52:

³⁷⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, I մաս, թ. 52:

³⁷⁸ Տե՛ս Արև, Կահիրե, 1927, 3 սեպտեմբերի (ըստ Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 677):

ճակատը ու պիտի մեռնիմ հոն՝ չտեսնելու համար այս խայտառակությւնը... շարունակեցէք ձեր բիզանդական վեճերը մինեւ արշալոյս», ապա և հեռացավ: Խախտելով լռությունը Ն. Աղբայանը նշեց. «Հայ ժողովուրդն է, որ կխոսի Անդրանիկի բերնով, ան իրաւունք ունի»³⁷⁹: Ի վերջո կայացավ քվեարկություն և 12 մասնակիցներից 9-ը իրենց քվեն տվեցին Անդրանիկի օգտին:

Այսպիսով, Անդրանիկը հաստատվեց «Հայկական հրացանաձիգների 1-ին դիվիզիա»-ի հրամանատար³⁸⁰ և դեկտեմբերի 29-ին Ապահովության կոմիտեի հետ համատեղ կոչ հղեց «թուրքահայ եղբայրներին»³⁸¹:

Ստանձնելով հրամանատարի պաշտոնը, Անդրանիկն անմիջապէս, փաստորեն 1917 թ. դեկտեմբերի վերջից, դարձավ գորահավաքի գլխավոր ոգեշնչող, կազմակերպիչ ու համակարգող, ազատագրական շարժման գործիչներին ու բանակի հայ սպաներին դեպի Էրզրում ուղորդող:

1917 թ. դեկտեմբերի 20-ին Անդրանիկը Ս. Վահագնի հետ մեկնում են Ալեքսանդրապոլ և փորձում զբաղվել գորաջոկատի կազմավորման գործով: Պարզվում է, որ Ալեքսանդրապոլի ռուսական կայագորի կազմում մեծ թվով (1000 հոգի) հայ զինվորներ էին մնացել: Անդրանիկը մտադիր էր այդ զինյալ ուժը օգտագործել՝ առաջին հերթին Էրզրումի ռուսական զինապահեստների ամենօրյա թալանը կանխելու և հսկողություն սահմանելու նպատակով: Հաջորդ օրը Անդրանիկն իր մոտ է հրավիրում Ալեքսանդրապոլից ռուսական զորամասերի նահանջը կազմակերպող երեք սպաների և խնդրում նրանց, որպէսզի ընդառաջեն դեպի Էրզրում շարժվող հայկական զորամասերը գնացքով տեղափոխելու հարցում: Սպաները, որոնք Բիթլիսի ճակատից ծանոթ էին Անդրանիկին, չեն մերժում խնդրանքը»³⁸²:

1918 թ. հունվարի սկզբին նա անցնում է գործնական քայլերի: Անդրանիկը դիմում է Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության շտաբի պետին՝ իր դիվիզիայի հեծյալ զորամասերը պարենով ապահովելու նպատակով³⁸³: Հունվարի 30-ին հեռագրում է գեներալ Ֆ. Վոլոշինին, որ առայժմ չի կարող հասնել Էրզրում, ուստի և Խնուս է

³⁷⁹ Տե՛ս Արև, 1927, 3 սեպտեմբերի, էջ 677:

³⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 72, թ. 73:

³⁸¹ Տե՛ս Հայաստան, 1917, 29 դեկտեմբերի:

³⁸² Տե՛ս Ե. Ճերեճեան, նշվ. աշխ., էջ 136:

³⁸³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, թ. 28:

ուղարկում 2-րդ առանձին հայկական գումարտակի հրամանատար գնդապետ Օսիպովին (Հովսեփյան), 500 զինվոր, 1000 միավոր հանդերձանք³⁸⁴:

Փետրվարի 3-ին հրապարակվում է Անդրանիկի և գնդապետ Աբրահամ Դոլուխանյանի կոչն ուղղված հայ երիտասարդությանը³⁸⁵: Նույն օրերին Անդրանիկը Խնուսի ուղղությամբ գործնական ցուցումներ է տալիս կապիտան Պանդուխտին (Միքայել Սերյան), փետրվարի 6-ին, Վանի ուղղությամբ՝ դիվիզիայի 3-րդ գումարտակի հրամանատար, գնդապետ Բաղդասարյանին³⁸⁶ և այլն: Փետրվարի 20-ին նա Թիֆլիսում, Գոլիցինի փողոցի վրա խորհրդակցություն է հրավիրում³⁸⁷: Սարիղամիշից արդեն, Անդրանիկը հեռագրում է գնդապետ Պողոս (Պավել) Բեժանբեկովին՝ Էրզրում գալու նպատակով: Քանի որ վերջինս Հայոց ազգային կորպուսի 1 և 4 գնդերի մեջ հարգանք ու վստահություն էր վայելում, ուստի և զորավարը նրա հետ հույսեր էր կապում: Ի վերջո, Պ. Բեժանբեկովը Կարին հասավ Անդրանիկի ժամանումից մեկ օր անց³⁸⁸:

Կարևորում ենք Անդրանիկի գործունեության ևս մի դրվագ: Մինչև Կարնո դեպքերը Անդրանիկը դաշնակից պետությունների ներկայացուցիչներին Թիֆլիսում ներկայացրեց քաղաքական հուշագիր, այն թարգմանեց անգլերեն և ֆրանսերեն. հայերեն բնագիրը պահպանվել է Վ. Թոթովենցի արխիվում: Այն հիմնականում վերաբերում էր Կովկասյան ռազմաճակատի իրադրությանը և ակնկալում էր դաշնակիցների բարոյական ու նյութական աջակցությունը՝ Արևմտյան Հայաստանի հիմնահարցի լուծման ճանապարհին: Ներկայացնելով արևմտահայերի զորաբաժնի իրական կացությունը, Կովկասին սպառնացող թուրքական արշավանքի, պանթուրքիզմի վտանգը, նա խնդրում էր հատկացնել 350 սպաներ, պատերազմական փորձառություն ունեցող 100 զինվորներ: Անդրանիկը ցավ էր հայտնում, որ անդրկովկասյան կառավարությունը դրամական օգնություն է հատկացնում թուրքերին ու թաթարներին:

³⁸⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 134:

³⁸⁵ Տե՛ս Андраник Озаян, էջ 260:

³⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 261:

³⁸⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 80, թ. 45:

³⁸⁸ Տե՛ս Ա. Մարմարյան, նշվ. աշխ., ըստ «Վերածնված Հայաստան», թիվ 8, 1989, էջ 57:

«Մենք արդեն ձեռք ենք քաշած մեր կյանքեն, պատրաստ ենք կռվիլ և արյուն թափելու, տեսնենք ինչ պիտի ըլլա այդ դժբախտ երկրին վախճանը», - ամփոփում էր զորավարը³⁸⁹:

Անդրանիկի Թիֆլիսից Էրզրում ուղևորվելու արարողությունը վերածվել էր շքահանդեսի: Ներկա էին 1000 զինվորներ, երկաթուղային կայարանում էին նաև ՀԱԽ-ի նախագահ Ավ. Ահարոնյանը, Ս. Հարությունյանը, Արևմտահայ ազգային խորհրդից Վ. Փափազյանը, Ա. Թերզիպաշյանը և Պարույր Լևոնյանը: «Ճառերը իրար կը յաջորդեն, - գրում է Ա. Թերզիպաշյանը, - Ալեոխ Ահարոնեան 1000 զինուորներու ներկայութեան, հանդիսատր կերպով կը համբուրէ Անդրանիկի ճակատը եւ կ'ըսէ, - Ջինուոր, նայեցէք որ այս ճակատը երբեք գետին չհասնի: Այդ ճակատը 30 տարի աստղին դիպած է»³⁹⁰: Խոսեցին նաև Վ. Փափազյանը և այլոք: ՀԱԽ-ի անդամ Ստեփան Մամիկոնյանի անվան հետ կապված տհաճ միջադեպը, մեկ անգամ ևս բացահայտում էր զորավարի գաղափարական – ռազմավարական կրեդոն: Ս. Մամիկոնյանը դեմ էր Անդրանիկի Էրզրում մեկնելու, այլ խոսքով Էրզրումը պաշտպանելու, Արևմտյան Հայաստանի սահմանը այնտեղ եզրագծելու գաղափարին, ինչի դեմ այդ հանդիսավոր իրադրության պայմաններում նույնիսկ զորավարը պատասխանում է. «Պօղոս Նուպար չէր հեռագրած թե՛ Մամիկոնեան Սոլուլակ նստած հրամաններ արձակէ, դաշնակիցները պիտի ճանչնան Հայաստանի անկախութիւնը: Այդ անկախութեան զինը արիւնն է: Եւ ես ինչպե՞ս իմ արիւնս թափելու չերթամ, երբ այս տղան (ջարքերը մտնելով դուրս է բերում տասներեքամյա մի պատանու – Վ.Ս.), որուն ես երեք անգամ, գաբօթը՝ ձեռքովս վրայէն հանած եմ, ահա չորրորդ անգամ ըլլալով հնարը գտած՝ նորէն հագուած, հրացան առած է եւ իր արիւնը թափելու կերթայ»³⁹¹:

Կարս-Սարիղամիշից Անդրանիկը Հ. Զավրիյանի, գնդ. Ս. Զինկևիչի, Թորգոմի, Վ. Թոթովենցի և թիկնապահների հետ երկու ավտոմեքենաներով շարժվեց դեպի Էրզրում: Վ. Թոթովենցի վկայությամբ ճանապարհի այդ հատվածը տազնապալի ընթացք ունեցավ, քանի որ Անդրանիկի դեմ թուրքերի կողմից մահափորձ էր սպասվում:

Անդրանիկը հրահանգում է Ս. Վահագնին, որպեսզի վերջինս Թիֆլիսից դուրս եկած 144 երիտասարդների և Սարիղամիշում գտնվող զինվորներին համախմբելով

³⁸⁹ Տե՛ս Ա. Մարմարյան, նշվ. աշխ., ըստ «Վերածնված Հայաստան», թիվ 6, 1989, էջ 50-51:

³⁹⁰ Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 76:

³⁹¹ Ա. Թերզիպաշեան, Նուպար, Փարիզ, 1938, էջ 200-202:

մեկնի Կարս ու միացյալ ուժերով անցնի Էրզրում: 1918 թ. հունվարի 12-ին Ս. Վահագնը 800 զինվորներով մտնում է Էրզրում, զինվորները տեղավորվում են զորանոցներում, իսկ ինքը իջևանում է Թորգոմի բնակարանում³⁹²:

Կարսի հանրահավաքում զինվորագրվեցին 2000 հոգի, բայց երբ Անդրանիկը նրանց դասավորեց և զորանոց ուղարկեց, ճանապարհին բոլորը փախան, մնացին միայն 25 հոգի: Սարիղամիշում զորավարին այցելեց Պանդուխտը և ներկայացրեց տեղի զինվորական միության վարքագիծը. «անհոգ եւ անտարբեր ճակատի պահանջէն, գիշեր եւ ցերեկ պահեստանոցներէն շաքար, զէնք եւ իւղ կը ծախէին եւ «քէյֆ» կ'ընէին»³⁹³:

Սարիղամիշում հայտնի դարձավ, որ մարտի 1-ին հրաժարական տված գեներալ Ի. Օդիշելիձէն այժմ քաղաքում է և ցանկություն ունի տեսակցել Անդրանիկին: Հանդիպման ժամանակ գեներալը «դատապարտեց հայ զինուորին երկչոտութիւնը և անպատուեց զանոնք... Անդրանիկ սրտնեղեցաւ կէներալին դեմ եւ բաժանուեցան»³⁹⁴:

«Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, օրագրուած Զօրավարին թիկնապահ զինուորէն» հուշագրությունը սկզբնաղբյուրային բնույթ կրող նմանատիպ աշխատանքների մեջ թերևս առաջինն է և համեմատաբար արժանահավատը: Այն հրատարակվել է Բոստոնում 1924 թվականին: Այստեղ առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց փաստորեն գեներալ Ի. Օդիշելիձէի դավաճանական պահվածքը:

Վերջինս դեռ Էրզրումից Վեհիբ փաշային պարբերաբար հեռագրում էր քաղաքի իրավիճակի մասին և իր ստորադաս վրացի և ռուս պաշտոնյաների միջոցով գործում էր հօգուտ Թուրքիայի: Միայն գնդապետ Թորգոմն էր, որ Օդիշելիձէի երեսին շարտել էր նրա դավաճանական գործունեությունը և այդ մասին տեղյակ էր պահել ՀԱԽ-ին: Հայտնի էր դարձել նաև, որ Ի. Օդիշելիձէի քույրը թուրք զինվորականի հետ էր ամուսնացել:

Դևե-Բոյնուից հետո ճանապարհին հանդիպում էին գաղթականության հոծ խմբեր, որոնց միջից բազմաթիվ երիտասարդների Անդրանիկը ետ էր վերադարձնում Կարին: Տեղյակ լինելով Կարինի խուճապին, հատկապես նրան, որ 1 և 4-րդ գնդերը միևնույն է ուշ են հասնելու, նա կարգադրեց, որ Խնուս և Մուշ մեկնող զինվորները Կարին գան:

³⁹² Տե՛ս Ե. Ճերեճեան, նշվ. աշխ., էջ 136:

³⁹³ Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմ. օրագրութիւնը, էջ 77:

³⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 78:

Քեոփրի-Քեոյ կամուրջի մոտ նա ցուցանակ մակագրեց. «Մշեցիներ և սասունցիներ, հայրենիքը այս անգամ ձեզ կկանչե դեպի Կարին, ես իսկ Կարին կերթամ, եկեք իմ ետևես»³⁹⁵: Ճանապարհին նա հեռագիր ուղարկեց Սեբաստացի Մուրադին, որպեսզի նա թողնի Երզնկան և գա Մամախաթուն:

Անդրանիկի Էրզրում հասնելու օրվա մասին կան բազմաթիվ հակասական տվյալներ:

Թ. Նազարբեկյանի կարծիքով, Անդրանիկը ռազմաճակատ ուղևորվեց փետրվարի 10-ից հետո, և բանակի շտաբը գլխավոր հրամանատարի հետ միասին Սարիղամիշից տեղափոխելուց հետո փետրվարի 20-ին ժամանեց Էրզրում³⁹⁶: «Кавказское Слово» -ի վկայությամբ դա տեղի է ունեցել փետրվարի 18-ին³⁹⁷, Գ. Ղորղանյանն իր հուշերում հիշատակում է փետրվարի 15-ը³⁹⁸, Վ. Թոթովենցը՝ փետրվարի 16-ը³⁹⁹, Ա.Դոն⁴⁰⁰, Սեպուհը⁴⁰¹՝ փետրվարի 17-ը, Ա. Ժամկոչեանը՝ դարձյալ փետրվարի 18-ը⁴⁰²:

Որոշ տվյալներով Անդրանիկը նշանակվեց Էրզրումի ջոկատի պետ և ամրոցի պարետ՝ Ն. Մորելի փոխարեն: Թ. Նազարբեկյանի կարծիքով, այդ նշանակումը սխալ էր: Գեներալ Ա. Կուլեբյակինն էլ վկայում էր, որ Ն. Մորելի իրավասությունների ոլորտը հստակ չէր սահմանազատվել Անդրանիկի իրավունքներից: Այդ իսկ պատճառով հաճախ նրանց գործողությունները խաչաձևվում էին: Միայն երկու պետերի փոխադարձ անձնական տակտը և գնդապետ Զինկևիչի նրբանկատ միջամտությունն էր, որ թույլ էր տալիս խուսափել թյուրիմացություններից⁴⁰³: Ինքը՝ Անդրանիկը հրամանի տեսքով հայտնում էր, որ «Ժամանել եմ Էրզրում և ստանձնել եմ Էրզրումի ամրացված շրջանի պարետի և ռազմական տրիբունալի նախագահի պաշտոնը»⁴⁰⁴:

Նույնը չէր կարելի ասել Էրզրումի ամրոցների և բերդապարիսպների 400 միավորից բաղկացած հրետանու հրամանատար, փոխգնդապետ Տվերդոխլեբովի

³⁹⁵ Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 8, 1989, էջ 55:

³⁹⁶ Տե՛ս Արмянский корпус..., էջ 70:

³⁹⁷ Кавказское Слово, Тифлис, 1918, 21 февраля, № 41.

³⁹⁸ Գ. Ղորղանեան, նշվ. աշխ., Հայրենիք, դեկտեմբեր, 1927, էջ 154:

³⁹⁹ Տե՛ս Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 8, 1989, էջ 56:

⁴⁰⁰ Ա.Դոն, Հայության երկունքը, ՀՀ Պատմության թանգարան, էջ 269, նաև՝ Ա.Դոն, Հայության երկունքը, Ե., 2014, էջ 197-205:

⁴⁰¹ Տե՛ս Ե. Ճերեճեան, նշվ. աշխ., էջ 140:

⁴⁰² Տե՛ս Ա. Ժամկոչեան, նշվ. աշխ., էջ 79:

⁴⁰³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 49-67:

⁴⁰⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, թ. 113:

մասին, որին համակրում էին Բերդաքաղաքի 350 ուս սպաները, բայց ինքը անբարեհաճ վերաբերմունք ուներ Անդրանիկի հանդեպ:

Ավելացնենք, որ Բերդամրոցի Կարսի դարպասների մոտ Անդրանիկին դիմավորեց Սեբաստացի Մուրադը՝ 150 զինվորներով և առաջնորդեց գեներալ Յուդենիչի բնակարանը: Տարօրինակ է, բայց Անդրանիկն առաջին անգամ էր լինում Էրզրումում: Ծանոթանալով իրավիճակին նա անմիջապես ՀԱԽ-ին ու Հայաստանի Ապահովության խորհրդին հեռագրեց, որ «Կարնոյ ճակատին դրութիւնը շատ վատ է, ա. և դ. գունդերը չեն կռուիր: Մեր զինուորները չի հասան տակաւին: Աշխատեցէք մեր թիկունքը լաւ պահել»⁴⁰⁵: Վերոհիշյալ գնդերն իրենց վարքագիծը պատճառաբանում էին Անդրկովկասում թաթարական հակահայկական կոտորածներով: Ի վերջո, նրանք մեծ դժգոհությամբ շարժվում են ճակատ: Ուշագրավ է, որ Վ. Թոթովենցը չէր կիսում Անդրանիկի լավատեսական հրճվանքն ու հանգստությունն այդ կապակցությամբ, նշելով թե «երանի թե չմեկնեին»⁴⁰⁶: Այդ գնդերի վրա վերահսկողություն հաստատելու նպատակով էր Անդրանիկը Սարիղամիշից Էրզրում ուղարկել գնդապետ Պ. Բեժանբեկովին, տեղյակ լինելով, որ դրանք «Տիգրան Աղամալեանի շունչով որպէս դասալիքներ դաստիրակուած էին»⁴⁰⁷:

Իր հասնելուն պես նա ստորագրեց «Կարնո գորքին ու բնակչությանն» ուղղված թիվ 3 հրամանը⁴⁰⁸. «Ռուս բանակի զինվորական ուժով գրավուած Կարին քաղաքին պաշտպանութիւնը այժմ յանձնուած է հայերուն: Հոս ապրող ժողովուրդը՝ հայ թե թուրք, հավասարապէս պատերազմական վիճակի ենթակա կը ճանաչցուին այսօրնէ: Ճակատներու վրայ գտնուող թուրք զինուորը և զենք կրող ժողովուրդն է մեր թշնամին, քաղաքին մէջ ապրող ժողովուրդը բնաւ թշնամի չենք ճանչնար մեզի: Արգելուած է գիշերները ժամը 1-էն յետոյ փողոցները ելնել. զինով վիճակի մէջ կանչել, կռուիլ և ասոնց պէս պատերազմական օրենքի հակառակ գործերու մէջ գտնուիլ:

Արգելուած է խմբակցութիւններ և ժողովներ սարքել:

Արգելուած է ոտնձգութիւններ ընել բնակարաններու եւ վաճառատներու վրայ:

⁴⁰⁵ Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 87:

⁴⁰⁶ Տե՛ս Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 9, 1989, էջ 51:

⁴⁰⁷ Աւետիս Եափուճեան, նշվ. աշխ., էջ 258:

⁴⁰⁸ Տե՛ս Աշխատանք, 1918, 4 ապրիլի, թիվ 92:

Զինուորական եւ ոչ զինուորական անհատ եթե տրուած այս օրենքներու հակառակ շարժուի, պիտի ենթարկվի պատերազմական ատեանի»⁴⁰⁹:

Անդրանիկի Էրզրումից տրված հրամանների մեջ էական են Սարիղամիշի հետ ռազմական ճանապարհների բացման, Խնուսի Քյալ-Քյու ուղղությամբ քրդերի դեմ գործողությունների, Էրզրումի զինվորական միության կողմից կամավորների հավաքագրման, քաղաքից անասնակերի դուրս բերման արգելման, ռուսական հին (ցարական – Վ.Մ.) կարգապահական կանոնադրությունը գործարկելու, Ս. Մամարցյանի կողմից ղեկավարվող 2-րդ հայկական գնդին 500 զինվոր ու հանդերձանք ուղարկելու մասին կարգադրությունները⁴¹⁰:

Էրզրումի շրջանի պաշտպանությունը կազմակերպելուն զուգահեռ Անդրանիկը ղեկավարում էր նաև ճակատի այլ հատվածների դիմադրական գործը, այսպես Սմբատին ուղարկեց Բիթլիսի ճակատ, Սեպուհը, որ անձամբ ժամանեց Անդրանիկի մոտ, մեկնեց Բաբերդ, գնդապետ Տ. Բաղդասարյանին նշանակեց Վանի շրջանի հրամանատար (որը սակայն Երևանից այդպես էլ դուրս չեկավ – Վ.Մ.), գեներալ Մ. Արեշյանն էլ, որին Անդրանիկը ընտրել էր բերդաքաղաքի պաշտպան, Ալեքսանդրապոլից երեք ամիս դուրս չեկավ⁴¹¹: Հ. Զավրիյանը Ավ. Ահարոնյանին գրում էր նույնիսկ, որ Արեշյանի ժամանումը կթուլացնի զինվորների ոգին⁴¹²: Ինչ վերաբերում էր Թորգոմին, ապա նրա ձեռնարկած անկախացման գործընթացը ու հատկապես Էրզրումում ռուսական դրոշն իջեցնելու, գեներալ Ի. Օդիշելիձեի հետ բախվելու, այլ խոսքով ռուսական գոնե ռազմական իշխանությունը չճանաչելու փաստը զայրացրել էր տեղի պաշտոնյաներին և Թորգոմն արստրվել էր Թիֆլիս: Հենց Անդրանիկի ջանքերով նա ազատվեց և վերջինիս հետ վերադարձավ Կարին: Զորավարը նրան վստահեց Հայկական 1-ին գնդի հրամանատարությունը և ուղարկեց Քղիի ճակատ: Այդ հատվածը կարևորվում էր նրանով, որ տեղի Թեքքե Դերեսի գյուղում 100-ից ավել հայ զինվորներ էին կուտակվել, որոնք պարբերաբար կռիվներ էին մղում թուրքերի դեմ և աջակցության կարիք ունեին:

Փետրվարի 10-11-ին Էրզրումից դեպի Բաբերդ և Մամախաթուն տանող ճանապարհներն ուղարկվեց կապիտան Ստոյակինի ջոկատը, կազմված Էրզրումի

⁴⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 49, թ. 2, 5:

⁴¹⁰ Տե՛ս Андраник Озаняан, էջ 264-267:

⁴¹¹ Տե՛ս Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 6, 1989, էջ 51:

⁴¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թթ. 254-255:

հետևակային գնդի 3 վաշտերից՝ մոտ 300 սվին, 200 հեծյալ, 2 գնդացի, 2 լեռնային հրանոթ: Այդ ջոկատը դիրքեր գրավեց Կորչմայի, Աշկալայի, Ենիքոյի լեռնանցքի և Կապդաղի մոտ: Փետրվարի 13-ին այդ առաջապահ ջոկատը հարձակման ենթարկվեց թուրքական 300 հեծյալների և քրդերի կողմից: Տեղի ունեցավ փոխհրաձգություն: Փետրվարի 14-ին թուրքական 700 հոգուց բաղկացած ջոկատը գրոհեց Աշկալայի ուղղությամբ, բայց ձախողվեց: Փետրվարի 15-ին, օգտվելով թանձր մառախուղից, թուրքերը Աշկալայի մոտ կրկին զգալի ուժեր կենտրոնացրին: Կապիտան Ստոյակինը գնահատելով իրադրությունը, հրամայեց հետ քաշվել դեպի Իլիջա, թուրքերը նրանց չհետապնդեցին: Փետրվարի 16-ին թուրքական առաջապահ զորքերը (200 հետևակ, 300 հեծյալ) Կորչմայի կողմից գրոհեցին Իլիջայի դիրքերը: Աշոտ Հարությունյանը նշում է, որ Անդրանիկը հայտնվեց մարտի դաշտում, քաջալերեց զինվորներին, որոնք հաջողությամբ ետ մղեցին թուրքերին⁴¹³: Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ նա ձևավորում է 54 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատ, որոնց կազմում նաև Ս. Վահագնը նպատակ ուներ դեպի Իլիջա շարժվող թուրքական զորամասին հարվածել թիկունքից⁴¹⁴:

Նկատի ունենալով, որ Անդրանիկը Էրզրում է ժամանել փետրվարի 16-ին, կարծում ենք, որ նրա մասնակցությունը մարտին իրականություն է: Սրանով մերժվում է նաև մյուս ամսաթվերի շրջանառության հարցը: Հիշարժան է նաև Արծթիկ և Չմշկածակի Յաղթուկ, Ձիթող գյուղերի հայ գյուղացիների, հատկապես պատանիների հերոսական դիմադրությունը, Խարբերդի Դատեմ գյուղի 12 կտրիճների պայքարը Հովհաննես Հովհաննիսյանի և Խաչիկ Հերոյանի (ԱՄՆ-ից ժամանած կամավոր) ղեկավարությամբ⁴¹⁵:

Մուրադի հետ խորհրդակցելով որոշվեց առաջնարիերթ կերպով ամրացնել Իլիջայի ճակատը: Փետրվարի 20-ին Կարին ժամանած անգլիական սպաների, կապիտան Հ. Բոնապարտյանի հետ Անդրանիկը մեկնեց Իլիջա: Պ. Բեժանբեկովի այս վաշտը, որը բաղկացած էր 217 զինվորներից, լքելով դիրքերը քաշվել էին գյուղ և մտադրվել էին տուն գնալ – փայտօմ տամօ (пойдем домой – Վ.Մ.):

Վերադառնանք անգլիացիներին. Թիֆլիսի անգլիական հյուպատոսության կողմից Կարին էին գործուղվել մայր Գոլդսմիթը և կապիտան Նեշը, որոնք փետրվարի 19-ին շրջայց կատարեցին դիրքերում, Իլիջայում Գոլդսմիթը ոգևորիչ ելույթ ունեցավ

⁴¹³ Տե՛ս Ա.Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 128-129:

⁴¹⁴ Տե՛ս Ե. Ճերեճեան, նշվ. աշխ., էջ 141:

⁴¹⁵ Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 175:

դասալքող գործամասի առջև: Վերադառնալով, Անդրանիկին նրանք զեկուցեցին տիրող իրավիճակի, հատկապես թնդանոթների անմխիթար վիճակի մասին և խոստացան աջակցել՝ նաև Ալեքսանդրապոլի ռուսահայ ազգային խորհրդի ջանքերով:

Անդրանիկի նախագահությամբ հրավիրվեց Էրզրումի ամրացված շրջանի շտաբի խորհրդակցություն, այստեղ մայր Գուլսամիթը 2000 ռուբլի վճարեց լքված բեռնատար մեքենաները Սարիղամիշ տեղափոխելու համար, քանի որ կայարանապետի անփութության պատճառով դրանք հայտնվել էին թշնամու ձեռքում⁴¹⁶:

Այս ժողովի ընթացքում էր, որ հայտնի դարձավ Իլիջայում Պ. Բեժանբեկովի գնդի պարտվողական վարքագիծը:

Ուշագրավ է, որ անգլիացիների նախաձեռնությամբ հայ զինվորները Կարնո դաշտի վրա հայկական խաչ գծեցին, որպես դաշնակից հայկական ճակատի նշանակետ, իսկ նահանջի դեպքում այն պետք է վերացվեր:

Այս ընթացքում կարևորվում է նաև քաղաքում թուրքական դավադրության խնդիրը:

Անդրանիկն այդ մասին տեղյակ էր, քանի որ Էրզրում գալով անմիջապես կազմակերպել էր հակալրտեսական ցանց. առաջիններից մեկը ձերբակալվում է մի ռուս սպա, որը պետք է պարզեր ու տեղեկացներ թուրքերին Անդրանիկի հետ Էրզրում եկած հայկական զինուժի թիվը: Բացահայտվում է նաև Անդրկովկասի թաթարական բարեգործական հաստատության լիազոր Սեիդովի գործունեությունը, որը հիմնականում դրամ էր ուղարկում Էրզրումի շրջանի թուրքերին՝ խռովություն կազմակերպելու նպատակով: Այդ կազմակերպության կենտրոնը Էրզրումն էր, Սեիդովն էլ՝ նրա լիազոր-ներկայացուցիչը: Անդրանիկին հաղթելու համար վերջինս պահանջում էր Էնվեր փաշայի ներկայությունը. «Եթե ոչ, մեր վախճանը շատ գեշ կըլլա»: Մեկ այլ գրության մեջ հաղորդվում էր, թե «Կովկասեն տեղեկություններ կան, որ չեն կրնար արգիլիլ հայ կամավորների մեկնումին, տեղ-տեղ գիծերը կտրած են (երկաթուղին – Վ.Մ.), բայց այդ բավական չէ»⁴¹⁷: Անդրանիկն ի վերջո որոշում է խռովությունը կանխելու նպատակով նախ ձերբակալել թուրք երկրորդական գործիչներին: Նրանց բացահայտման գործում էական դեր է խաղում պարսից հյուպատոսը⁴¹⁸:

⁴¹⁶ Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. Աշխ., էջ 160-163:

⁴¹⁷ Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերաձևված Հայաստան, թիվ 6, էջ 52:

⁴¹⁸ Տե՛ս Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմ. Օրագրութիւնը, էջ 85:

Խուզարկության ժամանակ Սեիդովի բնակարանի տանիքից հանվում են 4 հրացան, ռումբեր, զինվորական համազգեստով 2 թուրքեր: Քաղաքում թուրքական խռովությունը կանխելու գործում զգալի դեր խաղաց կարնեցի սպա, հազարապետ Վահան Շապանյանը, որի տեղեկատվության հիման վրա էին կայացվում Անդրանիկի որոշումներն ու հրամանները:

Այսպես, հենց Իբրահիմ Հաֆազի գլխավորությամբ ձերբակալեցին 10 ոճրագործ թուրքերի, նրանց թվում թաթար պրոպագանդիստ Ադաբեկովին՝ Սեիդովի գլխավոր գործակցին⁴¹⁹:

Փետրվարի 19-21-ը Անդրանիկի հրամանով Մ. Մելիք-Միրզախանյանի գլխավորած ստորաբաժանումը ձերբակալեց Էրզրումում գործող թուրքական գաղտնի կազմակերպության ղեկավարներին, ինչպես նաև հարևան գյուղերը մաքրեց ավազակախմբերից:

Հայտնի է նաև բերդերի հրետանու պետ, փոխգնդապետ, սևհարյուրակային սպա Տվերդոխլեբովի դավաճանական վարքագիծը: Նա ոչինչ չարեց հրետանին մարտական վիճակում պահելու համար, անձնատուր եղավ թուրքերին, դարձավ նրանց ծախու գրչակը և բազմաթիվ զրպարտություններ հորինեց հայկական զորամասերի և հատկապես Անդրանիկի հասցեին: Աշոտ Հարությունյանի կարծիքով թուրք պատմաբանները հիմնականում օգտագործում են այդ դավաճանի հակահայկական ու հակառուսական ստահոդ փաստերը⁴²⁰: Այդ մասին է փաստում նաև Ե. Լուդշուվեյտը⁴²¹:

Թուրքերը ի դեմս թաթար Բեկզադովի խնդրագիր են ներկայացնում Անդրանիկին, որն իր բովանդակությամբ ավելի շուտ պահանջագիր էր: Այնտեղ նշվում էր 400 թուրքերի ազատություն շնորհելու և հայ զինվորների կողմից թուրքերի տների վրա հարձակումները դադարեցնելու մասին: Անդրանիկը պատասխանում է. «Ասկէ առաջ տեղի ունեցած դէպքերուն մասին բնաւ պատասխանատու չեմ, իսկ յետ այսու ապահով ըլլալու էք, որ նմանօրինակ դէպքեր տեղի պիտի չունենան»⁴²²: Միաժամանակ ընդգծում էր, որ բոլոր խռովությունները՝ հայ, թուրք, թե քուրդ անխտիր պետք է հանձնվեն դաշտային տրիբունալին: Անդրանիկի այս քայլը կանխեց արդեն հասունացած

⁴¹⁹ Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 178:

⁴²⁰ Տե՛ս Ա.Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 128:

⁴²¹ Տե՛ս Ե.Փ. Լուդշուվեյտ, *Турция в годы Первой мировой войны (1914-1918)*, М., 1966, с. 173, այս մասին տես՝ մեր «Վերջաբանի փոխարեն»-ում:

⁴²² Տե՛ս Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 166:

խոովությունը: Որոշակի տազնապ առաջ բերեց նաև թուրքական օդանավի թռիչքը, որը ենթադրաբար գալով Քղիի ճակատից նպատակ ուներ հետախուզել Իլիջայի ու Աշկալայի ճակատները, դիրքերը և հասներ Բաբերդ: Ցավոք Էրզրումում հայ օդաչու չկար, իսկ երկու սավառնակները, որոնք ռուսներն էին թողել Արևմտյան բերդերի վրա, չէին գործում:

Անդրանիկն անհանգստանալով ներքին թուրքական խոովություններից տրիբունալի նիստ է հրավիրում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Վ. Թոթովենցը բարձր գնահատելով «Կարնո Տրիբունալի» դերը, միաժամանակ իր հուշագրության մեջ չի բացահայտում «հայկական դավաճանության» փաստերը⁴²³: Դա անում է Ա. Ամիրխանյանը: Անդրանիկն իր մոտ է հրավիրում Տ. Աղամալյանին և մի քանի արևելահայ բարձրաստիճան սպաների ու Մուրադի ու Հ. Բոնապարտյանի հետ դռնփակ խորհրդակցություն է անցկացնում: Դասալքության պատասխանատվությունը իրենից վանելու նպատակով, Տ. Աղամալյանն օրինակ, հիմնավորում էր զինվորական չլինելու հանգամանքով և զինվորների բոլշևիկացմամբ: Այս կապակցությամբ Անդրանիկի պատասխան խոսքը հարկ ենք համարում ներկայացնել ամբողջությամբ: «Ես ձեզ կը ճանչնամ երկար ատեն է ի վեր, ծանօթ եմ նաև ձեր կեանքին և հայրենասիրութեանը: Յիմարութիւն է մեզի՝ ակնկալել ձեզմէ ազգասիրութիւն: Դուք ռուսի ստրուկներն էք. ձեր ծառայութիւնը միայն անոր համար է: Ազգ, Հայրենիք ձեզ համար գոյութիւն չունին և մեզ չափ անգամ չէք ուզեր մտածել անոնց մասին: Դավաճանութիւն պէտք է նկատել ձեր այս քայլը: Կատարեալ ապուշութիւն: Երբ Կարինը գրաւեց թշնամին, գրավուած է Կարս եւ Ալեքսանդրապօլ: Նազարպէկօֆ թող Ալեքսանդրապօլ ռազմական յատակագիծներ պատրաստուէ, եւ դուք միլիոնաւոր բուպլիներ մսխեցէք ու գրպանեցէք Հայ բանակի հաշտոյն, տեսնենք վաղը ո՞վ տեր պիտի դառնայ այս երկրին: Զինուորը մեղաւոր չէ, դուք էք վատերը, անոնց հայրենասիրական խանդ ու կորովը դուք մեռցուցած էք ձեր բարոյական անկումով: Այս բոպէիս ոտքի պիտի կանգնիք եւ ինձի հետ ճակատ պէտք է շարժիք»⁴²⁴:

Զորավարն առաջարկեց Տ. Աղամալյանին զբաղվել հիվանդների, վիրավորների, որբերի և այրիների փոխադրության գործով, մյուսներին հրամայեց, որպեսզի զինապարտության տարիքին համապատասխան բոլոր երիտասարդներին փոխադրեն

⁴²³ Տե՛ս Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 6, էջ 53:

⁴²⁴ Ա. Ամիրխանեան, նշվ. աշխ., էջ 170:

կարևոր ճակատները: Անդրանիկի շնորհիվ էր, որ մոլոկանները ստիպված կառքեր ու սայլեր տրամադրեցին, Ռուսական Կարմիր խաչը՝ ավտոմեքենաներ: Հուսադրող էր այն նաև, որ ամեն օր Կարսից և Սարիղամիշից 100-150 հայ զինվորներ էին հասնում Կարին: Դրանք հիմնականում Ռումինիայից, Բուլղարիայից և Սև ծովի առափնյա շրջաններից տեղափոխված արևմտահայեր էին, որոնք նախկինում կռվել էին Անդրանիկի կամավորական ջոկատում. նրանք անմիջապես ճակատ ուղարկեցին: Հույս կար, որ ևս 1500 զինվորներ երկու օրից կհասնեին Կարին⁴²⁵: Թ. Նազարբեկյանի վկայությամբ, մինչև Էրզրումի անկումը նույնիսկ, բազմաթիվ խմբեր դեռ շարունակում էին մտնել Կարին: Դրանց թիվը կազմեց շուրջ 2000 զինվոր, ընդունում և պարենով ապահովում էր Հ. Բոնապարտյանը⁴²⁶:

Դրությունն ինչ-որ չափով բարելավվեց. ավելացվեց քաղաքը պաշտպանող զինվորների թիվը՝ 600-700 հոգի, կանոնավորվեց հեռախոսակապը, կարող սպաները ստացան կենսական կարևորություն ունեցող պաշտոններ, բժիշկները սկսեցին ավելի գործնական աշխատել, սկսեցին բաշխվել հափշտակված նպաստները, հեռացվեցին կարգազանց ու կաշառակեր պաշտոնյաները և նրանց նկատմամբ հսկողություն սահմանվեց: Զինվորական գործի պատասխանատու կապիտան Հ. Բոնապարտյանն էր, որն իրավամբ հսկայական աշխատանք իրականացրեց⁴²⁷:

Այս ամենի հետ, Անդրանիկին մտահոգում էր թիկունքի վիճակը և, իհարկե, քաղաքական որոշումների անդառնալիության հանգամանքը: Նա շատ քչերի հետ էր կիսվում այն հարցի շուրջ, որ ռուսահայ հրամանատարությունը նախապես որոշել էր թողնել Կարինը և նահանջել 1914 թ. սահմանները, զիջել նաև Սարիղամիշն ու Կարսը և պաշտպանել 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի սահմանը՝ Ախուրյան գետը:

Անդրանիկի մտահոգությունը հիմնավորվում է նախ և առաջ Թ. Նազարբեկյանի կողմից Թիֆլիսում տրված զեկուցման միջոցով, ինչին մենք անդրադարձել ենք արդեն:

Անդրանիկի ողբերգությունը նրանում էր, որ իմանալով դա, օգնություն չակնկալելով, նա իր անունն ու հեղինակությունն էր ստիպված օգտագործում, հույս ունենալով որ ունեցած չնչին ուժերով կարող է իրականացնել բախտորոշ ու վճռական

⁴²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 172-173:

⁴²⁶ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 70:

⁴²⁷ Տե՛ս Ա. Ամիրխանյան, նշվ. աշխ., էջ 173-174:

դիմադրությունը: Նա, իհարկե, մենակ չէր, բայց դա միանշանակ փոքրամասնություն էր...

Թ. Նազարբեկյանը Կարինի դեմ թուրքական անմիջական ռազմական գործողությունները սկսում է թվագրել փետրվարի 23-ից⁴²⁸: Մինչդեռ, փետրվարի 19-ին Իլիջայի գնդի 19-րդ վաշտի ուժերը և Սեպուհը հարձակման անցնելով գրավում են Ագադիր գյուղը: Աջ թևում նկատվում էր հակառակորդի անկանոն գորքերի կուտակում Թեքեդերեսինի ուղղությամբ կասեցվում է քրդերի առաջխաղացումը: Շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը Էրզրումի ամրացված շրջանի ջոկատների հրամանատարներին փոխանցելով Անդրանիկի երախտիքի խոսքերը, միաժամանակ նրանց տեղեկացնում էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Բաթումը, Կարսն ու Արդահանը անցել են թուրքերին⁴²⁹:

Պորուչիկ Մ. Մելիք-Միրզախանյանի ջոկատը ամրոցից դուրս եկավ նույն օրը և չորս օրվա ընթացքում իրեն հատկացված շրջանի մի մասը՝ Արզիկ-Թուրսիկ-Ուրթուզի-Իգդասուր-Խաչիկվանք-Արծթիկ-Դինար-Կում գիծը ամբողջովին մաքրեց հակառակորդի ուժերից, որոնք անցան Կարինի սարահարթից դեպի հյուսիս ընկած լեռները: Այդ գործողությունը կանխեց թշնամու անկանոն խմբերին միանալ Իլիջայի շրջանում գործող թուրքական կանոնավոր ջոկատին և հույս ներշնչեց, որ թշնամուն կարելի է նաև հաղթել: Փետրվարի 22-ի գիշերը մեկ ջոկատ՝ կապիտան Ստոյակիինի գլխավորությամբ հասավ Իլիջա, բայց չկատարեց առաջադրանքը⁴³⁰:

Ուշագրավ մեկ մանրամասն է պարզվում. անվանի վրիժառու Միսաք Թորլաքյանը այս օրերին 600 հոգանոց զինական խմբով օնության էր եկել Էրզրումում գտնվող Անդրանիկին: Բերդամրոցի անկումից հետո Կարսում նա միացել էր Զեմյակին և մասնեկցել Բաշ-Ապարան մայիսյան մարտերին⁴³¹:

Փետրվարի 23-ին թուրքերը շարժվեցին Արճիկի ուղղությամբ, որը գտնվում էր Խարբերդի խճուղու վրա՝ Էրզրումից 20 վերստ հեռավորությամբ: Այստեղ կանգնած էր Երզնկայի 1-ին գումարտակը: Գեներալ Շատիլովի վկայությամբ թուրքերն ու քրդերն այստեղից դուրս քշվեցին⁴³²:

⁴²⁸ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 70:

⁴²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, թթ. 42-42 շրջ.:

⁴³⁰ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 70:

⁴³¹ Տե՛ս 1918 թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Երևան, 2014, էջ 161:

⁴³² Տե՛ս Кавказское Слово, Тифлис, 1918, 24 февраля, № 44.

Փետրվարի 24-ի գիշերը Անդրանիկը հրամայեց Էրզրումի գնդին և 4-րդ հայկական գնդի երկու վաշտերին ետ գրավել գյուղը: 4-րդ հրաձգային գնդի գումարտակներից մեկը հրաժարվեց առաջանալ, ուստի և սկսեցին նրանց համոզել, մինչև որ 800 հոգուց բաղկացած Թորգոմի ջոկատը առավոտյան 10-ին դուրս եկավ Էրզրումից: Նույն Խարբերդի խճուղու վրա, Էրզրումից 12 վերստ հեռավորությամբ Թորգոմի ջոկատը հանդիպեց թուրքական կանոնավոր ուժերին, որոնք սկզբում նահանջեցին, բայց օգնություն ստանալով սկսեցին նեղել Էրզրումի գնդին: 4-րդ գնդի վաշտերը Թ. Նազարբեկյանի վկայությամբ իբր գտնվում էին պահեստագործում, ինչի պատճառով էլ չէին մասնակցում մարտին: Ցերեկվա ժամը 2-ին թուրքերը շրջանցեցին Էրզրումի գնդի աջ թևը և հարկադրեցին նրան անկանոն նահանջել Էրզրում: Այս մարտում Թորգոմը ձեռքի վնասվածք ստացավ, ինչն ավելի սրեց 4-րդ գնդի զինվորների խուճապը, որոնք առանց զոհերի երեկոյան վերադարձան քաղաք: Երբ հայտնի դարձավ մարտի արդյունքը, ջոկատի շտաբը հրամայեց Երզնկայի գնդի վաշտերով զբաղեցնել բերդի բոլոր ամրություններն ու դարպասները Էրզրումից հարավ-արևմտյան ուղղությամբ⁴³³:

Փետրվարի 25-ի առավոտյան Վեհիբ փաշան նամակ ուղարկեց Էրզրում՝ Անդրանիկին, որը ստացվեց կեսօրին:

Այնտեղ ասված էր. «Անդրանիկ փաշային և Կարնո հայ մեծամեծներին:

Օսմանյան բանակի բոլոր հաղթական Գոլ Օրտունները (հորդաներ – Վ.Մ.) շարժման մեջ են դրված գրավելու համար մեր հայրենի հողերը: Ռուսական դեմոկրատիկ հանրապետության ներկայացուցիչները Բրեստ-Լիտովսկում մեզ են հանձնել մեր իսկ հողամասերը եղող Բաթումը, Կարսը, Արդահանը, Օլթին և Արդվինը: Հետևապես, ձեզ առաջարկում եմ անմիջապես հեռանալ մեր սահմաններից, այլապես օրենքի ուժով կպատժենք խստորեն: Շուտով մեր զորքերը ափ են իջնում Բաթումում և շարժվելու են դեպի Կարս: Օսմանյան Գոլ Օրտունների հրամանատար՝ Վեհիբ⁴³⁴:

Անդրանիկի կարգադրությամբ Վ. Թոթովենցը պատասխանեց. «Օսմանյան Գոլ Օրտունների հրամանատար Վեհիբ փաշային.

Այն նույն ռուսական դեմոկրատական հանրապետությունը, որ Բրեստ-Լիտովսկում ձեզ է տվել Բաթումը և Կարսը, մեզ էլ զենք, ռազմամթերք և ամեն տեսակի միջոցներ է տվել պաշտպանելու համար մեր անժխտելի հայրենիքը հանդիսացող

⁴³³ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 70-71:

⁴³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 41, թ. 14:

Կարսը, Կարինը, Վանը, Բիթլիսը և մնացած այն չորս նահանգները, որոնք տակավին հեծում են ձեր բռնակալության տակ: Ռուսական դեմոկրատական հանրապետությունը մեզ տվել է ինքնորոշվելու պատեհություն և մենք այստեղ ենք եկել ինքնորոշվելու: Թե որի՞նն է այս հողը՝ ձե՞րը թե մերը՝ զենքի ուժը պետք է որոշի: Մենք պատրաստ ենք կռվի: Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ»⁴³⁵:

Անդրանիկը ծիծաղով ընդունեց թուրքերի կողմից Բաթում մտնելու փաստը, ընդգծեց, որ դեռ 15 օր կա դրա մասին խոսելու համար, բայց միաժամանակ հեռագրեց Թիֆլիս և Ալեքսանդրապոլ՝ հետախուզելու Ախալցխա-Ախալքալաք հատվածը և զորքերը ուժեղացնել Մերդենեկի ուղղությամբ⁴³⁶:

Վեհիբ փաշայի սպառնալիքները, հասկանալի է, հիմնավորված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի տրամաբանությամբ և միաժամանակ, այդ համատեքստում միամիտ ու հիմնազուրկ էին հնչում Վ. Թորթվենցի «սպառնալիքները» և հատկապես Ռուսաստանի կողմից աջակցություն ստանալու հանգամանքը: Խնդիրը հենց նրանում էր, որ հայերին էրզրումում ու հետո աջակցում էին ռուս պետականամետ զինվորներն ու գեներալները, այլ խոսքով ազգային ռուս գործիչները, որոնց համար մեծագույն ցավ էր պատճառում գրավյալ տարածքները կրկին թուրքերին թողնելու ողբերգությունը: Վ. Թորթվենցի պատասխանի միակ, բայց հակասական հիմնավորումը «Թուրքահայաստանի մասին» բոլշևիկյան հրովարտակն էր, որը սակայն Բրեստ-Լիտովսկով վերջնականապես ի չիք դարձավ:

Նույն փետրվարի 25-ի առավոտյան թուրքերը Տրապիզոնի խճուղով անցան հարձակման, հեշտությամբ հաղթահարեցին Աշկալայի կամավորներին և առանց մարտի հասան Իլիջա: Այստեղ տեղակայված 1-ին հայկական հրաձգային գունդը ոչ երկարատև հրաձգությունից հետո, թողեց Իլիջան և ետ քաշվեց էրզրում: Հայկական կողմը կորցրեց սպանված՝ 10, վիրավոր՝ 180 և անհետ կորած՝ 50 զինվոր, կանտուզիայի ենթարկվեց Թորգոմը, ծանր վիրավորվեց Տեր-Դանիելյանը⁴³⁷:

⁴³⁵ Ա. Մարմարեան, նշվ. աշխ., Վերածնված Հայաստան, թիվ 9, 1989, էջ 58:

⁴³⁶ Տե՛ս նույն տեղում:

⁴³⁷ Տե՛ս Кавказское Слово, 1918, 1 марта, № 47, նաև՝ Մշակ, 1918, 3 մարտի, թիվ 45:

Այսպիսով, փետրվարի 25-ին գնդի բոլոր զորաջոկատները գտնվում էին Էրզրումում՝ զբաղեցնելով բերդի ամրություններն ու դարպասները: Ամրոցից դուրս, մթերանոցների մոտ դեռ մնում էին 1-ին գնդի երկու վաշտեր⁴³⁸:

Փետրվարի 25-ի ուշ երեկոյան Անդրանիկը հրավիրեց հրամանատարների խորհրդակցություն՝ հայտարարելով նախապես, որ առավոտյան անհրաժեշտ է հարձակվել Խարբերդի ու Տրապիզոնի խճուղիներով և վերագրավել Աշկալայի դիրքերը⁴³⁹:

Խորհրդակցության ժամանակ կարծիքներ հայտնեցին Մ. Զինկևիչը, Ն. Մորելը, Ա. Դուլուխանյանը և Անդրանիկը: Ամրոցը հանձնելու կողմ են խոսում Մ. Զինկևիչը, Ն. Մորելը և Ա. Դուլուխանյանը: Մորելը կարծիք էր հայտնում, որ իր հրամանները չեն կատարվելու, կարելի է կանխատեսել զինվորների ինքնակամ դասալքում, ուստի առաջարկում էր կազմակերպել սպասվող նահանջը: Ա. Դուլուխանյանը գնահատելով հրետանու անգործությունը, եզրակացնում էր, որ Էրզրումը բերդ չէ, այլ քաղաք, ուստի և պետք է հանձնել քաղաքը:

Անդրանիկը նախ կշտամբում է Ն. Մորելին նշելով, որ գնդապետ Մորելի հրամանները չեն կատարվել ուրիշների կողմից, իսկ «իմ հրամանները նրա կողմից»: «Ես չեմ ուզում փախչել քաղաքից: Անհրաժեշտ է Էրզրումը կրակի տալ. կա՞ 2000 զինվոր, որ կարող է այստեղ մեռնել: Հայաստանն արդեն կորցրել է 1 միլիոն ժողովուրդ, 70000 մեր կանայք ու 60000 որբեր նրանց (թուրքերի – Վ.Մ.) մոտ են ապրում»:

Նա դարձյալ դժգոհում էր, որ իր հրամանները չեն կատարվել, միաժամանակ հույս ուներ, որ երեք օրից իրավիճակը կշտկվի⁴⁴⁰:

Խորհրդակցությունից հետո Մ. Զինկևիչի հետ մասնավոր զրույցի ժամանակ 1-ին հրաձգային գնդի և 4-րդ գնդի գումարտակի հրամանատարները հայտարարեցին, որ իրենք հույս չունեն իրենց զորամասերից և նույնիսկ կասկածում են, թե կարող են նրանց դուրս բերել բերդի պարիսպներից: Թ. Նազարբեկյանի համար անհայտ էր մնում այդ կարծիքը Անդրանիկին տեղյակ պահելու հանգամանքը: Փետրվարի 26-ի առավոտյան 5-ին Անդրանիկն իր մոտ կանչեց Երզնկայի գնդի հրամանատար Կ. Հասանփաշայանին և հրամայեց մի գումարտակով ներկայանալ իր շտաբը: Ժամը 6-ին, այդ գումարտակը, որ

⁴³⁸ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 71:

⁴³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, թթ. 165-166:

կազմավորվել էր Փամբի ջոկատից ու կամավորներից պորուչիկ Մելիքսեթյանի ղեկավարությամբ ներկայացավ շտաբ: Անդրանիկի կարճ ելույթից հետո, ջոկատը նրա գլխավորությամբ Տրապիզոնի խճուղով շարժվեց Գյոզ գյուղի ուղղությամբ: Առջևից գնում էին Անդրանիկը, գնդի հրամանատարը և 10 սպաներ: 2-3 վերստ հեռավորության վրա գյուղ ուղարկվեցին համհարզներ՝ պարզելու, թե այն գրավված է արդյոք թուրքերի կողմից: Գյուղից 200 մետր հեռավորության վրա լսվեցին կրակոցներ, որի հետևանքով զինվորները սկսեցին ցրվել, սակայն Անդրանիկի կոչով նորից համախմբվեցին և վազքով գրոհեցին դիրքերը. թուրքերը 1000 քայլի վրա բացեցին հզոր գնդացրային ու հրացանային կրակ: 12 հեծյալներից թաքստոց հասան Անդրանիկի երեք հեծյալները և Կ. Հասանփաշայանը, մյուսները՝ զոհվեցին, գումարտակը ցրվեց: Մեկ ժամ անց, 100-150 ողջ մնացած հայ զինվորները, որոնք հասել էին տներին, սկսեցին նեղել թուրքերին: Նրանք ունենալով 2 վաշտ ու 4 գնդացիր, լքեցին գյուղը և նոր դիրքեր գրավելով հրետանային կրակ բացեցին Գյոզ գյուղի վրա⁴⁴¹:

Հայ սպաների մեծ մասը, այդ թվում պորուչիկ Մելիքսեթյանը զոհվեցին այս մարտում: Ընդհանուր առմամբ զոհվեցին 40 և վիրավորվեցին 125 զինվոր ու սպա: Գրավելով Գյոզը, թուրքերը շարժվեցին Էրզրում և Երեկոյան գրավեցին պարենային պահեստները: Երեկոյան 7-ին մարտն ավարտվեց և հայկական բոլոր զորամասերը հայտնվեցին բերդից դուրս և հրամանի համաձայն զբաղեցրին հետևյալ դիրքերը. 1-ին Հայկական հրաձգային գունդը – Օլթիի դարպասներից մինչև Տրապիզոնի դարպասը, Երզնկայի գնդի 6 վաշտերը – Տրապիզոնի դարպասից մինչև Կարսի դարպասը, 4-րդ հրաձգային գնդի գումարտակը – Կարսի դարպասից մինչև Օլթիի դուռը, Երզնկայի գնդի 1-ին վաշտը կանգնած էր քաղաքի թուրքական թաղում, 2-րդ վաշտը՝ ջոկատի շտաբի մոտ, Երզնկայի ու Էրզրումի գնդերի 3 գումարտակները՝ պահեստագործում էին: Ինչ վերաբերում էր խմբապետների վաշտերին, ապա նրանց մասին այլևս տեղեկություն չկար:

Գիշերն էլ շտաբում վիճում էին՝ նահանջի դեպքում ամրություններն ու հրետանային պահեստը պայթեցնելու մասին: Շտաբային սպաների մի մասը՝ Ն. Մորելի գլխավորությամբ պնդում էին պայթեցնելու վրա, իսկ բերդ – ամրոցի հրետանավոր սպաները՝ բերդի հրետանու պետ, գնդապետ Տվերդոխլեբովի գլխավորությամբ դեմ էին

⁴⁴¹ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 72, նաև՝ Ա-Ռո, Հայության երկունքը, Էրզրումի անկումը, նույն տեղում, էջ 269:

պողպորուչիկ Բաբանը: Առավոտյան ժամը 7-ին, երբ մառախուղն արդեն ցրվել էր, տեսանելի դարձավ, թե ինչպես թուրքական երկու զորասյուն շարժվում են Բերդի վրա:

Բերդի հրետանին՝ 15 դաշտային հրանոթներ վերջապես կրակ բացեցին Քերեմեթի, Մեջիդիյե և Սուրբ Նշան ամրոցներից և Տրապիզոնի դարպասներից, իսկ հրացանագարկի հեռավորության վրա, երզնկացիների 1-ին, 2-րդ և 3-րդ վաշտերի և երզրումցիների 1-ին վաշտի դիրքերում մնացած զինվորները կրակ տեղացին թուրքերի վրա: Թ. Նազարբեկյանի տվյալներով, մինչև Էրզրումի անկումը ներառյալ, Կարսի դարպասների Մեջիդիյե ամրությունից միայն ընդամենը երեք կրակոց է իրականացվել: Տվերդոխլեբովի դավադրության մասին է վկայում նաև այն փաստը, որ Խարբերդի ու Տրապիզոնի դարպասների վերոհիշյալ մարտի ժամանակ, Երզնկայի գնդի 2-րդ վաշտի հրամանատար պորուչիկ Խաչատուրովի խնդրանքներին հակառակ, Բոյուք-Քերեմեթիի հրետանավոր սպաները պատասխանում են, որ չունեն հրետանու պետի, այսինքն՝ Տվերդոխլեբովի հրամանը:

Ավելին, զինվորները պարզեցին հենց գրոհի ժամանակ, որ հրետանու բոլոր մարտկոցները զուրկ են փականներից և որ դրանք պահվում են հրետանու պահեստում, այսինքն՝ նույն մարդու մոտ⁴⁴⁵:

Ըստ Ս. Վահագնի, թնդանոթների մարտկոցների հրահանգիչ սպաները վրացի էին, իսկ զինվորները՝ անփորձ հայ երիտասարդներ: Տ. Աղամալյանի վարքագծի առնչությամբ հիշատակենք նաև Ս. Վահագնի մտորումները. «Մօտենում եմ Անդրանիկին, յայտնում եմ. «Փաշա, մեզ 100 տղայ տրամադրե՛: «Փաշան բարկացած մի ապտակ է հասցնում երեսիս եւ ասում «ձեր եւ Սուրատին խերը անի՞ծեմ, չկարողացաք թշնամուն կռնակէն հարուածել»: Պոնափարթեան մօտեցավ. «Փաշա Վահագն է, ինչո՞ւ կ'ապտակես». դարձաւ նրան էլ մի լաւ ապտակ: Տղաները շարքի դրեց: Վերեւ բարձրացայ. Պատմեց Փաշան բարկացած. «Ներիր Վահագ ճան, խըրսըս (հերսս – բարկությունս - Վ.Ս.) քեզնից առի». «ինչու բարկացեր ես Փաշա». «ինչի չի բարկանամ. կարդա այս վարժապետ Զինուորական Խորհուրդի, Աղամալեան սրիկաների հրամանը: Ովքե՞ր են նրանք առանց իմ կամքս առնելու ժողովուրդին Կարինից նահանջի հրաման են տալիս: Ես որ 10 տղայով 10 հազար թուրք զօրքին կռնակ չեմ դարձուցեր, հիմակ այս

⁴⁴⁵ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 73:

մեր վարժապետ սրիկաները տասը հազար մարդով քանի մը հազար խլոտ զօրքերի առաջկէ զիս կը պարտադրէն, որ կռնակ դարձնեմ, փախիմ»:

«Անդրկովկասի դրոյթյան մասին» զեկուցագրում Յա. Մակովսկին 1918 թ. ապրիլի 19-ին Մոսկվայում գրում էր, որ «Էրզրումը հանձնվեց գրեթէ առանց հրետանային կրակի, մինչդեռ, այնտեղ բացի Էրզրումի հրետանուց տեղակայվել էր նաև Կարսի ամրոցի հրետանու $\frac{3}{4}$ -ը⁴⁴⁶:

Թուրքերը երեք անգամ գրոհեցին այս ամրությունների վրա, բայց ամեն անգամ մեծ կորուստներով նահանջում էին:

Ժամը 10-ին 1-ին Հրաձգային գունդը ևս թողեց իր դիրքերը և շարժվեց Կարսի դարպասների ուղղությամբ: Խարբերդի դարպասների մոտ կրկին բռնկված դաժան սվինամարտում հերոսաբար զոհվեց պորուչիկ Խաչատուրովը. բոլոր զորամասերը հիմնականում կենտրոնանում էին Կարսի դարպասների մոտ: Ժամը 12-ին բոլոր դիրքերը դատարկվեցին և թուրքերը Խարբերդի ու Տրապիզոնի դարպասներով մտան Էրզրում: Հայկական ուժերի շտաբը հեռացել էր քաղաքից ժամը 11-ին: Բոլորը ցրվեցին. Կարսի դարպասների մոտ մնացել էին Երզնկայի գնդի երկու գումարտակ և Մուրադի ու Սեպուհի հեծյալները: Ժամը 13-ին թուրքերը հայտնվեցին նախկին շտաբի շենքի մոտ: Կարսի դարպասների մոտ Երզնկայի գնդի վաշտերը հրաձգություն սկսեցին և հեռացան դեպի Հասան-Կալա: Հետագայում պարզվում է, որ բերդամրոցի հրետանու ոչ մի սպա ջոկատի հետ չի հեռացել Էրզրումից. նրանք բոլորը՝ 80 հոգի՝ իրենց պետ Տվերդոխլեբովի հետ հանձնվել էին թուրքերին⁴⁴⁷:

Իր գնահատականների մեջ ծայրահեղ դիրքորոշում որդեգրած հեղինակ Ավետիս Եափուճյանը Պ. Բեժանբեկովին և Ա. Ջանփոլադյանին ևս համարում էր դավաճան, Պ. Բեժանբեկովին համեմատում էր Տ. Աղամալյանի հետ: Նրա կարծիքով, Տ. Աղամալյանի մեղքով պաշարման մեջ է ընկնում Թորգոմը և երբ 170 զինվորներից միայն 31-ի հետ վերադառնում է քաղաք, նա Վ. Թոթովենցին զայրալից տոնով հայտնում է. «Ծո՛, այս սրիկաները Անդրանիկին գերի պիտի ձգեն»⁴⁴⁸:

Փետրվարի 27-ին, արդեն Հասան-Կալայից ստացվում է ջոկատին ուղղված Անդրանիկի վերջին կարգադրությունը. «Այսօր, փետրվարի 27-ի առավոտյան թողեցինք

⁴⁴⁶ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 4033, ց. 2, գ. 916, թ. 1:

⁴⁴⁷ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 74:

⁴⁴⁸ Տե՛ս Ալետիս Եափուճեան, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական, զինուորական, տնտեսական, ընկերային կացութիւնը, «Արեւ»-ի թերթօն, Գահիրէ, 1972, էջ 258:

Էրզրումը: Ներկայումս ես Հասան-Կալայում եմ, սպասում եմ ձեզ: Նահանջեք առանց խուճապի, կարգով, տեղյակ պահեք Խլաթի ջոկատին, վերացրեք պահեստները»⁴⁴⁹:

Գիշերը Հասան-Կալա հասան նաև Երզնկայի գնդի հետնապահ վաշտերը և Մուրադի ու Սեպուհի հեծյալները: Անդրանիկը նույն օրը դուրս եկավ Հասան –Կալայից, այնտեղ մնացին գնդապետ Ն. Մորելը իր շտաբով և գնդապետ Մ. Զինկևիչը: Փետրվարի 28-ին մնացած ջոկատները և Մուրադի ու Սեպուհի հեծյալները մտան Քյոփրի-Քյոյ, որտեղ, ինչպես և Հասան-Կալայում գրեթե մարդ չկար, այրվում էր ամեն ինչ:

Մարտի 1-ին նրանք շարժվեցին Խորասան: Լքված հրանոթների մեծ մասը, բացառությամբ հեռահար դիրքային թնդանոթների, շարքից հանվեց: Պայթեցման նախապատրաստված ռազմամթերքի պահեստները չպայթեցին՝ գնդապետ Ա. Դոլուխանյանի անփութության պատճառով, համբարակային (ինտենդանտական) և ինժեներական պահեստներն ու շինությունները, անվաղողերի հսկայական պաշարները, որոնք պահանջել էին գերմանացիները, անվնաս ընկան թշնամու ձեռքը⁴⁵⁰:

Հաջողվեց երկաթուղային շարժակազմի մեծ մասը դուրս բերել քաղաքից և հասցնել Խորասան:

Հայկական կողմի զոհերի վերաբերյալ քիչ տեղեկություններ են պահպանվել: Վարդգես Ահարոնյանի մոտ ենք հանդիպել որոշակի թիվ, այն է՝ 600 սպանված և վիրավոր⁴⁵¹: Փետրվարի 28-ի Ի. Օդիշելիձեի հեռագիրը վկայում էր, որ հայկական կողմի զոհերի թիվը հասնում է 200-ի: Առավել ուշագրավ է թուրքերի զինուժի թվի փաստումը, այն է՝ 3000 հետևակ, մի հեծելազուն, 3 էսկադրոն, 4 թնդանոթ, 4 գնդացի և 1 ակերպական⁴⁵²:

Փետրվարի 28-ին Անդրկովկասյան սեյմի նախագահ Ա. Զիսեիձեն ստացավ Էրզրումի գրավման լուրը՝ գեներալ Վիշինսկու փետրվարի 27-ի թիվ 498 հեռագիրը: Գնդապետ Մ. Զինկևիչը Հասան-Կալայից հայտնում էր, որ փետրվարի 27-ի վաղ առավոտյան Էրզրումի կայագործի զորամասերը՝ Հայկական 1-ին հրաձգային գնդի զլխավորությամբ սկսեցին լքել քաղաքը⁴⁵³:

⁴⁴⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, թ. 66:

⁴⁵⁰ Տե՛ս Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 71:

⁴⁵¹ Տե՛ս Վարդգես Ահարոնյան, Կովկասեան ռազմաճակատը եւ հայերը, Հայրենիք, Բոստոն, 1955, հոկտեմբեր, թիվ 10, էջ 31:

⁴⁵² Տե՛ս Մշակ, 1918, 3 մարտի, թիվ 45, Արև, 1918, 6 մարտի, թիվ 48, Վան-Տոսպ, 1918, 11 մարտի, թիվ 7, Պայքար, Թիֆլիս, 1918, 15 մարտի, թիվ 54:

⁴⁵³ Տե՛ս Кавказское Слово, 1918, 1 марта, № 47.

Էրզրումի անկման մասին Կովկասյան բանակի շտաբը մարտի 3-ին պաշտոնապես հայտնեց Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովին և Հայոց ազգային խորհրդին: Նշվում էր, որ փետրվարի 27-ին գեներալ-կոմիսարի տեղակալ Հ. Ջավրիյանը, Էրզրումի շրջանի կոմիսարի տեղակալ Տ. Ադամայանը և մյուս պաշտոնյաները թողել են Էրզրումը, իսկ փետրվարի 28-ին հեռացել են Հասան-Կալայի Կոմիսարիատի անդամները, մարտի 1-ին՝ Խորասանի պաշտոնյաները և բոլորը կենտրոնացել են Սարիղամիշում:

Կարևոր է նաև այն փաստը, որ Էրզրումի անկման հետևանքով այս և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների վարչակազմերը չէին վերակազմավորվելու Սարիղամիշում և ըստ բանակի հրամանատարի ու Հ. Ջավրիյանի կարգադրության, դրանք պարզապես էվակուացվում էին Թիֆլիս⁴⁵⁴:

Խուճապն ու անկազմակերպ վիճակն այնքան աղետալի էր, որ նույնիսկ Անդրանիկի գործադիր շտաբի պետ Մ. Զինկևիչը իր հետ չունեի և ոչ մի համհարգ-թիկնապահ և ստիպված էր մի քանի սպաներով միանալ Երզնկայի գնդի զինվորներին, որպեսզի սովի չմատնվի: «Կարաուրգանում,- գրում էր Թ. Նազարբեկյանը,- իսկական բաբելոնյան աշտարակաշինություն էր. անհատ զինվորները հեռանում էին Սարիղամիշ, այնտեղից՝ տարբեր խմբեր և պարզամիտ զինվորներ հակառակը՝ գնում էին Էրզրումը վերագրվելու: Ջոկատի շարժի մասին ոչ մի հրաման չկար (Անդրանիկի փետրվարի 27-ի հրամանը ուշ էր հասել – Վ.Մ.): Սպաները, զինվորները գնում էին ուր ուզեին, երբ ուզեին»⁴⁵⁵: Գաղթականության դանդաղ շարժը ապահովում էին Մուրադը և Սարգիս Ճեպեճյանի ուժերը⁴⁵⁶:

Մահմեդ Վեհիբ փաշայի 1918 թ. փետրվարի 12-ի հրամանի համաձայն, ռազմաճակատի կենտրոնական հատվածում՝ Էրզրում – Ալեքսանդրապոլ ուղղությամբ սկսեցին գործել 1-ին բանակային կորպուսի երկու՝ 9-րդ և 36-րդ Կովկասյան դիվիզիաները: 11-րդ Կովկասյան դիվիզիան մնում էր պահեստում:

Քյազիմ Կարաբեքիր փաշայի վկայությամբ Տրապիզոն – Բաթում ուղղությամբ տեղակայված 6-րդ բանակային կորպուսի 37-րդ Կովկասյան դիվիզիան գրավեց Բաբերդը, փետրվարի 24-ին՝ Տրապիզոնը: Ինչ վերաբերում էր Էրզրումի ուղղությամբ

⁴⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 11:

⁴⁵⁵ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 75:

⁴⁵⁶ Տե՛ս Андраник Озанян, էջ 270-273:

գործող 1-ին բանակային կորպուսի, ապա 36-րդ դիվիզիայի կազմի մեջ մտնող նրա մի շարք զորամասեր մոտեցան Ենիքոյ – Աշկալա – Մամախաթուն գծին, Կուպ-դաշի լեռնանցքին և փետրվարի 21-ին գրավեցին Մամախաթունը: Դրանից հետո, փետրվարի 25-ին թուրքերը գրավեցին Աշկալան, փետրվարի 26-ին Ենիքոյը, մարտի 2-ին Կարաբյուկ – Խանելերը⁴⁵⁷:

Գ. Ղորղանյանի տվյալներով թուրքական զորախումբը միայն Էրզրումի ուղղությամբ աջակցություն էր ստանում շուրջ 20000 տեղական մահմեդականների՝ թուրքերի, քրդերի, աջարների կողմից, որոնցից 7000-ը զինված էին: 36-րդ դիվիզիան թևերում ուներ 1500 քրդական անկանոն հեծյալ զորաջոկատ⁴⁵⁸:

Էրզրումի կայազորը բաղկացած էր 15 հազար զինվորներից ու սպաներից, այդ թվում՝ 3500 հոգի հայկական ազգային զորամասերից: Տվերդոխլերովի ջոկատը բաղկացած էր 400 ռուս սևհարյուրակային սպաներից (այսինքն՝ միապետականներ)⁴⁵⁹:

Անկախ Հայաստանի Հանրապետության առաջին օրերին 1918 թ. հունիսի 12-ին, Ազգային խորհրդի Զինվորական գրասենյակի պետ, գեներալ մայոր Դոլուխանյանը «Ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում կանգ է առնում Էրզրումի անկման որոշ հանգամանքների վրա: Նախ՝ Անդրանիկի և իր շտաբի Էրզրում ժամանելու օր հիշատակվում է փետրվարի 18-ը: Կարևորվում է նաև այն, որ երկաթուղին՝ քաղաաքը հանձնելուց ընդամենը 1-2 օր առաջ է սկսել աշխատել, այն էլ շատ անկանոն, իսկ մի քանի օր առաջ կայարան բերված հրանոթները, որ պետք է ուղարկվեին ճակատի արևելյան հատվածները, տեղում են մնացել, այսինքն՝ թողնվել են հակառակորդին: Դոլուխանյանի վկայությամբ փախստականների էվակուացիան ևս դանդաղ էր ընթանում: «Իմ ներկայությամբ,- նշում է փաստաթղթի հեղինակը,- բժիշկ Զավրիևը խիստ զայրացել էր ճանապարհի պետ ինժեներ Խաչատրյանի վրա՝ թափթփվածության ու վատ աշխատանքի համար»⁴⁶⁰:

⁴⁵⁷ Տե՛ս Լудшувейт Е.Ф., Турция в годы Первой мировой войны 1914-1918 гг., Военно-политический очерк, Москва, 1966, с. 170.

⁴⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 173:

⁴⁵⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 171:

⁴⁶⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 67:

3.4. ԷՐԶՐՈՒՄԻ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երզրումի անկումը արձագանքների ու մեկնաբանությունների տեղիք տվեց հայ հասարակական-քաղաքական կյանքում: Ինչպես և կարելի էր սպասել, սկսվեց արդարացումների և մեղավորների բացահայտման մի հոգեմաշ գործընթաց, որն այս ճակատագրական պատմական ժամանակահատվածում ավելի էր խորացնում հայկական քաղաքական դաշտի և հասարակության հակասությունները, անմիաբանությունը:

Տարածաշրջանային մեծ հարցերը լուծվում էին անդրկովկասյան քաղաքական իշխանության մարմինների՝ Կոմիսարիատի ու սեյմի շրջանակներում, արդեն պարտադրված որոշումներն էլ հրամցվում էին ազգային մարմիններին, որոնք հայտնվում էին անօգնական իրավիճակում: Արդյունքում խորացող ներքին պայքարը իր ցավագին այլասերումներով ներկայացվում էր հասարակություններին, տվյալ դեպքում հայ ազգաբնակչությանը, որը տարաբնույթ մամուլի օրգանների միջոցով տեղեկանալով կատարվող իրադարձություններին, հայտնվում էր անելանելի ու ճգնաժամային իրադրության մեջ:

Երզրումի անկման համատեքստում այս երևույթը դրսևորվում էր հակասական ու հիվանդագին զարգացումներում, յուրաքանչյուր կողմը փորձում էր հիմնավորել իր ճշմարտացիությունը: Եվ սա այն պայմաններում, երբ Անդրկովկասյան սեյմը ու անձամբ Ա. Չխենկելին, վաղուց՝ դեռ Երզնկայի զինադադարի համատեքստում արդեն վճռել էին Արևմտյան Հայաստանի ճակատագիրը և հատկապես Երզրումի, հետո էլ՝ Կարսի հանձնումը:

Արևմտյան Հայաստանի տարածքների պաշտպանության հարցում տարակարծություններ կային նաև Թ. Նազարբեկյանի և Հայոց ազգային խոհրդի միջև: Այդ մասին է վկայում Հայաստանի Հանրապետության ռազմական նախարար Հ. Հախվերդյանն իր «Հայաստանի ռազմական ուրվագծեր. 1918-1921 թթ.» գրության մեջ:

«Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովը,- նշում էր Հ. Հախվերդյանը,- ընդգծում էր, որ Հայկական կորպուսն իր ուժերը անհրաժեշտ է, որ կենտրոնացնի 1914 թ. սահմանների վրա, մինչդեռ Մեծ Հայաստանի անիրական երազներով կուրացած Հայոց ազգային խորհրդի ղեկավարները պնդում էին Կորպուսի

գորամասերը նույնիսկ Երզնկայի մոտ տեղաշարժելու վրա: Հասկանալի է, որ մի բուռ խղճուկ մարդիկ, չնայած անհատապես ցուցաբերել էին խիզախություն և արիություն, չէին կարող փոխարինել մի քանի հարյուր հազարի հասնող Կովկասյան բանակին և կանգնեցնել թուրքական բանակի հարձակումը»⁴⁶¹:

Մի հարցում չենք կիսում անվանի գեներալի կարծիքը. Էրզրումի դեպքերը ցույց տվեցին, որ թուրքերը Երզնկայի և Էրզրումի գրոհն իրականացրին մոտ 3000-ի հասնող ուժերով: Նման և ավելի ուժերի հայերը ջախջախեցին Մայիսյան հերասամարտերի ժամանակ, առանց ռուսական բանակի աջակցության ու հենց Թ. Նազարբեկյանի ու մյուսների գլխավորությամբ:

Ի դեպ, 1918 թ. փետրվարին Կովկասյան բանակն արդեն չունեւ «մի քանի հարյուր հազար» զինվոր: Ինչ վեաբերում է Թ. Նազարբեկյանի զգուշավորությանը, ապա մեր կարծիքով, այն հիմնվում էր ընդհանուր ռազմաքաղաքական իրավիճակի սթափ վերլուծության վրա, այն է՝ մի կողմից՝ Սեյմի և վերջինիս ճնշմամբ Հայոց ազգային խորհրդի ու Դաշնակցության քաղաքականության, իսկ մյուս կողմից հիմնականում հուսահատ ու պարտվողական հայկական զինվորական ուժի գնահատականի վրա:

Այդուհանդերձ, Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը հույսեր էր փայփայում, որ Էրզրումի անկումից հետո իրեն ենթակա գորքերը լուրջ ուժ կհանդիսանան, որի հետ հակառակորդը ստիպված հաշվի կնստի: Մի կողմից նա ինքն էր զիտակցաբար փաստում այժմ էլ Սարիղամիշի հանձնումը, հիմնավորելով, որ դա ոչ թե հակառակորդի ճնշման ներքո է կատարվել, այլ ռազմավարական նկատառումներով, մյուս կողմից բողոքում էր Տրապիզոնում Անդրկովկասի պատվիրակության նախագահ Ա. Չխենկելիի հայտարարության դեմ, ըստ որի «Արդահանը առնված է, Կարսի վիճակը վճռվում է այս օրերս»⁴⁶²: Անվանի գեներալը ևս դարձել էր չխենկելիների «մեծ քաղաքականության» զոհը և անգամ Էրզրումի հանձնումից հետո հավատացած էր, որ «Կարսի վիճակը ոչ միայն չի վճռվի այս օրերս, այլ թուրքերը առհասարակ այնքան էլ հեշտությամբ չեն վերցնի այդ բերդը»⁴⁶³:

«Եվ այսպես,- գրում էր Թ. Նազարբեկյանը,- թուրքական Անատոլիայի ամբողջ, ավելի ճիշտ՝ բանալին, փետրվարի 29-ին նորից թուրքերի ձեռքին է: Դա սպասելի էր

⁴⁶¹ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1:

⁴⁶² Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1918, 3 ապրիլի:

⁴⁶³ Նույն տեղում:

այն պահից, երբ թուրքերը խախտեցին զինադադարը տարբեր անհիմն պատճառներով և անցան հարձակման: Այդ խախտումն անսպասելի չէր, դրան միշտ կարելի էր սպասել: Ջինադադարի կնքումից երկու-երեք ամիսների ընթացքում, ընդհուպ մինչև Տրապիզոնի բանակցությունները, թուրքերի ռազմական օպերացիաները տարբեր պատճառաբանություններով և չնայած դրանց դեմ կովկասյան ռազմաճակատի հրամանատարական կազմի ու Կովկասյան ժամանակավոր կառավարության (Կոմիսարիատն ու Սեյմը նկատի ունի – Վ.Մ.) հիմնավոր պատասխաններին, ոչ միայն չդադարեցին զինադադարի ուժով, այլ հակառակը, ավելի անդադար էին իրականացվում, ավելի շտապողական: Թուրքիան առանց դժվարությունների մեկը մյուսի հետևից վերցրեց Երզնկան - 1918 թ. հունվարի 30-ին, Բայբուրդը – փետրվարի 4-ին, Մամախաթունը – 8-ին և վերջապես Էրզրումը – փետրվարի 29-ին: Վերջինս գրավվեց այն պահին, երբ արդեն սկսվել էին Տրապիզոնի խաղաղ բանակցությունները:

Իհարկե, Էրզրումի անկման լուրը մեզ բոլորիս վրա ծանր ազդեցություն ունեցավ»⁴⁶⁴:

Ինչ վերաբերում էր Էրզրումին, ապա Թ. Նազարբեկյանին արդարացնողներից մեկի դերում հանդես եկավ Խնուսում գործող 2-րդ Առանձին հայկական վաշտի հրամանատար գնդապետ Ա. Օսիպյանը (Հովսեփյան): Նա Թ. Նազարբեկյանին ուղղված նամակում գրում էր. «Միրելի բարեկամ, ցավում եմ Ձեր ծանր դրությունը, որպես այդ օպերացիաներում կորպուսի հրամանատար, ոչ ոք չի համարձակվի Ձեզ մեղադրել: Ծիծաղելի կլինեք մտածել, որ հայերը միայնակ կոլիմադրեն թուրքերին: Ոչ ոք չի համարձակվի Ձեզ կշտամբել Էրզրումի ու Սարիղամիշը թողնելու հարցում»⁴⁶⁵:

Թ. Նազարբեկյանի թերացումների մասին մենք խոսել ենք արդեն. ինչ վերաբերում է Ա. Օսիպյանի հարցադրմանը՝ թուրքերի դեմ հայերի միայնակ դիմադրելու խնդրին, ապա անհրաժեշտաբար բարձրանում է Մայիսյան հերոսամարտերի անհերքելի հիմնավորումը:

Ինչևէ, անկախ վերևների դիրքորոշումից, հայ զինվորական շրջանակներում գոնե Էրզրումի հանձնումը օբյեկտիվ դասերի և վճռական գործողությունների իրականացման տեղիք տվեց:

⁴⁶⁴ Տե՛ս Հայկական կորպուսը..., էջ 75:

⁴⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թթ. 21-22 շրջ.:

Այսպես, փետրվարի 24-ին Հ. Զավրիյանը անգլիացիներ Գոլդսմիթի և Նեշի միջոցով նամակ է ուղարկում Ավետիս Ահարոնյանին, կիսելով իր տագնապը ստեղծված իրավիճակի շուրջ: Ամենաեականը հայկական զինուժի պակասն էր: «Մենք կդիմադրենք,- հավաստիացնում էր նա,- և եթե ունենայինք ևս 2000 զինվոր, ապա մենք ուղիղ նրանց վրա կշարժվեինք: Խնդրում եմ Ձեզ, ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի բոլոր հայկական զորամասերը ճակատ ուղարկվեն»⁴⁶⁶:

Երկրորդ խնդիրը տեղի գաղթականության և խաղաղ բնակչության էվակուացիայի կազմակերպման հարցն էր: Հ. Զավրիյանի վկայությամբ Էրզրումում մնացել էին 1500 գաղթականներ, մնացածը՝ Խնուսից, Բասենից արդեն հասել էին Սարիղամիշ: Նա խորհուրդ էր տալիս կուտակվող գաղթականությանը տեղավորել Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում, այլ ոչ թե Կարսի շրջանում: Ուշագրավ է, որ ազգային գործիչը կարծես թե վստահ էր, որ Էրզրումի անկումից հետո, թուրքերը Կարս էլ են հասնելու⁴⁶⁷:

Ապա և հետևում է Հ. Զավրիյանի հուսահատ ահազանգը, ինչը կուսակցական ու քաղաքական գործչի եզակի ինքնաքննադատության օրինակ է. «Բհարկե, ես այս ամենը չէի անի, եթե դուք ինձ ուղարկեիք 10.000 մարդ: Ես չգիտեմ, դուք միջոցներ ձեռնարկո՞ւմ եք դասալքության դեմ, թե ամեն ինչ խոսքերից չի անցնում: Դուք ռազմաճակատ նաև մի քշեք ձեր ողջ բարոյալքված երիտասարդությանը: *Ես մեղադրում եմ նաև մեր բոլոր սպաներին, որոնք ճակատ չեն գնում, հայտնվում են ձեր թիկունքում, նույնիսկ զինվորական միություններում: Հասե՛ լ էք դուք երբևիցե նրան, որ նրանք բոլորը գան մեզ մոտ՝ ճակատ, աշխատեն զինվորների հետ, ուղորդեն նրանց միտքն ու սիրտը: Բհարկե, ամենահարմարը մեր կուսակցական բյուրոներում ժողով անելն ու մեր վրա իշխելն է, թույլ տալով, որ մենք մեր յուրի մեջ տապակվենք* (ընդգծումն իմն է –Վ.Մ.)»⁴⁶⁸:

1918 թ. փետրվարի 28-ին արդեն ՀԱԽ-ի զինվորական գործերի լիազոր Ս. Մամիկոնյանը գեներալ Ե. Վիշինսկուն և Դրոյին տեղեկացնում էր Թ. Նազարբեկյանին ուղղված կարգադրության մասին, որը հիմնականում վերաբերում էր հայկական զորամասերում հրամանատարական կազմի կարգապահական իշխանության վերականգնմանը՝ ընդհուպ մինչև գնդակահարություն⁴⁶⁹:

⁴⁶⁶ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 256:

⁴⁶⁷ Նույն տեղում, թ. 257:

⁴⁶⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 258:

⁴⁶⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 2:

Հարց է առաջանում, մի՞թե չէր կարելի դա իրականացնել Երզնկայի նախաշեմին կամ Էրզրումում, չէ՞ որ այդ նույն քայլերը Երևանի նահանգում, բայց արդեն մարտ-ապրիլ ամիսներին իրականացնում էին դիկտատոր Արամը և մյուսները:

Միաժամանակ անհասկանալի ու ժամանակավրեպ որոշումներ էր կայացնում Հայ զինվորական միությունը:

Նույն փետրվարի 28-ին ՀԶՄ Գործադիր մարմինն իր ժողովում քննելով Անդրկովկասի դրությունը, որոշեց, որ Անդրկովկասի բոլոր զինված ուժերը, այդ թվում և հայկական կանոնավոր և այլ զորամասերը պետք էր ենթարկել Անդրկովկասի գլխավոր հրամանատարին և նրա շտաբին⁴⁷⁰:

Թ. Նազարբեկյանի մարտի 1-ի հրամանով Ալեքսանդրապոլը և գավառը հայտարարվեց ռազմական դրության մեջ: Վերացվում էին բոլոր զինվորական կոմիտեները, հասարակական, հեղափոխական կազմակերպություններին առաջարկվում էր չխառնվել զինվորական իշխանության գործերին, Նազարբեկյանի շտաբն էլ իր իշխանությունը տարածեց փոստի, հեռագրի և երկաթուղու վրա⁴⁷¹:

Եթե անգամ ՀԶՄ-ը նկատի ուներ նորանշանակ Թ. Նազարբեկյանին, ապա հրամայականորեն նոր հարց է առաջանում, արդյո՞ք հնարավոր էր երկրամասային միասնական ռազմական ուժերի ու բանակի գաղափարն ընդհանրապես և մի՞թե առայժմ մինչև Կարս ամբողջ Արևմտյան Հայաստանի, այն է՝ Կովկասյան ռազմաճակատի դավադիր հանձնումը թուրքերին չէր նշանակում, որ վրացիներն ու թաթար-մահմեդականները չեն կռվելու այն Թուրքիայի դեմ, որի հետ «պարտվողական» բանակցություններ էին տարվում Տրապիզոնում, այն էլ հիմնականում հայկական տարածքների հաշվին:

1918 թ. մարտի 1-ից Ի. Օդիշելիձեին փոխարինեց Թ. Նազարբեկյանը: Մարտի 3-ին նա Սարիղամիշում ընդունեց Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատարությանը: Մարտի 6-ին, Անդրանիկի հրաժարականից հետո, կովկասյան բանակի 5-րդ կորպուսի հրամանատարի հրամանով Հատուկ ջոկատի պետ նշանակվեց գնդապետ Պ. Բեժանբեկովը:

Ավելի ուշ, Կարսում, Անդրանիկը ձևավորեց Հայկական առանձին հարվածային զորամասը: Ապրիլի 1-ին այն հաշվում էր 1000 զինվոր, հետագայում հասավ 30.000-ի:

⁴⁷⁰ Տե՛ս Մշակ, 1918, 9 մարտի, թիվ 5:

⁴⁷¹ Տե՛ս Հորիզոն, 1918, 10 մարտի, թիվ 51:

1918 թ. գարնանը Կովկասյան ռազմաճակատի ազգային զորքի թիվը հասավ 43.029-ի, որից հայերը կազմում էին 26.533 հոգի⁴⁷²:

Ինչ վերաբերում էր բանակցություններին, ապա դեռ 1918 թ. փետրվարի 1-ին գեներալ Ե. Լեբեդինսկին հայտնում էր հետևյալը. «փոխգնդապետ Ռաուլանդսոնը երեկ մասնավոր զրույցի ժամանակ ինձ հայտնեց, որ գեներալ Մորի մոտ կան գաղտնի տվյալներ թուրքերի ու կովկասյան կառավարության միջև ընթացքող գաղտնի բանակցությունների վերաբերյալ: Ռաուլանդսոնը ենթադրում է, որ գաղտնի անջատ հաշտության դեպքում անգլիացիներն, իհարկե, անմիջապես կդադարեցնեն Կովկասին և Կովկասյան ռազմաճակատին հատկացվող դրամական օգնությունը»⁴⁷³:

Այս թեման լրացնում է Հ. Զավրիյանը՝ Ա. Ահարոնյանին ուղղված գրության մեջ. «Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում թաթարների հետ հարաբերությունների մեջ մտնել, քանի որ ո՛չ վրացիները, ո՛չ էլ ռուսները ընդունակ չեն իսկապես ազնիվ մակլերի դիրք զբաղեցնել մեր երկուսի (հավանաբար՝ թուրքերի – Վ.Մ.) միջև: Ինձ թվում է, որ ներկա պահին այդ դերը պետք է փոխանցել անգլիացիներին: Ես զրուցեցի կապիտան Գոլդսմիթի հետ և նա ողջ անգլիական ազնվությամբ և ուղղամտությամբ պատասխանեց, որ պատրաստ է ծառայել այդ գործին»⁴⁷⁴:

Իր չափով մոլորության մեջ գտնվող գեներալ Ե. Լեբեդինսկին Էրզրումի անկումից մեկ ամիս անց դավաճան գեներալ Ի. Օդիշելիձեի միջոցով հեռագրում էր Վեհիբ փաշային, նրան հիշեցնում զինադադարի մեջ գտնվելու փաստը և հույս հայտնում, որ Տրապիզոնի բանակցությունների նախաշեմին մի գուցե հնարավոր է դադարեցնել ռազմական գործողությունները և արյունահեղությունը: «Ես դիմում եմ Ձերդ գերազանցությանը,- նշում էր գեներալը,- հետևողական խնդրանքով, հրամայել ձեր բանակներին, հանուն քաղաքակրթության և մարդասիրության, դադարեցնել հետագա առաջխաղացումը՝ հարաբերությունները չսրելու և Տրապիզոնում մեր պատվիրակությունների աշխատանքը թեթևացնելու նպատակով»⁴⁷⁵:

Հասկանալի է, որ իր ժամանակի մեջ գեներալ Ե. Լեբեդինսկին և շատերը դեռ կարող էին հույսեր կապել բանակցությունների և հնարավոր հաշտության պայմանագրի հետ: Միաժամանակ, ինչ վերաբերում է 1918 թ. մարտ ամսվա

⁴⁷² Տե՛ս u tert.nla.am, նույն տեղում:

⁴⁷³ Տե՛ս u ՀԱԳ, ֆ. 1, օպ. 2, ք. 176, յ. 2.

⁴⁷⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 259:

⁴⁷⁵ Տե՛ս u ՀԱԳ, նույն տեղում:

իրադարձությունների զարգացմանը, մինչև Սարիղամիշ հայկական տարածքների հանձնմանը, ապա դա ընթացքում էր Տրապիզոնի բանակցություններին զուգահեռ, ուստի և, մասնավորապես հայ գործիչների համար պետք է, որ պարզ լինե՞ր դեպքերի հետագա հնարավոր զարգացումների տրամաբանությունը:

Իսկ այդ «տրամաբանության» որոշ մանրամասնող դրվագներ պարզում էր Ռազմաճակատի շտաբում 1918 թ. փետրվարի սկզբին կայացած «Կովկասյան ռազմաճակատում Թուրքիայի դեմ պատերազմի հնարավոր շարունակման հարցերի հետ կապված խորհրդակցությունը»⁴⁷⁶:

Փաստաթուղթը թվագրված է փետրվարի 27-ով, սակայն Էրզրումի հետ կապված բովանդակային քննարկումներից և Տրապիզոնի բանակցությունները, Բրեստ – Լիտովսկի պայմանագիրը հիշատակելուց պարզ է դառնում, որ տվյալ խորհրդակցությունը կայացել է մինչև բերդամրոցի անկումը, այսինքն՝ փետրվարի առաջին տասնօրյակին: Խորհրդակցությունը նախագահում էր գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկին: Մասնակցում էին՝ ռազմաճակատի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, գնդապետ **Շատիլովը**, Ազգային կորպուսների հրամանատարները՝ Վրացական - գնդապետ **Ախմետելովը**, **մահմեդական** - գեներալ-լեյտենանտ **Շիխլինսկին**, Ռուսական – գնդապետ **Դրոգենկոն**, Գերագույն շտաբի գեներալ-կվարտիրմեստերի (ռազմական - ինտենդանտ) օգնական, գնդապետ **Կլինտիտաձեն**, Օկրուգի շտաբի պետ, գեներալ-մայոր **Կալնիցկին**, Մատակարարման գլխավոր պետ, գեներալ-լեյտենանտ **Ավերյանովը**⁴⁷⁷, Հրետանային մատակարարման պետ, գեներալ-մայոր **Ղուրնովոն**, ռազմաճակատի ինժեներների տեսուչ, գեներալ-մայոր **Գոլիցկինը**, ինժեներական մատակարարումների պետ, գեներալ-մայոր **Սոլոգուբը**, ռազմաճակատի ինտենդանտ գեներալ-մայոր **Ֆիլոնովը**, սանիտարական մասի պետ, բժ. **Տիգյակովը**, Ռազմական կապի պետ, գեներալ-մայոր **Էնգելկեն**, Ռազմաճակատի Գլխավոր շտաբի հերթապահ, գնդապետ **Կորգանովը** (Ղորղանյան), Անդրկովկասյան սեյմի պաշտպանության հանձնաժողովի նախագահ **Ն. Ճորդանիան**, այդ հանձնաժողովի քարտուղար Լևոնյանը: Խորհրդակցության քարտուղարն էր Գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ **Գոտովցկը**: Չէր ժամանել Անդրկովկասյան կոմիսարիատի Ռազմաճովային նախարարության գծով

⁴⁷⁶ СГБИА, ф. 2100, оп. 1, д. 1127, лл. 49-57.

⁴⁷⁷ Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսար:

կումիսար *Գոբեշիան*⁴⁷⁸։ Նկատենք նաև, որ ազգային կորպուսների հրամանատարներից ներկա չէր միայն *Թ. Նազարբեկյանը*, նախ՝ քանի որ թուրքական արշավանքի պայմաններում ղեկավարում էր գրեթե բացառապես հայկական զինուժի դիմադրական պայքարը, ապա և այն պատճառով, որ գոնե անձամբ իր համար արդեն պարզել էր, որ Անդրկովկասի և Կովկասյան ճակատի ռազմա-քաղաքական վերնախավն իր մեծամասնությամբ չէր մտահոգված Արևմտյան Հայաստանի ճակատագրով։ Խորհրդակցության ողջ ընթացքը այդ մասին էր վկայում։ Բոլորին հետաքրքրում էր միայն Բաթումը։ Քննարկումների այդ ոչ հայանպաստ միտումի սկիզբը դրվեց հենց նախագահ Ե. Լեբեդինսկու հաշվետվության մեջ։ Վեհիբ փաշայի պահանջին, այն է՝ անհապաղ դատարկել Բաթումը, Արդահանն ու Կարսը, Կոմիսարիատը պատասխանել էր նրանով, որ չի ճանաչում բոլշևիկների կնքած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և անհրաժեշտ է համարում հաշտության կնքելու նպատակով ինքնուրույն, անջատ բանակցություններ վարել։ Սեյմը նույնպես կանգնած էր թեև առանց հողագրավումների, բայց պատվավոր հաշտության դիրքերի վրա։ Ընդգծելով ամբողջ Անդրկովկասի համար Բաթումի նավահանգստի նշանակությունը և ռազմաճակատի բոլոր ուղղություններում թուրքերի ակտիվացումը, գլխավոր հրամանատարը քննարկման է դնում գլխավոր հարցը՝ «ինչպես հասնել 1914 թ. սահմանների պահպանմանը»⁴⁷⁹։ Պարզ է, որ Արևմտյան Հայաստանը դուրս էր մնում այդ ռազմավարական հիմնախնդրի թե՛ քաղաքական և թե՛ աշխարհագրական սահմաններից։ Միաժամանակ, Ե. Լեբեդինսկու հաղորդմանը հետևում է միանգամայն հակառակ տեսակետ՝ գնդապետ Շատիլովի առաջարկությունը։ Ներկայացնելով ստեղծված ռազմավարական իրադրությունը, նա ռազմաճակատը բաժանում է չորս ուղղությունների. 1. Մերձծովյան, 2. Գլխավոր՝ Էրզրում-Կարսի, 3. Խլաթ-Ղարաքիլիսայի և 4. Վանի։ «Էրզրումի ուղղությունը մեզ համար,- նշում էր Շատիլովը,- առավել բարենպաստ է. այդ ուղղությամբ են շարժվում 5-րդ դիվիզիան, 3-րդ բանակի որոշ զորամասեր և Օդնոտ - Շեյթանդաղ գծով՝ 2-րդ բանակի երկու դիվիզիաները»⁴⁸⁰։ Ներկայացնելով այդ ուժերի զորաշարժը, նա մեր կարծիքով խիստ համարձակ ու անիրական եզրակացության էր հանգում, թե՛ «Մեր պետական սահմանը Հայկական լեռնաշխարհում՝ Վան, Խնուս, Էրզրում

⁴⁷⁸ Տե՛ս ԲԳՅԻԱ, նույն տեղում, թ. 49:

⁴⁷⁹ Տե՛ս ԲԳՅԻԱ, նույն տեղում, թ. 50:

⁴⁸⁰ Նույն տեղում:

ուղղություններում ապահովված է, քանի որ թուրքերը մեզանից բաժանված են անապատով»⁴⁸¹: Այս պատասխանատու գործիչն էլ չէր մոռանում. «բայց Բաթումն ունի ահռելի նշանակություն»⁴⁸²: Չի հապաղում նաև նրա գործնական առաջարկությունը՝ Օլթիի ուղղությունը ևս հանձնել Հայկական կորպուսին, ինչը հնարավորություն կտա կրճատել Վրացական կորպուսի մարտավարական խնդիրների շրջանակը: Ե. Լեբեդինսկին ավելացնում էր, որ վրացական կորպուսի շտաբը պետք է անպայման տեղափոխել Բաթում⁴⁸³, իսկ Ն. Ժորդանիան անամոթաբար կարծիք էր հայտնում, թե «արդյոք հնարավոր չէ՞ Բաթում տեղաշարժել այլ զորամասեր՝ լեհական, ռուսական կամ էլ այլ»⁴⁸⁴: Այդ վերջին «այլ»-ի տակ երևի պետք է հասկանալ հայկական զորամասերը: Այդ խայտառակ վրացակենտրոն մոտեցումներին առաջինը հակադարձում է Պ. Ավերյանովը. «Անհրաժեշտ է ամբողջ Վրաստանի մոբիլիզացիա՝ Գուրիայի և Մենգրելիայի ապստամբություն»⁴⁸⁵: Ռուսական կորպուսի հրամանատար Դրոցենկոն պաշտպանելով գեներալ Ավերյանովին, մեղմում է հարցադրումը՝ զարմանք հայտնելով, թե Լեբեդինսկու արտահայտությամբ «ժողովրդական պատերազմը» ինչու դնել բնակչության երկու խմբի վրա (նկատի ունի հայերին ու վրացիներին, Շատիլովը հայտարարել էր, որ ազգային զորամասերից գոյություն ունեն միայն հայկականն ու վրացականը – Վ.Մ.) և մյուսների վրա չտարածել: «Ինչո՞ւ երկրամասային խորհուրդը և Անդրկովկասյան կոմիսարիատը հաստատել են միայն 18-25 տարեկանների զորակոչ-զայրանում էր Դրոցենկոն,- դա մանկական խաղ է և պետք է համատարած կերպով զինել բանակը»⁴⁸⁶: Նա էլ պաշտպանելով ռուսներին, գտնում էր, որ ռուսական բնակավայրերում զորակոչը լավ է ընթանում, իսկ «քաղաքներում, օրինակ Թիֆլիսում՝ խայտառակ, 92.000-ից տվել են ընդամենը 140 զինապարտ»⁴⁸⁷: Եվ վերջապես, հնչում են կարգախոսային բնույթի խորհուրդներ. «Բնակչությունը ներշնչված չէ երկրամասի պաշտպանության անհրաժեշտությամբ: Պետք է Կովկասի բոլոր ազգերի վճռականությունը»⁴⁸⁸: Եվ պատահական չէ, որ նրան անմիջապես արձագանքում է մուսուլմանական կորպուսի հրամանատար Ա. Շիխլինսկին, թե «խորհրդակցությունը

⁴⁸¹ Նույն տեղում:

⁴⁸² Տե՛ս ԲԳՄԻԱ, նույն տեղում, թ. 50:

⁴⁸³ Տե՛ս նույն տեղում, թ. 51:

⁴⁸⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁸⁵ Նույն տեղում, թ. 52:

⁴⁸⁶ Նույն տեղում:

⁴⁸⁷ Նույն տեղում:

⁴⁸⁸ Նույն տեղում:

պետք է ավելի պրակտիկ հիմքերի վրա կանգնի: Մենք բաժանված ենք Ժողովրդական կոմիսարներից, ըստ լուրերի Ռուսաստանից, ուստի Բաթումը մեզ ավելի է պետք. Բաթումը պետք է բոլոր ազգերին, առանց Բաթումի կթառամի և Բաքուն – մեր անտակ ոսկե գանձարանը»⁴⁸⁹: Ա. Շիխլինսկուն այս անգամ արդարացիորեն և դիպուկ սթափեցնում է Ն. Ժորդանիան, գտնելով, որ երկրամասի պաշտպանության համար պայքարի շարունակման հիմնահարցը ազգերի կողմից տարբեր կերպ է ընկալվում, **«վրացիները պետք է գնան և կզնան, թաթարները՝ հնարավոր է մեր կողմից չգան և հայերը՝ արդեն գնում են»** (ընդգծումը իմն է – Վ.Մ.): Վրացիների պասիվությունը նա արդարացնում էր վրացական գորամասերում բոլշևիկների ազդեցությամբ:

Ուշագրավ է գնդապետ Ղորղանյանի հարցադրումը: Նա դատապարտում էր Կոմիսարիատի հրապարակած իր կարծիքով գորակոչի մասին ուշացած դեկրետը: Հռչակագիրը մեղադրում էր որոշ ազգերի գորակոչի մեթոդները, որտեղ գորակոչը ակտիվ էր ընթանում (նկատի ունենալով, իհարկե, հայերին – Վ.Մ.), Ղորղանյանը գտնում էր, որ Կոմիսարիատը կանգնած է երկրի պաշտպանության այլ տեսակետի վրա և որ Բաթումն ու Կարսը հանձնելուց առաջ լույս աշխարհ եկած այդ հռչակագիրը բացասական ազդեցություն գործեց, փաստորեն նոր ուժով վերականգնեց գորակոչի դեմ գորակոչիկների ժխտողական վերաբերմունքը: «Այդպես,- եզրակացնում էր Ղորղանյանը,- Հայկական կորպուսը գորահավաքի դեմ խոչընդոտ ձեռք բերեց»⁴⁹⁰: Հռչակագիրը չեղյալ հայտարարելու նրա առաջարկին պատասխանում է Ե. Լեբեդինսկին, թե «Այս դեկրետը չեղյալ կհամարվի նոր հռչակագրով»⁴⁹¹:

Ինչ էլ խոսվեր, միևնույն է օդում կախված էր մնում գլխավոր հարցը՝ ո՞վ էր կովելու թուրքերի դեմ, ուստի խորհրդակցությունը մեկ անգամ ևս վերադառնում է ցավոտ խնդրին:

Հրետանային մատակարարման պետ Դուրնովոն զեկուցում է զինամթերքի, հատկապես փամփուշտների քանակի մասին: Պարզվում է, որ Թիֆլիսի պահեստներում կա 9 մլն., Ալեքսանդրապոլում՝ 2 մլն. փամփուշտ, բոլշևիկները Բաքվի Բալաչարի

⁴⁸⁹ Տե՛ս РГВИА, նույն տեղում, թ. 53:

⁴⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹¹ Նույն տեղում, թ. 54:

թաղամասում հափշտակել են 18 մլն. փամփուշտ: Նա նույնիսկ աբսուրդի մակարդակի առաջարկ էր անում, թե «անհապաղ պետք է բռնազրկել գնել այդ փամփուշտները»⁴⁹²:

Գնդապետ Շատիլովը սթափ գնահատելով զորահավաքի իրական պատկերը, հայտնում էր, որ փետրվարի սկզբին ռազմաճակատի շտաբը Կոմիսարիատին զեկույց էր ներկայացրել այն մասին, որ անհրաժեշտ է հաշվի նստել մատակարարման բոլոր փաստացի միջոցների և մարդկանց քանակի հետ և ըստ այդմ էլ՝ կրճատել զորամասերի քանակը: Ելնելով այդ կարգի հիմնավորումներից, նա եզրափակում էր, որ կարող են ձևավորվել, այն էլ՝ չափազանցված թվերով 1 դիվիզիայից ոչ ավել՝ վրացական, մեկ վաշտ՝ ռուսական, վաշտից ոչ ավել՝ մահմեդական զորամասեր: Անչափ ուշագրավ է, որ հայկական զինուժի սյունակում ոչինչ չի նշված: Կարելի է միայն ենթադրել, որ անգամ Շտաբի պետի պաշտոնակատար Շատիլովը տեղյակ չէր հայկական զորամասերի քանակի և տեղաբաշխման մասին, կամ էլ նրան զարմացնում ու զայրացնում էր հայերի ակտիվությունը:

Լևոնյանը նշում էր, որ Հայ-ռուսական Լոռու գունդը զենք չի ստացել (ընդամենը 300 հրացան), իսկ վրացական ազգային կորպուսի հրամանատար Ախմետելովը ինչ-որ առումով վերջ է դնում մեծ հույսերով լեցուն ռուս զինվորականների և վրաց գործիչների ճամարտակությանը. **«վրացիները ոչինչ չկարողացան ձևավորել, - հայտարարում է նա, - բոլորը փախել են»** (ընդգծումն իմն է - Վ.Մ.)⁴⁹³:

Խորհրդակցությունը քննարկման առանձին հարց է դարձնում Էրզրումի շուրջ ծավալվող վիճակը:

Խնդիրը առաջինը բարձրացնում է Ն. Ժորդանիան, որը ըստ երևույթին, ոչ մի հետևության չէր հանգել խորհրդակցության ժամանակ հնչած կարծիքներից: Առնվազն տարօրինակ է նրա հարցը, թե «ի՞նչ զորամասեր են շարժվում Էրզրում - կանոնավոր»⁴⁹⁴:

Ե. Լեբեդինսկու մտահոգությանը, թե կարիք կա՞ արդյոք հիմա տարհանել Էրզրումի բնակչությանը, Ն. Ժորդանիան առաջարկում է անհապաղ էվակուացնել Բաթումի բնակչությանը: Հպանցիկ կերպով քննարկում է նաև Կարսի հարցը: Ե. Լեբեդինսկին մտահոգված Պ. Ավերյանովի հարցադրմամբ՝ Կարսում պաշտոնական աշխատանքների վերսկսման մասին, հանձնարարական է տալիս ինժեներական

⁴⁹² Նույն տեղում, թ. 55:

⁴⁹³ Տե՛ս РГВИА, նույն տեղում, թ. 55:

⁴⁹⁴ Նույն տեղում, թ. 56:

մատակարարման պետ Սոլոգուբին: Գոլիցինը, հակառակը, գտնում էր, որ Կարսում ոչինչ պետք չէ անել⁴⁹⁵:

Փետրվարի 11-ին, ամփոփելով Խորհրդակցության արդյունքները, գեներալ-մայոր Ե. Լեֆեդինսկին խիստ գաղտնի գրությամբ դիմում է Կոմիսարիատի նախագահ Ե. Գեդեչկոբին և փաստորեն ամփոփում քննարկումներից ստացված տպավորությունը:

«Իմ կողմից հրավիրված խորհրդակցությանը,- գրում էր նա,- որի նպատակն էր՝ բանակցությունների անհաջողության դեպքում (նկատի ունի Տրապիզոնի բանակցությունները – Վ.Մ.) թուրքերի դեմ պատերազմի վերսկսման պարագայում իրավիճակի բոլոր պայմանների բացահայտումը, լիարժեք կերպով պարզ դարձան այն բոլոր ահռելի դժվարությունները, որոնք պետք է հաղթահարել՝ մեր բանակներին ռազմական գործողություններ վարելու հնարավորություն տալու նպատակով»⁴⁹⁶: Եվ կրկին, երեք էջի սահմաններում ներկայացվում էր Բաթումի կարևորությունը, Միխայլովյան ամրոցի ծանր դրությունը⁴⁹⁷:

Այսպիսով, Փետրվարյան խորհրդակցությունը, մեր կարծիքով, բացահայտում էր հետևյալ ռազմա-քաղաքական խնդրումներն ու զարգացումները, որոնք Երզնկայի զինադադարից հետո կուտակվել էին Անդրկովկասի և Կովկասյան ռազմաճակատի քաղաքական ու ռազմական ղեկավարության շրջանում.

ա) Գերակայում էր Թուրքիայի հետ բանակցային գործընթացի, տվյալ դեպքում Տրապիզոնի բանակցությունների միջոցով, խաղաղ հանգուցալուծումով հարցերի կարգավորման միտումը,

բ) Չընդունելով Բրեստ-Լիտովսկի բոլշևիկյան պայմանագիրը և անդրկովկասյան տարածքների զիջումը Թուրքիային, երկրամասի իշխանությունները Թուրքիայի դեմ պատերազմի վերսկսում ասելով, միննույն է հասկանում էին 1914 թ. սահմանի վերականգնում, նույնն է թե՛ Արևմտյան Հայաստանի զիջում,

գ) Ստացվում է, որ հայերի դիմադրությունը, Երզնկայի, Էրզրումի և այլնի պաշտպանությունը չէր մտնում մյուս բոլորի ծրագրերի մեջ,

դ) ու թեև հայկական զինակոչն ու զորահավաքը ամեն կերպ ոգևորվում էր անդրկովկասյան իշխանությունների ու գեներալիտետի կողմից, այդուհանդերձ դա

⁴⁹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 57:

⁴⁹⁶ Տե՛ս РГВИА, նույն տեղում, թ. 58:

⁴⁹⁷ Տե՛ս նույն տեղում:

արվում էր ոչ Արևմտյան Հայաստանի համար, այլ առավելապես ուղղված էր Բաթումը, իհարկե և ողջ Անդրկովկասը պահպանելուն,

ե) Բոլորի համար պարզ էր նաև, և դա արտացոլվում էր նաև այս խորհրդակցության ընթացքում, որ թուրքերին դիմադրելու են հիմնականում հայերը,

զ) Էրզրումի նկատմամբ բացահայտ անտարբերությունը և Կարսի շուրջ հպանցիկ քննարկումն անգամ ստիպում է տողերի արանքում կարդալ ոչ միայն Էրզրումի, այլ նաև Կարսի հանձնման ցավալի հեռանկարը:

Ինչ վերաբերում է հայ իրականությանը, ապա Հայոց ազգային խորհուրդը, Դաշնակցություն կուսակցությունը, առանձին ռազմական գործիչներ իներցիայի ուժով շարունակում էին հիմնավորել Էրզրումի անկման պատճառները, փորձում էին ուրվագծել հետագա անելիքները:

Սարդարապատի հերոս Ալեքսանդր Շնեուրը կարծում էր, որ «նահանջը անխուսափելի էր, Էրզրումը իր ամրություններով թեև մեր ձեռքն էր, սակայն բաւարար ոյժեր չկային դեմ դնելու անագորոյն թշնամուն: Էրզրումի թնդանօթները նոյն իսկ լուռ մնացին: Մասնագետների կադր գոյութիւն չունէր»⁴⁹⁸: Նա վկայում է նաև նահանջի հետևանքների մասին, հատկապես Խորասանից հետո: Նահանջող գաղթականությունը Հասան-Կալայում և Քյոփրի-Քյոյում ենթարկվել էր կոտորածների, Էրզրումից-Սարիղամիշ երթը պաշտպանվում էր սկզբում Մուրադի և Սեպուհի, հետո Թորգոմի ուժերով: Այնուհետև, Թորգոմը գնդապետ Ն. Մորելի, Էրզրումի ջոկատի հրամանատար փոխգնդապետ Կ. Հասանփաշայանի, Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչի, կապիտան Ա. Շնեուրի և մի քանի սպաների հետ մնացին Կարաուրգանում: Էրզրումի նահանջից հետո ձևավորվեց Սարիղամիշի ջոկատը՝ սկզբում Ն. Մորելի, ապա և գեներալ Մ. Արեշյանի հրամանատարությամբ⁴⁹⁹: Այս վերջին հանգամանքը վիճելի է և նկատվում է, որ ռուս գործիչը փորձում է պատասխանատվության ողջ բեռը բարդել հայերի ու հայ հրամանատարների վրա:

Մարտի 17-ին Սարիղամիշից հայ մարտիկներին իրենց «Սրտագին կոչ»-ն են հղում Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը: «Երզնկայէն ու Բաբերդէն մեր ընկերական կոչերը ձեր ականջներուն չհասան,- գրում էին նրանք: Յուսահատական ամենադառն ու վճռական րոպէներուն մեջ մխիթարուելով և ուժեղացած ձեզմով, բուռ մը անանուն

⁴⁹⁸ Տե՛ս Ալեքսանդր Կ. Շնեուր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնո, 1967, էջ 11:

⁴⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

անձնագրհներով շրջապատուած, արինահեղ և անհաւասար կոնիւներու մէջ, դաժան թշնամին կուրծ տուած՝ մնացինք մեր դիրքերու մէջ այնքան երկար, ինչքան որ հնարաւոր էր: Մենք սակայն մինակ մնացինք Երզնկայի և Բաբերդի մէջ: Անպատուաբեր նահանջի վտանգին սարսուռի ազդեցութեան տակ, երբ արդէն Թուրքահայաստանը կորսուած է և Կովկասի պարսպադուռներուն առջեւ կը գտնուինք, կը վերյիշենք, ձեզ, որ մինակ չթողուք մեզ, և կուղղենք մեր այս վերջին և ամենասրտաբուխ կոչը, որ արհամարհելով ամեն դժուարութիւն, հաւաքուինք իրար շուրջ, միութեան մէջ ըլլանք ուժեղ և մեկ անգամ ալ ցոյց տանք մարդկութեան՝ թէ հայ ժողովուրդը արժանի է ազատութեան, այլապէս նոր նահանջի ահագանգը մահագինօրէն պիտի լսէք և ձեր աչքերով պիտի տեսնէք այն, ինչ որ ապրեցաւ թուրքահայ ժողովուրդը համաշխարհային պատերազմի ընթացքին: Խնայեցէ՛ք Կովկասին ու կովկասեան սրբութիւններուն»⁵⁰⁰:

1918 թ. մարտի 7-ին «Հորիզոն»-ում լույս տեսավ «Էրզրումի անկումը» խմբագրականը: Առաջին հայացքից ընթերցողի համար տպավորություն էր ստեղծվում, որ նյութը օբյեկտիվ է, արտացոլում է իրականությունը՝ ամբողջությամբ լի վճռականությամբ ու հայրենապաշտությամբ:

Սակայն Երզնկայի ու Էրզրումի անկման ողջ պատմությունն ու մանրամասները լուսաբանելուց հետո, առնվազն տարակուսանք են առաջացնում այդ խմբագրականի հարցադրումները: Տպավորություն է ձևավորվում, թե հայ իրականության ամենաազդեցիկ և մարտունակ քաղաքական ուժը ոչ միայն լիարժեք կերպով մասնակից չէր եղել այդ բախտորոշ մարտերին, այլև չէր պատկերացնում հետագա քայլերի նպատակաուղղվածությունը: Ամանեկարևորն այն է, որ անդրկովկասյան միացյալ պատվիրակության կազմում Տրապիզոն մեկնած Ալ. Խատիսյանի և մյուսների «գործունեության» մէջ առկա էր ժամանակի գլխավոր հակասությունը, այն է՝ բոլշևիզմի դեմ պայքարում ստանալ Թուրքիայի աջակցությունը, ավելին, ձեռք բերել թուրքերի կողմից խոստացված Անդրկովկասի անկախությունը, բայց ինչի՞՞ հաշվին: Իրականում ստացվում է, որ Անդրկովկասի իշխանությունները, այդ թվում և Սեյմի դաշնակցական խմբակցությունը «ստիպված» զիջելով Արևմտյան Հայաստանը և պնդելով 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վրա, մասնակցում և հաշտվում էր վրաց-թաթարական գործարքի հետ: Բրեստ-Լիտովսկի բոլշևիկյան դավաճանական պայմանագիրը Անդրկովկասի

⁵⁰⁰ Աշխատանք, Երևան, 1918, 7 ապրիլի, թիվ 93:

կողմից չընդունելու հանգամանքը թեև անկեղծ էր, բայց գործնականում մեռելածին քաղաքականություն էր, քանի որ դարձյալ հայկական բոլոր, այդ թվում Կարս-Արդահան տարածքների զիջմամբ էր հիմնավորվում «դեմոկրատիայի» հաղթանակը և որ ավելի կարևոր է, պարզ էր, որ այդ տարածքների համար թուրքերի դեմ չէին կռվելու վրաց-թաթարական զորքերը:

Չանտեսենք նաև այն կարևոր հանգամանքը, որ եթե մեզ համար պարզ է դառնում Դաշնակցության կարելի է ասել «իշխանական» մի հատվածի քաղաքականության անհեռատեսությունը, ապա անորոշ էր մնում նաև «հնարամիտ» վրացական մենշևիզմի քաղաքականության հեռանկարը: Հայության ու հայկական տարածքների հաշվին սեփական շահերի հետապնդումը ևս ժամանակին կանգնեց փակուղու առջև. չէ՞ որ Բաթումի և Թիֆլիսի գրավման խնդիրը ևս օրակարգի հարց էր 1918 թ. մայիսին արդեն: Ղարաքիլիսայի հերոսամարտի շնորհիվ թուրքերը ուղղվեցին ոչ թե Թիֆլիս, այլ Բաքու...

Ինչևէ, վերադառնաք «Հորիզոն»-ի խմբագրականին: Դաշնակցությունը հայտնվում է հակասության մեջ, նշելով, որ «տաճիկ փոքրաքանակ զորքերը գրաւեցին Կովկասեան ռազմաճակատի առաջնակարգ ամրութիւններից մէկը», ավելին՝ որ «հարկ չկայ ծածկել՝ Էրզրումի կորուստը ուժեղ հարւած է մեզ եւ անսպասելի յաղթանակ տաճիկների համար»⁵⁰¹: Ուրեմն կարելի էր պաշտպանել Էրզրումը, մինչդեռ հեղինակը վստահ է, որ «Էրզրումի գրաւումը տաճիկների ձեռքին մի զորաւոր զէնք կը լինի ստիպելու Տրապիզոնի մեր պատվիրակութեան ճանաչելու Բրեստ-Լիտովսկում կնքուած անպատիւ հաշտութիւնը»⁵⁰²: Վստահաբար, ամեն գնով անհրաժեշտ էր պաշտպանել Էրզրումը:

«Հորիզոն»-ը, տվյալ դեպքում խմբագիր Ս. Վրացյանը գիտի, որ «մեր ստացուծ հարւածն անպայման ծանր է, բայց տակաւին ամեն ինչ կորած չէ, ռազմագէտները ցոյց են տալիս, որ դեռ կարելի է ոչ միայն Անդրկովկասի սահմանները պաշտպանել, այլ Էրզրումն էլ յետ առնել, եթէ միայն արագութեամբ ոյժ հասցւի ֆրոնտ: ***Տաճիկների յաջող յառաջխաղացումը գրեթէ ամբողջապէս պայմանաւորուած է մեր դանդաղկոտութեամբ***⁵⁰³ (ընդգծումը մերն է – Վ.Մ.), բայց միևնույն ժամանակ կուսակցությունը ոչ միայն

⁵⁰¹ Հորիզոն, 1918, 1 մարտի, թիվ 44:

⁵⁰² Նույն տեղում:

⁵⁰³ Նույն տեղում:

դանդադում էր, այլև Էրզրում շտապող «Ֆիդայուն»՝ Անդրանիկին թույլ չէր տալիս ղեկավարելու արևմտահայերի դիվիզիան, հեզնում էր նրա գեներալի կոչումը, հետո էլ լուտանքներ նետում հերոսի հասցեին կամ երկինք բարձրանում Ավ. Ահարոնյանի պես:

«Էրզրումի կատաստրոֆը մեր ժողովրդի համար ոչ թե յուսահատութեան աղբիւր պետք է լինի, այլ զգաստացման և ինքնագործունէութեան: Անդրկովկասեան ժողովուրդները և, մանաւանդ, հայ ժողովուրդը պէ՛տք է հասկանան, որ եթէ իրենք շարունակելու լինեն անտարբերութիւնը, կործանումն ու մահը մօտալուտ և անխուսափելի կը դառնայ»⁵⁰⁴: Ցավալի է, բայց 1918 թ. մարտին Դաշնակցությանը հայ ժողովրդի փրկությունն ու պայքարը դարձյալ կապում էր «Անդրկովկասյան ժողովուրդների համագործակցության հետ և «ինչպես վրաց դեմոկրատիայի ղեկավար Ժորդանիան յայտարարեց Սէյմում, մեզ մնացել է կամ ազատ ապրել և կամ պատուաւոր մահով մեռնել»:

Կրկին ցավալի է, որ շոայլվում էին միայն խոսքեր. «Էրզրումի անկումը անմիջական հրամայական պարտք է դնում բոլորիս վրայ,- վերջ տալ թուլամորթութեան, վերջ ճառերին ու վեճերին և դիմել գործի: Այսօրւայ միակ գործը ինքնապաշտպանութիւնն է: Անդրկովկասը պետք է ներկայացնի մե՛կ հոգի և մե՛կ կամք: Ազգային ու յեղափոխական բոլոր մարմինները պետք է ունենան մէկ նպատակ – պաշտպանել ազատութիւնն ու հայրենիքը: Եթէ հիմա էլ չհասկանանք ու շարունակենք մեր յանցաւոր ու բույթ անտարբերութիւնը, ապա մենք արժանի ենք կորչելու»⁵⁰⁵: Դաշնակցությունը կուլ տվեց նաև վրացիների կողմից Կարսի հանձնումը թուրքերին և հայ ժողովրդին կանգնեցրեց Մայիսյան գոյամարտի փաստի առաջ:

Ապաշխարհանքի բնույթ ունի նաև Ավ. Ահարոնյանի ելույթը: Այն հեղեղել էր ոչ միայն հայկական, այլև անդրկովկասյան մամուլի էջերը և լայն արձագանք էր ստացել:

1918 թ. մարտի 21-ին վերադառնալով Սարիղամիշից ու Ալեքսանդրապոլից Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգային մեծ դահլիճում նա հանդես եկավ «Ռազմաճակատի դրութիւնը» թեմայով բանախոսությամբ, որտեղ հիմնականում կանգ առավ Էրզրումի անկման պատճառների հիմնահարցի վրա⁵⁰⁶:

⁵⁰⁴ Հորիզոն, 1918, 1 մարտի, թիվ 44:

⁵⁰⁵ Նույն տեղում:

⁵⁰⁶ Տե՛ս նույն տեղում, 23 մարտի թիվ 62, Кавказское Слово, 1918, 24 марта, № 67, Մշակ, 1918, մարտի, թիվ 63, Վան-Տոսպ, 1918, 25 մարտի, թիվ 9:

Ուշագրավ է, որ մեր կողմից շրջանառության մեջ դրվող «Մշակ»-ի, «Հորիզոն»-ի, «Վան-Տոսպ»-ի, «Кавказское Слово»-ի թղթակիցների նյութերը յուրահատուկ շեշտադրումներ էին անում:

«Վան-Տոսպը» ընդգծում էր թերևս ամենագլխավորը. **«Հայութիւնը, որ պատերազմի ընթացքում 180 հազար զինուոր տուաւ ռուս բանակին, չկարողացաւ գէթ 5 հազար զինուոր տալ հայրենիքի պաշտպանութեան համար»** (ընդգծումը մերն է – Վ.Մ.): Այդ յանցանքը ընկնում է ոչ թե հայ զինուորի, այլ մեր վրայ, հայ հասարակութեան վրայ⁵⁰⁷:

«Հորիզոն»-ը յուրովի կարևորում էր այն, որ «կատարված աղետը անսպասելի չափտի համարել: Էրզրումի անկումը ոչ անակնկալ է և ոչ էլ աղետ, այլ ռազմական անհաջողութիւն»⁵⁰⁸:

«Մշակ»-ի մեկնաբանմամբ «մի ժողովրդի բաղդը չի կարող կապված լինել մի քաղաքի հետ և չը պետք է լքումն ու յուսահատութիւնը տիրէ մեր մէջ»⁵⁰⁹: Ավ. Ահարոնյանը մի կողմից իր անկեղծությամբ սրտեր էր շարժում և ծափահարությունների արժանանում, երբ ասում էր, թե «մենք չը կարողացանք լարել հարկ եղած բոլոր ուժերը, ամբողջ էներգիան», մյուս կողմից՝ անպայման ընդգծում, որ «ինչպէ՞ս կարող էինք պաշտպանել մենք՝ մեր մենակ մնացած մոռացված փոքրիկ բանակով»⁵¹⁰:

«Դեռ Երզնկայից սքանչելի Մուրադը հեռագիրներ էր տեղում Ազգ. Խորհրդին, թէ յոյժեր ուղարկեցէք, շտապեցէք, դրութիւնը ծանր է, դաւաճանութիւն է այլ ևս դանդաղելը... Մեր օֆիցէրներից շատերը դեռ Թիֆլիսում են և իրանց շատ լաւ են զգում, իսկ այնտեղ Էրզրումում նահանջի օրերին թնդանօթների պաշտպանութիւնը յանձնված է եղել մի խումբ գիմնագիստների և կանանց»⁵¹¹: Լավ է, որ Ավ. Ահարոնյանը և մեր հասարակությունը տեղյակ չէր Տվերդոլիլեբովի և մյուսների դավաճանությանը: Ավ. Ահարոնյանի «ո՞ւր էին հայ սպաները» հարցին, դահլիճից արձագանքում են. «Чашка чай-ում», այսինքն՝ Երևանի հայտնի սրճարանում⁵¹²:

Անդրանիկի գնահատականի հարցում Ավ. Ահարոնյանը կայուն էր ու անկեղծ. Այնպէս ինչպէս ճանապարհ էր դրել Թիֆլիսի կայարանից, այդպէս էլ գնահատում էր նրա գործը. «Անդրանիկը այդ մաքուր հայրենասէրը, այդ հերոսը, որ կարծես գնդակի

⁵⁰⁷ Վան-Տոսպ, 1918, 25 մարտի, թիվ 9:

⁵⁰⁸ Հորիզոն, 1918, 23 մարտի, թիվ 62:

⁵⁰⁹ Մշակ, 1918, 24 մարտի, թիվ 63:

⁵¹⁰ Նույն տեղում:

⁵¹¹ Նույն տեղում:

⁵¹² Տե՛ս Հորիզոն, նույն տեղում:

հետ դաշն էր կապել որ իրան չը մօտենայ, այդ հայոց Գարիբալդին, որ բազմաթիւ անգամ կռիւներ ու յաղթութիւններ է ունեցել, Անդրանիկը՝ որի մէջ գլխից առաջ սիրտն է վազում առաջ, ի՞նչ պիտի անէր երկրի այդ ծանր կացութեան մէջ, երբ մենք չենք ունեցել բանակ, այլ ունեցել ենք զինված մարդկանց խմբեր, առանց ընդհանուր կապի, առանց սիստեմի և մեխանիզմի...⁵¹³ Թշնամու 7 կամ 10.000 զորք ունենալու մասին լուրերը միայն լեզենդներ են, մենք չենք ունեցել հետախույզներ: Նախքան նահանջը, Էրզրումից հեռագիրներ էին ստացվում, որ բավական է ուղարկել 5.000 մարդ և կապահովենք Էրզրումը⁵¹⁴: Ով է մեղավորը գլխավոր հարցին նա պատասխանեց վերջում. «Մեղաւորը ես եմ, Ահարոնեանս և դուք բոլորդ, որ այստեղ լսում էք ինձ, որովհետև չը մտաք մի օր հայ զինուորի դրութեան մէջ: Ո՞վ մեզանից մտածեց մի օր գնալ այնտեղ, ռազմաճակատ կոչված այն սարսափելի վայրը, ուր աւերակներ, ձիերի բազմաթիւ դիակներ, արեան բուրմունք ու գարշահոտութիւն է տարածված. ո՞վ գնաց խօսելու մեր դարաբաղցի, վարանդացի, շիրակեցի գիւղացու հետ, որ ուրիշ մեր ֆրօնտը, ուրիշ է գերմանական ֆրօնտը: Ո՞վ բացատրեց մեր գեղջուկ զինուորներին թէ աղճատված բոլշեվիզմը, որ հասել է նրանց զօրաճակատը թողնելու մտքերով, լիովին հակառակ արդիւնք կը հասցնէ մեզ»⁵¹⁵:

Ա. Ահարոնյանի եզրահանգումը միանշանակ է.

«Ինչպէս մեղադրել Անդրանիկին: Էրզրումն ընկավ, չէր կարող դիմանալ. մեղքն Անդրանիկինը չէ: Թող մասնագետները ասեն, թե ինչն է ընկավ. թող պատմությունը դատի: Անդրանիկ փորձեց պահ մը իր ներքին կրակով վառել փոքրաթիվ, հոգեպէս թուլացած, անկազմակերպ հայ բանակը Էրզրումի տակ. փորձեց հրաշք կատարել. մեկ խոյանքով ոտքի հանել նույնիսկ մեռելները և փշրել թշնամու կատաղությունը... բայց նա չկարողացավ փրկել դրությունը»⁵¹⁶:

Մեր աղետների մէջ օտարի մեղքն ու պատասխանատվությունը ժխտած չենք լինի երբեք, եթէ կրկնենք ու երրորդենք, որ որքան շատ հույս դնենք օտարի վրա, ով ուզում է լինել այդ օտարը, այդքան քիչ կլինի մեր իրավունքը օտարի պատասխանատվոյան մասին խոսելու, և ընդհակառակը:

⁵¹³ Մշակ, 1918, 24 մարտի, թիվ 63:

⁵¹⁴ Հորիզոն, նույն տեղում:

⁵¹⁵ Մշակ, 1918, 24 մարտի, թիվ 63:

⁵¹⁶ Ավ. Ահարոնեան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 421, ըստ Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 72: Գիրք Բ, Երևան, 1996:

Այլ ու այս շատ էական սկզբունքի մեջ է, որ թուրքերը շատ ավելի խելացի են, քան հայերը: Եվ այս սկզբունքի կիրարկումը եղել է նրանց հաղթանակի պատճառներից մեկը, ինչպես նաև՝ մեր պարտության:

Կարելի է համեմատել երբևիցե թուրք մեծագույն աղետն անգամ հայ փոքրագույն մեկ աղետի հետ: Բայց փաստն այն է, որ նա կարողացավ Քեմալ ծնել, որ ազգ ստեղծեց:

Անդրանիկը երբեք նվազ հերոս չէր, քան Քեմալը: Բայց մեկը երբ դարձավ դազի՝ դատավոր, մյուսին մենք՝ հայերս, քարեքար զարկեցինք: Նրա դագաղի շուրջ ցուք տված երկյուղածությունը եթե արժանորեն վայելում էր նրա մեծությունը, չտեսանք, թե դա ապացուցում էր նաև հայի ոճրագործ հետամնացությունը:

Անդրանիկը չմեռավ, մենք սպանեցինք նրան»⁵¹⁷:

Դառնությունից ու հիասթափությունից մոլեգնած Անդրանիկը Սարիղամիշի մոտ մի շառաչուն ապտակ հասցրեց երիտասարդ Հովհաննես Բաղրամյանին (այն ժամանակ՝ Կորնետ Վանո – Վ.Մ.), ում հեծյալ ջոկատը ևս հրաժարվել էր մասնակցել Կարնո պաշտպանությանը: Կես դար անց՝ 1968 թվականին, երբ փառքի գազաթնակետին գտնվող Բաղրամյանը Մայիսյան հերոսամարտերի 50-ամյա հորելյանի կապակցությամբ այցելել էր Հայաստան, նրան ուղեկցեցին Երևանի պետական համալսարան՝ ուսանողների ու դասախոսների հետ հանդիպման:

Բոլորը նրանից ակնկալում էին Մեծ Հայրենականի մասին ազդեցիկ պատմություններ, բայց մարշալը պատմեց այս միջադեպը և իր պատմությունն այսպես ավարտեց. «Չորավարի ապտակը ինձ մարշալ դարձրեց»⁵¹⁸:

Ս.-Դ. Հնչակյան կուսակցությունը ներկայացնող գրող-հրապարակախոս Ատրպետը (Համբարձում Մուբոյաջյան) բավական մոայլ, բայց իրատեսական էր ներկայացնում պատկերը. «1918 թ. հունվարին,- գրում էր նա իր հուշերում,- այլևս անհնար էր դիրքերը պաշտպանել: Անդրանիկի և Ջանփոլադյանի ճառերը լսող չկար, բոլորը նրանց ծաղրում էին: Մեր թողած մթերքով ոչ միայն կշտացավ, հագնվեց և զինվեց Օսմանյան բանակը, այլև սնունդ ստացան Սվազի, Անգորայի, Կեսարիայի և Այդինի քաղցածները, ապա զորացած վերակազմեցին բանակները և արշավեցին մեզ վրա»⁵¹⁹:

⁵¹⁷ Շահան Նաթալի «Թուրքերը և մենք», «Անդին», թիվ 3, 2014, Երևան, էջ 15:

⁵¹⁸ Տե՛ս Կարո Վարդանյան, Չորավարի ապտակը, Անդին, թիվ 3, 2015, էջ 96:

⁵¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4045, ց. 2, գ. 4, թ. 114-115:

Ա. Ահարոնյանի ինքնաքննադատությունը գրոտեսկային ոճով ներկայացրել է Ս. Վրացյանը՝ «Կյանքի ուղիներով» հուշագրության մեջ: «Ամեն առաւոտ, կանաչ մահուդով ծածկուած մեծ սեղանի շուրջ, հաւաքուած էին Ազգային խորհրդի անդամները... ներկաները հաղորդուած էին իրենց ունեցած տեղեկությունները օրուայ անցքերի մասին: Ապա բերուած էին թէյ սպիտակ հացով եւ կարագ-պանիրով: Դուրսը դժուարութեամբ էր մթերք ճարուած, բայց Հայոց Ազգային Խորհուրդը առատ թէյ ու շաքար ուներ: Եւ այնպէս հաճելի էր տաք եւ անոյշ թէյը սպիտակ հացով ու կարագ-պանիրով, մանաւանդ, հեռագրական լուրերից յետոյ Հայաստանի սատնամանիքների եւ գաղթականների կրած տառապանքների մասին: Թեյին ընկերանում էին եւ զուարճալի մանրավեպեր: Ահարոնեանն ու Բեզգադեանը աննման պատմողներ էին, իսկ երբ նրանց միանում էր Գիգա Խատիսեանը, կարելի էր ժամերով կախուած մնալ նրանց շրթունքներից: Ուստի, բնաւ, զարմանալի չէր, որ Հայոց Ազգային Խորհուրդը միշտ «վաղուայ նիստին» էր յետաձգուած ռազմաճակատ այցելելու հարցը... Ջօր. Նազարբեգեանի կտրուկ հեռագրի վրայ էր, որ, վերջապէս, «վաղուայ նիստը» հասաւ»⁵²⁰:

Խոսքերն ու գնահատականները նույնիսկ ավելորդ են: «Հորիզոն»-ը անհազանգուած էր. «Բազմաթիվ գանգատներ ենք լսում Հայոց ազգային խորհրդի անկարգ գործավարութեան մասին: Խորհրդի շէնքը վերից վար լցւած է ջահել պաշտոնեաներով ու սպաներով: Մի՞ թէ չի կարելի երիտասարդներին ուղարկել ֆրոնտ, իսկ նրանց տեղը դնել կին պաշտոնեաներ: Մի՞ թէ չի կարելի Ազգային խորհրդի շուրջը վխտացող առողջ սպաների դէմ կտրուկ միջոցներ ձեռք առնել և ուղարկել նրանց իրենց գորամասերը: Օրինակը վերելից պետք է տալ»⁵²¹: Հայկական ազգային կենտրոնական մարմինը միայն 1918 թ. մարտի 5-ին ինչ-որ կենդանության նշաններ է ցույց տալիս և որոշում է վերջապէս մեկնել ռազմաճակատ՝ Կարս ու Սարիղամիշ: Ցավոք, սա դեռ վերջը չէր. չէ՞ որ Կարսի հանձնումից հետո նոր միայն, ապրիլին հրավիրեց Ալեքսանդրապոլի հայտնի խորհրդակցությունը, որն էլ օրվա հրամայական դարձրեց ինքնապաշտպանության խնդիրը: Պատմական դասի առումով կարևորն այն է, որ նույնիսկ «Էրզրումի կատաստրոֆը» չսթափեցրեց հայ իրականությանն իր ամբողջության մեջ վերցրած: Ինքնապաշտպանական բնագործ շարժվեց միայն Կարսի անկումից հետո:

⁵²⁰ Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, Գահիրէ, 1955, էջ 200, 202:

⁵²¹ Տէ՛ս Հորիզոն, 1918, 17 (4) ապրիլի, թիվ 71:

Ի դեմս Ազգային Խորհրդի մեկ այլ անդամ՝ Արշակ Ջամայանի, Դաշնակցության ուշացած ու անհասկանալի քաղաքականության դեմ իր քննադատական սլաքներն էր ուղղում Լեոն: «Եվ սկսվեց մի գործողություն,- գրում էր նա,- որ հիշեցնում էր Կոնիլովի «գորտ եւ ցուլ» առակը: Ամենից առաջ հայտարարվեց, թե ճակատի պաշտպանությունը հնարավոր է հենց այն պատճառով, որ հակառակորդ կողմը՝ օսմանյան բանակն էլ քայքայված է: Այս մասին ամենահանգստացուցիչ լուրեր ճակատից բերել էր **Արշակ Ջամայանը**, մի մարդ, որ իր կյանքի մեջ համարյա բոլոր մասնագիտությունների վարպետ էր իրեն ցույց տվել: Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, որ իր մի քանի աշակերտների հետ կամավոր էր գնացել, եւ այս բանը բավական եղավ, որ նա դառնա պատերազմական հարցերի բոլորովին լավատեղյակ մասնագետ: Իբրեւ այդպիսին նա եղել էր անդամ այն մասնաժողովի, որ գնացել էր Երզնկայի ճակատը՝ զինադադարի պայմանագիրը ստորագրելու համար: Վերադառնալով նա սկսել էր «փչել» դաշնակցականին հարազատ ջերմեռանդությամբ»⁵²²:

Հետագա իրադարձությունների հեռանկարի, հաջող ինքնապաշտպանության կազմակերպման առումով անշուշտ կարևոր էր ռուսական բանակի թողած գույքի հիմնահարցը: Արդեն ականատես եղանք, որ Էրզրումը թողնելիս չկատարվեցին Անդրանիկի և մյուսների համապատասխան հրամանները՝ զենքի պահեստները պայթեցնելու վերաբերյալ: Այս առումով հիշարժան է Ա. Միհրանյանի հեղինակած «Ինչպես պետք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը) հուշագրությունը, որտեղ ներկայացվում էր մեր կողմից արդեն հիշատակված հսկայական նյութական միջոցների կորուստը:

«Օրերով աղաչեցի, պաղատեցայ, որ այս հսկայ հարստութիւններուն էթե տեր չպիտի կրնայինք դառնալ,- գրում էր Անդրանիկը,- գոնէ կարելի եղածին չափ անոնցմէ փոխադրենք Լորիի լեռները, ճիշտ Ալեքսանդրապօլը թրքաց ճանկին մէջ իյնալէն 20-25 օր առաջ»⁵²³: Պարզ է, որ խոսքը վերաբերում է ոչ անմիջականորեն Էրզրումի ու Երզնկայի հարստության մասին և ոչ փետրվար, այլ՝ ապրիլ ամսվա վերջերին: Անդրանիկը դժգոհում էր, որ իրեն առարկել են՝ հիմք ընդունելով Բրեստ-Լիտովսկի

⁵²² Լեո, Անցյալից, Երևան, 2009, էջ 340:

⁵²³ Ա. Միհրանեան, Ինչպես պետք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 7:

պայմանագիրը, ըստ որի այդ պահին թուրքերի կողմից գրավված տարածքների գույքը այլևս չէր կարելի տեղափոխել⁵²⁴:

«Սակայն այս բոլոր հարստություններուն մեծագոյն մասը գրաւեցին թուրքերը և փոքր մաս մըն ալ ծանօթ գործիչներու կողմէ կողոպտուելով, ծախուեցան մեր թշնամիներուն: Տխուր է այս,- նշում էր Անդրանիկը,- սակայն ճշմարտութիւն է»⁵²⁵:

Այս հուշապատումի մեջ առաջին անգամ 1921 թ. հրապարակվեցին Անդրանիկի հույժ կարևոր վկայությունները Էրզրումի անկման ու մասնավորապես տեղում մնացած ռուսական զորամասերի հայ զինվորների վարքագծի վերաբերյալ: Ըստ Անդրանիկի, Էրզրումում մնացած 251 զինվորներն ու 53 սպաներն էին, որ բնակվում էին թուրքերի տներում, առանց զինվորական կարգապահության և «ասոնք էին, որ Իլիճայի⁵²⁶ առջեւ օդին մեջ կը կրակէին, ցոյց տալու համար ինձի, որ այլ եւս չէին ուզեր պատերազմիլ և թէ իրենց տուները պիտի դառնան հանգիստ ընելու և այս մարդիկը, որ Էրզրումի ճակատին վրայ չէին ուզեր կռուիլ, և դէպի Շուշի ճամբայ ինկան, Զապուխ-Շէքերլու (Հագարի, Գորիսի մոտ) ձորին մեջ կոտորուեցան թաթարներու կողմէ, և իրենց հետ նաեւ 83 գաղթական հայեր»⁵²⁷:

Միաժամանակ զորավարը բարձր էր գնահատում Երզնկա-Էրզրումից մինչև Վան հայկական ճակատի 12-15.000 արևմտահայ զինյալներին, որոնք նրա կարծիքով շատ հեշտությամբ երեքուկես ամիս կարողացան պաշտպանել այդ ճակատները և «խոշոր վտանգի ժամանակ, դէպի Կովկաս փոխադրեցին 100.000 գաղթական»⁵²⁸: Միանգամայն տեղին է Անդրանիկի գայրույթը այն հարցի վերաբերյալ, որ «Թիֆլիզի մեջ 4-5 ամիս չկրցան 4-5 հազար զօրք համախմբել. Նախկին գտնուածներով միասին 8 հազար զինուոր հազիւ զէնքի տակ դրուեցան: Ամբողջ 6 ամիս զբաղած էին նոր զինուորական տիսիբլին մը ստեղծելու, տեւօքրաթիկ ազգերու տեւօքրաթիկ սկզբունքներու հիման վրայ»⁵²⁹:

1-ին և 4-րդ գնդերի կապակցությամբ նշենք, որ փետրվարի 25-ի գիշերը, այդ գնդերի հրամանատար, գնդապետ Պ. Բեժանբեկովը հեռախոսով լրջորեն հուսադրում էր

⁵²⁴ Տե՛ս Ա. Միհրանեան, նշվ. աշխ., էջ 7-8:

⁵²⁵ Նույն տեղում, էջ 8:

⁵²⁶ Խոսքը վերաբերում է 1 և 4-րդ գնդերի Ղարաբաղցի զինվորներին:

⁵²⁷ Նույն տեղում, նաև՝ Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 91:

⁵²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁵²⁹ Ա. Միհրանեան, նշվ. աշխ., էջ 9:

Անդրանիկին, թե «ճակատը (Իլիջայի - Վ.Մ.) լաւագոյն դրութեան մէջ է եւ զօրքին կռուելու տրամադրութիւնը բարձր է»⁵³⁰:

Այս իրադարձութիւններին մենք արդէն անդրադարձել ենք. Այժմ տեսնենք, թե ինչպէս էր արդարանում Պ. Բեժանբեկովը:

1918 թ. մարտի 10-ին «Հորիզոն»-ը հրապարակում է Սարիղամիշից ուղարկված գնդապետ Պ. Բեժանբեկովի մարտի 8-ի հեռագիրը. «Պատահաբար Իլիջայի զորախմբի հրամանատար նշանակուած (նկատի ունի Անդրանիկի կողմից իր նշանակումը – Վ.Մ.), պարտքս եմ համարում վկայելու, որ մամուլի մէջ լոյս տեսած բոլոր տեղեկութիւնները հայկական հրացանաձիգ 1-ին գնդի Էրզրումը առանց կովի ինքնակամ կերպով թողնելու մասին՝ ծայր ի ծայր մտածածին են: Միայն հիշեալ գունդն էր, որ մնացել էր Իլիջայի դիրքերի վրայ և այդ գնդի տոկունութեան շնորհիվ էր, որ տաճիկները ներս չխուժեցին Էրզրում դեռեւս փետրվարի 26-ին: Այդ գունդն իր կազմի մէջ ունի միայն 200 քաջարի հրացանաձիգներ: Գնդի մնացորդները Էրզրումը թողեցին փետրվարի 27-ին հեռացող կայազորի մասերի հետ միաժամանակ: Եթէ բոլոր պարոնայք թղթակիցները եւ զինուորական ամեն տեսակ միութիւնների ու կոմիտէների անդամները գային ինձ մոտ՝ Իլիջայի զօրախմբի շարքերը մտնելու, այդպիսի կատաստրոֆ չէր լինի»⁵³¹: Ինչ վերաբերում է Անդրանիկին, ապա Խարբերդի դարպասների մոտ հանդիպելով Պ. Բեժանբեկովի հետ նա խիստ տոնով Իլիջայի ճակատի փլուզման ողջ պատասխանատվությունը նրա վրա է դնում:

«Ի՞նչ կրնամ ընել, զօրքը սրիկայ է... հակադարձում է գնդապետը և ստանում զօրավարի պատասխանը. «Մեծագոյն սրիկան դո՛ւ էս»⁵³²:

Պ. Բեժանբեկովի կեղծարարության դեմ Անդրանիկը «Հայկաշեն» ամսագրում բացահայտեց գնդապետի վարքագիծը և հատկապէս այն, որ հենց Պ. Բեժանբեկովն էր փետրվարի 26-ին խոստովանել գնդապետներ Մ. Զինկնիչին ու Ն. Մորելին, որ «զօրքերը առանց կռուելու ձգեցին հեռացան Իլիճայեն»⁵³³: «Պատմական իրողութիւններ

⁵³⁰ Տե՛ս Լեւոն Թիւթինճեան, Կարնոյ անկումին ողբերգութիւնը՝ ըստ Յուշամատեան Մեծ եղեռնի, Պէրուք, 1965, էջ 822:

⁵³¹ Հորիզոն, 1918, 10 մարտի, թիվ 51:

⁵³² Տե՛ս Անդրանիկ Չելեպյան, նշվ. աշխ., էջ 425:

⁵³³ Տե՛ս նույն տեղում, էջ 435:

խեղաթիւրելով չէ կարելի ծածկել սարսափելի մանրամասնութիւններ, որոնք անպատճառ պիտի յայտնուին ապագային» - ամփոփում էր Անդրանիկը⁵³⁴:

Էրզրումի անկումը ծանր քարոյահոգեբանական ազդեցություն ունեցավ առաջին հերթին Անդրանիկի վրա: Միանգամայն սթափ կերպով գնահատելով Էրզրումի շուրջ ստեղծված ռազմական ու մարդկային գրեթէ անհուսալի իրադրությունը, նա միևնույն է, փորձեց թեկուզ իր անձնական հերոսական օրինակով քիչ թե շատ ուժեր կենտրոնացնել և կազմակերպել դիմադրություն: Չի կարելի անտեսել այն կարևոր հանգամանքը, որ չնայած առկա տարաձայնություններին, այնուհանդերձ Հայոց ազգային խորհուրդն էր նշանակել Անդրանիկին որպէս արևմտահայ գորբաժնի հրամանատար և ուղարկել ռազմաճակատ ու Էրզրում: Միաժամանակ, մենք տեսանք, որ Էրզրումի պաշտպանության հարցում թերևս Անդրանիկն ու իր մեկ-երկու համախոհներն էին, որ աներկբա կանգնած մնացին այդ տեսակետի վրա:

Միանգամայն պարզ է, որ որպէս ֆիդայի-զինվորական նա մեծագույն պատասխանատվություն էր կրում այդ ամենի համար, ավելին՝ նա ծանր էր տանում այդ պարտությունը. Դիլմանի հերոսը հանձնել էր Էրզրումը և դա ոչ իր ու շատ զինակիցների մեղքով, այլ թիկունքի և Էրզրումում տիրող անտարբերության, բարոյալքման ու դավաճանության պատճառով:

Ուստի և Արտակ Դարբինյանի դիպուկ գնահատմամբ. «Անդրանիկ ոտքէն վիրաւոր, հոգիէն խոցոտուած՝ Սարիղամիշ հասնելուն պէս ուղարկեց իր հրաժարականը Հայաստանի Ապահովութեան Խորհրդին»⁵³⁵:

Մարտի 10-ին «Մշակ»-ը անդրադառնալով Անդրանիկի հրաժարականին, նշում էր, որ տեղական թերթերում տպված սխալ տեղեկությունները առիթ են տվել թուրք-թաթարական հասարակության ներկայացուցիչներին զանազան անհիմն ենթադրություններ անել: Դժվարանում ենք մեկնաբանություններ տալ, բայց կարելի է ենթադրել, որ թուրքերն իրենց համար հաճելիորեն երևի տեսնում կամ ակնկալում էին Անդրանիկի և հայկական ազգային մարմինների ու կազմակերպությունների միջև ցանկալի առճակատումը, բախումը: «Մշակ»-ը նույնպէս չխորանալով Անդրանիկի հրաժարականի ըստ էության քննության մեջ և «թողնելով հեղինակաւոր մարմիններին

⁵³⁴ Տե՛ս Անդրանիկ Չելեպյան, նշվ. աշխ., էջ 425:

⁵³⁵ Տե՛ս Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Երևան, 2003, էջ 222:

անաչառ կերպով քննելու այդ չափազանց անախորժ փաստի հանգամանքները»⁵³⁶ փորձում էր հիմնավորել այդ հրաժարականի ձևի մանրամասները:

Անդրանիկն իր հրաժարականի հեռագիրը ուղղել էր անմիջական ռազմական ու քաղաքական ղեկավարությանը՝ զինվորական հրամանատարությանը, այսինքն՝ գեներալ Թ. Նազարբեկյանին և Հայաստանի Ապահովության խորհրդին, ապա և ազգային հաստատություններին ու դաշնակից պետությունների ներկայացուցիչներին: Այս վերջին հանգամանքն է ահա, որ տեղիք էր տվել տարաբնույթ թյուրիմացությունների և «Մշակ»-ի կարծիքով, անհիմն էր: «Այդ քայլի վրա,- նշում էր «Մշակ»-ի թղթակիցը,- մենք նայում ենք որպես մի ձեռական քաղաքավարութեան փաստի վրայ, որ ընդունված է քաղաքակիրթ երկրների արտաքին յարաբերութիւնների մէջ: Չէ՞ որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի հետ անդրկովկասյան սելմը ու կոմիսարիատը դեռ ևս չեն խզել իրենց կապերը և համարվում են դաշնակիցներ»⁵³⁷:

«Մշակ»-ի թղթակից Խ. Բոյաջյանը տեսակցում է Վ. Թորթոլենցի հետ և փորձում պարզել Էրզրումի անկման պատճառները:

Հարցազրույցի մեջ վեր են հանվել որոշ մանրամասներ և ավելի բյուրեղացած քաղաքական եզրահանգումներ, որոնք նոր լույս են սփռում իրադարձությունների վրա: Վ. Թորթոլենցի այս հարցազրույցը, որն անշուշտ արտացոլում է Անդրանիկի մոտեցումներն ու տրամադրությունը, առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ և հանդիսանում է նրա հայտնի հուշագրության (Ա. Մարմարյան կեղծանվամբ – Վ.Մ.) սեղմ նախատիպը:

Գլխավոր հիմնահարցին, թե ո՞րն է Էրզրումի անկման պատճառը, Վ. Թորթոլենցը պատասխանում է. «Պատճառները զանազան են, յամենայն դեպս չկային ռազմական պատճառներ, որովհետև կռիվ տեղի չունեցաւ: Պատճառներու մեծագոյն մասը խմորուած էր թիկունքի վրայ, Թիֆլիսէն մինչև Էրզրում»⁵³⁸: Տարակուսանք է հարուցում թերևս Վ. Թորթոլենցի պնդումը, թե «կռիվ տեղի չունեցավ»: Երևի նկատի ունի Անդրանիկի պատկերացմամբ լիարժեք դիմադրության կամ ճակատամարտի հանգամանքը, քանի որ տեղական բնույթի տարբեր մարտեր, գոնե՝ Սեպուհի, Թորգոմի, Ն. Մորելի, Մուրադի և Անդրանիկի ղեկավարությամբ եղել են: Անդրանիկը Թիֆլիսում

⁵³⁶ Տե՛ս Մշակ, 1918, 10 մարտի, թիվ 51:

⁵³⁷ Նույն տեղում:

⁵³⁸ Նույն տեղում, 16 մարտի, թիվ 56:

իրեն զգում էր քառուսի մեջ, մեծապես դժգոհ էր Ազգային խորհրդի ռազմական գործերի բաժնի վարիչ (Վ. Թոթովենցի արտահայտությամբ՝ «պատերազմական մինիստր» - Վ.Մ.) Ռուբեն Տեր-Մինասյանի գործելակերպից և հույս ուներ, որ «զեթ ռազմաճակատի վրա ինքզինք պիտի գտնէր հաւատարիմ և կարգապահ զինուորականներու և զինուորներու շրջանակի մը մէջ»: Ինչ վերաբերում էր բնակչության տրամադրությանը, ապա Էրզրումում էր, որ Անդրանիկն իրապես գիտակցեց ոչ միայն այդ քաղաքի, այլև միգուցէ հետագա ռազմաքաղաքական զարգացումների հեռանկարը. **«ես չեմ տեսնէր այն ոգին, որ պէտք էր ունենար ժողովուրդ մը իր ազատութեան նախօրեակին»** (նկատի ուներ նաև «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը – Վ.Մ.) (ընդգծումը մերն է – Վ.Մ.):

Դիմելով Վ. Թոթովենցին Անդրանիկը Էրզրումում ասել էր. «Եկուր և տես այն ժողովուրդը, որուն հետ գործ ունիմ քսան և մէկ տարիներ և երբէք ինձ չէ ներկայացած այս երևոյթով. բարոյական շատ ծանր ապտակ է կերած և ինքզինք կորսնցուցած է այս ժողովուրդը: Ես կը տեսնեմ, որ մենք ինկած ենք սարսափելի քաօսի մը մէջ. պէտք է մեր բոլոր ուժերը լարենք մասամբ դուրս գալու այդ քաօսէն, ամբողջովին չենք կարող»⁵³⁹:

Էրզրումում գործող հայ պաշտոնյաների հանդէպ Վ. Թոթովենցի գնահատականները 1918 թ. մարտին, հասկանալի պատճառներով ավելի կոպիտ էին, անհաշտ, նույնիսկ վիրավորական. վերքը թարմ էր, կորուստն անդառնալի: «Տիգրան Աղամալեան, յատկապէս յիմար ծնած մարդ մը, զգուելիօրէն դիկտատօր, ինքնահաւան, անհայրենասէր և դրամասէր զինուորական գործէ կը հասկնար այնչափ, որչափ քիւրդ կին մը բնագիտութիւնէ, Ֆարաշեան (Ֆառոշյանց – Վ.Մ.) ոչ պակաս Աղամալեանէն, և Թորոսեան,- վկայում էր Վ. Թոթովենցը⁵⁴⁰:

Այս պայմաններում Անդրանիկը հայտնվել էր անօգնական վիճակի մեջ. «ես եկայ այստեղ և զիս ջարգեցին, իմ հրամանները չկատարեցին. կը կատարե՞ն արդեօք վաղը իմ հրամանները, այդ ալ չեմ գիտէր: Ես այն գիտեմ, որ ամեն մարդ պէտք է լինի իր սուրին տէրը»⁵⁴¹: Ամբողջ հարցը նրանում էր, որ Անդրանիկը խորապէս գիտակցել էր, որ Էրզրումում ու ընդհանրապէս ճակատում ստեղծված իրադրությունը ինքը չէր կարող փոխել: Անգամ Վ. Թոթովենցի գնահատական էր անգոր. «Անդրանիկը 10 օրուայ

⁵³⁹ Մշակ, 1918, 16 մարտի, թիվ 56:

⁵⁴⁰ Նույն տեղում:

⁵⁴¹ Նույն տեղում:

ընթացքին աւելի շատ չարչարուեցաւ հոգեպէս և ֆիզիքապէս, քան Քրիստոս ինքը»⁵⁴²: Ավելի ուշ Միքայել Վարանդյանն էլ փաստեց, թէ «Այսպիսի պայմաններու մէջ Անդրանիկի տեղ Նափուլէոն Պօնապարտն անգամ լինէր հայկական բանակի գլուխ, հաւանականորէն պիտի չկարենար փրկչի դեր խաղալ, պաշտպանել հայոց բերդաքաղաքը – ոչ Էրզրումը եւ ոչ ալ յետագային՝ Կարսը»⁵⁴³:

Եվ վերջապէս, «Մշակ»-ի թղթակցի կողմից բարձրացվում է ամենակարևոր ու արդիական հարցը՝ արդո՞ք արևելահայ սպաներն ու զինվորները ստացել էին Էրզրումը թողնելու և պետական սահման ետ քաշվելու հրաման: Վ. Թոթովենցը խորապէս համոզված էր, որ դիմադրության մերժումը կազմակերպված բնույթ ուներ: Միաժամանակ, նա հիասթափվել էր նաև արևմտահայ զինուժից. «Թիրքահայ զինուորները պէտք էր մեռնէին Էրզրումի պարիսպներուն տակ, բայց անոնք չցուցադրեցին այդ բարձրութիւնը: Թիրքահայ զինուորները այդ բոլորէն յետոյ կարող էին կացութիւնը փրկել մնալով իրենց փառահեղ հրամանատարի կողքին: Թիրքահայ զինուորները պէտք էր գիտակցէին, որ իրենց ազատութիւնը կախուած էր Էրզրումի պարիսպներուն առջև ի յայտ բերած ոգիով: Դժբաղտութեան պատճառները շատ են...»⁵⁴⁴:

Փարիզի 1919 թ. առաջին ազգային համագումարը իր փետրվարի 24-ի նախապատրաստական նիստում լսեց Ավ. Թերզիպաշյանի տեղեկագիրը՝ Հայաստանի ապահովության խորհրդի կատարած աշխատանքների մասին: Այդ հաշվետվության մէջ առանձին բաժին էր նվիրված «Էրզրումի անկման պատճառներին»⁵⁴⁵:

Ավ. Թերզիպաշյանի այդ պատճառների մէջ տեսնում էր. 1. Գեներալ Օդիշելիձէի հանցավոր անգործությունը, 2. ռուսական բանակի կարգապահության անկման և բարոյազրկման ազդեցությունը «ռուսահայ զորքի» վրա, որը շտապում էր տուն վերադառնալ, 3. «հուսահատ զորքի տրամադրությունից» դրդված՝ Հայկական կորպուսի հրամանատարի և սպայակույտի վարքագիծը, որոնք «չեն ուզեր Էրզրում երթալ». «ռուսահայ ղեկավար շրջանների անվստահ քաղաքականութիւնը հեռու էր ազդու միջամտութիւն ունենալու թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի վրայ», 4. արևմտահայ զինուժի

⁵⁴² Մշակ, 1918, 16 մարտի, թիվ 56:

⁵⁴³ Տէ՛ս Մ. Վարանդեան, Մուրատ, Պոսթոն, 1931, էջ 314:

⁵⁴⁴ Մշակ, նույն տեղում:

⁵⁴⁵ Տէ՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 340-341:

անմխիթար վիճակը. «նրանք առանց նոյնիսկ նախնական մարզանքի, հազիւ Էրզրում հասել էին, երբ սկսեց թրքական արշաւանքը»⁵⁴⁶:

Արևմտյան Հայաստանի տարածքները վերագրվելիս թուրքական բանակը շարունակում էր իրագործել հայկական ցեղասպանությունը: Հարյուրավոր օրինակներից նշենք ընդամենը մեկը՝ Օլթիի կոտորածը, որն առանձնանում էր իր պանթուրքիստական նկարագրով:

«Սուլտայից ապրիլի 9-ին հաղորդում էին. «Օլթիի հայերի կոտորածը սկսվեց մարտի 7-ին, իսկ գյուղերում՝ 8-ին: Կոտորածի գլուխ էին կանգնել Բաքվից եկած Իսմայիլ բեկը (պարսիկ), օլթեցի Զիաբեկ Դայիր-օղլին (թուրք), Վանի քուրդ Մախսուն իր 100 ձիավորներով, Օրդույի գյուղացի մուլա Պիլալը իր 150 հեծեալներով, քյուրքչի մուլա Դերիշը (թուրքմեն) իր 200 ձիավորներով և ուրիշներ: Սրանք 2-3000 թուրք-քուրդ խուժանով հանկարծակի շրջապատում են հայ գյուղերը...»⁵⁴⁷:

1920 թ. ՀՅԴ «Յառաջ» թերթը ի դեմս անվանի երգիծաբան Լեռ Կամսարի անդրադարձավ Կարնո անկմանը: Հայկական կողմի դանդաղկոտությունը ծաղրելով նա գրում էր. «Մինչդեռ Հայաստանն այս պատրաստություններով էր զբաղւած, Տաճիկը Մամախաթունին մէջ դարձաւ իր խոհարարին եւ ըսաւ.

– Դուն օճախը կպցուր, կերակուրը դիր վրա, ես երթամ Կարին գրաւեմ՝ գամ ուտեմ:

– Կ’ուշանաս, ճանըմ, կերակուրը կը պաղի,- առարկեց խոհարարը:

– Դեռ կերակուրի սոխը չբռնած ես հոտ եմ»:

«Ահաւոր ճակատամարտ Էրզրումի տակ» ենթագլխում Լեռ Կամսարը հեզնում էր դարձյալ. «Տաճիկները մեր թնդանօթներու *տեղատարափ լռութեան* տակ քաղաք մտան» ու այնուհետև եզրակացնում, թե **«Եւ ժողովի նստան Կովկասեան եղբայրները Թիֆլիսի մէջ, թե ինչպէս ընեն, որ առանց կոուելու յաղթեն Տաճիկին»** (ընդգծումն իմն է – Վ.Մ.)⁵⁴⁸:

⁵⁴⁶ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 340:

⁵⁴⁷ Հորիզոն, 1918, 19 մայիսի, թիվ 93:

⁵⁴⁸ Տե՛ս Անդրանիկ Չելեպյան, նշվ. աշխ., էջ 439-440:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջմամբ Անդրկովկասում գործնականորեն դրվեց Խորհրդային Ռուսաստանից անջատման և անկախ ազգային պետականությունների ձևավորման գործընթացի մեկնարկը: Այդ ճանապարհին Երզնկայի զինադադարը դարձավ առաջին ջրբաժանը, երբ Անդրկովկասյան կոմիսարիատն իր որդեգրած անջատողական և այդպիսով նաև Թուրքիայի հետ մերձենալու քաղաքականության նախաշեմին սկսեց ավելի անթաքույց ու համարձակ գործել: Պաշտոնական փաստաթղթերի մեջ մուտք գործեց «Կովկասի անկախ կառավարություն» ձևակերպումը: Այն շեշտում էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու հարցադրումը և Անդրկովկասը Կովկաս կոչելով հետապնդվում էր պանթուրքիզմի դեռևս չիրականացված ծրագիրը՝ հակառուսական դաշինքի մեջ ներառնելով նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականներին ու հակախորհրդային կառավարություններին: Գործընթացի առաջամարտիկը վրացական մենշևիզմն էր, որի հեռահար ծրագրերը լիովին համահունչ էին Թուրքիայի քաղաքականությանը:

Այդ համատեքստում էր, որ Ա. Զինենկելին բարձրացնում էր վրացական ազգային շրջանակների գլխավոր մտահոգությունը՝ իշխանության համար հակաբոլշևիկյան պայքարում երկրամասում Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի ոչ ցանկալի ներկայության խնդիրը: Բացի Անդրկովկասը խորհրդայնացնելու վտանգից վրացական մենշևիզմին ու նաև թաթար-մահմեդականներին խորապես անհանգստացնում էր այն, որ ռուսական զորամասերի ներկայությունը նաև համառուսաստանյան միասնական պետության ամբողջականության պահպանման գրավականն էր:

2. 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում ավելի խորացավ և վերջնականապես պարզ դարձավ փետրվարյան հեղափոխությամբ սկսված քաղաքական միտումը, ըստ որի կազմալուծվող Կովկասյան ռազմաճակատի և որպես այդ գործընթացի հետևանք՝ սպասվող թուրքական արշավանքի պայմաններում, հայկական զինական ուժն էր, որ մի շարք պետականամետ ռուս և այլազգի զինվորական գործիչների հետ մեկտեղ պետք է փորձեր պաշտպանել ճակատը և այդպիսով՝ Արևմտյան Հայաստանը:

3. Արևմտահայության ինքնակազմակերպման հիմնահարցի համատեքստում աշխատանքներն ընթացան երկու հիմնական ուղղությամբ.

ա) արևմտահայությանը համախմբելու և վերջինիս առջև ծառայած կենսական հրատապ խնդիրների լուծման նպատակով հրավիրել արևմտահայության 2-րդ համագումար,

բ) կազմակերպել արևմտահայկական առանձին գորաբաժին և իրականացնել գորահավաք:

Թուրքական արշավանքի հետևանքով Կարինում 1918 թ. մարտի 4-ին նախատեսված արևմտահայերի 2-րդ համագումարը հասկանալի պատճառներով հետաձգվեց:

Այն հրավիրվեց միայն 1918 թ. ապրիլի վերջին տասնօրյակում, այն էլ՝ Թիֆլիսում և Արևմտյան Հայաստանի բոլոր շրջանների բնակչության ներկայացուցչությունը չապահովելու պատճառով, աշխատեց որպես խորհրդաժողով: Վերջինիս կայացումը ապահովվեց դեռ 1917 թ. դեկտեմբերից Երևանում, Թիֆլիսում, Վանում տեղի ունեցած արևմտահայկական ազգային կազմակերպությունների ժողովների և խորհրդակցությունների ընդունած որոշումների արդյունքում:

Արևմտահայերի նախաձեռնությամբ Հայոց ազգային խորհուրդը իր գործունեությունը համաձայնեցնելով Արևմտահայ ազգային խորհրդի Ապահովության խորհրդի, Հայ զինվորական միության և Հայկական առանձին կորպուսի ղեկավարության հետ, ձեռնարկեց և կազմավորեց արևմտահայ գորաբաժինը: Այն պաշտոնապես կոչվեց «Հայկական հրացանաձիգների 1-ին դիվիզիա»:

Չնայած ՀԱԽ-ի և ՀԶՄ որոշակի ընդհմությանը, արևմտահայերի դիվիզիայի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը:

Ռուսական հրամանատարության կողմից նրան գեներալի աստիճան շնորհելով նպատակ էր հետապնդվում անվանի գորավարին ոգևորելով շահագրգռել փլուզվող ճակատը պաշտպանելու հարցում: Մեկ անգամ ևս պետք է դրսևորվեր հայ-ռուսական զինական փոխշահավետ համագործակցությունը:

4. Կարինի (Էրզրում) ու նաև Երզնկայի պաշտպանության համատեքստում նոր՝ վճռորոշ փուլ էր թևակոխում հայկական և մասնավորապես, արևմտահայկական զինական ուժի ձևավորման գործընթացը:

Քանի որ Երզնկան ու Կարինն էին հանդիսանում ռազմաճակատի և գրավված Արևմտյան Հայաստանի տարածքների արևմտյան եզրագիծը, ուստի և առաջնահերթ ուշադրության կենտրոնում հենց այդ երկու ռազմավարական կենտրոններն էին հայտնվում:

Էրզրումի շուրջ ծավալվող իրադարձությունների ժամանակագրությունը սկսվում է 1917 թ. նոյեմբերի սկզբից, երբ դեռ Փետրվարյան հեղափոխության իրականության մեջ ստացվում էին լուրեր ռազմաճակատի առաջին գծից գործերը ետ քաշելու մասին:

Երզնկայի զինադադարից հետո մասնավորապես, Կովկասյան բանակի հրամանատարության շրջանում արդեն ձևավորվել էր թուրքական անխուսափելի հարձակման հեռանկարը:

Ուստի և 1917 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակից Կովկասյան ռազմաճակատի և բանակի բարձր հրամանատարությունը բազմաթիվ գրությունների և հրամանների տեսքով ձեռնամուխ է լինում Երզնկա-Էրզրում պաշտպանական շրջանում հայկական ազգային զնդերի կենտրոնացման գործընթացին:

Միաժամանակ, առկա էր տագնապալի դանդաղկոտություն: Հապաղման և ոչ գործնական քայլերի դեմ կշտամբանքները ուղղվում էին թե՛ Կովկասյան իշխանություններին և թե՛ հայկական ազգային կառույցներին ու Հայկական բանակային կորպուսի հրամանատարությանը: Այստեղից էլ բխում է գլխավոր հարցադրումը. ինչո՞ւ մինչև 1918 թ. փետրվարի 10-ը թե՛ ռուսական և թե՛ հայկական զինվորական ու քաղաքական կառույցների կողմից չիրականացվեցին վճռական գործողություններ:

5. Ակնհայտ է, իհարկե, բոլշևիզմի քայքայիչ ազդեցությունը, սակայն միաժամանակ ակնհայտ էր նաև բազմաթիվ հայ գործիչների ու զորամասերի պարտվողական տրամադրության միտումը: Այդ երևույթն առավելապես սնվում էր թիկունքից՝ Անդրկովկասյան իշխանության քաղաքական կողմնորոշումից:

Ռազմաճակատում մնացած և դիմադրության ոգին պահպանած ուժերը դժգոհ էին Հայոց ազգային խորհրդի ու Հայ զինվորական միության վարքագծից: ՀԱԽ-ի պատվիրակությունն, օրինակ, իրավիճակին ծանոթանալու նպատակով, ռազմաճակատ մեկնեց միայն 1918 թ. մարտին, այսինքն՝ Էրզրումի անկումից հետո:

Նման ուշացած և ժամանակավրեպ քայլ էր նաև ՀՅԴ Շիրակի գավառի 1-ին համագումարի հրավիրումը և նրա ընդունած որոշումները: Օրակարգի գլխավոր հարցը

Էրզրումի պաշտպանությունն էր. 1918 թ. փետրվարի 16-18-ը կայացած՝ կուսակցական համագուրամը նոր միայն որոշում էր կայացնում՝ Ալեքսանդրապոլում և այլ կենտրոններում հավաքված հայկական գորամասերն անմիջապես Էրզրում ուղարկելու մասին:

Իրավիճակի ողբերգականությունը նրանում էր, որ ճակատի հայ սպաների ու զինվորների համար որոշակի էր դառնում Սեյմի, ՀԱԽ-ի, հայկական ազգային կուսակցությունների վարած հակասական, զինվորի համար անհասկանալի պարտվողական քաղաքականությունը:

6. Կարևոր է այն հանգամանքը, որ թեև 1917 թ. նոյեմբերի վերջերից Կովկասյան ռազմաճակատի ու բանակի հրամանատարության հետևողական ահազանգերին, ՀԶՄ նոյեմբերյան համագումարի վճռորոշ որոշումներին, մինևույն է՝ հայ իրականության մեջ ազգային գորամասերի ձևավորման գործընթացը ուշանում էր, իսկ Էրզրումի պաշտպանության համատեքստում կարելի է անգամ ձախողված համարել:

Միայն 1917 թ. դեկտեմբերի 26-ին է հրապարակվում Երևանի նահանգային ազգային խորհրդի, Հատուկ կոմիտեի հրամանը՝ Երևանի նահանգում մոբիլիզացիայի և գորակոչի վերաբերյալ:

7. Էրզրումի պաշտպանության հիմնահարցի համատեքստում այդ «անհասկանալի» հապաղման մասին է վկայում նաև Հայկական առանձին բանակային կորպուսի հաշվետվությունը: Թեև իր վերտառության մեջ այն ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1918 թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը, սակայն դեպքերի նկարագրությունը սկսվում է 1918 թ. մարտի 2-ից:

Ստացվում է, որ ՀԶՄ 1917 թ. նոյեմբերյան համագումարի որոշման համաձայն՝ դեկտեմբերի 2-ից փաստորեն վերջնականապես կայացած Հայկական կորպուսը մինչև 1918 թ. մարտ ամիսը Երզնկա-Էրզրում ճակատային գլխավոր հանգույցում չի իրականացրել հայկական շահերից բխող ոչ մի մարտավարական, պաշտպանական գործողություն: Նա իր անմիջական գործունեությունը սկսում է մարտ-ապրիլից, Էրզրումի անկումից հետո: Մինչդեռ, կորպուսն անմիջապես պետք է զբաղեցներ Էրզրում, Ղարաքիլիսա, Վան, Մանազկերտ շրջանները:

8. Չնայած, մի կողմից՝ ՀԱԽ-ի և ՀԶՄ ձեռնարկած միջոցառումներին, դրությունը ռազմաճակատում և հատկապես, Երզնկա-Էրզրում կարևորագույն ռազմավարական

հատվածում մնում է տազնապալի և չհուսադրող: Տիրում էր ընդհանուր անկազմակերպվածություն և խուճապ: Հասկանալի է, որ այդ ամենի խորքային պատճառը բոլշևիկյան հեղաշրջումն էր, բանակի բոլշևիկացման գործընթացը և այստեղից էլ՝ Անդրկովկասյան կոմիսարիատի հակախորհրդային և հակառուսական քաղաքականությունը: Վերջինիս հետևողական առաջամարտիկի դերում հանդես էր գալիս երկրամասային իշխանության ղեկավար դիրքերը զբաղեցրած վրաց-թաթարական քաղաքական դաշինքը:

9. Դանդաղում էր և հայկական կողմը: Եթե նաև Կոմիսարիատի քաղաքականությամբ, փաստորեն արագանում և անարխիկ կերպարանք էր ձեռք բերում ռազմաճակատի քայքայման գործընթացը, ինչը հանգեցրեց Թուրքիայի հետ անջատ զինադադարի ստորագրմանը, ապա առավել անբացատրելի է հայկական կազմակերպությունների հապաղման վարքագիծը:

Իհարկե, հնարավորինս տարվում էր մեծ ծավալի աշխատանք, փորձ էր արվում Անդրկովկաս ու այդպիսով Կովկասյան ռազմաճակատ տեղափոխել անգամ Հյուսիսային Կովկասից ու Մերձսևծովյան շրջաններում կուտակված հայազգի զինյալներին, սակայն միևնույն է չէր լուծվում ժամանակի, մեր կարծիքով բախտորոշ հիմնահարցը՝ Հայաստանի ու Կովկասի բանալի Էրզրումի պաշտպանության խնդիրը:

10. Երզնկայի զինադադարի տրամաբանությունը բանակցությունների, ապա և անջատ թուրք-անդրկովկասյան պայմանագրի ստորագրման քաղաքական գիծն էր: Այն դրսևորվեց նախ Տրապիզոնի, ապա և Բաթումի բանակցությունների միջոցով:

Խորհրդային Ռուսաստանից անջատվելու, վերջինիս դեմ ձևավորված անդրկովկասյան իշխանությունների թուրքամետ և հակառուսական (պետականամետ ուժերի դեմ) քաղաքականության գագաթնակետը, իհարկե, 1918 թ. ապրիլին Կարսի հանձնումն էր, ինչը և բացատրում էր ճանապարհի ընտրության հետևողականությունը:

Պարզ էր, որ վրաց-թաթարական դաշինքը չէր դիմադրելու թուրքական արշավանքին, չէր պայքարելու ռազմաճակատի պաշտպանության, այն է՝ Արևմտյան Հայաստանի համար: Բայց միևնույն է, այս ամենի հետ, չի արդարացվում հայկական կողմի գործունեության չափն ու նպատակը: Այդ գործունեության պասիվությունը, ոչ հետևողական քայլերը, անմնացորդ նվիրումի բացակայությունը հաստատում են այն

թեզը, որ Սեյմի ՀՅԴ խմբակցությունը համակերպվել էր քաղաքական մեծամասնության տարածքային պահանջի, այն է՝ 1914 թ. պետական սահմանի հետ:

11. Էրզրումի պաշտպանության հիմնահարցի 2-րդ փուլը կարելի է սկսել 1918 թ. փետրվարի առաջին տասնօրյակից, ինչը համընկնում է թուրքական արշավանքի և Երզնկայի պաշտպանության հետ:

Երզնկայի անկումից հետո Դաշնակցության մի հատվածի և ՀԱԽ-ի կողմից նոր միայն արձանագրվեց Սեյմի վրաց-թաթարական բացահայտ հակահայկական դիրքորոշումը: Հօդս ցնդեց Կովկասյան ռազմաճակատը միացյալ անդրկովկասյան ուժերով պաշտպանելու ի սկզբանե սնանկ և անհեռանկար դիրքորոշումը:

Ակնհայտ դարձավ, որ բացակայում է ՀԱԽ-ի, ՀԶՄ և Թ. Նազարբեկյանի միջև գործնական համագործակցության գործոնը:

Հիմնվելով փաստերի համադրման վրա, թուրքական արշավանքի սկիզբ պետք է համարել ոչ թե փետրվարի 10-ը, այլ փետրվարի 7-ը:

12. Երզնկայի պաշտպանության կազմակերպման և իրականացման փուլը ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերի 2-ից՝ դիմադրելու վերաբերյալ վճռի կայացումից մինչև 1918 թ. փետրվարի 14-ը, երբ Երզնկայի ջոկատը հեռացավ քաղաքից և փետրվարի 24-ին հասավ Էրզրում:

Երզնկայի պաշտպանական ուժերը՝ գնդապետ Ն. Մորելի, Սեբաստացի Մուրադի և այլոց գլխավորությամբ, հաղթահարելով անասելի նյութական և բարոյական դժվարություններ ու խոչընդոտներ, միաժամանակ չվարելով վճռական մարտեր, 5000 հայ գաղթականների հասցրին Էրզրում:

Այս իմաստով նրանց նահանջն արդարացվում է, որովհետև նախ՝ ջոկատն էր մեկուսացված, իսպառ բացակայում էր օգնության հույսը, ուստի և չնահանջելու դեպքում ջոկատի ջախջախումն անխուսափելի էր: Նահանջի գլխավոր ռազմավարական բաղադրիչը անդրկովկասյան իշխանության քաղաքական որոշումն էր: Էական է նաև ռազմաճակատի քայքայման և դրա հետևանքով հայկական պաշտպանական ուժերի բարոյալքման ու պարտվողականության գործոնը:

13. Էրզրումի պաշտպանությունն ընդգրկում է փետրվարի 12-ից, երբ թուրքական առաջապահ ուժերը մոտեցան քաղաքին, մինչև փետրվարի 27-ի նահանջը:

Բերդամրոցի հանձնումը հակառակորդին, բացի արտաքին համաանդրկովկասյան քաղաքական պատճառներից, ունի նաև լրջագույն ներքին պատճառներ:

ա) Դա նախ և առաջ թուրքական արշավանքի պայմաններում ահագնացող մահմեդական՝ թուրք-քրդական հակահայկական խռովության գործոնն է և հայ ազգաբնակչության շուրջ ծավալվող ահաբեկչական մթնոլորտի ակտիվացումը:

բ) Ստեղծված պայմաններում քաղաքում և պաշտպանական շրջանում գործող հայկական կազմակերպությունները և գործիչները փոխանակ պահանջվող և անվիճարկելի համախմբվածության ուղղությամբ աշխատանքները կազմակերպելուն, հակառակը՝ յուրաքանչյուրն իր հերթին իշխանության դեր կատարելու հավակնություններ էին ցուցաբերում:

Առանձին գործիչների անձնական բացահայտ բարոյագրկող վարքագիծը իր հետքն էր թողնում ամբողջ բնակչության բարոյա-հոգեբանական տրամադրության վրա:

Անգամ Անդրանիկի ժամանումից հետո էլ մինչև վերջ կարգի չբերվեցին բերդի ամրությունները, չգործարքվեցին 700 թնդանոթները, պարենային պահեստները, չէին կատարվում համապատասխան հրամանատարների կարգադրությունները:

14. Անդրանիկի, որպես Էրզրումում ու նրա շուրջ ծավալվող իրադարձությունների գլխավոր դերակատարի գործունեությունը կարելի է բաժանել երկու՝ 1. Թիֆլիսից մինչև Էրզրում նրա ծավալած կազմակերպական, նախապատրաստական և 2. բուն Էրզրումում իրականացրած միջոցառումների ու դիմադրության փուլերի:

Առաջին փուլը հիմնականում բնորոշում է նրա անձի և քաղաքական կերպարի շուրջ ձևավորվող մթնոլորտը, որը հիմնականում 1917 թ. մայիսից Արևմտահայերի առաջին համագումարից հետո սկզբնավորված ու արմատավորված արևելահայ-արևմտահայ հակամարտությամբ էր արտահայտվում:

Անգիջում պայքարի արդյունքում, Անդրանիկն ի վերջո հաստատվեց արևմտահայ դիվիզիայի հրամանատար: Մերժողների հիմնավորումը, թե վերջինս իր ֆիդայական կերպարով չէր կարող ղեկավարել կանոնավոր զորաջոկատ և լուրջ ռազմական գործողություններ, մեր կարծիքով միայն պատրվակ էր: Նա և իր համախոհները դեմ էին տվյալ փուլում Թուրքիայի հետ բանակցային գործընթացին և վստահ էին, որ Էրզրումի տակ է որոշվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ողջ Կովկասի ճակատագիրը: Այս մոտեցումն էր, որ հեռացնում էր Անդրանիկին բազմաթիվ ազգային գործիչներից և ի

վերջո կողմնորոշեց նրա հետագա գործելակերպը նաև Մայիսյան հերոսամարտերի ընթացքում:

Դաշնակցության որդեգրած գերմանո-թուրքական քաղաքական կողմնորոշումն, առայժմ Երզնկայի զինադադարի համատեքստում հանգեցրեց ժամանակի գլխավոր քաղաքական ձախողմանը՝ Տրապիզոնի անպտուղ և կործանարար բանակցություններին:

Երկրորդ փուլում, նրա գործունեությունը համընկնում է գորաբաժնի հրամանատարի պաշտոնը ստանձնելու հետ. Անդրանիկը անմիջապես, փաստորեն 1917 թ. դեկտեմբերի վերջից դարձավ գորահավաքի գլխավոր ոգեշնչող, կազմակերպիչ ու համակարգող, ազատագրական շարժման գործիչներին ու բանակի հայ սպաներին դեպի Էրզրում ուղորդող:

Փետրվարի 16-ին ժամանելով Էրզրում, նա նշանակվեց ջոկատի պետ և ամրոցի պարետ: Իր ներկայությամբ Անդրանիկը նկատելիորեն նպաստեց անկումային մթնոլորտի վերացմանը, բնակչությանը ներշնչեց անվտանգության երաշխիքներ, մի քանի օրվա ընթացքում կարգավորեց պարենային և ճակատների պաշտպանական խնդիրները, կանխեց հակահայկական մահմեդական խռովությունը:

Անդրանիկի մեծագույն ողբերգությունը կայանում էր նրանում, որ վստահ լինելով Էրզրումի ճակատագրի, այն է՝ հակառակորդին հանձնելու և 1914 թ. ու անգամ 1878 թ. ռուս-թուրքական սահմանը պաշտպանելու սեյմի ու ՀԱԽ-ի որդեգրած քաղաքականության մեջ, նա օգնություն չակնկալելով, միևնույն է հույս ուներ, որ տեղի, իր կարծիքով հայրենասեր ուժերի միջոցով կարող է իրականացնել վճռական ու բախտորոշ դիմադրությունը:

15. Էրզրումի շուրջ բուն ռազմական գործողություններն ընթացան փետրվարի 23-27-ը: Աչքի ընկան Ն. Մորելը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Թորգոմը, Անդրանիկը և այլոք:

Փետրվարի 27-ի առավոտյան 4 անց կեսին սկսվեց Էրզրումի էվակուացիան: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Էրզրումի համար պայքարում ուժերի հարաբերակցությունը գրեթե հավասար էր՝ հայկական 3.000 զինյալների դեմ դրանից մի փոքր ավելի թուրք-քրդական ջոկատներ էին կռվում:

16. Անդրանիկի քաղաքական գծի ճշմարտացիությունը հաստատվեց Տրապիզոնի բանակցությունների ընթացքում, երբ հայտնի դարձավ Ա. Չխենկելիի հայտարարությանը Կարսի ճակատագրի վերաբերյալ: Նույնիսկ Թ. Նազարբեկյանը հստակ գիտակցեց, որ հայությունը չխենկելիների մեծ քաղաքականության գոհն է: Տրապիզոն մեկնած անդրկովկասյան միացյալ պատվիրակության կազմում Ալ. Խատիսյանի և մյուսների «գործունեության» մեջ առկա էր ժամանակի գլխավոր հակասությունը, այն է՝ բոլշևիզմի և Անդրկովկասի խորհրդայնացման դեմ պայքարում ստանալ Թուրքիայի աջակցությունը, ավելին ձեռք բերել թուրքերի կողմից խոստացված Անդրկովկասի անկախությունը, բայց ինչի՞ հաշվին: Իրականում ստացվում էր, որ Անդրկովկասի իշխանությունները, այդ թվում և Սեյմի դաշնակցական խմբակցությունը «ստիպված» զիջելով Արևմտյան Հայաստանը և պնդելով 1914 թ. երբեմն էլ 1878 թ. ռուս-թուրքական սահմանի վրա, մասնակցում և հաշտվում էր վրաց-թաթարական գործարքի հետ:

Բրեստ-Լիտովսկի բոլշևիկյան հակապետական պայմանագիրը Անդրկովկասի կողմից ընդունելու հանգամանքը թեև հետևողական էր, բայց գործնականում իշխանությունների մեռելածին քաղաքականություն էր, քանի որ դարձյալ հայկական բոլոր, այդ թվում Կարս-Արդահան տարածքների զիջմամբ էր հիմնավորվում «դեմոկրատիայի» հաղթանակը և որ ավելի կարևոր է, պարզ էր, որ այդ տարածքների համար թուրքերի դեմ չէին կռվելու վրացական, առավել ևս թաթարական զորքերը:

Եթե մեզ՝ պարզ է դառնում Դաշնակցության մի հատվածի քաղաքականության «ճարահատյալ» անհեռատեսությունը, ապա անորոշ էր մնում նաև «հնարամիտ» վրացական մենշևիզմի քաղաքականության հեռանկարը: Հայության ու հայկական տարածքների հաշվին սեփական շահերի հետապնդումը ևս ժամանակին կանգնեց փակուղու առջև. չէ՞ որ Բաթումի և Թիֆլիսի գրավման խնդիրը օրակարգի հարց դարձավ 1918 թ. մայիսին:

Այնպես որ, համոզված ենք այս ամբողջ կծիկը կարող էր վճռվել Էրզրումի պաշտպանությամբ:

Վերջին հաշվով տարածաշրջանային մեծ հարցերը լուծվում էին անդրկովկասյան քաղաքական իշխանության մարմինների՝ Կոմիսարիատի և Սեյմի շրջանակներում, արդեն պարտադրված որոշումները հրամցվում էին ազգային մարմիններին, որոնք էլ՝

տվյալ դեպքում հայկական կազմակերպությունները, հայտնվում էին անօգնական վիճակում, փաստի առջև:

դ) Ինչևէ, Էրզրումի հանձնումը բազմաթիվ մասնակից և ոչ մասնակից ռազմական-քաղաքական գործիչների գնահատմամբ, անխուսափելի էր:

17. Էրզրումի անկման կարևորագույն հետևանքն այն է, որ վերջինս կանխորոշեց ողջ Արևմտյան Հայաստանի կորուստը: Թեև 1918 թ. Մայիսյան հերոսամարտների արդյունքում պահպանվեց Արևելյան Հայաստանի մի հատվածը և ստեղծվեց Հայաստանի Հանրապետություն, միևնույն է բաց թողնվեց Արևմտյան Հայաստանի գոյության և հայացման իրատեսական ծրագիրը:

Փաստորեն հայ ազատագրական շարժման մի որոշակի փուլ պարտություն կրեց:

Էրզրումի անկման անմիջական հետևանք - կորուստը Կարսի հանձնումն էր և սեյմի քաղաքականության համատեքստում նաև Բաթումի ստորացուցիչ պայմանագիրը:

Վերջաբանի փոխարեն

Երզրումի բերդապահ հրետանու պետ Տվերդոխլեբովի դավաճանական, հակահայկական պահվածքի և գործողությունների մասին անուղղակիորեն վկայում է «Յերզրումի անցքերը» վերտառությամբ վերջինիս երկու օրագրություն-արձանագրությունների գետեղումը Ջեմալ փաշայի «Հայկական հարցը» ուսումնասիրության մեջ⁵⁴⁹:

1927 թ. Երևանում, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով լույս է տեսնում երիտթուրքերի առաջնորդներից ու Հայկական ցեղասպանության իրագործողներից մեկի՝ Ջեմալ փաշայի հեղինակած գրքի հայերեն մեկ այլ տարբերակը:

Իբր օբյեկտիվություն ապահովելու նպատակով, Ջեմալ փաշան նախ և առաջ Երզնկայում և Երզրումում «հայկական վայրագությունները» փորձում է հանրությանը հրամցնել իր կարծիքով չեզոք կողմից՝ ռուս սպայի տեսանկյունից:

Այն ինչ գրում է Երզրումի և Դեկ-Բոյնու դիրքերի ժամանակավոր պետ և 2-րդ ինժեներական ու թնդանոթաձիգ գնդի հրամանատար, շտաբս-կապիտան Տվերդոխլեբովը «Արձանագրություն N 1» և «Պաշտոնական պատերազմական օրագիր՝ 1918 թ. ապրիլի 16-ին և 29-ին Երզրումի ռուսական 2-րդ բերդապահ հրետանի գնդի N 2» վերտառությամբ տեքստերում՝ հայատյացության, քսենոֆոբիայի, դավաճանության քստմնելի օրինակ է:

Ռուս սպայի նման վարքագիծը հնարավոր էր և բացատրելի միմիայն բոլշևիկյան հեղաշրջման պայմաններում և Բրեստ-Լիտովսկի բանակցությունների իրականության մեջ: Երզրումը 1916 թ. գրաված ռուս զինվորականը 1917 թ. աշնանից և մասնավորապես 1918 թ. թուրքական արշավանքի համատեքստում բացի թուրքերի կողմն անցնելուց, մինչև վերջ խեղդվելով իր ստի մեջ փորձում է վարկաբեկել հայերին: Անհրաժեշտ է ընդգծել, որ Երզնկա-Երզրում շրջանում իր տպավորությունները նա հեշտությամբ ու առանց խղճի խայթի տարածում է ողջ հայ ժողովրդի, նրա քաղաքակրթության ու հոգեկերտվածքի վրա:

«Ռուսները,- գրում է Տվերդոխլեբովը,-վոր բոլոր յեվրոպացիներից համեմատաբար ավելի հաճախ են շփվել հայերի հետ, բոլորովին այլ համոզմունք ունեն այս ազգի

⁵⁴⁹ Տե՛ս Ջեմալ-Փաշա, նշվ. աշխ., էջ 54-90:

քաղաքակրթության և բարոյականության մասին: Նրանք հայերին համարում են ժլատ, ազահ և շողոքորթ մի ժողովուրդ, վորը, միայն ուրիշների հաշվին ապրել է ուզել: Ռուս գյուղացին շատ լավ է ճանաչել այս ժողովրդի հոգին. Շատ հաճախ յես լսած կլինեմ ռուս զինվորներից այսպիսի արտահայտություններ. «Թուրքերը հայերի հետ վատ են վարվել, ճիշտ է, բայց նրանք այնպես պետք է անեյին, վորպեսզի վոչ մի հայ կենդանի չմնար»⁵⁵⁰:

Հասկանալի է, որ Ջեմալ-փաշային էլ գրավել է Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության ախոյան, բայց այժմ ռուսական պետության ազգային շահերին դավաճանած բոլշևիկացած երկրի ռուս սև հարյուրակային սպա Տվերդոխլեբովի թունոտ գնահատականը, ինչը և թուրք գործիչը մեծ վարպետությամբ օգտագործել է հայության դեմ իր ծրագրերում:

Ուշագրավ է և միաժամանակ անհասկանալիորեն ցավալի, որ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից ընդամենը 7 տարի անց Երևանում հրապարակվում է Ջեմալ-փաշայի հայատեացության թույնով լեցուն գրվածքը:

Պարզ է՝ Դաշնակցություն կուսակցության դեմ ատելության մոլուցքը և ստալինյան ազգային քաղաքականության հրամայականը անվանի հայ պատմաբան Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանին ևս ստիպել է բարձր գնահատել Ջեմալի երկը և հատկապես վերոհիշյալ Տվերդոխլեբովի երկու տխրահռչակ արձանագրությունները:

Միաժամանակ բացարձակապես անընդունելի է, որ մեր օրերում, երբ այլևս չեն գործում գաղափարական մամլիչները, պ.գ.դ. Նորայր Սարուխանյանը թերևս խնայելով սիրելի ուսուցչին, վաստակաշատ պատմաբանին նվիրված իր աշխատության մեջ, լռելայն անցնում է այդ ամենի կողքով⁵⁵¹:

«Յեթե անգամ մի կողմ թողնենք Ջեմալի բացատրությունները (նկատի ունի Հայկական հարցի հետ կապված նրա գնահատականները – Վ.Մ.),- գրում է Ա. Հովհաննիսյանը,- **ներկա հրատարակությունը լիովին կարդարացներ իրեն** (ընդգծումը իմն է – Վ.Մ.) իր մատակարարած փաստական նյութի տեսակետից՝ թեկուզ հենց գրքույկում զետեղված այն յերկու ընդարձակ գրությունների համար, վորտեղ ռուս

⁵⁵⁰ Ջեմալ-փաշա, նշվ. աշխ., էջ 55:

⁵⁵¹ Տե՛ս Նորայր Սարուխանյան, Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմական ժառանգությունը, Ե., 2015, էջ 127-140:

գնդապետ Տվերդոխլեբովի ձեռքով նկարագրված են 1917-18 թվականներին Երզրումի շրջանում հայ զինվորականների ձեռքով կատարված կոտորածները»⁵⁵²:

Իր հերթին խեղաթուրելով պատմությունը, Ա. Հովհաննիսյանը եզրակացնում է, թե «Տվերդոխլեբովի յերկու գրությունները ցույց են տալիս սակայն, թե ինչպես Երզրումի «պաշտպանության» ժամանակ անպատիժ մնացող թալանն ու ջարդերը զարկ էին տալիս Անդրանիկի յեվ բժ. Չավրիյեվի ինամքին հանձնված բանակի բարոյալքմանը, գժտություն առաջացնելով հայ եվ ռուս զինվորականների միջեվ յեվ նախապատրաստելով բերդի անկումը: Երզրումի 1918 թվի անձնատվությունը հիշեցնում է Կարսի անձնատվությունը 1920 թվին: Յերկու դեպքում էլ հայ նացիոնալիստները յեվ դրանց թվում առաջին հերթին՝ դաշնակներն իրենց վրա ընկնող պատասխանատվությունը բարձում են ուրիշի ուսերին: Մինչդեռ փաստերը համառ են նայել այս դեպքում: Նրանք ապարդյուն են դարձնում ազգային «մեր» ջարդարարների ինքնաարդարացման բոլոր ջանքերը»⁵⁵³:

Կրկնակի ցավալի է, որ ակադեմիկոս պատմաբանը անվերապահորեն վստահում է Ջեմալին ու դավաճան ռուս սպային, նրանց ներկայացրած «փաստերը»՝ միայն նրա համար, որ դրանք իր կարծիքով «մերկացնում» են դաշնակցականներին և հայկական նացիոնալիզմը:

Ամենին հարկ չենք համարում կանգ առնել, առավել ևս քննադատել Տվերդոխլեբովի կողմից հրամցվող յուրաքանչյուր «փաստի» ու դրա մեկնաբանությունների վրա:

Ընդհանուր առմամբ, դա մեր կողմից լուսաբանված իրադարձությունների ընթացքի միանգամայն հակադիր, ավելին՝ թուրքամետ ու հակահայկական մոտեցումն է, չնայած որ երբեմն սպրդում են նաև կանխամտածված կեղծարարության ու զրպարտանքի բացահայտ ինքնամերկացնող օրինակներ:

Այսպես, քննադատելով գնդապետ Ն. Մորելի մոտեցումն այն հարցում, որ Երզրումը մինչև վերջին վայրկյանը պետք է պաշտպանվի, ուստի և սպաներին ու զենք բանեցնելու ընդունակ բնակիչներին քաղաքից հեռանալու հանգամանքն արգելելու փաստին, Տվերդոխլեբովը հակադարձում է հետևյալը. «Յերբ յես զինվորական դատարանին հայտնեցի մի քանի սպաների ցանկությունը՝ թույլ տալ իրենց Երզրումից

⁵⁵² Նորայր Մարուխանյան, նշվ. աշխ., Առաջաբան, էջ 6-7:

⁵⁵³ Նույն տեղում:

հեռանալ, դատարանի անդամներից մեկը՝ Սողանյան ազգանունով պատասխանեց ինձ աղայական տոնով, վոր յուրաքանչյուրին, ով քաղաքը թողնել և հեռանալ կուզե, դրանց նա իր ձեռքով կապանի, իսկ նրանք ովքեր գաղտնի կերպով կփախչեն, նրանք Քյոփրի-քոյ և Հասան – դալա գտնված հայ կովոդ ուժերի կողմից կձերբակալվեն և զինվորական դատի կտրվեն: **Յես հասկացա, վոր մենք թակարդի մեջ ենք, գտնվում, որից դուրս գալ խիստ դժվար է լինելու** (ընդգծումը իմն է – Վ.Մ.)»⁵⁵⁴: Ակներև է, որ հենց ինքը՝ Տվերդոխլեբովը փաստորեն ընդունում է իր պարտվողական և ռուսական հրամանատարության տեսակետից ռազմաճակատն ու նրա կարևորագույն հենատեղերը պաշտպանելու հարցում դավաճանական պահվածքը:

Նրան փաստորեն խիստ անհանգստացնում էր հայկական ուժերի կողմից իր և իր նման զինվորականների փախուստի արգելման քաղաքականությունը:

Վերադառնալով նրա սևհարյուրակային հայատյացության մոլուցքին, դիմենք թեկուզ և մեզ համար նվաստացուցիչ թվացող արդարացմանը՝ մի թե կարելի էր զրոյի հավասարեցնել հայերի հետ թուրքերի դեմ արդեն չորրորդ տարին կովելու փաստը, Կովկասյան բանակի հրամանատարության բազմաթիվ հիացական և անկեղծ խոստովանությունները՝ հայ զինվորների ու կամավորների անձնուրաց և հերոսական սխրանքների ու նվիրումի մասին:

Տվերդոխլեբովին չես կարողանում հասկանալ, երբ հաճախ գնդապետ Ն. Մորելին հակառակվելով ու քննադատելով, նա հենց իրեն է վարկաբեկում, փաստորեն բացահայտելով այն ակնառու փաստը, որ ռազմաճակատին ու հայ բնակչությանը նվիրված այլ սպաներ էլ կային ռուսական բանակում, որոնց օրագրերը չգիտես ինչու ջեմալփաշաները չեն մեջբերում իրենց «աշխատություններում»:

Խոստովանելով իր ենթակայության տակ եղած հրետանու սպաների հրաժարականների հանգամանքը, Տվերդոխլեբովը զարմանում էր, թե իրեն ինչու են սկսել չենթարկվել հրետանու գնդապետ Դոլուխանյանը, շտաբ-կապիտան Ջանփոլադյանը: «Յերբ յես կարգադրեցի, վոր դիտական գործիքներն ու դինամոն յետ տարվեն,- վկայում է Տվերդոխլեբովը,- նա (Ջանփոլադյանը – Վ.Մ.) պատասխանեց, վոր ինքը թույլ չի տա, վոր այստեղից ռազմական նյութեղեններ տարվեն, վորովհետև հայերն անպայմանորեն մնալով Երզրումում, դրանց գործադրելու պետք կունենան: Այս

⁵⁵⁴ Նորայր Սարուխանյան, նշվ. աշխ., էջ 69-70:

բացատրությունից պետք էր յեզրակացնել, վոր հայերը մտադիր էյին իրենց ձեռքն առնել հրամանատարական բոլոր պաշտոնները, իսկ ռուս սպաներին գործադրելու էյին լոկ վորպես իրենց հրամանակատարներ»⁵⁵⁵:

Հետաքրքիր է, թե ինչպե՞ս կվարվեին ռուս սպաները իրենց հայրենիքում՝ «Հայրենիքի» վերջնական կորստի սպառնալիքի պայմաններում:

Իսկ Տվերդոխլեբովը շարունակում էր զարմանալ, թե «Երգրումի հայերը սպառնացին գլխավոր հրամանատարությանը, վոր եթե թնդանոթները քաղաքից հեռացվեն, նրանք քաղաքն արյան մեջ կխեղդեն: Դրա հետևանքով բանակի հրամանատարը հրետանին յետ առնելու մասին տված իր հրամանը ստիպված յեղավ յետ վերցնել»⁵⁵⁶:

Ինչի մասին է խոսքը, եթե Տվերդոխլեբովն ինքն է վկայում, որ «գնդապետ Մորելից յես բերանացի հրաման ստացա հարձակվողների (թուրքերի – Վ.Մ.) վրա հրետանու կրակ բացել, սակայն յես աննպատակ համարեցի այն ուղղությամբ կրակ բացել»⁵⁵⁷:

Եվս մի սարսափելի խոստովանություն. Ստացվում է, որ Օդիշելիձեն ու Տվերդոխլեբովը կատարել են Վեհիբ փաշայի հրամանը՝ «Փչացրեք ամրությունների թնդանոթները»⁵⁵⁸:

Այսպես կարող ենք երկար ու հիմնավոր կերպով ջախջախել մի Տվերդոխլեբովի, սակայն եզրափակելով նշենք վերջապես գլխավորը, որը ինքն էլ խոստովանել է – Էրգրումում այդպես էլ թուրքերի վրա և ոչ մի արկ չարձակվեց և «հենց վոր թուրքերի կողմից հայտարարվեց քաղաքի գրավումը, յես իմ աղյուտանտի հետ գնացի հրամանատարության մոտ հայտնելու մեր ներկայության մասին»⁵⁵⁹:

Հավելենք նաև, որ թե՛ Ջեմալ փաշան և թե՛ Տվերդոխլեբովը չգիտեն, որ «Ты раб, ты трус, ты армянин» տողերը պատկանում են ոչ թե Լերմոնտովին, այլ Պուշկինին, և որ ռուս բանասեր – պուշկինագետները վաղուց ապացուցել են, որ այդ արտահայտությունն ամեննին էլ հայերին ստորացնող միտք չէ: Տվերդոխլեբովը հիացած է նաև ոմն ռուս գրող

⁵⁵⁵ Ջեմալ-փաշա, նշվ. աշխ., էջ 71-72:

⁵⁵⁶ Նույն տեղում, էջ 72:

⁵⁵⁷ Նույն տեղում, էջ 80-81:

⁵⁵⁸ Նույն տեղում, էջ 82:

⁵⁵⁹ Նույն տեղում, էջ 85:

Պետրոնիուսով, ըստ որի «հայերը թեև մարդիկ են, բայց իրենց տներում նրանք ման են գալիս չորս վոտների վրա»⁵⁶⁰:

Վերջին հաշվով, Ջեմալ-փաշայի ու նրա գրվածքի նպատակը մեկն է, որն էլ ամփոփվել է «եզրակացության» մեջ. Դա Ռուսաստանի արտաքին քաղաքականության «բացահայտումն է» և, իհարկե հայ և ռուս ժողովուրդներին թշնամացնելը: «Դե, հարգելի ընթերցող,- ավարտում է Ջեմալ-փաշան,- ինչ կասեք այժմ դուք հայերի մարդկայնության մասին: Վոչ, վոչ: Յեղեք այդ յերկու ազգերի վերաբերմամբ արդար: Դա նրանց մեղքը չի, այլ միայն մոսկովյան քաղաքականության, վորն այդ երկու ժողովուրդներին (հայեր և թուրքեր – Վ.Մ.) իրարու դեմ հանեց»⁵⁶¹:

Տվերդոլիլեբովի ու նրա հետ նաև Ջեմալ-փաշայի ստահող ոտնձգություններին մենք փորձեցինք պատասխան տալ նաև այս աշխատությամբ...

⁵⁶⁰ Ջեմալ-փաշա, նշվ. աշխ, էջ 86:

⁵⁶¹ Նույն տեղում:

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվներ

1. Հայաստանի Ազգային Արխիվ - ՀԱԱ

ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 13, 28, 32:

ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 111:

ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, 27, 40, 41:

ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 61, 62, 64, 80, 126:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 14, 21:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 141 I մաս, II մաս:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 2, գ. 24, I մաս:

ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 16:

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 41, 72:

ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, գ. 49:

ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 11:

ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 246, 247:

ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 31:

ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, 100, 103, 119:

ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 916:

ՀԱԱ, ֆ. 4045, ց. 2, գ. 4:

ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 114:

2. Национальный Архив Грузии - НАГ

НАГ, ֆ. 1, օպ. 2, Ժ. 116, 176.

НАГ, ֆ. 1818, օպ. 2, Ժ. 12, 45.

3. Российский Государственный Военно-исторический Архив - РГВИА

РГВИА, ֆ. 2000, օպ. 1, Ժ. 3240, 3859.

РГВИА, ֆ. 2100, օպ. 1, Ժ. 11.

РГВИА, ֆ. 521, օպ. 5, Ժ. 41.

РГВИА, ֆ. 2100, օպ. 1, Ժ. 1127.

4. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վ. թիվ 69:

5. Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթ. թիվ 2414:

Մամուլ

1. Ազատամարտ, Թիֆլիս, 1917:
2. Աշխատանք, Երևան, 1917, 1918:
3. Աշխատավոր, Թիֆլիս, 1918:
4. Ասպարեզ, Ֆրեզնո, 1917, 1918:
5. Արև, Բաքու, 1918:
6. Արև, Կահիրե, 1927:
7. Գործ, Բաքու, 1917:
8. Զանգ, Երևան, 1918:
9. Հայաստան, Թիֆլիս, 1917:
10. Հորիզոն, Թիֆլիս, 1917, 1918:
11. Մշակ, Թիֆլիս, 1917, 1918:
12. Շարժում, Ախալցխա, 1917, 1918:
13. Պայքար, Թիֆլիս, 1918:
14. Վան-Տոսպ, Թիֆլիս, 1917, 1918:
15. Վերածնված Հայաստան, Երևան, 1989:
16. Кавказское Слово, Тифлис, 1918:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. Բանբեր Հայաստանի արխիվների, Հայկական կորպուսը թուրքական գորքերի դեմ 1917-1918 թթ., գեներալ Ֆ. Նազարբեկովի հուշերը, թիվ 3(94), Երևան, 1982:
2. Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.), Москва, 2014.
3. Вестник архивов Армении, Андраник Озаян, Документы и материалы, № 1-2, Ереван, 1991.

4. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919.

5. Из истории иностранной интервенции в Армении в 1918 году (Документы и материалы), Ереван, 1970.

1. Ա-Դո, Հայության երկունքը, Երևան 2014:

2. Ա-Դո, Հայության երկունքը, ՀՀ պատմության թանգարան, նոր պատմության բաժին, թղթ. 839/195 դ, ձեռագիր:

3. Ազգային հերոս Զոր. Անդրանիկ, Պեյրութ, 1959:

4. Ալեքսանդր Կ. Շնեուր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնո, 1967:

5. Ահարոնեան Ավ., Երկերի ժողովածու, հ. 5, Ազատության ճանապարհին, Թեհրան, 1982:

6. Ահարոնեան Վարդգես, Կովկասեան ռազմաճակատը եւ հայերը, Հայրենիք, Պոսթոն, 1955, Ազգային հերոս Զոր. Անդրանիկ, Պեյրութ, 1959:

7. Ամիրխանեան Արամ, Ռուս-թուրք զինադադարը, 1917-1918 (Փայտով տամո), Ֆրեզնո, 1921:

8. Աստուածատրեան Արշալույս, Արամը, Վեմ, Փարիզ, 1934, թիվ Ը, նոյեմբեր-դեկտեմբեր:

9. Ավետիսյան Հրանտ, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998:

10. Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

11. Դարբինյան Արտակ, Հայ ազատագրական շարժման օրերեն, Երեւան, 2003:

12. Եսփուճեան Ավետիս, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական, զինվորական տնտեսական, ընկերային կացութիւնը, Գահիրէ, 1972:

13. Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, Պոստոն, 1924:

14. Թադևոսյան Ռաֆայել, Դրվագներ Հայոց ռազմական պատմությունից, XIX-XX դարեր, Երևան, 2012:

15. Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942:

16. Թերզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939:
17. Թիթինճեան Լեւոն, Կարնոյ անկումին ողբերգութիւնը՝ ըստ Յուշամատեան Մեծ եղեռնի, Պէյրութ, 1965:
18. Թոթովէնց Վահան, Ջորավար Անդրանիկը և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920:
19. Ժամկոչեան Արսէն, Ջորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945:
20. Լեռ, Անցյալից, Երևան, 2009:
21. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968:
22. Հարությունյան Ա.Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
23. Հարությունյան Ավ., Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարության (երկրորդ կառավարության) գործունեությունը, ՊԲՀ, 2012, թիվ 3, Երևան, 2012:
24. Ղորղանեան Գաբրիէլ, Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմի Կովկասեան ռազմաճակատի վրայ, Հայրենիք, Պոսթոն, 1927:
25. Մախմուրյան Գ., Արևմտահայերի դիվիզիան և ԱՄՆ-ի քաղաքականությունը 1917-1918 թթ. Անդրանիկ Օզանյան – 150, Հոդվածների ժողովածու, Երևան, 2015:
26. Մանուկեան Հմ., Դէպքերը Վասպուրակաում, Վէմ, Փարիզ, 1938, փետրվար-մայիս:
27. Մարմարյան Արսէն, Ջոր. Անտրանիկ եւ յուր պատերազմները, Կ. Պոլիս, 1920:
28. Մելիքեան Յովակիմ, Արեան ճանապարհով, Հայրենիք, Պոսթոն, 1925:
29. Մելիքյան Վ.Հ., Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, ԵՊՀ Հայագիտության հարցեր, Երևան, 2014, թիվ 3:
30. Մելիքյան Վ.Հ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. մարտ), Երևան, 2010:

31. Մելիքյան Վ.Հ., Հայկական զինական ուժի ձևավորման վճռորոշ փուլը. Հայ զինվորական միության համագումարը Երևանում (1917 թ. նոյեմբեր), ՀՀ ԳԱԱ Բանբեր Հայագիտության, Երևան, 2014, թիվ 2-3:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈՂՎԱԾՆԵՐ

32. Միհրանեան Ա., Ինչպես պետք է գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921:

33. Մինախորեան Վ., Արեւմտեան Հայաստանի պարպումը, Հայրենիք, Պոսթոն, 1935:

34. Յուշամատեան Մեծ եղեռնի, Պէյրութ, 1965:

35. Նազարյան Ա., «Արևմտյան Հայաստանի մասին» դեկրետը, արևմտահայ զորքի կազմավորումը՝ ըստ Հայագիտությունը դպրոցում, 2008, թիվ 2, tert.nla.am

36. Շահան Նաթալի «Թուրքերը և մենք», «Անդին», թիվ 3, 2014, Երևան, էջ 15:

37. Չարրզ Դ., Հուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Բէյրութ, 1957:

38. Չելեպյան Անդրանիկ, Զորավար Անդրանիկը և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990:

39. Ջեմալ-փաշա, Հայկական հարցը, Յերեվան, 1927:

40. Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, 1966:

41. Սարգսեան Ե., Երևանը 1917 թուականին, Հայրենիք, Բոստոն, 1960, թիվ 9, սեպտեմբեր:

42. Սարուխանյան Ն., Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան պատմական ժառանգությունը, Երևան, 2015:

43. Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, Պոսթոն, 1925:

44. Սիմոնյան Հրաչիկ, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Բ, Երևան, 1996:

45. Վարանդեան Մ., Մուրատ, Պոսթոն, 1931:

46. Վարդանյան Կարո, Զորավարի ապտակը, Անդին, թիվ 3, 2015, էջ 96:

47. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Գահիրէ, 1955:

48. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1996:

49. Տասնապետեան Հրաչ, Նյութեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա հատոր, Բեյրութ, 1972, 1984:

50. Փափազեան Վահան, Իմ յուշերը, Հատոր երկրորդ, Պեյրութ, 1952:

Ռուսերեն

1. Аркомед С.Т., Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923.

2. Арутюнян А.О., Турецкая интервенция в Закавказье в 1918 г. И оборонительные бои, Ереван, 1984:

3. Лудшувейт Е.Ф., Турция в годы Первой мировой войны (1914-1917гг.), М., 1966.